

Հավելված N 1
 ՀՀ կառավարության 2020 թվականի
 հունիսի 18-ի N 1016 - Ա որոշման

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
«ՄԱՍՐԻԿ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈՒՆԱՅԻՆ (ՖՎ) ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ
ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՓՈՓՈԽՎԱԾ ԵՎ
ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԱԾ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

Yerevan, 2020	Երևան, 2020թ.
THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA ACTING ON BEHALF OF THE REPUBLIC OF ARMENIA (AS THE GOVERNMENT)	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ (ՈՐՊԵՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)
AND	ԵՎ
FRV MASRIK CJSC (AS THE DEVELOPER)	«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ն (ՈՐՊԵՍ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ)
AND	ԵՎ
FOTOWATIO RENEWABLE VENTURES S.L. – FSL SOLAR S.L. (AS THE SPONSOR)	«ՖՈՏՈՎԱՏԻՈ ՌԵՆՅՈՒԱՐԸ ՎԵՆԶՐՍ» ԷՍ.ԷԼ. – «ԷՖԵՍԷԼ ՍՈՒԱՐ» ԷՍ.ԷԼ.-ը (ՈՐՊԵՍ ՀՈՎԱՆԱՎՈՐ)
AMENDED AND RESTATED	ՓՈՓՈԽՎԱԾ ԵՎ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԱԾ
GOVERNMENT SUPPORT AGREEMENT	ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
to	
Design, Finance, Build, Own and Operate Masrik-1 Solar Photovoltaic (PV) Power Plant at Municipality of Mets Masrik in the Gegharkunik Marz (Region) Armenia	Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին

ContentsԲովանդակություն

1.	DEFINITIONS AND INTERPRETATION 3 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ	3
2.	SCOPE OF AGREEMENT AND TERM 23 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ	23
3.	PROJECT STRUCTURE..... 25 ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	25
4.	EXTENSION OF MILESTONE DATES 28 ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ	28
5.	SITE..... 30 ՏԱՐԱԾՔԸ	30
6.	ENGINEERING, PROCUREMENT AND CONSTRUCTION OF THE PLANT 32 ԿԱՅԱՆԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ, ԳՆՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ	32
7.	START-UP, COMMISSIONING COMMERCIAL OPERATION..... 35 ԳՈՐԾԱՐԿՈՒՄ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ ԵՎ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ	35
8.	UTILITY SUPPLY..... 40 ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	40
9.	PAYMENT STATEMENTS AND INVOICING.....41 ՎՃԱՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄ	41
10.	SALE AND PURCHASE OF ELECTRICITY 44 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔ	44
11.	FOREIGN EXCHANGE, PERFORMANCE BANK GUARANTEE.....51 ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ, ԿԱՏԱՐՄԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ	51
12.	GOVERNMENT SUPPORT 53 ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	53
13.	INDEMNIFICATION AND LIABILITY.....58 ՊԱՐՏԱԶԵՐԾՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ	58
14.	FORCE MAJEURE AND ADVERSE CONDITIONS..... 62 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ ԵՎ ԱՆԲԱՐԵՆՊԱՍ ՊԱՅՄԱՆՆԵՐ	62
15.	COMPENSATION FOR ADVERSE CONDITION EVENTS AND CHANGE IN LAW 69 ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԱՆԲԱՐԵՆՊԱՍ ՊԱՅՄԱՆԻ ԴԵՊՔԻ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	69
16.	EVENTS OF DEFAULT 72 ԿԵՏԱՆՑԻ ԴԵՊՔԵՐ	72
17.	TERMINATION 75 ԴԱԴԱՐՈՒՄ	75
18.	DISPUTE RESOLUTION..... 80 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ	80

19.	REPRESENTATIONS AND WARRANTIES.....	85
	ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐ	
20.	MISCELLANEOUS PROVISIONS.....	88
	ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ	
APPENDIX 1	PROJECT SITE	99
ՀԱՎԵԼՎԱԾ 1	ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԸ	
APPENDIX 2	CONDITIONS PRECEDENT.....	100
ՀԱՎԵԼՎԱԾ 2	ՀԵՏԱԶԳՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ	
APPENDIX 3	COMPENSATION ON TERMINATION	103
ՀԱՎԵԼՎԱԾ 3	ՀԱՏՈՒՑՈՒՄ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ	
APPENDIX 4	PROJECT SCHEDULE.....	1
ՀԱՎԵԼՎԱԾ 4	ԾՐԱԳՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ	
APPENDIX 5	MINIMUM TECHNICAL REQUIREMENTS	5
ՀԱՎԵԼՎԱԾ 5	ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	
APPENDIX 6	FORMAT FOR PERFORMANCE BANK GUARANTEE.....	56
ՀԱՎԵԼՎԱԾ 6	ԿԱՏԱՐՄԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՁԵՎԱԶԱՓ	
APPENDIX 7	SPONSOR'S TECHNICAL AND FINANCIAL PROPOSALS.....	71
ՀԱՎԵԼՎԱԾ 7	ՀՈՎԱՆԱՎՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍՈՒՋԱՐԿՆԵՐ	
APPENDIX 8	FORM OF ASSIGNMENT.....	71
ՀԱՎԵԼՎԱԾ 8	ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԶԻՋՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ	

<p>THE AGREEMENT is made in Yerevan BETWEEN:</p>	<p>ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ կնքվել է Երևանում</p>
<p>(1) THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA, ACTING ON BEHALF OF THE REPUBLIC OF ARMENIA having its administrative office at Republic Square, Government House 1, 0010 Yerevan, Republic of Armenia, hereinafter referred to as the "Government" (which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns);</p>	<p>(1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՈՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ և որի վարչական նստավայրը գտնվում է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010 Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում, այսուհետ՝ «Կառավարություն» (արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում),</p>
<p>(2) FRV MASRIK CJSC, a company incorporated and registered in the Republic of Armenia pursuant to Armenian law (with company number 58.120.1025778) and having its registered office at 1st Street, 12th Lane, No 2, Mets Masrik Community, 1618 Gegharkunik Marz (Region), Republic of Armenia, hereinafter referred to as the "Developer" (which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns); and</p>	<p>(2) «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ի, Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված և գրանցված ընկերություն (գրանցման համարը՝ 58.120.1025778), որի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մեծ Մասրիկի համայնք, 1618, 1-ին փողոց, 12-րդ նրբանցք, թիվ 2 հասցեն, այսուհետ՝ «Կառուցապատող» (արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում), և</p>
<p>(3) FOTOWATIO RENEWABLE VENTURES S.L. and FSL SOLAR S.L., with its principal office at C/Mariade Molina 40, 5ª Planta, 28006 Madrid, Spain, hereinafter referred to as the "Sponsor" (which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns).</p>	<p>(3) «ՖՈՏՈՎԱՏԻՈ ՌԵՆՅՈՒԱԲԼ ՎԵՆՉՐՍ» ԷՍ.ԷԼ. և «ԷՖԵՍԷԼ ՍՈԼԱՐ» ԷՍ. ԷԼ.-ի՝ հիմնական գրասենյակի գտնվելու վայրն է՝ Իսպանիա, Մադրիդ, 28006, Կայլե Մարիա դե Մոլինա 40, 5ª հարկ, այսուհետ՝ «Հովանավոր» (արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում)</p> <p>ՄԻՋԵՎ</p>
<p>WHEREAS:</p>	<p>ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ.</p>
<p>(A) The Government intends to engage a private developer to develop the Project at a site in administrative territory of Mets Masrik Community in the Gegharkunik Marz (Region), Republic of Armenia.</p>	<p>(A) Կառավարությունը մտադրված է ներգրավել մասնավոր կառուցապատողի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքի վարչական տարածքում Ծրագիրն իրականացնելու համար:</p>
<p>(B) The Sponsor is the winning bidder of the tender to Design, Finance, Build, Own and Operate the Grid-connected Plant, results of which have been approved</p>	<p>(B) Հովանավորը Կայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման համար կազմակերպված այն մրցույթի հաղթողն է, որի արդյունքները հաստատվել են</p>

by the Government of the Republic of Armenia by Decree No. 535-A dated 26 April 2018.	Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի թիվ 535-Ա որոշմամբ:
(C) The Developer has been incorporated by the Sponsor for the purposes of implementing the Project.	(C) Կառուցապատողը հիմնադրվել է Հովանավորի կողմից՝ Ծրագրի իրականացման նպատակով:
(D) This Agreement sets forth the terms and conditions of the implementation and structure of the Project.	(D) Սույն Պայմանագիրը սահմանում է Ծրագրի իրականացման պայմանները և կառուցվածքը:
NOW, IT IS AGREED AS FOLLOWS:	ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ARTICLE 1	ՀՈԴՎԱԾ 1
1. DEFINITIONS AND INTERPRETATION	1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ
1.1 Interpretations	1.1. Մեկնաբանումներ
In the Agreement unless the context otherwise requires:	Սույն Պայմանագրում, եթե համատեքստից այլ բան չի բխում՝
(a) any reference to a statutory provision shall include such provision as it is from time to time modified or re-enacted or consolidated so far as such modification or re-enactment or consolidation applies or is capable of applying to any transactions entered into hereunder;	(a) օրենքի դրույթին ցանկացած հղում ներառում է նշված դրույթը, ինչպես որ այն կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել, վերընդունվել կամ միավորվել՝ այնքանով, որքանով այդպիսի փոփոխությունը, վերընդունումը կամ միավորումը կիրառվում է կամ կարող է կիրառելի լինել սույն Պայմանագրի համաձայն կնքված որևէ գործարքին.
(b) the words importing singular shall include plural and vice versa, and words denoting persons shall include natural and legal persons, including partnerships, firms, companies, corporations, joint ventures, trusts, associations, organisations or other entities (whether or not having a separate legal entity);	(b) եզակիով նշված բառերը ներառում են հոգնակին և հակառակը, իսկ անձ նշանակող բառերը ներառում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ներառյալ ընկերակցությունները, ֆիրմաները, ընկերությունները, կորպորացիաները, համատեղ ձեռնարկությունները, թրաստերը, ասոցիացիաները, կազմակերպությունները կամ այլ սուբյեկտներ (անկախ այն հանգամանքից՝ դրանք առանձին իրավաբանական անձ են, թե ոչ).
(c) the table of contents and any headings in the Agreement are for ease of reference only and shall not affect the construction or interpretation of the Agreement;	(c) Պայմանագրում զետեղված «բովանդակությունը» և ցանկացած վերնագիր նախատեսված են միայն հղումների հարմարության համար և չեն ազդում Պայմանագրի իմաստի կամ մեկնաբանման վրա.
(d) the words "include" and "including" are to be construed without limitation;	(d) «ներառում է» և «ներառյալ» բառերը մեկնաբանվում են առանց սահմանափակման.
(e) any reference to any period of time shall mean a reference to that according to Yerevan time;	(e) հղումը որևէ ժամանակահատվածի նշանակում է հղում դրան՝ ըստ Երևանի ժամանակի.
(f) "Article" and "Appendix" shall refer, except where the context otherwise requires, to Articles of and any Appendix to the Agreement. The Appendices to the Agreement shall form an integral part and parcel of the Agreement and will be in full force and effect as though	(f) «Հոդված» և «Հավելված» բառերը վերաբերում են Պայմանագրի Հոդվածներին և Հավելվածներին, եթե համատեքստից այլ բան չի բխում: Պայմանագրի Հավելվածները դրա անբաժանելի մասն են և ունեն լիակատար ուժ և գործողություն՝ այնպես, ինչպես եթե

they were expressly set out in the body of the Agreement;	դրանք բացահայտորեն ներառված լինեին Պայմանագրի հիմնական տեքստում.
(g) any reference at any time to any agreement, deed, instrument, license or document of any description shall be construed as reference to that agreement, deed, instrument, license or other document as amended, varied, supplemented, modified or novated at the time of such reference;	(g) ցանկացած հղում որևէ պայմանագրի, գործարքի, հավաստագրի, գործիքի, լիցենզիայի կամ ցանկացած փաստաթղթի համարվում է հղում այդ պայմանագրին, գործարքին, հավաստագրին, գործիքին, լիցենզիային կամ այլ փաստաթղթին՝ այդ հղումը կատարելու պահի դրությամբ դրանցում բոլոր փոփոխություններով, լրացումներով, ձևափոխումներով կամ նորացումներով.
(h) unless otherwise specified, any interest to be calculated and payable under the Agreement will apply on a 365 Day basis and shall accrue from Day to Day from the respective due date until the relevant payment obligation is fulfilled; and	(h) այլ կերպ սահմանված չլինելու դեպքում, Պայմանագրի համաձայն հաշվարկման և վճարման ենթակա ցանկացած տոկոս կիրառվում է 365 Օրվա հիմքով և յուրաքանչյուր Օր կուտակվում է համապատասխան վերջնաժամկետից մինչև համապատասխան վճարման պարտավորության կատարումը. և
(i) references to any gender include all genders.	(i) որևէ սեռին հղումը ներառում է բոլոր սեռերը:
1.2 Ambiguities and Discrepancies	1.2. Երկիմաստություններ և անհամապատասխանություններ
In case of ambiguities or discrepancies within the Agreement, the following shall apply:	Պայմանագրում երկիմաստությունների կամ անհամապատասխանությունների առկայության դեպքում կիրառվում է հետևյալը.
(a) between two Articles of the Agreement, the provisions of specific Articles relevant to the issue under consideration shall prevail over those in other Articles;	(a) Պայմանագրի երկու Հոդվածների միջև՝ խնդրո առարկային վերաբերող որոշակի Հոդվածների դրույթները գերակայում են այլ Հոդվածների դրույթների նկատմամբ.
(b) between any value written in numerals and that in words, the latter shall prevail; and	(b) թվականներով և բառերով գրված մեծությունների միջև՝ գերակայում է բառերով գրվածը. և
(c) between the provisions of the Agreement and any other documents forming part of the Agreement, the former shall prevail.	(c) Պայմանագրի և Պայմանագրի մաս կազմող որևէ այլ փաստաթղթերի դրույթների միջև՝ գերակայում է Պայմանագրի դրույթը:
1.3 Definitions	1.3. Սահմանումներ
In the Agreement, unless the context otherwise requires, the following terms shall have the following meanings assigned/ascribed thereto:	Պայմանագրում, եթե համատեքստից այլ բան չի բխում, հետևյալ եզրույթներն ունեն դրանց վերագրված հետևյալ նշանակությունները.
"Abandonment" means the voluntary cessation of construction or operation of the Plant or the withdrawal of all, or substantially all, personnel by the Developer	«Լքում» նշանակում է Կառուցապատողի կողմից Կայանի կառուցման կամ շահագործման կամավոր դադարեցում կամ ամբողջ (կամ գրեթե ամբողջ)

<p>from the Project Site cumulatively for more than one hundred and eighty (180) days in a calendar year for reasons other than breach by the Government of its obligations, a Force Majeure Event or Adverse Condition Event;</p>	<p>անձնակազմի հեռացում Ծրագրի Տարածքից որևէ օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ ավելի քան 180 (հարյուր ութսուն) օրով՝ Կառավարության կողմից իր պարտավորությունների խախտում, Անհաղթահարելի Ուժի Դեպք կամ Անբարենպաստ Պայմանի Դեպք չհամարվող որևէ պատճառով.</p>
<p>"Acceptance Act" means a certificate issued by the Acceptance Commission confirming that the Plant has been completed in accordance with the documents set out in Articles 6.1(b)(i) - 6.1(b)(vi) and has passed the Commissioning Tests;</p>	<p>«Ընդունման Ակտ» նշանակում է Ընդունող Հանձնաժողովի կողմից տրված վկայագիր, որով հաստատվում է, որ Կայանը կառուցված է 6.1(b)(i) - 6.1(b)(vi) Հոդվածներում նշված փաստաթղթերի համաձայն և անցել է Շահագործման Հանձնելու Փորձարկումները.</p>
<p>"Acceptance Commission" means the temporary acceptance commission formed by the Developer in accordance with all Applicable Laws for the purpose of determining the Commissioning Tests and conducting the Plant acceptance activities;</p>	<p>«Ընդունող հանձնաժողով» նշանակում է ժամանակավոր ընդունող հանձնաժողով, որը կազմավորվել է Կառուցապատողի կողմից՝ համաձայն բոլոր Կիրառելի Օրենքների՝ Շահագործման Հանձնելու Փորձարկումները սահմանելու և Կայանի ընդունման հետ կապված գործողությունները կատարելու նպատակով.</p>
<p>"Additional Equity Partner" has the meaning given to it in Article 3.2(b);</p>	<p>«Լրացուցիչ Բաժնետեր-Գործընկեր» եզրույթն ունի 3.2(b) Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.</p>
<p>"Additional Partner Notice" has the meaning given to it in Article 3.2(b);</p>	<p>«Լրացուցիչ Գործընկերոջ Ծանուցում» եզրույթն ունի 3.2(b) Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.</p>
<p>"Additional Technology Partner" has the meaning given to it in Article 3.2(b);</p>	<p>«Լրացուցիչ Տեխնոլոգիական Գործընկեր» եզրույթն ունի 3.2(b) Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.</p>
<p>"Adverse Condition Event" has the meaning given to it in Article 14.1(b);</p>	<p>«Անբարենպաստ Պայմանի Դեպք» եզրույթն ունի 14.1(b) Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.</p>
<p>"Adverse Condition Event Purchase Price" means the Purchase Price set out in Appendix 3;</p>	<p>«Անբարենպաստ Պայմանի Դեպքի Գնման Գին» նշանակում է 3-րդ Հավելվածում սահմանված Գնման Գինը.</p>
<p>"Affiliate" means any Person who Controls or is Controlled by (directly or indirectly) another Person, including where a Person is a company, the ultimate holding company of such Person, any holding company of such Person and any subsidiary (direct or indirect) of such holding company;</p>	<p>«Փոխկապակցված Անձ» նշանակում է ցանկացած Անձ, որը (ուղղակի կամ անուղղակի կերպով) Վերահսկում է այլ Անձի կամ Վերահսկվում է այլ Անձի կողմից, այդ թվում՝ եթե Անձը իրավաբանական անձ է, ապա այդ Անձի վերջնական հովիհնգային ընկերությունը, այդ Անձի ցանկացած հովիհնգային ընկերություն և այդ հովիհնգային ընկերության ցանկացած (ուղղակի կամ անուղղակի) դուստր ընկերություն.</p>

<p>"Agreement" means this agreement, including any Appendices, and as the same may be amended from time to time in accordance with its provisions;</p>	<p>«Պայմանագիր» նշանակում է սույն համաձայնագիրը, այդ թվում՝ ցանկացած Հավելված, ինչպես որ այն կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել իր դրույթներին համապատասխան:</p>
<p>"AMD" or "Dram" means the lawful currency of Armenia;</p>	<p>«ՀՀ դրամ» կամ «Դրամ» նշանակում է Հայաստանի պաշտոնական արժույթը:</p>
<p>"Anchor Sponsor" means Sponsor holding a direct or indirect shareholding of at least 25% of the share capital of the Developer;</p>	<p>«Խարսխային Հովանավոր» նշանակում է Հովանավոր, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն Կառուցապատողի բաժնետիրական կապիտալում առնվազն 25%-ի մասնակցություն ունի:</p>
<p>"Applicable Laws" means all laws in force and effect as of the Signing Date and which may be promulgated or brought into force and effect hereinafter in Armenia, including statutes, rules (including those governing the operations of the electrical grid including the market rules and the commercial rules), regulations, directions, bye-laws, notifications, ordinances and judgments having force of law, or any final interpretation by a court of law having jurisdiction over the matter in question, as may be in force and effect during the subsistence of the Agreement;</p>	<p>«Կիրառելի Օրենքներ» նշանակում է բոլոր իրավական ակտերը, որոնք ուժի և գործողության մեջ են Ստորագրման Ամսաթվի դրությամբ, ինչպես նաև, որոնք այդ պահից հետո կարող են հրապարակվել կամ ուժի և գործողության մեջ մտնել Հայաստանում, այդ թվում՝ օրենքները, կանոնները (ներառյալ էլեկտրական ցանցի գործողությունը կարգավորող կանոնները, այդ թվում՝ շուկայի կանոնները և առևտրային կանոնները), կանոնակարգերը, հրահանգները, կանոնադրությունները, ծանուցումները, կարգադրությունները և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, կամ խնդրո առարկայի նկատմամբ իրավասություն ունեցող դատարանի կողմից որևէ վերջնական մեկնաբանում, որոնք կարող են ուժի և գործողության մեջ լինել Պայմանագրի գործողության ընթացքում:</p>
<p>"Applicable Permits" means any and all permissions, consents, clearances, licences, authorisations, consents, registrations, no-objections, approvals and exemptions under or pursuant to any of the Applicable Laws or from any Government Authority, or Power Sector Entity, or the Offtaker required in connection with the Project and for undertaking, performing or discharging the obligations contemplated by the Agreement or any Project Document;</p>	<p>«Կիրառելի Թույլտվություններ» նշանակում է ցանկացած Կիրառելի Օրենքի ներքո կամ համաձայն կամ որևէ Պետական Մարմնի կամ Էներգետիկայի Ոլորտի Մասնակցի կամ Գնորդի բոլոր և ցանկացած թույլտվությունները, համաձայնությունները, համաձայնեցումները, լիցենզիաները, լիազորումները, գրանցումները, առարկությունների բացակայության հավաստումները, հաստատումները և բացառությունները, որոնք պահանջվում են Ծրագրի կապակցությամբ, ինչպես նաև Պայմանագրով կամ ցանկացած Ծրագրի Փաստաթղթով նախատեսվող պարտավորությունները հանձն առնելու, կատարելու կամ մարելու համար:</p>
<p>"Armenia" means the Republic of Armenia;</p>	<p>«Հայաստան» նշանակում է Հայաստանի Հանրապետություն:</p>

<p>"Armenia Revenue Authority" means the State Revenue Committee of the Government of the Republic of Armenia, or any relevant successor thereof;</p>	<p>«Հայաստանի Պետական Եկամուտների Մարմինը» նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն կամ դրա ցանկացած համապատասխան իրավահաջորդ.</p>
<p>"Assigned Amount" has the meaning given to it in Article 10.1(c);</p>	<p>«Ձիջված գումար» եզրույթն ունի 10.1(c) Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.</p>
<p>"Bid" means the response to R2E2's request for proposals for this Project submitted by the Developer to R2E2 on 21 March 2018;</p>	<p>«Մրցույթի Հայտ» նշանակում է այս Ծրագրի համար ՀՎԷԷՀ-ի՝ առաջարկներ ներկայացնելու հրավերին ի պատասխան Կառուցապատողի կողմից 2018 թվականի մարտի 21-ին ՀՎԷԷՀ ներկայացված հայտը.</p>
<p>"Bid Tariff" means USD 0.0419 per kWh;</p>	<p>«Մրցութային Սակագին» նշանակում է 0.0419 ԱՄՆ դոլար մեկ կՎտաժ-ի համար.</p>
<p>"Calculation Date" means the Day on which a Purchase Price is calculated, such Day being the termination date specified in a Termination Notice issued in accordance with Article 17.4;</p>	<p>«Հաշվարկի Ամսաթիվը» նշանակում է այն Օրը, երբ հաշվարկվում է Գնման Գինը. այդ Օրը լուծման ամսաթիվն է, որը նշվում է 17.4 Հոդվածի համաձայն տրված Դադարեցման Ծանուցման մեջ.</p>
<p>"Change in Law" means the adoption, coming into effect, modification, reinterpretation, cancellation, withdrawal or suspension, after the Signing Date by the Government or any Government Authority of any Applicable Law, Tax, Applicable Permit or any of the exemplary forms of the PPA or the Licence, if, in the case of an Applicable Permit, not due to the Developer's fault;</p>	<p>«Օրենքի Փոփոխություն» նշանակում է Կառավարության կամ որևէ Պետական Մարմնի կողմից Ստորագրման Ամսաթվից հետո որևէ Կիրառելի Օրենքի, Հարկի, Կիրառելի Թույլտվության կամ ԷԳՊ-ի կամ Լիցենզիայի օրինակելի ձևերի, Կիրառելի Թույլտվության դեպքում՝ Կառուցապատողի մեղքով չպայմանավորված ընդունումը, ուժի մեջ մտնելը, փոփոխումը, վերամեկնաբանումը, չեղարկումը, հետ կանչումը կամ կասեցումը.</p>
<p>"COD Deadline" means the date that is 90 Days after the Scheduled Commercial Operation Date;</p>	<p>«ԿՇԱ Վերջնաժամկետ» նշանակում է Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից 90 Օր անց ընկած ամսաթիվը.</p>
<p>"COD Longstop Date" means the date that is 180 Days after the Scheduled Commercial Operation Date;</p>	<p>«ԿՇԱ Ծայրահեղ Ամսաթիվ» նշանակում է Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից 180 Օր անց ընկած ամսաթիվը.</p>
<p>"Commercial Operation Date" means the date on which the PSRC resolution for the License Revision and approval of the Tariff becomes effective;</p>	<p>«Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվ» նշանակում է այն ամսաթիվը, երբ Լիցենզիայի Վերանայման և Սակագնի հաստատման մասին ՀԾԿՀ-ի որոշումը մտնում է ուժի մեջ.</p>
<p>"Commissioning Plan" has the meaning given to it in Article 6.3;</p>	<p>«Շահագործման Հանձնելու Պլան» եզրույթն ունի 6.3 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.</p>
<p>"Commissioning Tests" means a series of pre-commissioning and commissioning tests determined by the Acceptance Commission in accordance with the</p>	<p>«Շահագործման Հանձնելու Փորձարկումներ» նշանակում է մինչ շահագործման և շահագործման փորձարկումների շարք, որը սահմանվում է Ընդունող</p>

<p>Commissioning Plan and Applicable Laws, pursuant to which the Developer will demonstrate that the Plant has been constructed in accordance with Article 6.1, meets the requirements of all Applicable Laws and the Plant's technical specifications and is capable of commercial operation in accordance with the same and the terms of this Agreement;</p>	<p>Հանձնաժողովի կողմից համաձայն Շահագործման Հանձնելու Պլանի և Կիրառելի Օրենքների, և համաձայն որի Կառուցապատողը կցուցադրի, որ Կայանը կառուցվել է 6.1 Հոդվածի համաձայն, համապատասխանում է բոլոր Կիրառելի Օրենքների պահանջներին և Կայանի տեխնիկական պայմաններին և պատրաստ է կոմերցիոն շահագործման համար՝ վերոնշյալի և սույն Պայմանագրի պայմանների համաձայն.</p>
<p>"Committed Equity" means the amount of Equity paid as on the Calculation Date;</p>	<p>«Ներդրված Կապիտալ» նշանակում է Հաշվարկի Ամսաթվի դրությամբ վճարված Կապիտալի գումարը.</p>
<p>"Committed Offtake Term" means a period commencing on the Commercial Operation Date and expiring on the twentieth (20th) anniversary of the Commercial Operation Date;</p>	<p>«Երաշխավորված Գնման Ժամկետ» նշանակում է այն ժամանակահատվածը, որն սկսվում է Կոմերցիոն Շահագործման Ամսաթվին և լրանում Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի 20-րդ (քսան) տարեդարձին.</p>
<p>"Completion Act" means a document issued by the Head of Municipality of Mets Masrik based on the Acceptance Act, certifying that the construction of the Plant has been completed and the Plant is ready for commercial operation in accordance with Applicable Laws;</p>	<p>«Ավարտական Ակտ» նշանակում է Մեծ Մասրիկի համայնքի ղեկավարի կողմից Ընդունման Ակտի հիման վրա տրված փաստաթուղթ, որը հավաստում է, որ Կայանի կառուցումն ավարտվել է և Կայանը պատրաստ է կոմերցիոն շահագործման համար՝ համաձայն Կիրառելի Օրենքների.</p>
<p>"Conditions Precedent" means those conditions precedent to the effectiveness of the Parties' rights and obligations under this Agreement set out at Appendix 2;</p>	<p>«Հետաձգող Պայմաններ» նշանակում է 2-րդ Հավելվածում սահմանված այն հետաձգող պայմանները, որոնց բավարարումն անհրաժեշտ է Կողմերի՝ սույն Պայմանագրով սահմանված իրավունքները և պարտականությունները ուժի մեջ մտնելու համար.</p>
<p>"Conditions Precedent Deadline" means 1 July 2020, subject to any extension in accordance with the terms of this Agreement;</p>	<p>«Հետաձգող Պայմանների Վերջնաժամկետ» նշանակում է 2020 թվականի հուլիսի 1-ը, որը ենթակա է երկարաձգման սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան.</p>
<p>"Construction Start Date" means the date that is 30 Days after the Conditions Precedent Deadline;</p>	<p>«Շինարարության Մեկնարկի Ամսաթիվը» նշանակում է Հետաձգող Պայմանների Վերջնաժամկետից 30 Օր անց ընկնող ամսաթիվը.</p>
<p>"Contracted Capacity" means the nominal generation capability of the Plant at the Delivery Point designated for the Project which shall be 55 MW (representing AC power output), as per Sponsor's Technical Proposal included in Appendix 7 of this Agreement;</p>	<p>«Պայմանագրային Հզորություն» նշանակում է Ծրագրով նախատեսված՝ Մատակարարման Կետում Կայանի անվանական հզորությունը, որը պետք է հավասար լինի 55 ՄՎտ-ի (ներկայացնելով փոփոխական հոսանքով հզորության ելք), ինչպես առաջարկված է Հովանավորի կողմից ներկայացված Տեխնիկական Առաջարկով, որը ներառված է սույն Պայմանագրի 7-րդ Հավելվածում.</p>

<p>"Control" means the power, directly or indirectly, to direct or cause the direction of the management and policies of a Person, whether through the ownership of voting securities or any interest carrying voting rights, or to appoint or remove or cause the appointment or removal of any directors (or equivalent officials) or those of its directors (or equivalent officials) holding the majority of the voting rights on its board of directors (or equivalent body), whether by contract or otherwise, and "Controlled" shall be construed accordingly;</p>	<p>«Վերահսկում» նշանակում է Անձի կառավարումը և քաղաքականությունը ուղղակի կամ անուղղակի կերպով ուղղորդելու կամ դրանց ուղղորդում առաջացնելու կարողությունը՝ լինի դա քվեարկող արժեթղթերի, թե՛ քվեարկության իրավունք ենթադրող որևէ շահի տիրապետման շնորհիվ, կամ ցանկացած տնօրեն (կամ համարժեք պաշտոնատար անձանց) կամ տնօրենների խորհրդում (կամ համարժեք մարմնում) քվեարկող ձայների մեծամասնությունը ունեցող տնօրեններին (կամ համարժեք պաշտոնատար անձանց) նշանակելու կամ հեռացնելու կամ նրանց նշանակումը կամ հեռացումը առաջացնելու կարողությունը՝ լինի դա պայմանագրի ուժով, թե՛ այլ եղանակով, իսկ «Վերահսկվող» բառը մեկնաբանվում է համապատասխանաբար.</p>
<p>"Cost" means with respect to any Change in Law or Adverse Condition Event, any cost or expense reasonably and properly incurred and documented relating to the Project directly resulting from, or otherwise directly attributable to, such Change in Law or Adverse Condition Event, that is incurred or suffered by the Developer, and not otherwise covered by the receipt of insurance proceeds, which costs or expenses may include:</p>	<p>«Ծախս» նշանակում է ցանկացած Օրենքի Փոփոխության կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի առնչությամբ՝ այդպիսի Օրենքի Փոփոխության կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի ուղղակի հետևանք հանդիսացող կամ դրա հետ այլ կերպ ուղղակիորեն կապված՝ Ծրագրին վերաբերող ցանկացած ողջանտորեն և պատշաճ կերպով կատարված և փաստաթղթավորված ծախս կամ ծախսում, որը Կառուցապատողը կրել է, սակայն որոնք չեն մարվել ապահովագրական հատուցումների ստացմամբ, որպիսի ծախսերը կամ ծախսումները կարող են ներառել.</p>
<p>(a) capital costs;</p>	<p>(a) կապիտալ ծախսեր,</p>
<p>(b) financing costs;</p>	<p>(b) ֆինանսավորման ծախսեր,</p>
<p>(c) costs of operation and maintenance;</p>	<p>(c) շահագործման և պահպանման ծախսեր,</p>
<p>(d) costs of Taxes imposed on or payable by the Developer; or</p>	<p>(d) Կառուցապատողի նկատմամբ կիրառվող կամ նրա կողմից վճարվող Հարկերի ծախսեր, կամ</p>
<p>(e) reduction in the revenue received by the Developer;</p>	<p>(e) Կառուցապատողի կողմից ստացվող շահույթի նվազեցում.</p>
<p>"Day" means the 24 (twenty four) hour period beginning and ending at 00:00 Yerevan time;</p>	<p>«Օր» նշանակում է 24 (քսանչորս) ժամ տևողությամբ ժամանակահատված, որը սկսվում և ավարտվում է ժամը 00:00-ին Երևանի ժամանակով.</p>
<p>"CUF or Capacity Utilization Factor" means the ratio of actual energy generated by the Plant over the relevant year to the equivalent energy output</p>	<p>«ՀՕԳ կամ Հզորության Օգտագործման Գործակից» նշանակում է համապատասխան տարվա ընթացքում Կայանի կողմից փաստացի արտադրված էներգիայի հարաբերակցությունը ամբողջ տարվա ընթացքում</p>

determined at its Contracted Capacity over the entire year;	Պայմանագրային Հզորությանը համարժեք էներգիայի արտադրությանը.
" Deemed Delivered Energy " means the amount of Net Electrical Energy expressed in MWh that the Developer would have produced and delivered to the Delivery Point, but that is not produced by the Developer and delivered to the Delivery Point during Deemed Period.	« Ենթադրյալ Առաքված Էներգիա » նշանակում է Ջուտ էլեկտրական էներգիա՝ արտահայտված ՄՎտժ-ով, որը կարող էր արտադրվել և առաքվել Կառուցապատողի կողմից Մատակարարման Կետ, բայց չի արտադրվել և առաքվել Մատակարարման Կետ Կառուցապատողի կողմից Ենթադրյալ Ժամանակահատվածում.
" Deemed Energy Payment " has the meaning given to it in Article 10.2;	« Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարում » եզրույթն ունի 10.2 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.
" Deemed Period " has the meaning given to it in Article 10.2;	« Ենթադրյալ Ժամանակահատված » եզրույթն ունի 10.2 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.
" Delivery Point " has the meaning given to it in Article 5.2;	« Մատակարարման Կետ » եզրույթն ունի 5.2 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.
" Developer Event of Default " has the meaning given to it in Article 16.1;	« Կառուցապատողի Կետանցի Դեպք » եզրույթն ունի 16.1 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.
" Developer Event of Default Purchase Price " means the Purchase Price set out in Appendix 3;	« Կառուցապատողի Կետանցի Դեպքի Գնման Գին » նշանակում է 3-րդ Հավելվածում սահմանված Գնման Գինը.
" Direct Agreement " means the agreement as described in Article 12.2(b)(iii);	« Ուղղակի Պայմանագիր » նշանակում է 12.2(b)(iii) Հոդվածում նկարագրված պայմանագիրը.
" Direct Costs " means actual out of pocket expenses incurred solely for the purposes of the Project other than (i) overhead expenses (including administrative, legal, accounting and similar expenses) that are incurred in the ordinary course of business by the Government and (ii) expenses borne by the Developer (as agreed to by the Developer and the Government);	« Ուղղակի Ծախսեր » նշանակում են բացառապես Ծրագրի նպատակներով սեփական հաշվին կատարված փաստացի ծախսերը՝ բացառությամբ (i) Կառավարության կողմից բնականոն գործունեության ընթացքում կրած ծախսերի (այդ թվում՝ վարչական, իրավաբանական, հաշվապահական և մյուս նմանատիպ ծախսերի), և (ii) Կառուցապատողի կրած ծախսերի (ըստ Կառուցապատողի և Կառավարության համաձայնության).
" Effective Date " means the date on which the Developer issues notice to the Government that each of the Conditions Precedent have been satisfied by the Party responsible for satisfying it or waived by the Party not responsible for satisfying it;	« Գործողության Ամսաթիվ » նշանակում է այն ամսաթիվը, որին Կառուցապատողը ծանուցում է տալիս Կառավարությանն առ այն, որ Հետաձգող Պայմաններից յուրաքանչյուրը կատարվել է դրա համար Պատասխանատու Կողմի կողմից կամ դրա չկատարմանը համաձայնել է Կողմը, որը պատասխանատու չէ դրա կատարման համար.

<p>"Emergencies" means any emergencies declared by the System Operator to protect the integrity of the grid or human life;</p>	<p>«Կրիտիկական իրավիճակներ» նշանակում է Համակարգի Օպերատորի կողմից ցանցի ամբողջականությունն ու մարդկանց կյանքը պաշտպանելու համար հայտարարված ցանկացած կրիտիկական իրավիճակ.</p>
<p>"EPC Contract" means the engineering, procurement and construction contract entered into by the Developer and the EPC Contractor in relation to the Project;</p>	<p>«ՆԳԿ Պայմանագիր» նշանակում է նախագծման, գնման և շինարարության պայմանագիր, որը կնքվել է Կառուցապատողի և ՆԳԿ Կապալառուի միջև՝ Ծրագրի կապակցությամբ.</p>
<p>"EPC Contractor" means a Permitted Technology Partner that will design, engineer, construct, commission and complete the Plant, appointed in accordance with Article 3.2(a);</p>	<p>«ՆԳԿ Կապալառու» նշանակում է 3.2(a) Հոդվածի համաձայն նշանակված Թույլատրված Տեխնոլոգիական Գործընկեր, որը մշակելու, նախագծելու, կառուցելու, գործարկելու է և ավարտական վիճակի է բերելու Կայանը.</p>
<p>"Equity" means the capital of the Developer attributable to its shareholders in respect of the investment in the Developer by its shareholders, whether as subscription for shares or as shareholder loans;</p>	<p>«Կապիտալ» նշանակում է Կառուցապատողի կապիտալը, որը վերագրվում է դրա բաժնետերերին՝ Կառուցապատողի մեջ ներդրում կատարելու իմաստով, լինի դա բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցելու, թե՛ բաժնետերերի կողմից փոխառությունների տրամադրման եղանակով.</p>
<p>"Exemplary Documents" means the exemplary forms of the Power Purchase Agreement, and other agreements, approved by PSRC which shall be signed as a matter of the Applicable Laws by the relevant counterparts upon the relevant requirements set out in the Applicable Laws being satisfied;</p>	<p>«Օրինակելի Փաստաթղթեր» նշանակում է ՀԾԿՀ-ի կողմից հաստատված օրինակելի ձևեր՝ Էլեկտրական Էներգիայի Գնման Պայմանագրի և այլ պայմանագրերի, որոնք պետք է ստորագրվեն Կիրառելի Օրենքների համաձայն՝ համապատասխան կոնտրագենտների կողմից՝ Կիրառելի Օրենքներով սահմանված պայմանների բավարարման պես.</p>
<p>"Expert Commission" means the temporary expert commission formed by the Government in accordance with all Applicable Laws for the purpose of expert examination and approval of the Plant design documentation and the environmental impact assessment report for the Project submitted by the Developer;</p>	<p>«Փորձաքննական Հանձնաժողով» նշանակում է ժամանակավոր փորձաքննական հանձնաժողով, որը կազմավորվել է Կառավարության կողմից՝ համաձայն բոլոր Կիրառելի Օրենքների՝ Կայանինախագծայինփաստաթղթերիև Ծրագրի համար Կառուցապատողի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացնելու և հաստատելու նպատակով.</p>
<p>"Financial Close" means the date on which the principal Financing Documents have become effective and funds are committed and, subject to the terms and conditions thereof, are available to be drawn thereunder;</p>	<p>«Ֆինանսավորման Ամփոփում» նշանակում է այն ամսաթիվը, երբ հիմնական Ֆինանսավորման Փաստաթղթերն ուժի մեջ են մտել և առկա է ֆինանսական միջոցների հատկացման պարտավորություն, ու համաձայն այդ փաստաթղթերի</p>

	պայմանների և պահանջների, այդ միջոցներից մասհանումներ կատարելը դարձել է հասանելի.
"Financial Close Deadline" means 1 July 2020;	«Ֆինանսավորման Ամփոփման Վերջնաժամկետ» նշանակում է 2020 թվականի հուլիսի 1-ը.
"Financial Close Longstop Date" means 1 July 2020;	«Ֆինանսավորման Ամփոփման Ծայրահեղ Ամսաթիվ» նշանակում է 2020 թվականի հուլիսի 1-ը.
"Financing Documents" means any and all loan agreements (including for senior and mezzanine debt agreements or instruments), direct debits, bonds, indentures, security agreements, note or bond purchase agreements, interest rate or currency hedging arrangements, and other collateral and related documents (including any common terms, accounts or security agent agreements entered into in connection with the loans) which may be entered into by the Developer with respect to the financing and any refinancing of the Project, other than fully subordinated shareholder loans or other fully subordinated shareholder financing documents;	«Ֆինանսավորման Փաստաթղթեր» նշանակում է բոլոր փոխառության/վարկային պայմանագրերը (այդ թվում՝ առաջնայնություն ունեցող և մեզանիս պարտավորությունների վերաբերյալ պայմանագրերի կամ փաստաթղթերի համար), անակցեպտ կարգով գանձման վերաբերյալ պայմանագրերը, պարտատոմսերը, պարտատոմսային համաձայնագրերը, ապահովման պայմանագրերը, մուրհակների կամ պարտատոմսերի առուվաճառքի պայմանագրերը, տոկոսադրույքների կամ արժույթի հեջավորման պայմանագրերը և այլ ապահովման և կապակցված փաստաթղթերը (այդ թվում՝ փոխառությունների/վարկերի հետ կապված՝ ընդհանուր պայմանների, հաշիվների կամ ապահովման միջոցի գործակալի մասին պայմանագրերը), որոնք կարող են կնքվել Կառուցապատողի կողմից Ծրագրի ֆինանսավորման և ցանկացած վերաֆինանսավորման առնչությամբ, բացառությամբ ամբողջությամբ ստորադասված՝ բաժնետերերի կողմից փոխառություն կամ այլ ֆինանսավորում տրամադրելու պայմանագրերի.
"Financing Parties" means any Person or Persons providing financing, hedging or refinancing to the Developer under the Financing Documents (together with any agents or trustees of such Persons), and its or their permitted successors and assigns, including any agent or trustee for such Person or Persons;	«Ֆինանսավորման Կողմերը» նշանակում է Ֆինանսավորման Փաստաթղթերի ներքո Կառուցապատողին ֆինանսավորում, հեջավորում կամ վերաֆինանսավորում տրամադրող ցանկացած Անձ կամ Անձինք (այդ Անձանց ցանկացած գործակալի կամ հավատարմագրային պահառուի հետ), ինչպես նաև նրա/նրանց թույլատրված իրավահաջորդները և ցեսիոներները, այդ թվում նաև այդ Անձի/Անձանց որևէ գործակալը կամ հավատարմագրային պահառուն.
"Force Majeure Event" has the meaning given to it in Article 14.1;	«Անհաղթահարելի Ուժի Դեպք» եզրույթն ունի 14.1 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.
"Force Majeure Event Purchase Price" means the Purchase Price set out in Appendix 3;	«Անհաղթահարելի Ուժի Դեպքի Գնման Գին» նշանակում է 3-րդ Հավելվածում սահմանված Գնման Գինը.

<p>"Good Industry Practice" means those practices, methods and acts as are in accordance with good standards of prudence applicable to the international electricity generation industry which would have been expected to accomplish the desired result at the lowest reasonable cost consistent with reliability, safety and expedition;</p>	<p>«Ոլորտի Լավ Պրակտիկա» նշանակում է այն պրակտիկաները, մեթոդները և գործողությունները, որոնք համապատասխանում են էլեկտրական էներգիայի արտադրության միջազգային արդյունաբերությունում կիրառելի շրջահայացության լավ ստանդարտներին, որոնք կարող են ակնկալվել՝ ցանկալի արդյունքին հուսալիության, անվտանգության և օպերատիվության հետ համատեղելի խելամիտ նվազագույն արժեքով.</p>
<p>"Government Authority" means the Government of the Republic of Armenia, the National Assembly, PSRC or any governmental department, commission, board, body, bureau, agency, authority, instrumentality, administrative body of Armenia, at central, or local level, or the Central Bank of the Republic of Armenia having jurisdiction over the Developer, the Project Site, or the Plant or any portion thereof, or the matter in question. For the avoidance of doubt this provision does not apply to the judiciary;</p>	<p>«Պետական Մարմին» նշանակում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, Ազգային ժողովը, ՀԾԿՀ-ն կամ Հայաստանի ցանկացած պետական վարչություն, հանձնաժողով, խորհուրդ, մարմին, բյուրո, գործակալություն, լիազոր մարմին, վարչական մարմին՝ կենտրոնական, թե՛ տեղական մակարդակի վրա, կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը, որն իրավասություն ունի Կառուցապատողի, Ծրագրի Տարածքի, Կայանի կամ դրանց որևէ մասի, կամ խնդրո առարկայի նկատմամբ: Կասկածներից խուսափելու համար, սույն դրույթը չի կիրառվում դատարանների նկատմամբ.</p>
<p>"Government Event of Default" has the meaning given to it in Article 16.2;</p>	<p>«Կառավարության Կետանցի Դեպք» եզրույթն ունի 16.2 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը,</p>
<p>"Government Event of Default Purchase Price" means the Purchase Price set out in Appendix 3;</p>	<p>«Կառավարության Կետանցի Դեպքի Գնման Գին» նշանակում է 3-րդ Հավելվածում սահմանված Գնման Գինը.</p>
<p>"Grid Event" means:</p>	<p>«Ցանցին Առնչվող Դեպք» նշանակում է՝</p>
<p>(a) any failure of the interconnection between the Plant and the grid system or of any service provider to provide interconnection services;</p>	<p>(a) Կայանի և ցանցային համակարգի միջև միացման կամ ծառայություն մատուցող որևէ անձի կողմից միացման հետ կապված ծառայությունների ցանկացած խափանում.</p>
<p>(b) unavailability of or inability to accept Net Electrical Energy by, whether in full or in part, the Offtaker's distribution network or the grid system at and after the Delivery Point, in each case for any reason (including any Force Majeure Event); or</p>	<p>(b) Գնորդի բաշխման ցանցի կամ ցանցային համակարգի անհասանելիությունը կամ Գնորդի բաշխման ցանցում կամ ցանցային համակարգում Ջուտ էլեկտրական էներգիան ընդունելու անկարողությունը՝ ինչպես մասնակիորեն, այնպես էլ ամբողջությամբ՝ Մատակարարման Կետում և դրանից հետո՝ յուրաքանչյուր դեպքում ցանկացած պատճառով (այդ թվում՝ Անհաղթահարելի Ուժի Դեպքը). կամ</p>
<p>(c) the inability to generate or decreasing of the generation of electricity by the Plant either through any</p>	<p>(c) Կայանում էլեկտրական էներգիա արտադրել չկարողանալը կամ արտադրության նվազումը Գնորդի,</p>

<p>act or omission of the Offtaker, any Power Sector Entity or any Government Authority or by instruction of any such person including, without limitation: (a) failure to act by the Offtaker or any Power Sector Entity in the manner envisaged under any Project Document or as required under Applicable Law or (b) any failure to dispatch the Plant for any reason,</p>	<p>որևէ Էներգետիկայի Ոլորտի Մասնակցի կամ որևէ Պետական Մարմնի գործողության կամ անգործության հետևանքով կամ այդպիսի անձի հանձնարարությամբ, այդ թվում, առանց սահմանափակման՝ (a) Գնորդի կամ որևէ Էներգետիկայի Ոլորտի Մասնակցի՝ Ծրագրի Փաստաթղթին կամ Կիրառելի Օրենքների համապատասխան չգործելը, կամ (b) ցանկացած պատճառով Կայանից Էներգիա հաղորդել չկարողանալը.</p>
<p>Provided, in each case, that such event is not caused by a breach by the Developer of the Agreement or the PPA;</p>	<p>Յուրաքանչյուր դեպքում պայմանով, որ այդպիսի դեպքի պատճառը Կառուցապատողի կողմից Պայմանագրի կամ ԷԳՊ-ի խախտումը չէ.</p>
<p>"Independent Engineer" means a consulting engineer, independent from the interests of the EPC Contractor and the Developer, employed or engaged, from time to time, by the Developer (after consultation with, and in the absence of objection prior to such appointment by, the Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia) in accordance with an independent engineer appointment agreement to be agreed by the Developer, for the design review, approval and supervision of the construction, testing, commissioning and acceptance of the Plant, and determination of various matters, all in accordance with the provisions of this Agreement taking into account the requirements of the Applicable Laws;</p>	<p>«Անկախ Ինժեներ» նշանակում է խորհրդատու-ինժեներ, որն անկախ է ՆԳԿ Կապալառուի և Կառուցապատողի շահերից, և պարբերաբար ներգրավվում է Կառուցապատողի կողմից (մինչև նշանակումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ խորհրդակցությամբ և դրա կողմից առարկությունների բացակայության պայմանով)՝ համաձայն անկախ ինժեների նշանակման պայմանագրի, որը ենթակա է համաձայնեցման Կառուցապատողի կողմից՝ Ծրագրի նախագծման դիտարկման, Կայանի շինարարությունը և փորձարկումը, կարգաբերումը և ընդունումը վերահսկելու և հաստատելու, ինչպես նաև տարբեր խնդիրների որոշման համար, բոլորը՝ սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով Կիրառելի Օրենքների պահանջները.</p>
<p>"Independent Expert" means the expert appointed pursuant to Article 18.2(c);</p>	<p>«Անկախ Փորձագետ» եզրույթն ունի 18.2(c) Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.</p>
<p>"Insolvency Event" means:</p>	<p>«Անվճարունակության Դեպք» նշանակում է.</p>
<p>(a) in relation to any person, the:</p>	<p>(a) ցանկացած անձի դեպքում.</p>
<p>(i) passing of a resolution by the shareholders of that person for the winding up of that person;</p>	<p>(i) այդ անձի բաժնետերերի կողմից այդ անձի լուծարման մասին որոշման ընդունում,</p>
<p>(ii) voluntary filing by that person of a petition of bankruptcy, anticipated bankruptcy, liquidation, rehabilitation, moratorium or other similar relief;</p>	<p>(ii) այդ անձի կողմից սնանկության, կանխատեսված սնանկության, լուծարման, առողջացման, մորատորիումի կամ նման այլ ազատման մասին կամավոր դիմումի ներկայացում,</p>
<p>(iii) appointment of a liquidator, temporary administrator, bankruptcy administrator or other similar officer in respect of that person in any proceeding in relation to that person, which</p>	<p>(iii) այդ անձի նկատմամբ լուծարողի, ժամանակավոր կառավարչի, սնանկության կառավարչի կամ նման այլ պաշտոնատար անձի նշանակում այդ անձին վերաբերող ցանկացած</p>

<p>appointment has not been set aside or stayed within sixty (60) Days of such appointment; or</p>	<p>դատավարության ընթացքում, եթե այդ նշանակումը չի չեղարկվել կամ կասեցվել նշանակման պահից 60 (վաթսուն) Օրվա ընթացքում, կամ</p>
<p>(iv) the making by a court with jurisdiction over that person of a judicial act which is not stayed (including as the result of a pending appeal) or reversed by a court of competent authority within thirty (30) Days; and</p>	<p>(iv) այդ անձի նկատմամբ իրավասու դատարանի կողմից դատական ակտի արձակում, որը իրավասու դատարանի կողմից չի կասեցվել (այդ թվում բողոքի քննության ընթացքում) կամ փոփոխվել երեսուն (30) Օրվա ընթացքում. և</p>
<p>(b) in relation to the Government, the declaration by the Government of a moratorium on payments to its creditors or sovereign default (or any other declaration having the same effect), or an express admission by the Government that it is no longer able to meet its payment obligations pursuant to this Agreement;</p>	<p>(b) Կառավարության դեպքում՝ Կառավարության կողմից նրա պարտատերերին վճարումների մորատորիումի կամ պետական դեֆոլտի հայտարարում (կամ նույն հետևանքն ունեցող ցանկացած այլ հայտարարություն), կամ Կառավարության կողմից սույն Պայմանագրով իր վճարային պարտավորությունները կատարելու անհնարինության փաստի բացահայտ ընդունում:</p>
<p>"Installed Capacity" means the Plant capacity expressed in MW (representing AC power output) that is available to generate Net Electrical Energy at the Delivery Point;</p>	<p>«Դրվածքային հզորություն» նշանակում է Մատակարարման Կետում Ջուտ էլեկտրական էներգիայի արտադրության համար Կայանի հզորությունը՝ արտահայտված ՄՎտ-ով (ներկայացնելով փոփոխական հոսանքով հզորության ելք):</p>
<p>"Interface" means each construction connection and/or physical tie-in, between the Plant and the interconnection or delivery infrastructure of a counterparty to a Project Document, as applicable, including the Delivery Point, and, where the location of such an interface is not specified in this Agreement, as specified in the relevant Project Document;</p>	<p>«Միացում» նշանակում է յուրաքանչյուր կոնստրուկտիվ միացում և/կամ ֆիզիկական միացություն Կայանի և Ծրագրի Փաստաթղթի կոնտրագենտի փոխկապակցման կամ մատակարարման ենթակառուցվածքի հետ, ինչպես որ կիրառելի է, ներառյալ Մատակարարման Կետը, և երբ նման միացման գտնվելու վայրը նշված չէ սույն Պայմանագրում, ապա՝ ինչպես նշված է համապատասխան Ծրագրի Փաստաթղթում.</p>
<p>"Land Transfer Agreement" means the land transfer agreement to be signed under which ownership of the Project Site shall be transferred by the Owner to the Developer;</p>	<p>«Հողամասի Փոխանցման Պայմանագիր» նշանակում է հողամասի փոխանցման մասին պայմանագիրը, որով Ծրագրի Տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը Սեփականատիրոջ կողմից փոխանցվում է Կառուցապատողին.</p>
<p>"Late Payment Rate" means a rate of interest per annum on the date of determination equal to the accounting rate of bank interest set out by the Central Bank of the Republic of Armenia for AMD, but not less than two per cent (2%) above the Dollar rate quoted for six (6) month London Interbank Offered Rates (LIBOR) under the caption "Money Rates" in <i>The Wall Street</i></p>	<p>«Ժամկետանց Վճարման Դրույքաչափ» նշանակում է սահմանման ամսաթվի դրությամբ տարեկան տոկոսադրույք, որը հավասար է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի համար սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքին, սակայն ոչ պակաս քան <i>The Wall Street Journal</i> պարբերականում «Դրամական</p>

<p><i>Journal</i> (or, if no such rate appears, the arithmetic mean of the offered quotations that appear on the relevant page (if any) on the Reuters Monitor Money Rates Service (or such other service as may replace the Reuters Monitor Money Rates Service for the purpose of displaying LIBOR) or, if LIBOR ceases to be quoted, such rate and adjustment as replaces LIBOR in the Financing Documents) on the due date or required date of payment in question, which rate shall be adjusted every six (6) months thereafter, provided that such rate does not exceed the maximum rate of interest permitted by Applicable Laws;</p>	<p>միջոցների փոխարժեքներ» վերտառությամբ ներկայացված Լոնդոնի միջբանկային դրույքաչափի (ԼԻԲՈՐ)՝ 6 (վեց) ամսվա համար նշված դրվարի փոխարժեքից 2 (երկու) տոկոս բարձր (կամ եթե նման դրույքները նշված չեն, ապա Ռոյթերսի Դրամական Միջոցների Փոխարժեքի Մոնիթորային Ծառայության (կամ ԼԻԲՈՐ-ի ցուցադրման համար Ռոյթերսի Դրամական Միջոցների Փոխարժեքի Մոնիթորային Ծառայությունը փոխարինող այլ ծառայության) համապատասխան էջում (առկայության դեպքում) գետեղված գնային առաջարկների միջին թվաբանականը, կամ եթե ԼԻԲՈՐ-ն այլևս չներկայացվի, այնպիսի դրույքաչափը և ճշգրտումը, որը փոխարինում է ԼԻԲՈՐ-ին Ֆինանսավորման Փաստաթղթերում՝ վճարման ամսաթվի կամ խնդրո առարկա հանդիսացող վճարման ամսաթվի դրությամբ. նշված փոխարժեքը հետագայում ենթակա է ճշտման յուրաքանչյուր 6 (վեց) ամիսը մեկ անգամ, սակայն այդ փոխարժեքը չպետք է գերազանցի Կիրառելի Օրենքներով թույլատրված առավելագույն դրույքաչափերը.</p>
<p>"Licence" means the licence obtained by the Developer from PSRC (in form of terms and conditions of the license approved by PSRC Decree No. 544A dated 13 December 2017) in accordance with Applicable Laws for the construction of the Plant and production of electrical energy (capacity);</p>	<p>«Լիցենզիա» նշանակում է լիցենզիա, որը Կառուցապատողը ստացել է ՀԾԿՀ-ից (ՀԾԿՀ-ի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 544Ա որոշմամբ հաստատված լիցենզիայի պայմաններին համապատասխան) Կիրառելի Օրենքների համաձայն՝ Կայանի կառուցման և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար.</p>
<p>"License Revision" means the revision of the License by PSRC to reflect that the Plant may enter into the production phase;</p>	<p>«Լիցենզիայի Վերանայում» նշանակում է ՀԾԿՀ կողմից Լիցենզիայի վերանայում՝ արտացոլելու համար, որ Կայանը կարող է մտնել արտադրության փուլ:</p>
<p>"Loss" means any real loss, damage, liability, payment and/or obligation (including those related to reasonable legal fees, and, for the avoidance of doubt, excluding any loss of income, loss of opportunity, indirect or consequential loss, damage, liability, payment or obligation);</p>	<p>«Կորուստ» նշանակում է ցանկացած իրական վնաս, կարուստ, պարտք, վճարում և/կամ պարտավորություն (այդ թվում նաև՝ կապված խելամիտ իրավաբանական ծախսերի հետ՝ կասկածներից խուսափելու համար բացառությամբ եկամտի կորստի, հնարավորության կորստի, անուղղակի կամ հետևանքային վնասի, կորստի, պարտքի, վճարման կամ պարտավորության).</p>
<p>"Market Operator" means the legal entity holding a license to provide electrical energy market operator services in Armenia;</p>	<p>«Շուկայի Օպերատոր» նշանակում է Հայաստանում էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.</p>

"Milestone Dates" means the:	«Նշանակալից Ամսաթվեր» նշանակում է.
(a) Conditions Precedent Deadline;	(a) Հետաձգող Պայմանների Վերջնաժամկետ.
(b) Financial Close Deadline;	(b) Ֆինանսավորման Ամփոփման Վերջնաժամկետ,
(c) Construction Start Date;	(c) Շինարարության Մեկնարկի Ամսաթիվ,
(d) Scheduled Commercial Operation Date; and	(d) Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվ, և
(e) any other date described as a Milestone Date in the Project Schedule.	(e) ցանկացած այլ ամսաթիվ, որը Ծրագրի Ժամանակացույցում սահմանված է որպես Նշանակալից Ամսաթիվ.
"Minimum Technical Requirements" or "MTR" means the minimum technical requirements attached at Appendix 5;	«Նվազագույն Տեխնիկական Պահանջներ» կամ «ՆՏՊ» նշանակում է կից 5-րդ Հավելվածով ներկայացված նվազագույն տեխնիկական պահանջները.
"Net Electrical Energy" means the sum of net electrical energy delivered by the Developer to the Offtaker at the Delivery Point;	«Զուտ էլեկտրական էներգիա» նշանակում է Կառուցապատողի կողմից Գնորդին Մատակարարման Կետում մատակարարված զուտ էլեկտրական էներգիայի քանակը.
"O&M Contractor" means a Permitted Technology Partner that will provide services for the operation, maintenance and/or repair of the Plant;	«ՇԼՍ Կապալառու» նշանակում է Թույլատրված Տեխնոլոգիական Գործընկեր, որը տրամադրելու է ծառայություններ՝ Կայանի շահագործման, սպասարկման և/կամ վերանորոգման համար.
"Official Exchange Rate" means, on any date, the average spot exchange rate of US Dollars to AMD established in the currency market of the Republic of Armenia, as published by the Central Bank of the Republic of Armenia on that date (or if no such rate is published on such date, the most recent such rate published by the Central Bank of the Republic of Armenia);	«Պաշտոնական Փոխարժեք» նշանակում է յուրաքանչյուր օրվա համար Հայաստանի Հանրապետության արժույթային շուկայում սահմանվող՝ դոլարի՝ ՀՀ դրամի նկատմամբ միջինսփոթ փոխարժեքը, ինչպես հրապարակվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից այդ օրը (կամ եթե այդ օրն այդպիսի փոխարժեք չի հրապարակվում, ապա Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ ամենավերջին այդպիսի փոխարժեքը).
"Offtaker" means Electric Networks of Armenia CJSC or its successors;	«Գնորդ» նշանակում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն կամ դրա իրավահաջորդները.
"Owner" means the Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund;	«Սեփականատեր» նշանակում է «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը».

"Partner Information" means:	«Տեղեկատվություն Գործընկերոջ մասին»՝ նշանակում է.
(a) for a Person, excluding individuals, documentation or other evidence confirming:	(a) ցանկացած Անձի համար, բացառությամբ ֆիզիկական անձանց, փաստաթղթեր և այլ ապացույցներ, որոնցով հաստատվում է.
(i) registered office address;	(i) գրանցված գրասենյակի հասցեն
(ii) principal place of business;	(ii) գործունեության հիմնական վայրը,
(iii) shareholding structure;	(iii) բաժնետիրական կառուցվածքը,
(iv) ultimate beneficial owners; and	(iv) իրական շահառու սեփականատերերը, և
(v) key management structure;	(v) հիմնական կառավարման կառուցվածքը.
(b) or for an individual:	(b) կամ անհատների համար՝
(i) the full name of such individual and, if applicable, the spouse;	(i) անձի և, առկայության դեպքում, նրա ամուսնու լրիվ անունը.
(ii) citizenship(s) of such individual and, if applicable, the spouse;	(ii) անձի և, առկայության դեպքում, նրա ամուսնու քաղաքացիությունը(ները),
(iii) permanent residential address of such individual and, if applicable, the spouse; and	(iii) անձի և, առկայության դեպքում, նրա ամուսնու մշտական բնակության հասցեն, և
(iv) if such individual is acting in the interest of another individual or entity, information about such individual or entity listed herein;	(iv) եթե նման անձը գործում է ի շահ մեկ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ապա տեղեկատվություն այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձի վերաբերյալ.
"Party" means either the Government or the Developer as the context may require or admit and "Parties" means both the Government and the Developer;	«Կողմ» նշանակում է Կառավարությունը կամ Կառուցապատողը՝ կախված համատեքստից, իսկ «Կողմեր» նշանակում է և՛ Կառավարությունը, և՛ Կառուցապատողը.
"Permitted Equity Partner" means any Additional Equity Partner approved by the Government in accordance with Articles 3.2(b) and 3.2(c) or which becomes a shareholder pursuant to an enforcement under the Financing Documents;	«Թույլատրված Բաժնետեր-Գործընկեր» նշանակում է ցանկացած Լրացուցիչ Բաժնետեր-Գործընկեր, որը հաստատված է Կառավարության կողմից 3.2(b) և 3.2(c) Հոդվածների համաձայն կամ որը դառնում է բաժնետեր Ֆինանսավորման Փաստաթղթերով նախատեսված բռնագանձման արդյունքում.
"Permitted Interruption Period" has the meaning given to it in Article 10.2(e);	«Թույլատրելի Խափանման Ժամանակահատված» եզրույթն ունի 10.2(e) Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.
"Permitted Technology Partner" means any Additional Technology Partner approved by the Government in accordance with Articles 3.2(b) and 3.2(c);	«Թույլատրված Տեխնոլոգիական Գործընկեր» նշանակում է ցանկացած Լրացուցիչ Տեխնոլոգիական Գործընկեր, որը հաստատված է Կառավարության կողմից 3.2(b) և 3.2(c) Հոդվածների համաձայն.

<p>"Person" means any individual, company, corporation, partnership, joint venture, trust, unincorporated organisation, government or governmental authority or agency or any other legal entity;</p>	<p>«Անձ» նշանակում է ցանկացած անհատ, ընկերություն, կորպորացիա, ընկերակցություն, համատեղ ձեռնարկություն, տրաստ, առանձին իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություն, կառավարություն կամ պետական մարմին կամ գործակալություն, կամ ցանկացած այլ իրավաբանական անձ.</p>
<p>"Plant" means Masrik-1 solar photovoltaic (PV) power plant which shall be 55MW (as per Sponsor's Technical Proposal included in Appendix 7 of this Agreement), as well as power evacuation line and all other facilities required for connection up to the Delivery Point, designed and constructed in accordance with the MTR;</p>	<p>«Կայան» նշանակում է 55 ՄՎտ հզորությամբ (ինչպես առաջարկված է Հովանավորի կողմից ներկայացված Տեխնիկական առաջարկով, որը ներառված է սույն Պայմանագրի 7-րդ Հավելվածում) «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանը, ինչպես նաև բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ էլեկտրական էներգիայի հաղորդման (փոխադրման) գիծը և բոլոր այլ սարքավորումները, որոնք նախագծվել և կառուցվել են համաձայն ՆՏՊ-ի.</p>
<p>"Plant Design Documentation" means the Plant design documentation approved by the Expert Commission;</p>	<p>«Կայանի Նախագծային Փաստաթղթեր» նշանակում է Փորձաքննական Հանձնաժողովի կողմից հաստատված Կայանի նախագծային փաստաթղթեր.</p>
<p>"Power Purchase Agreement" or "PPA" means a power purchase agreement between the Developer and the Offtaker in substantially the form of the relevant Exemplary Document on interconnection of a power plant to be constructed (reconstructed) to the distribution network, electricity supply during testing and commissioning and sale of electrical energy (electrical energy generator plant with 30 MW and higher of installed capacity which has guaranteed purchase by law of the Net Electrical Energy of the Plant);</p>	<p>«Էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագիր» կամ «ԷԳՊ» նշանակում է բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման և էլեկտրական էներգիայի առուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող – բաշխող) Օրինակելի Փաստաթղթին ըստ էության համապատասխան Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված պայմանագիր.</p>
<p>"Power Sector Entity" means each of the System Operator and the Market Operator;</p>	<p>«Էներգետիկայի Ոլորտի Մասնակից» նշանակում է Համակարգի Օպերատորից և Շուկայի Օպերատորից ցանկացածը.</p>
<p>"Project" means the project to design, develop, finance, construct, own, operate, and maintain the Plant at the Project Site, with the results of tender for its implementation being approved by the Government of the Republic of Armenia by Decree No. 535-A dated 26 April 2018;</p>	<p>«Ծրագիր» նշանակում է Ծրագրի Տարածքում Կայանի նախագծման, կառուցապատման, ֆինանսավորման, կառուցման, տիրապետման, շահագործման և սպասարկման ծրագիրը, որի իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքները հաստատվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի թիվ 535-Ա որոշմամբ.</p>

<p>"Project Documents" means this Agreement, the Power Purchase Agreement, the License and any document referred to in Article 3.1(c)(i);</p>	<p>«Ծրագրի Փաստաթղթեր» նշանակում է սույն Պայմանագիրը, էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագիրը, Լիցենզիան և ցանկացած փաստաթուղթ, որը նշված է 3.1(c)(i) Հոդվածում.</p>
<p>"Project Schedule" means the Project implementation schedule, as set out in Appendix 4;</p>	<p>«Ծրագրի Ժամանակացույց» նշանակում է Ծրագրի իրականացման ժամանակացույցը՝ ըստ 4-րդ Հավելվածի.</p>
<p>"Project Site" means the land located in administrative boundary of Mets Masrik Community, Gegharkunik Marz, Republic of Armenia and more specifically described in Appendix 1;</p>	<p>«Ծրագրի Տարածք» նշանակում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը, որի մանրամասները նկարագրված են 1-ին Հավելվածում.</p>
<p>"Prolonged Adverse Condition Event" has the meaning given to it in Article 17.6;</p>	<p>«Տևական Անբարենպաստ Պայմանի Դեպք» եզրույթն ունի 17. 6 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.</p>
<p>"Prolonged Force Majeure Event" has the meaning given to it in Article 17.6;</p>	<p>«Տևական Անհաղթահարելի Ուժի Դեպք» եզրույթն ունի 17. 6 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.</p>
<p>"PSRC" means the Public Services Regulatory Commission of the Republic of Armenia;</p>	<p>«ՀԾԿՀ» նշանակում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը.</p>
<p>"Purchase Price" means the Government Event of Default Purchase Price, the Developer Event of Default Purchase Price, the Force Majeure Event Purchase Price and the Adverse Condition Event Purchase Price;</p>	<p>«Գնման Գին» նշանակում է Կառավարության Կետանցի Դեպքի Գնման Գինը, Կառուցապատողի Կետանցի Դեպքի Գնման Գինը, Անհաղթահարելի Ուժի Դեպքի Գնման Գինը և Անբարենպաստ Պայմանի Դեպքի Գնման Գինը.</p>
<p>"R2E2" means the Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund;</p>	<p>«ՀՎԷԷՀ» նշանակում է «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը».</p>
<p>"Saving" means with respect to any Change in Law, any savings or reduction of cost or expense relating to the Project resulting from, or otherwise attributable to, such Change in Law, that is realised by the Developer, which costs or expenses may include:</p>	<p>«Տնտեսում» նշանակում է ցանկացած Օրենքի Փոփոխության առնչությամբ՝ Ծրագրի հետ կապված որևէ տնտեսումներ կամ ծախսերի/ծախսումների նվազեցումներ, որոնք ունենում է Կառուցապատողը, և որոնք հանդիսանում են նման Օրենքի Փոփոխության ուղղակի հետևանք կամ այլ կերպ ուղղակիորեն կապված են դրա հետ. նման ծախսերն ու ծախսումները կարող են ներառել.</p>
<p>(a) capital costs;</p>	<p>(a) կապիտալ ծախսեր,</p>
<p>(b) financing costs;</p>	<p>(b) ֆինանսավորման ծախսեր,</p>
<p>(c) costs of operation and maintenance;</p>	<p>(c) շահագործման և պահպանման ծախսեր,</p>

(d) costs of Taxes imposed on or payable by the Developer; or	(d) Կառուցապատողի նկատմամբ կիրառվող կամ նրա կողմից վճարվող Հարկերի ծախսեր, կամ
(e) increase in revenue of the Developer;	(e) Կառուցապատողի կողմից ստացվող եկամտի աճ.
"Scheduled Commercial Operation Date" means the date that is 2 years from the Effective Date;	«Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվ» նշանակում է Գործողության Ամսաթվից 2 տարի անց ընկնող ամսաթիվը.
"Senior Debt" means all amounts required to be paid or repaid by the Developer pursuant to the Financing Documents;	«Ավագ Պարտք» նշանակում է բոլոր գումարները, որոնք ենթակա են վճարման կամ վերադարձման Կառուցապատողի կողմից՝ համաձայն Ֆինանսավորման փաստաթղթերի,
"Signing Date" means the date the Agreement is concluded pursuant to Article 20.12;	«Ստորագրման Ամսաթիվը» նշանակում է ամսաթիվ, որին սույն Պայմանագիրը համարվում է կնքված՝ համաձայն 20.12 Հոդվածի.
"System Operator" means a legal entity, which holds the license to provide services of the systems operator;	«Համակարգերի օպերատոր» նշանակում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
"Tariffs" means the payment tariffs determined from time to time by PSRC in accordance with the Tariff Schedule, at which the Offtaker will purchase the Net Electrical Energy of the Plant under the Power Purchase Agreement;	«Սակագներ» Սակագնային Պլանի համաձայն ՀԾԿՀ կողմից պարբերաբար սահմանվող վճարման սակագներ, որով Գնորդը գնելու է Կայանի Զուտ էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրի ներքո:
"Tariff Schedule" means the tariff schedule set out in accordance with Article 10.1(b);	«Սակագնային Պլան» նշանակում է համաձայնեցված սակագնային պլանը, որը սահմանվում է 10.1(b) Հոդվածին համապատասխան.
"Taxes" means any Armenian taxes including taxes on corporate income, excise duties, customs duties, value added tax, sales tax, local taxes, and any impost or surcharge of like nature on the goods, materials, equipment and services incorporated in and forming part of the Project, levied or imposed by any Government Authority, but excluding any interest, penalties and other sums in relation thereto imposed on any account whatsoever;	«Հարկեր» նշանակում է Հայաստանի ցանկացած հարկեր, այդ թվում նաև՝ կորպորատիվ եկամտահարկ, ակցիզային գանձումներ, մաքսային տուրքեր, ավելացված արժեքի հարկ, շրջանառության հարկ, տեղական հարկեր և Ծրագրի շրջանակներում ստեղծվող և դրա մաս կազմող ապրանքների, նյութերի, սարքավորումների և ծառայությունների նկատմամբ նմանատիպ բնույթի գանձումներ կամ հավելավճարներ, որոնք դրվել կամ կիրառվել են ցանկացած Պետական Մարմնի կողմից, բացառությամբ որևէ հաշվի վրա դրված տոկոսների, տուգանքների և դրանց հետ կապված այլ գումարների.
"Technology Partner" means an EPC Contractor or a O&M Contractor, or any other technology partner	«Տեխնոլոգիական Գործընկեր» նշանակում է ՆԳԿ Կապալառու կամ ՇՆՍ Կապալառու, կամ ցանկացած այլ տեխնոլոգիական գործընկեր, որի հետ

intended to be contracted by the Developer for the purposes of the Project;	Կառուցապատողը մտադրվում է կնքել պայմանագիր Ծրագրի նպատակներով.
"Term" means the term of the Agreement as set out at Article 2.3;	« Ժամկետ » եզրույթն ունի 2.3 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.
"Third Party Claim" has the meaning given to it in Article 13.4;	« Երրորդ Անձի Պահանջ » եզրույթն ունի 13.4 Հոդվածում դրան վերագրված նշանակությունը.
"Transfer Costs" means an amount equal to all reasonable costs and expenses of the Developer which are incurred or suffered as a result of the purchase of the Plant by the Government, including any termination payments in connection with the Plant, and all Taxes, any reasonable breakage costs and fees, any registration fees and other reasonable and necessary termination costs that become payable by the Developer as a result of the purchase of the Plant by the Government, but excluding any costs and fees related to the Senior Debt; and	« Փոխանցման Ծախսեր » նշանակում է գումար, որը հավասար է Կառուցապատողի բոլոր խելամիտ ծախսերին և ծախսումներին, որոնք նա կրել է Կառավարության կողմից Կայանի գնման արդյունքում, ներառյալ՝ Պայմանագրի լուծմանն առնչվող Կայանի հետ կապված ցանկացած վճարները, բոլոր Հարկերը, ցանկացած խելամիտ վաղակետ դադարեցման ծախսեր և վճարներ, ցանկացած գրանցման վճարներ և Պայմանագրի լուծմանն առնչվող այլ խելամիտ ու անհրաժեշտ ծախսերը, որոնք ենթակա են Կառուցապատողի կողմից վճարման Կայանը Կառավարության կողմից գնման դեպքում, բացառությամբ՝ Ավագ Պարտքին վերաբերող ծախսերն ու վճարները. և
"USD" or "US Dollars" means the lawful currency of the United States of America;	« ԱՄՆ դոլար » կամ « Դոլար » նշանակում է Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական արժույթը.

ARTICLE 2	ՀՈՂՎԱԾ 2
2. SCOPE OF AGREEMENT AND TERM	2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ
2.1 The General Scope	2.1. Ընդհանուր Շրջանակը
Subject to the provisions of the Agreement, the Government hereby grants to the Developer for the duration of the Term the exclusive right to implement the Project on the Project Site and to own and use the Project Site for such purposes, including the right and obligation to:	Պայմանագրի դրույթներին համապատասխան՝ Կառուցապատողին սույնով Կառուցապատողին շնորհում է ժամկետի ընթացքում Ծրագրի Տարածքում Ծրագիրն իրականացնելու և այդ նպատակով Ծրագրի Տարածքը սեփականության իրավունքով ձեռք բերելու և օգտագործելու բացառիկ իրավունք, այդ թվում նաև հետևյալ իրավունքները և պարտականությունները՝
(a) sell to the Offtaker under the Power Purchase Agreement in accordance with Applicable Law the Net Electrical Energy of the Plant; and	(a) էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրի համաձայն՝ Գնորդին վաճառել Կայանի Չուտ էլեկտրական էներգիան՝ Կիրառելի Օրենքներին համապատասխան, և
(b) connect, remain connected to, and use and evacuate electricity to, the relevant electricity distribution network as is permitted by Applicable Laws in order for it to deliver electrical energy to the Delivery Point.	(b) միանալ, միացած մնալ և օգտագործել և փոխանցել էլեկտրական էներգիան համապատասխան էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին, ինչպես որ թույլատրվում է Կիրառելի Օրենքներով, որպեսզի այն էլեկտրական էներգիա մատակարարի Մատակարարման Կետ:
2.2 Acceptance	2.2. Ընդունում
The Developer hereby agrees to implement the Project in accordance with the provisions of this Agreement, any applicable Project Document, Good Industry Practice, all Applicable Laws and Applicable Permits.	Կառուցապատողը սույնով համաձայնում է իրականացնել Ծրագիրը՝ սույն Պայմանագրի դրույթների, ցանկացած կիրառելի Ծրագրի Փաստաթղթի, Ոլորտի Լավ Պրակտիկայի, բոլոր Կիրառելի Օրենքների և Կիրառելի Թույլտվությունների համաձայն:
2.3 Term of Agreement	2.3. Պայմանագրի ժամկետը
(a) The Term shall commence on the Signing Date and shall, unless extended or terminated earlier in accordance with the terms of the Agreement, expire at the end of the Committed Offtake Term.	(a) Ժամկետը սկսվում է Ստորագրման Ամսաթվից և լրանում է Երաշխավորված Գնման Ժամկետի ավարտին, եթե չի երկարաձգվում կամ վաղաժամկետ լուծվում համաձայն սույն Պայմանագրի պայմանների:
(b) The Term and the Committed Offtake Term may be extended, subject to the Parties agreeing in writing the terms and conditions of any extension in advance of the date upon which the Term or Committed Offtake Term, as applicable, would otherwise expire.	(b) Ժամկետը և Երաշխավորված Գնման Ժամկետը կարող են երկարաձգվել Կողմերի միջև նման երկարաձգման պայմանների և դրույթների վերաբերյալ նախապես՝ նախքան ժամկետի կամ Երաշխավորված Գնման Ժամկետի լրանալը, գրավոր համաձայնություն ձեռք բերվելու դեպքում

<p>(c) The term of operation of the Plant by the Developer shall not be limited to the Committed Offtake Term or the Term.</p>	<p>(c) Կառուցապատողի կողմից Կայանի շահագործման ժամկետը չի սահմանափակվում Երաշխավորված Գնման Ժամկետով կամ Ժամկետով:</p>
<p>2.4 Conditions Precedent to Effective Date</p>	<p>2.4. Գործողության Ամսաթիվը Հետաձգող Պայմաններ</p>
<p>The rights and obligations of the Parties under the Agreement are, unless the context requires otherwise, conditional upon the fulfilment of the Conditions Precedent.</p>	<p>Սույն Պայմանագրի ներքո Կողմերի իրավունքները և պարտավորությունները պայմանավորված են Հետաձգող Պայմանների կատարմամբ, եթե համատեքստից այլ բան չի բխում:</p>
<p>If any Conditions Precedent is not delivered on or before the Conditions Precedent Deadline, then this Agreement may be terminated as provided in Article 17.1.</p>	<p>Եթե որևէ Հետաձգող Պայման չի կատարվել Հետաձգող Պայմանների Վերջնաժամկետի օրը կամ դրանից առաջ, ապա սույն Պայմանագիրը կարող է լուծվել 17.1 Հոդվածի համաձայն:</p>
<p>Notwithstanding the above, all dates and deadlines set out in this Agreement shall be calculated from the Signing Date, unless the context requires otherwise.</p>	<p>Չհակասելով վերոգրյալին, սույն Պայմանագրով սահմանված բոլոր ամսաթվերը և վերջնաժամկետները պետք է հաշվարկվեն Ստորագրման Ամսաթվից, եթե համատեքստից այլ բան չի բխում:</p>
<p>2.5 Sponsor Obligations</p>	<p>2.5. Հովանավորի Պարտավորությունները</p>
<p>The Parties and the Sponsor agree and acknowledge that the Sponsor is a party to this Agreement solely for the purposes of ensuring that the obligations under Article 3.2 are complied with.</p>	<p>Կողմերը և Հովանավորը համաձայնում և ընդունում են, որ Հովանավորը սույն Պայմանագրի կողմ է միայն այն նպատակով, որպեսզի ապահովվի 3.2 Հոդվածով սահմանված պարտավորությունների կատարումը:</p>

ARTICLE 3	ՀՈԴՎԱԾ 3
3. PROJECT STRUCTURE	3. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
3.1 Project Timeline	3.1. Ծրագրի ժամանակացույցը
(a) Conditions Precedent	(a) Հետաձգող Պայմանները
Following the Signing Date:	Ստորագրման Ամսաթվից հետո՝
(i) each Party shall use all reasonable endeavours to deliver and satisfy those Conditions Precedent for which it is responsible, as set out in Appendix 2 on or before the Conditions Precedent Deadline.	(i) յուրաքանչյուր Կողմ գործադրում է բոլոր ողջամիտ ջանքերը Հետաձգող Պայմանների Վերջնաժամկետի օրը կամ դրանից առաջ իր պատասխանատվության ներքո գտնվող Հետաձգող Պայմանները, ինչպես սահմանված են 2-րդ Հավելվածում, բավարարելու և կատարելու համար:
(b) Financial Close	(b) Ֆինանսավորման Ամփոփում
Following the Signing Date, the Developer shall use all reasonable endeavours to achieve Financial Close by the Financial Close Deadline, as such date may be extended by the provisions of this Agreement.	Ստորագրման Ամսաթվից հետո Կառուցապատողը գործադրում է բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի Ֆինանսավորման Ամփոփումը ապահովվի մինչև Ֆինանսավորման Ամփոփման Վերջնաժամկետը, որը կարող է հետաձգվել սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան:
(c) Project Documents	(c) Ծրագրի Փաստաթղթեր
(i) In order to ensure the successful development and implementation of the Project, the Government shall procure (without incurring Direct Costs) that the following agreements are entered into with the Developer by the relevant counterparty, and, if required by the Applicable Laws, approved by and/or registered with the competent Government Authority, without unreasonable delay:	(i) Ծրագրի բարեհաջող զարգացումը և իրականացումն ապահովելու նպատակով՝ Կառավարությունն ապահովում է (առանց Ուղղակի Ծախսեր կրելու), որ հետևյալ պայմանագրերը կնքվեն Կառուցապատողի հետ համապատասխան կոնտրագենտների կողմից և, եթե պահանջվում է Կիրառելի Օրենքներով, հաստատվեն և/կամ գրանցվեն իրավասու Պետական Մարմնի կողմից՝ առանց անհիմն ձգձգման:
(A) the Land Transfer Agreement;	(A) Հողամասի Փոխանցման Պայմանագիրը,
(B) the Project Documents to be entered substantially in the form of Exemplary Documents upon satisfaction of the requirements envisaged by all Applicable Laws; and	(B) Ծրագրի Փաստաթղթերը, որոնք պետք է կնքվեն ըստ էության Օրինակելի Փաստաթղթերի ձևով՝ Կիրառելի Օրենքներով նախատեսված պահանջների բավարարումից հետո, և
(C) any other agreement reasonably required by the Developer to be entered into in relation to the Project with any state-owned, licensed or regulated entity in order for the Developer to develop and implement the Project and/or for the Government to give effect to the rights granted to the Developer under this Agreement.	(C) Կառուցապատողի կողմից ողջամտորեն պահանջվող ցանկացած այլ պայմանագիր, որը ենթակա է կնքման Ծրագրի կապակցությամբ ցանկացած պետական, լիցենզավորված կամ կարգավորվող կազմակերպության հետ, որպեսզի Կառուցապատողը զարգացնի և իրականացնի Ծրագիրը և/կամ Կառավարությունը կարողանա ուժ

	տալ սույն Պայմանագրով Կառուցապատողին շնորհված իրավունքներին:
(ii) The Parties agree and acknowledge that to the extent required by the Applicable Laws the Project Documents shall be in substantially the form of their Exemplary Documents, as approved by the relevant Government Authority but may be amended as agreed between the Developer, the relevant counterparty, and the PSRC or the Government, as applicable.	(ii) Կողմերը համաձայնում և ընդունում են, որ Ծրագրի Փաստաթղթերը Կիրառելի Օրենքներով պահանջվող սահմաններում պետք է ըստ էության համապատասխանեն դրանց Օրինակելի Ձևերին, որոնք հաստատվել են համապատասխան Պետական Մարմնի կողմից, սակայն կարող են փոփոխվել Կառուցապատողի, համապատասխան կոնտրագենտի և, համապատասխանաբար, ՀԾԿԿ կամ Կառավարության համաձայնությամբ:
(d) Engineering, Procurement and Construction, and Commercial Operation of the Plant	(d) Կայանի Նախագծում, Գնում և Կառուցում, և Կոմերցիոն Շահագործում
The Developer shall commence construction of the Plant on the Project Site by the Construction Start Date, and commercial operation by the Scheduled Commercial Operation Date, in accordance with and subject to, the provisions of Articles 6 and 7, and any other relevant provisions of this Agreement.	Կառուցապատողն սկսում է Կայանի շինարարությունը Ծրագրի Տարածքում մինչև Շինարարության Մեկնարկի Ամսաթիվը, իսկ կոմերցիոն շահագործումը՝ մինչև Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը՝ 6-րդ և 7-րդ Հոդվածների դրույթների համաձայն և դրանց պահպանման պայմանով, և սույն Պայմանագրի ցանկացած այլ վերաբերելի դրույթների համաձայն:
3.2 Equity and Technological Partners	3.2. Բաժնետեր-Գործընկերներ և Տեխնոլոգիական Գործընկերներ
(a) The Parties and the Sponsor agree that, subject to the below, the EPC Contract shall be entered into either with:	(a) Կողմերը և Հովանավորը համաձայնում են, որ, ստորև սահմանված պայմանների պահպանմամբ, ՆԳԿ Պայմանագիրը պետք է կնքվի կամ
(i) the Sponsor; or	(i) Հովանավորի հետ, կամ
(ii) an Affiliate of the Sponsor; or.	(ii) Հովանավորի Փոխկապակցված Անձի հետ, կամ
(iii) a Permitted Technology Partner; or	(iii) Թույլատրված Տեխնոլոգիական Գործընկերոջ հետ, կամ
(iv) a consortium of the Sponsor and (or) an Affiliate of the Sponsor and (or) a Permitted Technology Partner acting on a joint and several basis.	(iv) համապարտության հիմունքներով գործող Հովանավորի և (կամ) Հովանավորի հետ Փոխկապակցված Անձի և (կամ) Թույլատրված Տեխնոլոգիական Գործընկերոջ կոնսորցիումի հետ:
(b) The Government shall be notified of any intended share sale or allotment of shares in the Developer to any potential shareholder (an "Additional Equity Partner"), or intended participation in the Project of any Person in the capacity of a Technology Partner (an "Additional	(b) Կառավարությունը պետք է գրավոր ծանուցվի որևէ հնարավոր բաժնետիրոջը (« Լրացուցիչ Բաժնետեր-Գործընկեր ») Կառուցապատողի բաժնետոմսերի ցանկացած վաճառքի կամ տեղաբաշխման մտադրության մասին, կամ Տեխնոլոգիական Գործընկերոջ կարգավիճակում

<p>Technology Partner"), in writing together with the Partner Information (an "Additional Partner Notice").</p>	<p>Ծրագրին մասնակցելու ցանկացած Անձի («Լրացուցիչ Տեխնոլոգիական Գործընկեր») մտադրության մասին՝ տրամադրելով Տեղեկատվություն Գործընկերոջ մասին («Լրացուցիչ Գործընկերոջ Ծանուցում»):</p>
<p>(c) Without prejudice to any requirement of the Applicable Laws (including obtaining the permission of PSRC and/or the State Commission for Protection of Economic Competition of the Republic of Armenia, as applicable) within thirty (30) Days of receiving a compliant Additional Partner Notice, the Government shall inform the Developer and the Sponsor in writing whether or not it consents to the participation of such Additional Equity Partner or Additional Technology Partner. Participation in the Project of an Additional Equity Partner or Additional Technology Partner, shall not be permitted without the consent of the Government, provided that such consent shall not be unreasonably delayed, and may be withheld by the Government if, and only if, in its reasonable opinion:</p>	<p>(c) Չսահմանափակելով Կիրառելի Օրենքների պահանջները (այդ թվում ՀԾԿ-ից և/կամ Հայաստանի Հանրապետության Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից թույլտվություն ստանալը, եթե կիրառելի է), պահանջներին համապատասխանող Լրացուցիչ Գործընկերոջ Ծանուցումը ստանալուց 30 (երեսուն) Օրվա ընթացքում Կառավարությունը գրավոր տեղեկացնում է Կառուցապատողին և Հովանավորին առ այն, թե արդյո՞ք նա տալիս է իր համաձայնությունը նման Լրացուցիչ Բաժնետեր-Գործընկերոջ կամ Լրացուցիչ Տեխնոլոգիական Գործընկերոջ մասնակցությանը: Առանց Կառավարության համաձայնության Լրացուցիչ Բաժնետեր-Գործընկերոջ կամ Լրացուցիչ Տեխնոլոգիական Գործընկերոջ մասնակցությունը Ծրագրում չի թույլատրվում՝ պայմանով, սակայն, որ նշված համաձայնությունը չպետք է անհիմն ձգձգվի և կարող է մերժվել Կառավարության կողմից բացառապես, եթե նրա հիմնավորված կարծիքով:</p>
<p>(i) the participation of the Additional Equity Partner or Additional Technology Partner in the Project will be prejudicial to the national security of Armenia; or</p>	<p>(i) Ծրագրում Լրացուցիչ Բաժնետեր-Գործընկերոջ կամ Լրացուցիչ Տեխնոլոգիական Գործընկերոջ մասնակցությունը սպառնում է Հայաստանի ազգային անվտանգությանը, կամ</p>
<p>(ii) the Additional Equity Partner or Additional Technology Partner is registered or organised in, or Controlled by any Person of a country with which Armenia does not have diplomatic relations.</p>	<p>(ii) Լրացուցիչ Բաժնետեր-Գործընկերը կամ Լրացուցիչ Տեխնոլոգիական Գործընկերը գրանցված կամ կազմակերպված է, կամ վերահսկվում է մի երկրի Անձի կողմից, որի հետ Հայաստանը չունի դիվանագիտական հարաբերություններ:</p>
<p>Once approved in accordance with this Article, the relevant Additional Equity Partner or Additional Technology Partner, as applicable, shall become a Permitted Equity Partner or Permitted Technology Partner, as applicable.</p>	<p>Լրացուցիչ Բաժնետեր-Գործընկերը կամ Լրացուցիչ Տեխնոլոգիական Գործընկերը, սույն Հոդվածի համաձայն հաստատվելուց հետո, համապատասխանաբար դառնում է Թույլատրված Բաժնետեր-Գործընկեր կամ Թույլատրված Տեխնոլոգիական Գործընկեր:</p>
<p>(d) Should the Government fail to respond to the Developer and the Sponsor within thirty (30) Days of a compliant Additional Partner Notice being received by the Government in accordance with Article 3.2(b) the</p>	<p>(d) Այն դեպքում, երբ Կառավարությունը չի պատասխանում Կառուցապատողին և Հովանավորին 3.2(b) Հոդվածին համապատասխան Կառավարության կողմից Լրացուցիչ Գործընկերոջ մասին Ծանուցումն</p>

Government's consent to the participation of the Additional Equity Partner or Additional Technology Partner in the Project will be deemed to have been granted.	ստանալու պահից 30 (երեսուն) Օրվա ընթացքում, ապա Ծրագրում Լրացուցիչ Բաժնետեր-Գործընկերոջ կամ Լրացուցիչ Տեխնոլոգիական Գործընկերոջ մասնակցության համար Կառավարության համաձայնությունը համարվում է շնորհված:
3.3 Shareholding Structure	3.3. Բաժնետիրական կառուցվածքը
(a) At the Signing Date and for two years after the Commercial Operation Date (and except in the event of any enforcement under the Financing Documents), the Anchor Sponsor(s) shall (between them) hold a controlling interest in the Developer and for these purposes a controlling interest shall comprise:	(a) Ստորագրման Ամսաթվին ու Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից հետո երկու տարվա ընթացքում (և բացառությամբ Ֆինանսավորման Փաստաթղթերով նախատեսված բռնազանձման դեպքերի) Խարսխային Հովանավոր(ներ)ը (միմյանց մեջ) կպահպանեն վերահսկող փաթեթ Կառուցապատողում ու այդ նպատակի համար վերահսկող փաթեթը բաղկացած կլինի՝
(i) A direct or indirect shareholding of more than 50% of the share capital of the Developer; and	(i) Կառուցապատողի բաժնետիրական կապիտալում 50%-ից ավելի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, ու
(ii) The power to elect a majority of the board of directors (or other similar constituent body) or otherwise direct the management and policies of the Developer, directly or indirectly; and	(ii) Իրավասություն՝ տնօրենների խորհրդի (կամ այդպիսի այլ մարմնի) մեծամասնությունն ընտրելու կամ այլապես ուղղորդելու Կառուցա-պատողի ղեկավարումն ու քաղաքականությունը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ու
(iii) The absence of any contractual or other arrangement that purports to transfer, assign or delegate to a third party the beneficial interests described in paragraphs (i) and (ii) above;	(iii) Պայմանագրային կամ այլ համաձայնության բացակայություն, որը ուղղված է փոխան-ցելու, տրամադրելու կամ պատվիրակելու երրորդ անձի վերը շարադրված (i) ու (ii) կետերի շահերը;
(b) in any event all the Sponsors will be jointly and severally liable for the fulfilment of Sponsor's obligations under the Agreement.	(b) ցանկացած դեպքում բոլոր Հովանավոր-ները համապարտ պատասխանատվություն են կրում Պայմանագրով Հովանավորի պարտավորությունների կատարման համար:
ARTICLE 4	ՀՈՂՎԱԾ 4
4. EXTENSION OF MILESTONE DATES	4. ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ
Without prejudice to the rights of the Developer under Article 10.2, if:	Առանց սահմանափակելու Կառուցապատողի՝ 10. 2 Հոդվածով նախատեսված իրավունքները, եթե.
(a) a material breach of the terms of this Agreement by the Government; or	(a) սույն Պայմանագրի պայմանների էական խախտումը Կառավարության կողմից, կամ
(b) a Force Majeure Event, a Change in Law or an Adverse Condition Event or a breach by the Offtaker of the PPA,	(b) Անհաղթահարելի Ուժի Դեպքը, Օրենքի Փոփոխությունը կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքը կամ Գնորդի կողմից ԷԳՊ-ի խախտումը

<p>delays (or is projected to delay) the achievement of any Milestone Dates, or the achievement of the Commercial Operation Date, then each such Milestone Date, and/or the Scheduled Commercial Operation Date, as applicable shall be adjusted by the Parties to take into account the effect of such delay in the achievement of the relevant Milestone Date, or the Commercial Operation Date, provided that:</p>	<p>ուղղակիորեն ուշացնում է (կամ կանխատեսվում է, որ կուշացնի) որևէ Նշանակալից Ամսաթվի ապահովումը, կամ Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը, ապա յուրաքանչյուր նման Նշանակալից Ամսաթիվ, և/կամ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը, ինչպես որ կիրառելի է, ճշգրտվում է Կողմերի կողմից՝ հաշվի առնելու համար նման ձգձգման ազդեցությունը համապատասխան Նշանակալից Ամսաթվի կամ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի վրա, պայմանով, որ.</p>
<p>(i) such dates shall not be extended to the extent that such delay would have nevertheless been experienced as a direct result of any fault of the Developer had such event not occurred; and</p>	<p>(i) նշված ամսաթվերը չպետք է երկարաձգվեն՝ այնքանով, որքանով նման ձգձգումը այնուամենայնիվ տեղի կունենար Կառուցապատողի մեղքով՝ նշված դեպքը տեղի չունենալու պարագայում. և</p>
<p>(ii) the Developer shall have made all reasonable endeavours in accordance with Good Industry Practice to prevent or reduce to a minimum and mitigate the effect of any delay, including recourse to alternate sources of services, equipment and materials and construction equipment.</p>	<p>(ii) Կառուցապատողը պետք է գործադրած լիներ բոլոր խելամիտ ջանքերը Ոլորտի Լավ Պրակտիկայի համաձայն՝ ցանկացած հետաձգման ազդեցությունը կանխելու կամ նվազագույնի հասցնելու կամ մեղմացնելու համար, այդ թվում նաև՝ դիմեր ծառայությունների, սարքավորումների և նյութերի և շինարարական սարքավորումների այլընտրանքային աղբյուրների օգտագործմանը:</p>

ARTICLE 5	ՀՈԴՎԱԾ 5
5. SITE	5. ՏԱՐԱԾՔԸ
5.1 Acquisition of the Project Site	5.1. Ծրագրի Տարածքի Ձեռքբերում
(a) The Government shall:	(a) Կառավարությունը պետք է.
(i) procure (without incurring Direct Costs) that the Owner shall enter into the Land Transfer Agreement and transfer the ownership of the Project Site to the Developer free and clear of all encumbrances, as a condition precedent to the Financial Close in accordance with Article 3.1(c) and, if required to ensure a valid and binding transfer of the Project Site as land of appropriate purpose (energy, transport, communication, utility infrastructure land) to the Developer, will procure the issuance of a Government resolution to that effect; and	(i) ապահովի (առանց Ուղղակի Ծախսեր կրելու), որ Սեփականատերը կնքի Հողամասի Փոխանցման Պայմանագիրը և Կառուցապատողին փոխանցի Ծրագրի Տարածքը՝ որևէ ծանրաբեռնումներից ազատ վիճակում, որպես Ֆինանսավորման Ամփոփման Հետաձգող Պայման՝ համաձայն 3.1(c) Հոդվածի, և եթե դա պահանջվում է Ծրագրի Տարածքը վավեր և պարտավորեցնող կերպով համապատասխան նպատակային նշանակությամբ (էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր), Կառուցապատողին փոխանցելն ապահովելու համար, ապահովում է Կառավարության կողմից համապատասխան որոշման ընդունումը, և
(ii) grant, or procure the grant to the Developer (without incurring Direct Costs) of all necessary rights of way and easements, and other rights (including any required to construct, operate and maintain any Interface or any power, water (or any other utility) interconnections including the power evacuation line) required by the Developer in order to allow it to implement, construct, operate and maintain the Project. The Developer acknowledges that where obtaining certain rights of way and easements incurs a cost, the Developer is liable for such costs, to the extent such costs are reasonable and reflective of the going market rate for securing such rights and easements.	(ii) շնորհի Կառուցապատողին կամ ապահովի (առանց Ուղղակի Ծախսեր կրելու), որ Կառուցապատողին շնորհվեն տարանցման և սերվիտուտի բոլոր անհրաժեշտ իրավունքները (այդ թվում նաև՝ իրավունքները, որոնք պահանջվում են ցանկացած Միացման կամ էլեկտրական էներգիայի, ջրի (կամ ցանկացած այլ կոմունալ ծառայության) միացումները, այդ թվում՝ տարհանման գիծը, կառուցելու, շահագործելու և սպասարկելու համար), որոնք անհրաժեշտ են Կառուցապատողին՝ Ծրագրի իրականացման, կառուցման, շահագործման և սպասարկման համար: Կառուցապատողն ընդունում է, որ այն դեպքում, երբ որոշակի տարանցման կամ սերվիտուտի իրավունքի տրամադրումը ենթադրում է ծախսեր, ապա Կառուցապատողն է կրում այդ ծախսերը, այնքանով, որքանով նման ծախսերը խելամիտ են և արտացոլում են նշված իրավունքների ապահովման համար ընթացիկ շուկայական սակագները:
(b) The Government warrants that the Developer shall enjoy peaceful possession of the Project Site and that the Project Site:	(b) Կառավարությունը երաշխավորում է, որ Կառուցապատողը հանգիստ տիրապետելու է Ծրագրի Տարածքը, և որ Ծրագրի Տարածքը՝
(i) is free and clear of all encumbrances and all activities that might interfere with the Developer implementing the Project, which have not been	(i) ազատ է ցանկացած ծանրաբեռնումներից և բոլոր տեսակի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել Կառուցապատողի կողմից Ծրագրի

disclosed to, are not known or should not have been reasonably known by the Developer at the time of the signing of this Agreement; and	իրականացմանը, և որոնք Կառուցապատողին չեն բացահայտվել, հայտնի չեն կամ ողջամտորեն չպետք է հայտնի լինեին սույն Պայմանագիրը ստորագրելու ժամանակ. և
(ii) is in no way prohibited from being used for the Project, and all relevant Government Authorities have approved the Project Site to being used in such a way.	(ii) ոչ մի ձևով արգելված չէ Ծրագրի նպատակով օգտագործման համար, և բոլոր համապատասխան Պետական Մարմինները հաստատել են Ծրագրի Տարածքի նման օգտագործումը:
(iii) Subject to Clause 13.2A, for the avoidance of doubt, the Government does not carry responsibility for any subsoil conditions, which may adversely affect the construction or operation of the Plant.	(iii) 13.2A Հոդվածի պահպանմամբ՝ բացառելով որևէ կասկած՝ Կառավարությունը չի կրում որևէ պատասխանատվություն ընդերքի որևէ բնութագրիչի համար, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ Կայանի շինարարության կամ շահագործման վրա:
5.2 Delivery Point	5.2. Մատակարարման Կետ
(a) The Developer shall be permitted to, and the Government shall grant, or procure the grant of all necessary rights of way and easements required to, connect, remain connected to, and use, and evacuate electrical energy to the distribution network as required by the Developer to enable it to supply electricity to the delivery point to be determined in accordance with the MTR (the " Delivery Point ").	(a) Կառուցապատողին թույլատրվում է, և Կառավարությունը շնորհում է կամ ապահովում է շնորհումը բոլոր անհրաժեշտ տարանցման և սերվիտուտի իրավունքների, որոնք պահանջվում են միանալու, միացած մնալու, օգտագործելու և էլեկտրական էներգիան բաշխման ցանցին մատակարարելու, ինչպես պահանջվում է Կառուցապատողի կողմից, որպեսզի նա կարողանա էլեկտրական էներգիա մատակարարել ՆՏՊ-ի համաձայն որոշված մատակարարման կետ (« Մատակարարման Կետ »):
(b) The Government hereby acknowledges and agrees that the Developer shall only be responsible for the delivery of Net Electrical Energy up to the Delivery Point and shall not be responsible for transmission of Net Electrical Energy beyond such Delivery Point.	(b) Սույնով Կառավարությունը հաստատում և ընդունում է, որ Կառուցապատողը պատասխանատու է միայն մինչև Մատակարարման Կետ Ջուտ էլեկտրական էներգիայի մատակարարման համար և պատասխանատու չէ նշված Մատակարարման Կետից հետո Ջուտ էլեկտրական էներգիայի փոխանցման համար:
5.3 Site Access	5.3. Մուտքը Տարածք
The Government shall ensure (without incurring Direct Costs) that sufficient access to and from the Project Site suitable for construction and operation of the Plant, subject to Applicable Laws, is made available so as to ensure that the Developer can properly carry out the Project.	Կառավարությունը պետք է ապահովի (առանց Ուղղակի Ծախսեր կրելու), որ Կիրառելի Օրենքների պահպանմամբ Ծրագրի Տարածք և Ծրագրի Տարածքից ապահովվի բավարար հասանելիություն, որը օգտագործելի է Կայանի շինարարության և շահագործման համար՝ երաշխավորելու համար

	Կառուցապատողի կողմից Ծրագրի պատշաճ իրականացման հնարավորությունը:
--	--

ARTICLE 6	ՀՈԴՎԱԾ 6
6. ENGINEERING, PROCUREMENT AND CONSTRUCTION OF THE PLANT	6. ԿԱՅԱՆԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ, ԳՆՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ
6.1 Construction	6.1. Շինարարություն
(a) The Developer shall by the Construction Start Date commence the construction of the Plant in accordance with the Project Schedule and shall complete the construction and commissioning of the Plant by the Scheduled Commercial Operation Date (as such date may be extended in accordance with the provisions of this Agreement).	(a) Կառուցապատողը սկսում է Կայանի շինարարությունը մինչև Շինարարության Մեկնարկի Ամսաթիվը՝ համաձայն Ծրագրի Ժամանակացույցի, և ավարտում Կայանի շինարարությունը և շահագործման հանձնումը մինչև Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը (ինչպես որ նշված ամսաթիվը կարող է հետաձգվել սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան):
(b) The Developer shall construct and complete the Plant in accordance with:	(b) Կառուցապատողը կառուցում և ավարտում է Կայանը համաձայն հետևյալի.
(i) the Plant Design Documentation;	(i) Կայանի Նախագծային Փաստաթղթերի,
(ii) Good Industry Practice;	(ii) Ոլորտի Լավ Պրակտիկայի,
(iii) the Project Schedule;	(iii) Ծրագրի Ժամանակացույցի,
(iv) all Applicable Laws and Applicable Permits;	(iv) բոլոր Կիրառելի Օրենքների և Կիրառելի Թույլտվությունների,
(v) the provisions of this Agreement;	(v) սույն Պայմանագրի դրույթների,
(vi) the MTR; and	(vi) ՆՏՊ -ի, և
(vii) in a manner consistent with the requirements of the material damage, third party liability and business interruption insurance policies.	(vii) այնպիսի եղանակով, որը համապատասխանում է էական վնասի, երրորդ անձանց առջև պատասխանատվության և գործուներության դադարման ապահովագրական քաղաքականության պահանջներին:
6.2 Penalties for Delay	6.2. Տուժանքներ Ուշացման համար
(a) The Developer acknowledges that the Government will suffer actual damages if, due to causes attributable to the Developer or any of its contractors and suppliers (except the Offtaker, or any Government Authority, or Power Sector Entity), the Developer fails to achieve the Commercial Operation Date on or before the Scheduled Commercial Operation Date. Subject to Article 4, in the event of such a delay (unless it is directly attributable to any fault of the Government, any	(a) Կառուցապատողն ընդունում է, որ Կառավարությունը կրելու է իրական վնասներ, եթե Կառուցապատողին կամ նրա կապալառուներից որևէ մեկին և մատակարարներին (բացառությամբ Գնորդի, որևէ Պետական Մարմնի կամ Էներգետիկայի Ոլորտի Մասնակցի) վերագրվելի պատճառներով Կառուցապատողին չի հաջողվում հասնել Կոմերցիոն Շահագործման Ամսաթվին Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի օրը կամ դրանից առաջ:

<p>Government Authority, the Offtaker, any Power Sector Entity or any utility suppliers licensed and/or regulated by PSRC, or caused by a Force Majeure Event or Adverse Condition Event), the Developer shall pay penalties to the Government as provided below.</p>	<p>Պահպանելով 4-րդ Հոդվածի պայմանները՝ այդպիսի ուշացման դեպքում (բացառությամբ, եթե այն տեղի է ունեցել Կառավարության, որևէ Պետական Մարմնի, Գնորդի, որևէ Էներգետիկայի Ոլորտի Մասնակցի կամ ՀԾԿԿ կողմից լիցենզավորված կամ կարգավորվող՝ կոմունալ ծառայությունների մատակարարի մեղքով, կամ Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետևանքով) Կառուցապատողը Կառավարությանը վճարում է տուգանքներ համաձայն ստորև բերվածի:</p>
<p>(b) Subject always to Article 6.2(a), if the Developer fails to achieve the Commercial Operation Date on or before the Scheduled Commercial Operation Date due to causes attributable to the Developer or any of its contractors and suppliers (except the Offtaker, any Government Authority or Power Sector Entity) (and excluding any such failure due to breach by the Government or Offtaker of its obligations, a Force Majeure Event or an Adverse Condition Event), the Developer shall pay, in addition to any penalties imposed by PSRC in accordance with all Applicable Laws, penalties at the rate of USD 6,000 (six thousand) per Day of delay from the Scheduled Commercial Operation Date until the earlier of:</p>	<p>(b) Միշտ 6.2(a) Հոդվածի պահպանման պայմանով, եթե Կառուցապատողը Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվին կամ դրանից առաջ չի ապահովել Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը Կառուցապատողին կամ նրա կապալառուներից որևէ մեկին և մատակարարներին (բացառությամբ Գնորդի, որևէ Պետական Մարմնի կամ Էներգետիկայի Ոլորտի Մասնակցի) վերագրվելի պատճառներով (և բացառելով ցանկացած այդպիսի խախտում, որը տեղի է ունեցել Կառավարության կամ Գնորդի կողմից իրենց պարտավորությունների խախտման, Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետևանքով), Կառուցապատողը պարտավոր է, ի հավելումն Կիրառելի Օրենքների համաձայն ՀԾԿԿ կողմից կիրառված տուգանքների, վճարել տուգանքներ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից հետո ուշացման յուրաքանչյուր Օրվա համար օրական 6,000 (վեց հազար) ԱՄՆ դոլարի չափով, մինչև հետևյալներից ամենավաղը.</p>
<p>(i) the occurrence of the Commercial Operation Date of the Plant; and</p>	<p>(i) Կայանի Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի տեղի ունենալը, կամ</p>
<p>(ii) the COD Longstop Date.</p>	<p>(ii) ԿՇԱ Ծայրահեղ Ամսաթիվը:</p>
<p>(c) Any such payments of penalties shall be made by the Developer to the Government within thirty (30) Days of the Developer's receipt of a notice from the Government which sets forth the amounts of penalties which are then due and payable, in accordance with Article 9.</p>	<p>(c) Տուգանքների ցանկացած նման վճարումներ Կառուցապատողի կողմից Կառավարությանը պետք է կատարվեն Կառուցապատողի կողմից Կառավարության ծանուցումը ստանալուց 30 (երեսուն) Օրվա ընթացքում, որում սահմանվում է այդ պահի դրությամբ վճարման ենթակա տուգանքների գումարը՝ համաձայն 9-րդ Հոդվածի:</p>
<p>(d) Notwithstanding Article 6.2(b), the Developer shall have one time right to extend the COD Longstop Date for a period of 90(ninety) Days by paying a lump sum penalty of USD 1,620,000 (one million six hundred</p>	<p>(d) Չհակասելով 6.2(b) Հոդվածին, Կառուցապատողն իրավունք ունի մեկ անգամ երկարաձգել ԿՇԱ Ծայրահեղ Ամսաթիվը 90(իննսուն) Օրով՝ վճարելով միանվագ տուգանք՝ 1,620,000 (մեկ</p>

<p>twenty thousand) and for the avoidance of doubt the Developer shall have no liability to pay penalties pursuant to Article 6.2(b) during such extended period, except for the penalties imposed by PSRC in accordance with Applicable Laws.</p>	<p>միլիոն վեց հարյուր քսան հազար) ԱՄՆ դոլարի չափով և, կասկածներից խուսափելու համար, Կառուցապատողը պետք է չունենա 6.2(b) Հոդվածի համաձայն տուգանքներ վճարելու պարտավորություն նման երկարաձգված ժամանակահատվածի համար, բացառությամբ Կիրառելի Օրենքների համաձայն ՀՄԿ կողմից կիրառված տուգանքների:</p>
<p>(e) In the event that the Developer fails to pay such penalties within the specified period, Government shall have the right to recover the amount of such penalties by encashing the Performance Bank Guarantee.</p>	<p>(e) այն դեպքում, երբ Կառուցապատողը չի վճարում նման տույժերը նշված ժամանակահատվածում, Կառավարությունը իրավունք կունենա ապահովելու այդ գումարների ստացումը Կատարման Բանկային Երաշխիքի կանխիկացմամբ:</p>
<p>6.3 Commissioning Plan</p>	<p>6.3. Շահագործման Հանձնելու Պլանը</p>
<p>(a) The Developer shall elaborate and after the approval by the Independent Engineer submit to the Acceptance Commission a detailed plan delineating the actions to be undertaken by the Developer and/or the EPC Contractor towards commissioning of the Plant (the "Commissioning Plan"). The Acceptance Commission shall provide its comments and suggestions for modifications of such plan within thirty (30) Days of receipt of the same. The Developer shall within fifteen (15) Days revise the Commissioning Plan based on such comments and suggested modifications and re-submit the revised Commissioning Plan to the Acceptance Commission in accordance with the procedure set out in this Article. The final Commissioning Plan shall be approved by the Acceptance Commission, after taking into account all observations of the Government.</p>	<p>(a) Կառուցապատողը մշակում և Անկախ Ինժեների կողմից հաստատումից հետո Ընդունող Հանձնաժողովին է ներկայացնում մանրամասն պլանը, որը արտացոլում է Կայանը շահագործման հանձնելու համար Կառուցապատողի և/կամ ՆԳԿ Կապալառուի կողմից ձեռնարկվելիք գործողությունները («Շահագործման Հանձնելու Պլան»): Ընդունող Հանձնաժողովը տրամադրում է նշված պլանի ձևափոխմանն ուղղված իր դիտողությունները ու առաջարկները պլանը ստանալուց 30 (երեսուն) Օրվա ընթացքում: Կառուցապատողը պետք է 15 (տասնհինգ) Օրվա ընթացքում վերանայի Շահագործման Հանձնելու Պլանը՝ նման դիտողությունների և առաջարկվող փոփոխությունների հիման վրա, և կրկին ներկայացնի վերանայված՝ Շահագործման Հանձնելու Պլանը Ընդունող Հանձնաժողով՝ սույն կետով սահմանված կարգով: Վերջնական Շահագործման Հանձնելու Պլանը ենթակա է հաստատման Ընդունող Հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով Կառավարության բոլոր դիտողությունները:</p>
<p>(b) The Commissioning Plan shall include as a minimum:</p>	<p>(b) Շահագործման Հանձնելու Պլանը պետք է առնվազն ներառի.</p>
<p>(i) the scope and objectives of the Commissioning Tests, as required to be undertaken to prove that the Plant has been constructed and completed in compliance with Article 6.1 and is capable of commercial operation;</p>	<p>(i) Շահագործման Հանձնելու Փորձարկումների շրջանակը և նպատակները, որոնք պետք է կատարվեն ապացուցելու համար, որ Կայանը կառուցվել և ավարտված վիճակի է հասցվել 6.1 Հոդվածին համապատասխան և կարող է օգտագործվել կոմերցիոն շահագործման համար,</p>

(ii) organisational and administrative responsibilities for undertaking the Commissioning Tests;	(ii) կազմակերպչական և վարչական պարտականությունները Շահագործման Հանձնելու Փորձարկումները կատարելու համար.
(iii) pre-conditions, conditions and logistical support requirements for undertaking the Commissioning Tests;	(iii) նախապայմանները, պայմանները և լոգիստիկ ապահովման պահանջները Շահագործման Հանձնելու Փորձարկումները կատարելու համար.
(iv) schedule for the detailed Commissioning Tests; and	(iv) Շահագործման Հանձնելու Փորձարկումների մանրամասն ժամանակացույցը. և
(v) the procedures and data collection, collation, analysis methodology and report documentation for the Commissioning Tests;	(v) ընթացակարգեր և տվյալների հավաքման, համեմատման, վերլուծման մեթոդաբանությունը և հաշվետու փաստաթղթեր Շահագործման Հանձնելու Փորձարկումների համար.
and shall comply with the requirements of Applicable Laws.	և պետք է համապատասխանի Կիրառելի Օրենքների պահանջներին:
(c) If any member of the Acceptance Commission is to be appointed by the Governmentor any Government Authority, the Government shall promptly after request of the Developer appoint such member or procure that the relevant Government Authority appoints such member (as applicable).	(c) Եթե Ընդունող Հանձնաժողովի որևէ անդամ պետք է նշանակվի Կառավարության կամ որևէ Պետական Մարմնի կողմից, ապա Կառավարությունը պետք է անմիջապես Կառուցապատողի դիմումի հիման վրա նշանակի այդպիսի անդամին կամ ապահովի, որ համապատասխան Պետական Մարմինը նշանակի այդ անդամին (ըստ կիրառելիության):

ARTICLE 7	ՀՈԴՎԱԾ 7
7. START-UP, COMMISSIONING COMMERCIAL OPERATION	7. ԳՈՐԾԱՐԿՈՒՄ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ ԵՎ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ
7.1 Initial Energisation	7.1. Սկզբնական Սնուցում
(a) The Government shall use its best efforts to cause (without incurring Direct Costs) at the relevant Interface sufficient start-up electricity, and any other utilities as are required for the start-up, testing and commissioning of the Plant to be made available, at the Developer's cost, pursuant	(a) Կառավարությունը պետք է գործադրի իր լավագույն ջանքերը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու), որպեսզի համապատասխան Միացման կետում Կառուցապատողի հաշվին տրամադրվի Կայանի գործարկման, փորձարկման և շահագործման հանձնելու համար անհրաժեշտ բավարարժավալի էլեկտրակ ան էներգիա, ինչպես նաև ցանկացած այլ կոմունալ ծառայություններ՝ համաձայն համապատասխան Ծրագրի Փաստաթղթի:

<p>to the relevant Project Documents.</p>	
<p>(b) Should the Government fail to use its best efforts to cause (without incurring Direct Costs) that the relevant utility or system is available as required for the start-up, testing and commissioning of the Plant, and such failure causes a delay in the achievement of the Commercial Operation Date, such failure will be classified as a material breach by the Government of the terms of this Agreement for the purposes of Articles 4 and 16.2.</p>	<p>(b) Եթե Կառավարությունը չի գործադրում իր լավագույն ջանքերը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու), որպեսզի համապատասխան կոմունալ ծառայությունները կամ համակարգերը հասանելի լինեն Կայանի գործարկման, փորձարկման և շահագործման հանձնելու համար, և դրա հետևանքով ուշացվում է Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը, ապա նման թերացումը սույն Պայմանագրի 4-րդ Հոդվածի և 16.2 Հոդվածի նպատակով դիտվում է որպես Կառավարության կողմից սույն Պայմանագրի պայմանների էական խախտում:</p>
<p>7.2 Commissioning Testing</p>	<p>7.2. Շահագործման Հանձնելու Փորձարկում</p>
<p>(a) The Developer shall be responsible for the implementation of the Commissioning Tests in accordance with the Commissioning Plan and the Applicable Laws, and shall give the Acceptance Commission and the Independent Engineer 15 Days advance notice of all testing, as well as the requirements of each Commissioning Test in relation to the obligations of the Government pursuant to Article 7.1. Any such testing date shall be set by the mutual consent of the Developer and System Operator in accordance with Applicable Laws.</p>	<p>(a) Կառուցապատողը պատասխանատու է Շահագործման Հանձնելու Փորձարկումները Շահագործման Հանձնելու Պլանի և Կիրառելի Օրենքների համաձայն իրականացնելու համար, և պարտավոր է Ընդունող Հանձնաժողովին ու Անկախ Ինժեներին 15 Օր շուտ տրամադրել ծանուցում բոլոր փորձարկումների մասին՝ նշելով յուրաքանչյուր Շահագործման Հանձնելու Փորձարկման պահանջները՝ կապված 7.1 Հոդվածով սահմանված Կառավարության պարտավորությունների հետ: Յուրաքանչյուր նման փորձարկման ամսաթիվը սահմանվում է Կառուցապատողի և Համակարգի Օպերատորի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայն Կիրառելի Օրենքների:</p>

<p>(b) A representative of the Acceptance Commission shall be entitled to be present at all Commissioning Tests.</p>	<p>(b) Ընդունող Հանձնաժողովի ներկայացուցիչը իրավունք ունի ներկա լինելու բոլոր Շահագործման Հանձնելու Փորձարկումներին:</p>
<p>(c) A representative of the Independent Engineer shall be present at and shall ascertain the results of all Commissioning Tests.</p>	<p>(c) Անկախ Ինժեների ներկայացուցիչը պարտավոր է ներկա լինել բոլոր Շահագործման Հանձնելու Փորձարկումներին և հաստատել դրանց արդյունքները:</p>
<p>(d) During the Commissioning Tests, the Government shall use its best efforts to cause (without incurring Direct Costs) the Plant to be despatched to the extent reasonably required by the Developer in order to allow the Developer to carry out the Commissioning Tests as required, subject to the Applicable Laws. Should the Government so fail to use its best efforts to cause (without incurring Direct Costs) the Plant to be despatched in accordance with the Commissioning Plan and as reasonably required by the Developer, and such failure causes a delay in the achievement of the Commercial Operation Date, such failure will be classified as a material breach by the Government of the terms of this Agreement for the purposes of Articles 4 and 16.2.</p>	<p>(d) Շահագործման Հանձնելու Փորձարկումների ժամանակ Կառավարությունը գործադրում է իր լավագույն ջանքերը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու), որ Կայանը բեռնված լինի Կառուցապատողի կողմից ողջամտորեն պահանջվող չափով, որպեսզի Կառուցապատողը կարողանա իրականացնել Շահագործման Հանձնելու Փորձարկումները պահանջվածին համապատասխան՝ Կիրառելի Օրենքների պահանջների պահպանման պայմանով: Եթե Կառավարությունը չի գործադրում իր լավագույն ջանքերը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու) Շահագործման Հանձնելու Պլանին և Կառուցապատողի ողջամիտ պահանջին համապատասխան Կայանի բեռնումն ապահովելու հարցում, և նման թերացումը հանգեցնում է Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի ուշացմանը, ապա նման թերացումը սույն Պայմանագրի 4-րդ Հոդվածի և 16.2 Հոդվածի նպատակով դիտվում է որպես Կառավարության կողմից սույն Պայմանագրի պայմանների էական խախտում:</p>
<p>7.3 Acceptance Act</p>	<p>7.3. Ընդունման Ակտ</p>

<p>(a) Following the completion of the Commissioning Tests and the satisfaction by the Developer of other relevant requirements of the Applicable Laws, the Acceptance Commission shall promptly either:</p>	<p>(a) Շահագործման Հանձնելու Փորձարկումների ավարտից և Կառուցապատողի կողմից Կիրառելի Օրենքների այլ վերաբերելի պահանջների բավարարումից հետո Ընդունող Հանձնաժողովը շուտափույթ կատարում է հետևյալներից մեկը.</p>
<p>(i) issue an Acceptance Act confirming that it is satisfied that the Commissioning Tests and other relevant requirements have been satisfied; or</p>	<p>(i) տրամադրում է Ընդունման Ակտ՝ հաստատելով, որ նա բավարարված է, որ Շահագործման Հանձնելու Փորձարկումները և այլ վերաբերելի պահանջները կատարվել են, կամ</p>
<p>(ii) issue a notice saying that an Acceptance Act has not been issued, specifying any outstanding matters that must be attended to before the Acceptance Act can be issued.</p>	<p>(ii) տրամադրում է ծանուցում, որտեղ նշվում է, որ Ընդունման Ակտ չի տրվում՝ նշելով ցանկացած չլուծված խնդիրներ, որոնք պետք է լուծվեն, որպեսզի տրամադրվի Ընդունման Ակտ:</p>
<p>(b) Where the Acceptance Commission has issued a notice pursuant to Article 7.3(a)(ii), the Developer shall attend to such matters and shall give the Acceptance Commission and the Independent Engineer further notice in accordance with Article 7.2(a) but dealing only with matters raised in the Acceptance Commission's notice and with a notice period of no less than four (4) working days for the purposes of Article 7.3(a) so that the procedures in Article 7.3(a) are repeated as often as necessary to ensure that all outstanding matters are attended to and</p>	<p>(b) Այն դեպքում, եթե Ընդունող Հանձնաժողովը տվել է ծանուցում, համաձայն 7.3(a)(ii) Հոդվածի, Կառուցապատողը պետք է լուծի նշված խնդիրները և Ընդունող Հանձնաժողովին և Անկախ Ինժեներին ուղարկի մեկ այլ ծանուցում՝ համաձայն 7.2(a) Հոդվածի, որը սակայն առնչվում է միայն Ընդունող Հանձնաժողովի ծանուցման մեջ բարձրացված խնդիրներին և 7.3(a) Հոդվածի նպատակներով նվազագույնը 4 (չորս) աշխատանքային օր առաջ կատարված ծանուցմամբ, որպեսզի 7.3(a) Հոդվածում սահմանված ընթացակարգերը կրկնվեն այնքան անգամ, որքան հարկավոր է բոլոր չլուծված հարցերի լուծման և համաձայն 7.3(a)(i) Հոդվածի Ավարտական Ակտի տրամադրման համար:</p>

<p>the Acceptance Act can be issued in accordance with 7.3(a)(i).</p>	
<p>(c) The issue of an Acceptance Act shall indicate for the purpose of ascertaining the Commercial Operation Date that the Plant is complete, that the Commissioning Tests and other relevant requirements of the Applicable Laws have been satisfied and the Plant is capable of commercial operation in accordance with this Agreement, and as applicable the Power Purchase Agreement, following the Developer securing the Completion Act, and PSRC adopting a resolution on the License Revision and approval of the Tariffs.</p>	<p>(c) Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի հաստատման առումով Ավարտական Ակտի տրամադրումը նշանավորում է այն, որ Կայանը բերված է ավարտուն վիճակի, որ Շահագործման Հանձնելու Փորձարկումները և Կիրառելի Օրենքների այլ վերաբերելի պահանջները կատարվել են և Կայանը կարող է օգտագործվել կոմերցիոն շահագործման համար՝ համաձայն սույն Պայմանագրի և համապատասխանաբար էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրի՝ Կառուցապատողի կողմից Ավարտական Ակտը ստանալուց և ՀԾԿ կողմից Սակագների հաստատման և Լիցենզիայի Վերանայման մասին որոշում ընդունելուց հետո:</p>
<p>7.4 Commercial Operation</p>	<p>7.4. Կոմերցիոն Շահագործում</p>
<p>From the Commercial Operation Date onwards the Developer shall operate, repair and maintain the Plant and provide Net Electrical Energy to the Offtaker in accordance with:</p>	<p>Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից սկսած՝ Կառուցապատողը պետք է շահագործի, վերանորոգի և սպասարկի Կայանը, Գնորդին մատակարարի Զուտ էլեկտրական էներգիա՝ համաձայն հետևյալի.</p>
<p>(a) Good Industry Practice;</p>	<p>(a) Ոլորտի Լավ Պրակտիկայի,</p>
<p>(b) the Applicable Permits;</p>	<p>(b) Կիրառելի Թույլտվությունների,</p>
<p>(c) all Applicable Laws;</p>	<p>(c) Կիրառելի Օրենքների,</p>
<p>(d) the provisions of this Agreement; and</p>	<p>(d) սույն Պայմանագրի դրույթների, և</p>

<p>(e) the provisions of any relevant Project Document, particularly the Power Purchase Agreement.</p>	<p>(e) ցանկացած վերաբերելի Ծրագրի Փաստաթղթի, մասնավորապես՝ էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրի դրույթների:</p>
<p>ARTICLE 8</p>	<p>ՀՈԴՎԱԾ 8</p>
<p>8. UTILITY SUPPLY</p>	<p>8. ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ</p>
<p>8.1 Utility Interconnection Specifications</p>	<p>8.1. Կոմունալ Ծառայությունների Փոխկապակցման Պայմաններ</p>
<p>(a) The Developer shall ensure that the Plant Design Documentation contains all pertinent information and data regarding design, engineering materials, equipment, construction and other specifications, which the Developer proposes to use to achieve tie-in to each Interface and to receive services from each utility.</p>	<p>(a) Կառուցապատողը պարտավոր է ապահովել, որ Կայանի Նախագծային Փաստաթղթերը պարունակեն նախագծին, տեխնիկական միջոցներին, նյութերին, սարքավորումներին, շինարարությանը վերաբերող ողջ վերաբերելի տեղեկատվությունն ու տվյալները և այլ տեխնիկական պայմանները, որոնք Կառուցապատողն առաջարկում է օգտագործել յուրաքանչյուր Միացման կետում միացում ապահովելու և յուրաքանչյուր կոմունալ ծառայություն ստանալու համար:</p>
<p>(b) The Developer shall coordinate with the relevant utility or service provider and the Government to ensure prompt and safe interconnection.</p>	<p>(b) Կառուցապատողը պարտավոր է համագործակցել համապատասխան կոմունալ ծառայության մատակարարի և Կառավարության հետ՝ արագ և անվտանգ փոխկապակցումն ապահովելու համար:</p>

ARTICLE 9	ՀՈԴՎԱԾ 9
9. PAYMENT STATEMENTS AND INVOICING	9. ՎՃԱՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄ
9.1 Monthly Statement	9.1. Ամսական Ամփոփագիր
(a) From the Effective Date onwards until the end of the Term, the Developer shall submit a monthly statement to the Government stated in Drams for any amounts owing by either under this Agreement, including:	(a) Գործողության Ամսաթվից սկսած մինչև Ժամկետի ավարտը Կառուցապատողը պետք է ներկայացնի Կառավարությանը ՀՀ դրամով կազմված ամսական ամփոփագիր ցանկացած գումարների համար, որոնք ենթակա են վճարման որևէ Կողմի կողմից սույն Պայմանագրի ներքո, ներառյալ.
(i) any amount under Article 10.1(b) and the purchase price of any Assigned Amount under Article 10.1(c);	(i) ցանկացած գումար՝ համաձայն 10. 1(b) Հոդվածի, և ցանկացած Ձիջված Գումարի գնման գինը՝ համաձայն 10. 1(c) Հոդվածի,
(ii) any amount owing to the Developer in accordance with Article 15;	(ii) Կառուցապատողին 15-րդ Հոդվածի համաձայն վճարման ենթակա ցանկացած գումար, և
(iii) any Deemed Energy Payment owed to the Developer in accordance with Article 10.2, and	(iii) Կառուցապատողին 10. 2 Հոդվածի համաձայն վճարման ենթակա ցանկացած Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարում, և
(iv) any other amount owing to the Developer in accordance with this Agreement,	(iv) Կառուցապատողին սույն Պայմանագրի համաձայն վճարման ենթակա ցանկացած այլ գումար,
less any amounts the Developer may owe to the Government in accordance with Article 6.2, or any other provision of this Agreement, provided that the Developer shall not submit a monthly statement where neither Party is owed any amount for the relevant month.	հանած այն գումարները, որոնք Կառուցապատողը կարող է պարտք լինել Կառավարությանը՝ 6.2 Հոդվածի կամ սույն Պայմանագրի ցանկացած այլ դրույթի համաձայն՝ պայմանով, որ Կառուցապատողը չպետք է ներկայացնի ամսական ամփոփագիր, եթե այդ ամսվա համար առկա չէ որևէ պարտք որևէ Կողմի նկատմամբ:
(b) The monthly statement shall contain reasonably detailed calculations of the amounts payable under it, together with such further supporting documentation and information as the Parties may agree or as required by Applicable Laws.	(b) Ամսական ամփոփագիրը պետք է պարունակի դրանցով վճարման ենթակա գումարների ողջամտորեն մանրամասնած հաշվարկները՝ Կողմերի կողմից համաձայնեցված կամ Կիրառելի Օրենքներով պահանջվող ցանկացած հիմնավորող փաստաթղթերի և տեղեկատվության հետ միասին:
9.2 Invoicing, billing and payment	9.2. Հաշիվների դուրսգրում, ներկայացում և վճարում
(a) If the monthly statement delivered in accordance with Article 9.1 shows that an amount is due from the Government to the Developer, the Developer shall, together with the delivery of the monthly	(a) Եթե 9.1 Հոդվածին համապատասխան ուղարկված ամսական ամփոփագրի համաձայն, որևէ գումար ենթակա է վճարման Կառավարության կողմից Կառուցապատողին, Կառուցապատողն ամսական

statement, submit an invoice for that amount to the Government.	ամփոփագրի հետ միասին պետք է Կառավարությանը ներկայացնի նաև հաշիվ այդ գումարի համար:
(b) If the monthly statement delivered in accordance with Article 9.1 shows that an amount is due from the Developer to the Government, then the Government may submit an invoice to the Developer for that amount.	(b) Եթե 9.1 Հոդվածին համապատասխան ուղարկված ամսական ամփոփագրի համաձայն, որևէ գումար է ենթակա վճարման Կառուցապատողի կողմից Կառավարությանը, Կառավարությունը կարող է ներկայացնել Կառուցապատողին հաշիվը այդ գումարի համար:
(c) The relevant Party shall pay to the other Party the amount shown in the invoice as due on or before the date that is thirty (30) Days after the date the invoice was submitted to it, unless otherwise provided for in this Agreement.	(c) Համապատասխան Կողմը վճարում է մյուս Կողմին հաշվի մեջ նշված գումարը՝ ոչ ուշ, քան հաշիվը ներկայացնելու ամսաթվից 30 (երեսուն) Օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով:
(d) Any invoice delivered pursuant to this Article shall be paid in Drams.	(d) Սույն Հոդվածի համաձայն ներկայացված ցանկացած հաշիվ վճարվում է Դրամով:
(e) The payment of the net amount set out in the monthly statement shall be made without (and free and clear of any deduction for) set-off or counterclaim.	(e) Ամսական ամփոփագրում նշված զուտ գումարի վճարումը պետք է կատարվի առանց հաշվանցումների կամ հակընդդեմ պահանջների (և առանց որևէ պահումների)
9.3 Late Payments	9.3. Ժամկետանց Վճարումներ
(a) Late payment of any amounts due pursuant to this Agreement (other than penalties incurred pursuant to Article 6) shall bear interest at the Late Payment Rate, unless a fine for such late payment is payable and paid pursuant to the PPA.	Սույն Պայմանագրի համաձայն վճարման ենթակա ցանկացած ժամկետանց վճարումների գումարների վրա (բացառությամբ 6-րդ Հոդվածի համաձայն հաշվարկված տուգանքների) հաշվարկվում են տոկոսներ ժամկետանց Վճարման Դրույքաչափով, բացառությամբ այն դեպքերի, երբ ԷԳՊ-ի համապատասխան հաշվարկվել ու վճարվել են տույժեր նման ժամկետանց վճարման համար:
9.4 Disputed payments	9.4. Վիճարկվող վճարումներ
(a) If at any time within thirty (30) Days from receipt by a Party of a monthly statement or invoice that Party disputes the monthly statement or invoice (in whole or in part) in good faith, that Party shall notify the other Party in writing of any disagreement with or exception to the calculation, including details of the monthly statement or invoice concerned, the amount in dispute and the basis for disputing the amount. In case a Party fails to dispute any invoice within the time period stated above or disputes only part of an invoice, the amount of such invoice or such part of an invoice as is not disputed shall be deemed undisputed for the	(a) Եթե որևէ Կողմի կողմից ամսական ամփոփագիրը կամ հաշիվը ստանալու պահից 30 (երեսուն) Օրվա ընթացքում այդ Կողմը բարեխղճորեն վիճարկում է ամսական ամփոփագիրը կամ հաշիվը (ամբողջությամբ կամ մասամբ), այդ Կողմը պետք է գրավոր տեղեկացնի մյուս Կողմին հաշվարկի հետ նրա անհամաձայնության կամ հաշվարկից բացառության մասին, ներառելով վիճարկվող ամսական ամփոփագրի կամ հաշվի մանրամասները, վիճարկվող գումարը և գումարի վիճարկման հիմքերը: Եթե որևէ Կողմ վերը նշված ժամկետի ընթացքում չի վիճարկում որևէ հաշիվ կամ վիճարկում է հաշիվը մասնակիորեն, ապա այդ

<p>purposes of Article 16.2(a) and Article 16.1(a). To the extent that any part of an invoice is not disputed, the undisputed part of such invoice shall be paid in accordance with Article 9.2(c).</p>	<p>հաշվի մեջ նշված գումարը կամ հաշվի այն մասը, որը չի վիճարկվել, համարվում է անվիճելի 16.2(a) և 16.1(a) Հոդվածների նպատակով: Այնքանով, որքանով որևէ հաշվի մի մասը վիճարկված չէ, այդ հաշվի չվիճարկված մասը ենթակա է վճարման՝ 9. 2(c) Հոդվածի համաձայն:</p>
<p>(b) Where a Party disputes a payment pursuant to Article 9.4(a) the Parties shall confer within thirty (30) Days thereafter to resolve in good faith any such exceptions and disputes, in accordance with Article 18, if possible before the relevant due date of the disputed payment. If the attempt to resolve the dispute amicably and in good faith fails, Article 18 shall apply to any continuing dispute.</p>	<p>(b) Եթե Կողմը վիճարկում է վճարումը համաձայն 9.4(a) Հոդվածի, ապա այդ պահից 30 (երեսուն) Օրվա ընթացքում Կողմերը պետք է բարեխղճորեն բանակցեն վերոգրյալ վեճերը լուծելու համար՝ 18-րդ Հոդվածով սահմանված կարգով, հնարավորության դեպքում՝ նախքան համապատասխան վիճարկվող վճարման կատարման ամսաթիվը: Եթե վեճը հաշտությամբ և բարեխղճորեն լուծելու փորձը ձախողվում է, ապա շարունակվող վեճի նկատմամբ կիրառվում է 18-րդ Հոդվածը:</p>
<p>(c) Upon settlement or determination of the disputed amount, any amount agreed or determined to be owed to either Party shall be paid by the relevant Party within 30 Days, together with interest thereon at the Late Payment Rate (if applicable under Article 9.3). Such agreed or determined to be owed amounts shall be deemed undisputed for the purposes of Article 16.2(a).</p>	<p>(c) Վիճարկված գումարի կարգավորման կամ որոշման պահից, Կողմերից որևէ մեկին վճարվելիք համաձայնեցված կամ որոշված գումարը պետք է վճարվի համապատասխան Կողմի կողմից 30 Օրվա ընթացքում՝ Ժամկետանց Վճարման Դրույքաչափով հաշվարկված տոկոսների հետ միասին (եթե կիրառելի է 9.3 Հոդվածի համաձայն): Այդպիսի վճարվելիք համաձայնեցված կամ որոշված գումարները համարվում են անվիճելի 16.2(a) Հոդվածի նպատակով:</p>

ARTICLE 10	ՀՈԴՎԱԾ 10
10. SALE AND PURCHASE OF ELECTRICITY	10. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔ
10.1 Sale and Purchase	10.1. Առուվաճառք
(a) From the Commercial Operation Date onwards until the end of the Committed Offtake Term:	(a) Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից սկսած մինչև Երաշխավորված Գնման Ժամկետի ավարտը.
(i) the Developer shall sell and the Government shall use its best efforts to cause (without incurring Direct Costs) the Offtaker to purchase from the Developer, the Net Electrical Energy dispatched to the Offtaker pursuant to the Power Purchase Agreement.	(i) Կառուցապատողը վաճառում է, իսկ Կառավարությունը գործադրում է իր լավագույն ջանքերը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու), որ Գնորդը Կառուցապատողից գնի Էլեկտրական Էներգիայի Գնման Պայմանագրին համապատասխան Գնորդին առաքված Զուտ Էլեկտրական Էներգիան,
(b) Tariff	(b) Սակագին
(i) The Tariffs to be paid by the Offtaker to the Developer as consideration for the Net Electrical Energy delivered to the Delivery Point under the Power Purchase Agreement will be approved by the PSRC in accordance with the License Terms and Conditions including its Annex N 1 (" Tariff Schedule ").	(i) Սակագները, որոնք Գնորդը պետք է վճարի Կառուցապատողին՝ որպես հատուցում Կառուցապատողի կողմից Էլեկտրական Էներգիայի Գնման Պայմանագրի համաձայն Մատակարարման Կետ մատակարարվող Զուտ Էլեկտրական Էներգիայի դիմաց, հաստատվելու են ՀԾԿՀ-ի կողմից՝ Լիցենզիայի, այդ թվում՝ դրա 1-ին Հավելվածի (« Սակագնային Պլան ») պայմաններին համապատասխան:
(ii) If the PSRC does not approve as the Tariff, the Developer's BidTariff (as adjusted under the terms and conditions defined by the License included in the Bid and as amended to reflect any Adverse Condition Event or Change in Lawadjustments) or the methodology for tariff calculation is changed, as a result of which the BidTariff adjusted according to the License is not approved for the Developer, the Government will compensate the Developer for the difference between the Tariff and its Bid Tariff as adjusted according to the License and as amended to reflect any Adverse Condition Event or Change in Lawadjustments.	(ii) Եթե ՀԾԿՀ-ն որպես Սակագին չի հաստատում Կառուցապատողի ՄրցութայինՍակագինը (ճշգրտված Մրցույթի Հայտում ներառված Լիցենզիայի պայմաններով նախատեսված մոտեցմամբև փոփոխված Անբարենպաստ Պայմանի Դեպքով կամ Օրենքի Փոփոխությամբ պայմանավորված ճշգրտման արդյունքում) կամ եթե սակագնի հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է, որի արդյունքում ՄրցութայինՍակագինը՝Լիցենզիայով նախատեսված կարգով ճշգրտված, Կառուցապատողի համար չի հաստատվել, Կառավարությունը Կառուցապատողին փոխհատուցում է Սակագնի և Լիցենզիայով նախատեսված կարգով ճշգրտված և Անբարենպաստ Պայմանի Դեպքով կամ Օրենքի Փոփոխությամբ պայմանավորվածճշգրտման արդյունքում փոփոխվածՄրցութայինՍակագնի տարբերությունը:
(c) Offtaker Failure to pay the Tariffs	(c) Սակագները Գնորդի Կողմից Չվճարելը
Should the Offtaker fail to pay any amount due and payable in accordance with the Power Purchase Agreement within 60 Days of the payment due date,	Եթե Գնորդը չի վճարում Էլեկտրական Էներգիայի Գնման Պայմանագրի համաձայն պատշաճ ներկայացված և վճարման ենթակա որևէ գումար

<p>then, upon notification by the Developer, the Developer shall assign to the Government, and the Government hereby irrevocably offers to purchase any right of claim the Developer may from time to time have against the Offtaker in relation to any outstanding payment, for a price equivalent to ninety-nine (99) per cent of the aggregate value of (i) the relevant outstanding principal payment and (ii) any related interest that has accrued on such overdue amount (the "Assigned Amount"). The Government's obligation to purchase any Assigned Amount will not be affected by any act, omission, matter or thing which, but for this provision, would reduce, release or prejudice any of its obligations, including, without limitation, (i) any amendments to, or waivers in respect of, the PPA, (ii) any renewal, extension or release under the PPA or of any rights thereunder, (iii) any failure to enforce the PPA or the termination or expiry of the PPA and/or (iv) the occurrence of an Insolvency Event or any event that is analogous to an Insolvency Event affecting the Offtaker. For the avoidance of doubt, in respect of the payment of any Assigned Amount, the Government shall benefit from any defences to payment arising under the terms and conditions of the PPA to the extent such defence would have been available to the Offtaker.</p>	<p>վճարման վերջնաժամկետի ամսաթվից 60 Օրվա ընթացքում, ապա Կառուցապատողի ծանուցմամբ Կառուցապատողը զիջում է Կառավարությանը, իսկ Կառավարությունը սույնով անհետկանչելիորեն առաջարկում է գնել(օֆերտա) վճարման ենթակա ցանկացած գումարի նկատմամբ ցանկացած պահանջի իրավունք, որը Կառուցապատողը կարող է ժամանակ առ ժամանակ ունենալ Գնորդի դեմ՝ այն գնով, որը համարժեք է (i) վճարման ենթակա համապատասխան մայր գումարի, և (ii) վճարման ենթակա այդ գումարին ավելացած ցանկացած համապատասխան տոկոսի հանրագումարի արժեքի 99 (իննսունինը) տոկոսին («Ձիջված Գումար»): Ցանկացած Ձիջված Գումար գնելու Կառավարության պարտավորության վրա չի ազդում որևէ գործողություն, անգործություն, հարց կամ իրավիճակ, որը, եթե չլիներ սույն դրույթը, կնվազեցներ, կվերացներ կամ կսահմանափակեր Կառավարության որևէ պարտավորություն, այդ թվում, առանց սահմանափակման՝ (i) ԷԳՊ-ի որևէ փոփոխությունը կամ դրա առնչությամբ որևէ հրաժարումը, (ii) ԷԳՊ-ի կամ դրանով նախատեսված որևէ իրավունքի նորացումը, երկարաձգումը կամ վերացումը (iii) ԷԳՊ-ի պայմանների կատարում չպահանջելը կամ ԷԳՊ-ի լուծումը կամ գործողության ժամկետը լրանալը, և/կամ (iv) Գնորդի առնչությամբ Անվճարունակության Դեպք կամ Անվճարունակության Դեպքին համարժեք դեպք տեղի ունենալը: Կասկածից խուսափելու համար՝ ցանկացած Ձիջված Գումարի վճարման առնչությամբ, Կառավարությունն օգտվում է ԷԳՊ-ի պայմաններից բխող վճարման հետ կապված ցանկացած պաշտպանության միջոցից, որից կարող էր օգտվել Գնորդը:</p>
<p>The foregoing offer is valid throughout the term of this Agreement plus 90 Days, notwithstanding anything to the contrary. The assignment by the Developer of any Assigned Amount shall be effected by accepting the Government's above mentioned offer, with respect to any Assigned Amount, by sending to the Government a notice of acceptance with respect to such Assigned Amount, using the form set out in Appendix 8 and the Government shall be obliged to purchase any Assigned Amount referred to in any such notice of acceptance.</p>	<p>Վերոնշյալ առաջարկը (օֆերտան) ուժի մեջ է սույն Պայմանագրի ժամկետի ամբողջ ընթացքում՝ գումարած 90 Օր՝ անկախ դրան հակառակ որևէ դրույթի: Կառուցապատողի կողմից ցանկացած Ձիջված Գումարի զիջումն իրականացվում է ցանկացած Ձիջված Գումարի առնչությամբ Կառավարության վերոնշյալ առաջարկը (օֆերտան) ընդունելու միջոցով (ակցեպտ)՝ Կառավարությանը այդ Ձիջված Գումարի վերաբերյալ ընդունման (ակցեպտի) ծանուցում ուղարկելով՝ օգտագործելով 8-րդ Հավելվածում սահմանված ձևը, և Կառավարությունը պարտավոր է գնել այդպիսի</p>

	ընդունման (ակցեպտի) ծանուցման մեջ նշված ցանկաված ձիջված Գումար:
10.2 Inability to Achieve the Commercial Operation Date or to produce Net Electrical Energy	10.2. Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի պահպանման կամ Զուտ Էլեկտրական Էներգիա արտադրելու անկարողություն
In the event the Developer shall be unable to:	Այն դեպքում, եթե Կառուցապատողը չի կարող.
(a) achieve the Commercial Operation Date by a date that is on or before the Scheduled Commercial Operation Date (disregarding any extensions in the Scheduled Commercial Operation Date pursuant to the terms of this Agreement) as a result of breach by the Government of its obligations or any Change in Law or Adverse Condition Event; or	(a) ապահովել Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվին կամ դրանից առաջ (հաշվի չառնելով սույն Պայմանագրի համաձայն Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի որևէ երկարաձգում)՝ Կառավարության կողմից իր պարտավորությունների չկատարման պատճառով, կամ որպես Օրենքի Փոփոխության կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետևանք, կամ
(b) after the Commercial Operation Date, produce Net Electrical Energy as a result of breach by the Government of its obligations, any Change in Law, any Adverse Condition Event or by reason of any interruption which is excluded from the calculation of the maximum number of interruptions under article 20 of the PPA,	(b) Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից հետո արտադրել Զուտ Էլեկտրական Էներգիա Կառավարության կողմից իր պարտավորությունների չկատարման պատճառով, կամ որպես Օրենքի Փոփոխության կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետևանք, կամ որևէ խափանման պատճառով, որը չի ընդգրկվում ԷԳՊ-ի 20-րդ հոդվածով նախատեսված՝ էլեկտրական էներգիայի ստացումը դադարեցնելու առավելագույն տևողության հաշվարկում,
then the Plant shall be deemed to be providing Deemed Delivered Energy equivalent to the percentage of Installed Capacity set out in the table below corresponding to the month(s) in which the Deemed Delivered Energy arose and the Government shall compensate the Developer:	ապա համարվում է, որ Կայանը առաքել է Ենթադրյալ Առաքված Էներգիա, որը հավասար է Դրվածքային Հզորության այն տոկոսին, որը սահմանված է ներքոնշյալ աղյուսակում՝ կախված այն ամսից (ամիսներից), որում (որոնցում) առաջացել է Ենթադրյալ Առաքված Էներգիան, և Կառավարությունը փոխհատուցում է Կառուցապատողին՝
(c) in the case of paragraph (a), for each Day of delay and in the case of paragraph (b), for each Day where the Developer is unable to produce Net Electrical Energy, in the amount in USD equal to $55 \times 1000 \times X$ (in the case of paragraph (a), 80% and in the case of paragraph (b), 100% of the relevant capacity factor from the table below) $\times 24 \times t$ where t is the Bid Tariff of USD 0.0419 as it may be adjusted in accordance with the Licence;	(c) (a) պարբերության դեպքում՝ կետանցի յուրաքանչյուր Օրվա համար, և (b) պարբերության դեպքում՝ յուրաքանչյուր Օրվա համար, երբ Կառուցապատողը չի կարողանում արտադրել Զուտ Էլեկտրական Էներգիա՝ ԱՄՆ դոլարով գումար, որը հավասար է $55 \times 1000 \times X$ ((a) պարբերության դեպքում՝ ներքևի աղյուսակի՝ համապատասխան հզորության գործակցի 80%-ը, իսկ (b) պարբերության դեպքում՝ 100%-ը) $\times 24 \times t$, որտեղ t -ն՝ 0.0419 ԱՄՆ Դոլարի հավասար Մրցութային Սակագինն է, որը կարող է փոփոխվել Լիցենզիայի համաձայն,

(such amount being the " Deemed Energy Payment ") for the period commencing on:	(այդ գումարը լինելով « Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարում ») այն ժամանակահատվածի համար, որն սկսվում է.
(d) in the case of paragraph (a), the date which is sixty (60) Days after the date on which the Commercial Operation Date would have been achieved, as assessed by the Independent Engineer, but for the breach by the Government of its obligations, the Adverse Condition Event or Change in Law whether individually, or in aggregate; until the date on which the Commercial Operation Date has been achieved;	(d) (a) պարբերության դեպքում՝ 60 (վաթսուն) Օր անց այն օրվանից, երբ Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը կապահովվեր, ինչպես գնահատված է Անկախ Ինժեների կողմից, եթե տեղի չունենար Կառավարության կողմից իր պարտավորությունների խախտումը, Անբարենպաստ Պայմանի Դեպքը կամ Օրենքի Փոփոխությունը՝ առանձին-առանձին, կամ միասին, մինչև Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի ապահովման օրը;
(e) in the case of paragraph (b) above, the date on which the breach by the Government of its obligations or the Adverse Condition Event occurred or such Change in Law or interruption commenced plus the Permitted Interruption Period until the date that it ceases,	(e) վերոնշյալ (b) պարբերության դեպքում՝ այն օրվանից, երբ Կառավարությունը խախտել է իր պարտավորությունները կամ տեղի է ունեցել Անբարենպաստ Պայմանի Դեպքը կամ Օրենքի Փոփոխությունը կամ խափանումը՝ գումարած Թույլատրելի Խափանման Ժամանակահատվածը, մինչև դրա ավարտը,
(such period being the " Deemed Period "), where the relevant capacity factor for a calendar month is that set out in the table below:	(այդ ժամանակահատվածը լինելով « Ենթադրյալ Ժամանակահատված »), երբ համապատասխան հզորության գործակիցը տվյալ օրացուցային ամսվա համար համապատասխանում է ներքևի աղյուսակում սահմանված գործակցին.
Capacity Factor	Հզորության Գործակից
January	Հունվար
16.35%	16.35%
February	Փետրվար
22.69%	22.69%
March	Մարտ
25.66%	25.66%
April	Ապրիլ
28.04%	28.04%
May	Մայիս
32.67%	32.67%
June	Հունիս

40.66%	40.66%
July	Հուլիս
41.85%	41.85%
August	Օգոստոս
37.38%	37.38%
September	Սեպտեմբեր
33.61%	33.61%
October	Հոկտեմբեր
22.89%	22.89%
November	Նոյեմբեր
15.52%	15.52%
December	Դեկտեմբեր
13.25%	13.25%
and where the "Permitted Interruption Period" means 87.6 hours per annum plus, in respect of interruptions due to Emergencies, an aggregate (for all such Emergencies in that calendar year) of 36 hours per calendar year less the number of hours of interruptions in that calendar year for which the Offtaker has been excused from compensating the Developer under article 20 of the PPA,	իսկ « Թույլատրելի հստիանման ժամանակահատվածը » նշանակում է տարեկան 87. 6 ժամ՝ գումարած, Կրիտիկական Իրավիճակով պայմանավորված խափանումների դեպքում՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա համար գումարային 36 ժամ (տվյալ օրացուցային տարում բոլոր այդպիսի Կրիտիկական Իրավիճակների համար)՝ հանած տվյալ օրացուցային տարվա ընթացքում խափանման ժամերի այն քանակը, որի համար ԷԳՊ-ի 20-րդ հոդվածի համաձայն Գնորդը չի փոխհատուցում Կառուցապատողին.
provided, however:	պայմանով, սակայն, որ
(f) in the case of paragraph (a) above only, that if upon completion of the Commissioning Tests, the Installed Capacity demonstrated by the Commissioning Tests shall be less than the Contracted Capacity (which shall include where the Developer is unable to achieve the Commissioning Tests), then the Deemed Energy Payments paid by the Government during the Deemed Period in excess of the Deemed Energy Payments that the Government would have had to pay if the Plant had been deemed to be providing the Installed Capacity as so determined by the Commissioning Tests, shall be repaid to the Government by the Developer.	(f) միայն վերոնշյալ (a) պարբերության դեպքում՝ եթե Շահագործման Հանձնելու Փորձարկումների ավարտից հետո Շահագործման Հանձնելու Փորձարկումներով հաստատված Դրվածքային Հզորությունը պակաս լինի Պայմանագրային Հզորությունից (այդ թվում, եթե Կառուցապատողը չի կարող ապահովել Շահագործման Հանձնելու Փորձարկումները), ապա Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարումները, որոնք Ենթադրյալ Ժամանակահատվածի ընթացքում Կառավարության կողմից վճարվել են այն Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարումներից ավելի, որոնք

	<p>Կառավարությունը կվճարեր, եթե համարվեր, որ Կայանն ապահովում է Շահագործման Հանձնելու Փորձարկումներով հաստատված Դրվածքային Հզորությունը, ենթակա են վերադարձման Կառուցապատողի կողմից Կառավարությանը:</p>
<p>(g) in the case of paragraph (a) above only, for each Day that a Deemed Energy Payment is due and payable to the Developer and actually paid by the Government, in accordance with this Article, the Committed Offtake Term shall reduce by one Day.</p>	<p>(g) միայն վերոնշյալ (a) պարբերության դեպքում՝ յուրաքանչյուր Օրվա համար, որի համար Կառուցապատողին վճարման է ենթակա և Կառավարության կողմից փաստացի վճարվել է Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարում, համաձայն սույն Հոդվածի, Երաշխավորված Գնման Ժամկետը նվազում է մեկ Օրով:</p>
<p>(h) in the case of paragraph (a) or (b) above, if the Developer is compensated by the Offtaker under the terms of the PPA for any payment in respect of the relevant Adverse Condition Event, the Deemed Energy Payment payable in accordance with this Article shall be reduced to the extent of any compensation paid under the terms of such PPA in respect of such payment, and the Committed Offtake Term shall reduce by one Day for each Day that a Deemed Energy Payment has actually been paid by the Offtaker; and</p>	<p>(h) վերոնշյալ (a) կամ (b) պարբերության դեպքում՝ եթե համապատասխան Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետևանքով առաջացած ցանկացած վճարման համար Կառուցապատողը ստացել է փոխհատուցում Գնորդից ԷԳՊ-ի համապատասխան, ապա սույն Հոդվածի համաձայն վճարման ենթակա Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարումը նվազեցվում է այն փոխհատուցման չափով, որն այդ վճարման առնչությամբ վճարվել է ԷԳՊ-ի պայմաններին համապատասխան, իսկ Երաշխավորված Գնման Ժամկետը նվազում է մեկ Օրով՝ յուրաքանչյուր Օրվա համար, որի համար Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարումը փաստացի կատարվել է Գնորդի կողմից. և</p>
<p>(i) any claim by the Developer for a Deemed Energy Payment arising from a Change in Law or an Adverse Condition Event (and the resulting Deemed Energy Payment) in accordance with Article 10.2 shall be without prejudice to the rights of the Developer to claim and receive compensation arising from the same Change in Law or Adverse Condition Event pursuant to Article 15.3.</p>	<p>(i) 10. 2 Հոդվածի համաձայն՝ Օրենքի Փոփոխությունից կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքից բխող՝ Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարման՝ Կառուցապատողի ցանկացած պահանջ(և դրանից բխող Ենթադրյալ Առաքված Էներգիայի Համար Վճարումը) չի սահմանափակում Կառուցապատողի իրավունքը՝ պահանջելու և ստանալու փոխհատուցում՝ կապված այդ նույն Օրենքի Փոփոխության կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետ՝ Համաձայն 15. 3 Հոդվածի:</p>
<p>10.3 Assignment of Claims</p>	<p>10.3. Պահանջների Զիջում</p>
<p>If the Government is obliged to compensate the Developer under Articles 10.1(b) or 10.2, after payment of such compensation and after deduction of any applicable costs or taxes incurred by the Developer, except to the extent that the compensation payable under those Articles has been reduced by an amount payable by</p>	<p>Եթե Կառավարությունը պարտավոր է փոխհատուցել Կառուցապատողին 10.1(b) կամ 10.2 Հոդվածների համաձայն, այդպիսի փոխհատուցում վճարելուց հետո և Կառուցապատողի կրած ցանկացած կիրառելի ծախսի կամ հարկի նվազեցումից հետո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ Հոդվածների համաձայն վճարման</p>

the Project Document counterparty or other party, the Developer shall assign to the Government any rights it has, if any, to claim damages up to an amount equal to the compensation paid against a Project Document counterparty or any other party in relation to the circumstances that have given rise to the Government's obligation to pay compensation to the Developer pursuant to provisions referred to above, and shall provide reasonable support to the Government if it seeks to claim such amounts from such Project Document counterparty or other party.

ենթակա փոխհատուցումը նվազեցվել է այն գումարով, որը ենթակա է վճարման համապատասխան Ծրագրի Փաստաթղթի կոնտրագենտի կամ այլ կողմի կողմից, Կառուցապատողը զիջում է Կառավարությանը Ծրագրի Փաստաթղթի կոնտրագենտից կամ որևէ այլ անձից վճարված փոխհատուցման չափով վնասների հատուցում պահանջելու իր իրավունքները (առկայության դեպքում)՝ կապված այն հանգամանքի հետ, որը հիմք է հանդիսացել վերը նշված դրույթների համաձայն Կառուցապատողին փոխհատուցում վճարելու Կառավարության պարտավորության առաջացման համար, և տրամադրում է Կառավարությանը ողջամիտ աջակցություն, եթե այն մտադրվում է համապատասխան Ծրագրի Փաստաթղթի կոնտրագենտից կամ այլ անձից պահանջել նշված գումարները:

ARTICLE 11	ՀՈԴՎԱԾ 11
11. FOREIGN EXCHANGE, PERFORMANCE BANK GUARANTEE	11. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ, ԿԱՏԱՐՄԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
11.1 Foreign Exchange and Bank Accounts	11.1. Արտարժույթի Փոխանակում և Բանկային Հաշիվներ
The Parties hereby acknowledge and agree that, in accordance with all Applicable Laws, the Developer shall have the right to:	Կողմերը սույնով ընդունում և համաձայնում են, որ Կառուցապատողը, համաձայն բոլոր Կիրառելի Օրենքների, իրավունք ունի՝
(a) open any foreign or local bank account in any currency; and	(a) բացել ցանկացած արժույթով օտարերկրյա կամ տեղական բանկային հաշիվներ. և
(b) freely convert any amount in Drams into any other currency and to transfer any such amount abroad.	(b) Դրամով ցանկացած գումար ազատ փոխանակել այլ արժույթի և փոխանցել ցանկացած նման գումար արտասահման:
11.2 Performance Bank Guarantee	11.2. Կատարման Բանկային Երաշխիքը
(a) Until the Commercial Operation Date of the Plant, the unconditional, irrevocable and on-demand Performance Bank Guarantee, in the format set out in Appendix 6 and submitted by the Developer in accordance with this Agreement, shall be for a sum equal to USD 1,620,000 (USD One million Six Hundred Twenty Thousand).	(a) Մինչև Կայանի Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը Կառուցապատողի կողմից սույն Պայմանագրին համապատասխան ներկայացված՝ առանց նախապայմանների, անհետկանչելի և ցպահանջ Կատարման Բանկային Երաշխիքը՝ 6-րդ Հավելվածի ձևաչափով՝ պետք է լինի 1,620,000 (մեկ միլիոն վեց հարյուր քսան հազար) ԱՄՆ դոլարի չափով:
(b) The Performance Bank Guarantee shall initially be in force and effect for a period of 36 (thirty six) months from the Signing Date and shall be extended from time to time, at least thirty (30) Days prior to the expiry, to be valid till 3 (three) months after the Commercial Operation Date of the Plant.	(b) Կատարման Բանկային Երաշխիքը ի սկզբանե ուժի մեջ կլինի և կգործի 36 (երեսունվեց) ամիս Ստորագրման Ամսաթվից և ժամանակ առ ժամանակ կերկարաձգվի ժամկետը լրանալուց առնվազն 30 (երեսուն) Օր առաջ, վավեր լինելով մինչև Կայանի Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից 3 (երեք) ամիս հետո:
(i) If the Performance Bank Guarantee is scheduled to expire prior to the Commercial Operation Date, then at least 30 (thirty) Days prior to the scheduled expiry of the Performance Bank Guarantee, the Developer shall arrange for an extension or replacement of the Performance Bank Guarantee.	(i) Եթե Կատարման Բանկային Երաշխիքը լրանալու է Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից առաջ, ապա Կատարման Բանկային Երաշխիքի ժամկետը լրանալուց առնվազն 30 (երեսուն) Օր առաջ Կառուցապատողը կապահովվի Կատարման Բանկային Երաշխիքի երկարաձգումը կամ փոխարինումը:
(c) If the Developer fails to extend or replace the Performance Bank Guarantee in the manner set out in the preceding sentence, the Government shall have the absolute and unequivocal right to receive the un-drawn amount under the Performance Bank Guarantee. The amount so received shall be treated as a cash-retention,	(c) Եթե Կառուցապատողը չապահովվի Կատարման Բանկային Երաշխիքի երկարաձգումը կամ փոխարինումը նախորդող նախադասությանը համապատասխան, ապա Կառավարությունը կունենա բացարձակ և անվիճելի իրավունք Կատարման Բանկային Երաշխիքին համապատասխան ստանալու

<p>and to the extent that there are no outstanding claims thereto, shall be released to the Developer, without any interest on such amount, upon the Developer submitting a new Performance Bank Guarantee acceptable to Government or upon the scheduled date of expiration of the Performance Bank Guarantee.</p>	<p>չօգտագործված գումարը: Նման կերպով ստացված գումարը կդիտարկվի որպես դրամի պահում և այնքանով որքանով առկա չեն չկատարված պահանջներ, կվերադարձվեն Կառուցապատողին, առանց որևէ տոկոսների, այն բանից հետո, երբ Կառուցապատողը ներկայացնի նոր Կատարման Բանկային Երաշխիք, որը ընդունելի կլինի Կառավարության համար կամ Կատարման Բանկային Երաշխիքի ժամկետը լրանալուց հետո:</p>
<p>(d) The Government shall have the right to draw on the Performance Bank Guarantee and claim up to the amount guaranteed on demand upon the Developer's failure to make payment of any amount due from the Developer to Government, including for any penalties that the Developer is liable to pay under this Agreement.</p>	<p>(d) Կառավարությունը իրավունք կունենա վկայակոչելու Կատարման Բանկային Երաշխիքը և պահանջելու մինչև երաշխավորված գումարի չափով վճարում ցպահանջ այն պահից, երբ Կառուցապատողը չկատարի վճարում ցանկացած գումարի համար, որ Կառուցապատողը պարտք է Կառավարությանը՝ ներառյալ Պայմանագրի համաձայն վճարման ենթակա ցանկացած տույժ:</p>
<p>(e) If Government draws on the Performance Bank Guarantee, in part or in full, the Developer shall immediately, within 7 (seven) Days of such drawal, restore the value of the Performance Bank Guarantee to the amount stated in Article 11.2(a). If this Agreement is terminated for any reason other than the occurrence of Developer Events of Default, under Article 16.1, the Performance Bank Guarantee shall be duly discharged and released to the Developer, subject to Government's right to claim any accrued amounts under the Performance Bank Guarantee from the Developer that may have accrued before such termination.</p>	<p>(e) Եթե Կառավարությունը վկայակոչի Կատարման Բանկային Երաշխիքը՝ ամբողջովին կամ մասամբ, Կառուցապատողը անմիջապես 7 (յոթ) Օրվա ընթացքում՝ սկսած այդ վկայակոչման պահից, կվերականգնի Կատարման Բանկային Երաշխիքի ծավալը 11.2(a) Հոդվածում նշված չափի: Եթե Պայմանագիրը դադարեցվի ցանկացած այլ պատճառով, քան Կառուցապատողի Կետանցի Դեպքը, 16.1 Հոդվածին համապատասխան, Կատարման Բանկային Երաշխիքը պատշաճ կարգով կազատվի և կվերադարձվի Կառուցապատողին, պայմանով, որ Կառավարությունը պահպանի իրավունքը պահանջելու Կառուցապատողից Կատարման Բանկային Երաշխիքի համաձայն կուտակված ցանկացած գումար, որը կուտակվել է նախքան նման դադարեցումը:.</p>

ARTICLE 12	ՀՈԴՎԱԾ 12
12. GOVERNMENT SUPPORT	12. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
In addition to any obligations identified elsewhere in this Agreement, the Government will provide the following support to the Developer, so that the Developer may successfully implement the Project.	Ի հավելումն սույն Պայմանագրի այլ մասերում սահմանված այլ պարտավորությունների, Կառավարությունը Կառուցապատողին տրամադրելու է հետևյալ աջակցությունը, որպեսզի Կառուցապատողը կարողանա հաջողությամբ իրականացնել Ծրագիրը:
12.1 Government Support	12.1 Կառավարության Աջակցությունը
(a) Approvals, Permits and Licences	(a) Հաստատումներ, Թույլտվություններ և Արտոնագրեր
The Government shall (without incurring any Direct Costs):	Կառավարությունը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու)՝
(i) assist and facilitate the Developer to obtain Applicable Permits as may be required by the Developer, provided that the Developer meets the requirements of Applicable Laws, including the provision of the architectural-planning order, adoption of a resolution on conducting a special complex expert examination, appointment of the Expert Commission and the Acceptance Commission, approval of the Plant Design Documentation, granting of construction permits, the Acceptance Act, the Completion Act and the License, the License Revision, incorporation of the Tariff Schedule into the Licence, conclusion with the Offtaker and registration by PSRC of the Power Purchase Agreement, including by sending an official letter to PSRC supporting the granting of the License, the License Revision, registration of the Power Purchase Agreement, approval of Tariffs in accordance with the Tariff Schedule; and	(i) աջակցում և օժանդակում է Կառուցապատողին նրան պահանջվող Կիրառելի Թույլտվությունները ստանալու հարցում, պայմանով, որ Կառուցապատողը համապատասխանում է Կիրառելի Օրենքների պահանջներին, այդ թվում՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, հատուկ համալիր փորձաքննություն անցկացնելու մասին որոշման ընդունման, Փորձաքննական Հանձնաժողովի և Ընդունող Հանձնաժողովի նշանակման, Կայանի Նախագծային Փաստաթղթերի հաստատման, շինարարական թույլտվությունների, Ընդունման Ակտի, Ավարտական Ակտի և Լիցենզիայի տրամադրման, Լիցենզիայի Վերանայման, Լիցենզիայում Սակագնային Պլանի ներառման, ՀԾԿԿ կողմից Էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրի գրանցման, այդ թվում ի սատարումն Լիցենզիայի տրամադրման, Լիցենզիայի Վերանայման, Էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրի գրանցման և Սակագնային Պլանի համաձայն Սակագների հաստատման՝ ՀԾԿԿ-ին պաշտոնական գրություն ուղարկելու միջոցով, և
(ii) from the Signing Date onwards, grant and maintain or cause to be granted and maintained those Applicable Permits or do such other thing required for the Project which only the Government or another Government Authority can grant or do, provided that the Developer has met the requirements of all Applicable Laws.	(ii) Ստորագրման Ամսաթվից սկսած պետք է տրամադրի և պահպանի այնպիսի Կիրառելի Թույլտվություններ կամ հանգեցնի դրանց տրամադրմանը և պահպանմանը կամ կատարի Ծրագրի համար պահանջվող այնպիսի այլ գործողություններ, որոնք կարող են տրամադրվել կամ կատարվել միայն Կառավարության կամ այլ Պետական Մարմնի կողմից՝ պայմանով, որ Կառուցապատողը

	բավարարել է բոլոր Կիրառելի Օրենքների պահանջները:
(b) Utilities, Access	(b) Կոմունալ Ծառայություններ, Հասանելիություն
The Government shall use its best efforts (without incurring any Direct Costs) to cause:	Կառավարությունը գործադրում է իր լավագույն ջանքերը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու),
(i) the provision of access at the Interfaces determined as are necessary for the Developer to construct, commission and operate the Plant at commercial terms; and	(i) Միացման կետերում կոմունալ ծառայություններ մատուցողներին հասանելիության տրամադրումն ապահովելու համար, որոնք անհրաժեշտ են Կառուցապատողին Կայանը կառուցելու, շահագործման հանձնելու և շահագործելու համար՝ շուկայական պայմաններով, և
(ii) the provision of sufficient access at the boundary of the Project Site in accordance to the MTR to allow the Developer to evacuate power to the Delivery Point in accordance with Article 5.	(ii) ապահովելու համար բավարար հասանելիության հնարավորություն Ծրագրի Տարածքի սահմանում, ինչպես սահմանված է համաձայն ՆՏՊ -ի, որպեսզի Կառուցապատողը կարողանա հասցնել էլեկտրական էներգիան Մատակարարման Կետ՝ համաձայն 5-րդ Հոդվածի:
(c) Investment and Tax Incentives	(c) Ներդրումային և Հարկային Արտոնություններ
(i) The Government shall use its best endeavours to ensure (without incurring Direct Costs) that all applicable investment and tax incentives customarily available in Armenia in accordance with Applicable Laws (including those that become available after the Effective Date), are granted by the concerned Government Authorities to the Developer, when duly requested by the Developer, and that all such incentives are valid for their maximum applicable period, provided the Developer meets the requirements of such Applicable Laws.	(i) Կառավարությունը գործադրում է բոլոր ջանքերը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու)՝ ապահովելու համար, որ համապատասխան Պետական Մարմինների կողմից Կառուցապատողին տրամադրվեն Հայաստանում Կիրառելի Օրենքների համաձայն հասանելի բոլոր ներդրումային և հարկային արտոնությունները (այդ թվում նրանք, որ հասու կդառնան Գործողության Ամսաթվից հետո), երբ պատշաճ կերպով կպահանջվեն Կառուցապատողի կողմից, և որ բոլոր նման արտոնությունները ուժի մեջ կլինեն իրենց կիրառելիության առավելագույն ժամկետով՝ պայմանով, որ Կառուցապատողը բավարարում է այդ Կիրառելի Օրենքների բոլոր պահանջները:
(ii) In particular, the Government shall use its best endeavours to ensure (without incurring Direct Costs) that the Developer is granted the fullest exemption or deferral possible, pursuant to all Applicable Laws, from any import tax, levy, customs duties for the goods imported for the Project, provided that the Developer has complied with all criteria necessary to benefit from the relevant incentives and exemptions.	(ii) Մասնավորապես, Կառավարությունը գործադրում է բոլոր ջանքերը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու)՝ ապահովելու, որ Կառուցապատողին՝ համաձայն բոլոր Կիրառելի Օրենքների, տրամադրվի Ծրագրի համար ներմուծվող ցանկացած ներմուծման հարկերից, գանձումներից, մաքսային տուրքերից առավելագույն հնարավոր ազատումը կամ դրանց տարաժամկետումը՝ պայմանով, որ Կառուցապատողը համապատասխանում է նշված արտոնություններից և

	ազատումներից օգտվելու համար անհրաժեշտ բոլոր չափանիշներին:
(d) Import, Export	(d) Ներմուծում, Արտահանում
From the Signing Date onwards, upon the written request of the Developer, the Government shall use its reasonable endeavours to:	Ստորագրման Ամսաթվից սկսած՝ Կառուցապատողի գրավոր պահանջով Կառավարությունը գործադրում է բոլոր ողջամիտ ջանքերը հետևյալի համար՝
(i) subject to the Developer complying with the requirements under all Applicable Laws, facilitate with formalities for importing into Armenia items of equipment and materials required for the Project;	(i) Կառուցապատողի կողմից բոլոր Կիրառելի Օրենքների պահանջներին համապատասխանելու պայմանով՝ օժանդակել Ծրագրի համար պահանջվող սարքավորումները և նյութերը Հայաստան ներմուծելու ձևականությունների հարցում.
(ii) subject to the Developer complying with all Applicable Laws, facilitate the formalities with Armenia Revenue Authority for the provision of services by the Armenia Revenue Authority that may be required for the success of the Project, which include:	(ii) Կառուցապատողի կողմից բոլոր Կիրառելի Օրենքներին համապատասխանելու պայմանով՝ օժանդակել Հայաստանի Պետական Եկամուտների Մարմնի հետ կապված ձևականությունների հարցում, որպեսզի Հայաստանի Պետական Եկամուտների Մարմինը տրամադրի այն ծառայությունները, որոնք կարող են պահանջվել Ծրագրի հաջողության համար և որոնք ներառում են՝.
(A) examining and valuating cargo;	(A). բեռների զննում և գնահատում,
(B) facilitating electronic data interchange;	(B). տվյալների էլեկտրոնային փոխանակման օժանդակում,
(C) processing bills of entry and shipping; and	(C). մուտքի հայտարարագրերի և բեռնագրերի մշակում, և
(D) collecting customs duty.	(D). մաքսային տուրքերի գանձում:
12.2 Project Finance	12.2. Ծրագրի Ֆինանսավորում
The Parties hereby acknowledge and agree that:	Կողմերը սույնով ընդունում և համաձայնում են, որ.
(a) the Government shall co-operate and assist the Developer, in obtaining financing for the Project; and	(a) Կառավարությունը համագործակցում է Կառուցապատողի հետ և աջակցում նրան Ծրագրի համար ֆինանսավորում ստանալու հարցում,
(b) on that basis the Government agrees, and where relevant, shall use its best efforts , to procure (without incurring Direct Costs) the agreement of the relevant counterparty to each Project Document, that:	(b) դրա հիման վրա Կառավարությունը համաձայնում է, իսկ անհրաժեշտ դեպքերում՝ գործադրում է իր լավագույն ջանքերը (առանց Ուղղակի Ծախսեր կրելու)՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր Ծրագրի Փաստաթղթի համապատասխան կողմ համաձայնի, որ.
(i) on receipt of the written consent of the Government, the Developer shall, subject to Applicable Laws, have the right to pledge or assign to (a) the	(i) Կառավարության գրավոր համաձայնությունը ստանալուն պես, Կառուցապատողը՝ Կիրառելի Օրենքների պահանջման պայմանով, պետք է

<p>Financing Parties by way of security and (b) any Person upon enforcement of such security the benefit of its rights, title or interests in this Agreement, provided that such consent is not unreasonably delayed and can only be withheld by the Government should it reasonably believe that such a pledge or assignment is prejudicial to the national security of Armenia. The Developer shall have the obligation to obtain the permission (consent) of the PSRC in cases and in a manner required by Applicable Laws provided that the Government shall use its best endeavours to ensure that such consent is not unreasonably delayed and can only be withheld by PSRC on the grounds set out in article 27, section 3 of the Energy Law of Armenia (No. HO-148, dated March 7, 2001);</p>	<p>իրավունք ունենա (a) Ֆինանսավորման Կողմերին՝ որպես ապահովման միջոց, և (b) այդ ապահովման միջոցի բռնագանձման դեպքում ցանկացած այլ անձի գրավադրելու կամ զիջելու սույն Պայմանագրով իր իրավունքները, սեփակա-նության իրավունքը կամ շահերը՝ պայմանով, որ նշված համաձայնության տրամադրումը անհիմն չի ձգձգվի և կարող է մերժվել Կառավարության կողմից միայն այն դեպքում, եթե նա հիմնավոր կերպով համարում է, որ նման գրավը կամ զիջումը սպառնում է Հայաստանի ազգային անվտանգության շահերին: Կառուցապատողը պարտավոր է նաև ստանալ ՀԾԿԸ թույլտվությունը (համաձայնությունը) Կիրառելի Օրենքներով սահմանված դեպքերում և կարգով՝ պայմանով, որ Կառավարությունը պետք է գործադրի իր լավագույն ջանքերը, որ այդ համաձայնության տրամադրումը անհիմն չձգձգվի և ՀԾԿԸ-ի կողմից մերժվի միայն ՀՀ Էներգետիկայի մասին (թիվ. ՀՕ-148, ընդունված 7 մարտի 2001 թ.) օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերով:</p>
<p>(ii) the Developer shall, subject to the terms of this Agreement, have the right to pledge or assign to (a) the Financing Parties by way of security and (b) any Person upon enforcement of such security the benefit of its rights, title or interests in the Project Documents; and</p>	<p>(ii) Կառուցապատողը, սույն Պայմանագրի պայմանների պահպանման պայմանով, պետք է իրավունք ունենա (a) Ֆինանսավորման Կողմերին՝ որպես ապահովման միջոց, և (b) այդ ապահովման միջոցի բռնագանձման դեպքում ցանկացած այլ անձի գրավադրելու կամ զիջելու Ծրագրի Փաստաթղթերով և ցանկացած Հողամասի Փոխանցման Պայմանագրով իր իրավունքները, սեփականության իրավունքը կամ շահերը. և</p>
<p>(iii) the Government will enter into a direct agreement in respect of this Agreement and the License with the Financing Parties in relation to the Project (the "Direct Agreement"), reasonably in a form reflective of common practice in international project financed power projects similar to the Project, pursuant to which the Financing Parties will, amongst other rights, have the right to be notified of any impending termination of this Agreement, and as applicable, a Project Document, and allow the Financing Parties or a nominee the right to step in and remedy any default that has given rise to such termination, and/or nominate an approved substitute (in accordance with an approval process to be set out in the Direct Agreement (and including Government approval)) to assume responsibility for the Developer's rights and</p>	<p>(iii) Կառավարությունը սույն Պայմանագրի և Լիցենզիայի առնչությամբ Ֆինանսավորման Կողմերի հետ Ծրագրի կապակցությամբ կնքում է ուղղակի պայմանագիր («Ուղղակի Պայմանագիր»)՝ միջազգային ծրագրային ֆինանսավորմամբ Ծրագրին նման էներգետիկ ծրագրերում տարածված պրակտիկան արտացոլող ձևով, համաձայն որի Ֆինանսավորման Կողմերն իրավունք կունենան ստանալու ծանուցում սույն Պայմանագրի և համապատասխանաբար որևէ Ծրագրի Փաստաթղթի ցանկացած սպառնացող դադարեցման մասին, և թույլ կտան Ֆինանսավորման Կողմերին կամ նրանց կողմից նշանակված անձին միջամտել և վերացնել ցանկացած խախտում, որը հիմք է հանդիսանում նման դադարեցման համար և/կամ նշանակել հավանության արժանացած փոխարինող</p>

<p>obligations pursuant to this Agreement, or any Project Document, as applicable, subject to Applicable Law.</p>	<p>(համաձայն Ուղղակի Պայմանագրով նախատեսվելիք հաստատման գործընթացի (այդ թվում՝ Կառավարության հաստատման))՝ սույն Պայմանագրով կամ, եթե կիրառելի է, որևէ Ծրագրի Փաստաթղթով Կառուցապատողի իրավունքների ու պարտավորությունների համար պատասխանատվություն ստանձնելու համար՝ Կիրառելի Օրենքի պահանջների պահպանման պայմանով:</p>
<p>(iv) The Parties will act in good faith in negotiating any reasonable amendments to the Project Documents required by the Financing Parties provided that any such amendments shall not increase the financial liabilities of the Government under this Agreement nor make the Government's obligations under this Agreement more onerous.</p>	<p>(iv) Ֆինանսավորման Կողմերի կողմից պահանջվող՝ Ծրագրի Փաստաթղթերում ողջամիտ փոփոխությունների շուրջ բանակցությունների ընթացքում Կողմերը գործելու են բարեխղճորեն՝ պայմանով, որ այդ փոփոխությունները չեն ավելացնի սույն Պայմանագրով Կառավարության ֆինանսական պատասխանատվությունը, և ավելի չեն ծանրաբեռնի սույն Պայմանագրով Կառավարության պարտավորությունները:</p>

ARTICLE 13	ՀՈԴՎԱԾ 13
13. INDEMNIFICATION AND LIABILITY	13. ՊԱՐՏԱԶԵՐԾՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՎՈՒԹՅՈՒՆ
13.1 Limitation of Liability	13.1. Պատասխանատվության սահմանափակում
<p>Except as otherwise provided for in the Agreement, to the extent permissible under -Applicable Laws, neither Party shall be liable to the other Party in contract, tort, warranty, strict liability or any other legal theory for any loss of income, loss of opportunity, any indirect, consequential, incidental, punitive or exemplary damages. Neither Party shall have any liability to the other Party except pursuant to, or for breach of, this Agreement; provided, however, that this provision is not intended to constitute a waiver of any rights of one Party against the other with regard to matters unrelated to the Agreement, the Project Documents or any activity not contemplated by the Agreement or Project Documents or provided for under the Applicable Laws.</p>	<p>Բացառությամբ Պայմանագրով պահանջվող դեպքերի, այնքանով, որքանով թույլատրելի է Կիրառելի Օրենքներով, Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում մյուս Կողմի հանդեպ՝ պայմանագրային, դելիկտային պարտավորությունների խախտման, երաշխավորության, անվերապահ պարտավորության կամ այլ օրենսդրական հիմքով, ցանկացած եկամտի կորստի, հնարավորության կորստի, որևէ անուղղակի, հետևանքային, պատահական, տուգանային կամ որպես պատիժ նշանակվող վնասների համար: Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում մյուս Կողմի հանդեպ, բացառությամբ սույն Պայմանագրի համաձայն կամ դրա խախտման համար, սակայն այն պայմանով, որ սույն դրույթը նախատեսված չէ որպես Կողմի իրավունքներից հրաժարում մյուս Կողմի հանդեպ այն հարցերի առնչությամբ, որոնք կապված չեն սույն Պայմանագրի, Ծրագրի Փաստաթղթերի հետ կամ այն գործողությունների առնչությամբ, որոնք նախատեսված չեն սույն Պայմանագրով կամ Ծրագրի Փաստաթղթերով կամ Կիրառելի Օրենքներով:</p>
13.2 Indemnification	13.2. Պարտազերծում
<p>(a) The Developer shall indemnify Government Authorities from and against all claims made against or suffered by Government Authorities, provided that such claims have been finally adjudicated by a court of competent jurisdiction, except to the extent such claims or any causes of action are found by an arbitral tribunal formed and having heard the dispute in accordance with Article 18 to have resulted from the Government's or any Government Authority's gross negligence or wilful misconduct or any Force Majeure Event or Adverse Condition Event:</p>	<p>(a) Կառուցապատողը պարտազերծում է Պետական Մարմիններին նրանց դեմ ներկայացված կամ նրանց կողմից կրած բոլոր պահանջներից՝ պայմանով, որ այդպիսի պահանջները վերջնականապես որոշվել են իրավասու դատարանի կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ 18-րդ Հոդվածի համաձայն կազմավորված և վեճը լսած արբիտրաժային տրիբունալը գտնում է, որ նման պահանջները կամ գործողության հետևանքները հանդիսանում են Կառավարության կամ որևէ Պետական Մարմնի կողմից կոպիտ անփութության կամ դիտավորյալ իրավազանցման կամ ցանկացած Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետևանք:</p>
<p>(i) for any loss of or damage to property or death or injury to Persons directly resulting from any gross negligent act or gross negligent omission of the</p>	<p>(i) գույքի ցանկացած կորստի կամ վնասվածքի, կամ Անձանց մահվան կամ վնասվածքի համար՝ ուղղակիորեն առաջացած</p>

<p>Developer in carrying out the Developer's obligations pursuant to this Agreement and the Project Documents; and</p>	<p>Կառուցապատողի՝ սույն Պայմանագրով ու Ծրագրի Փաստաթղթերով իր պարտավորությունների իրականացման ընթացքում ցանկացած կոպիտ անփույթ գործողության կամ կոպիտ անփույթ բացթողման արդյունքում.</p>
<p>(ii) under any Applicable Laws arising out of any negligent act or negligent omission of the Developer in the design, construction, testing, commissioning or operation of the Project.</p>	<p>(ii) ցանկացած Կիրառելի Օրենքով, որն առաջացել է Ծրագրի նախագծման, շինարարության, փորձարկման, շահագործման հանձնելու կամ շահագործման հարցում Կառուցապատողի՝ ցանկացած անփույթ գործողության կամ անփույթ բացթողման արդյունքում:</p>
<p>(b) The Government shall indemnify the Developer and its Affiliates from and against all claims against or suffered by the Developer and/or its Affiliates, provided that such claims have been finally adjudicated by a court of competent jurisdiction, for any loss of or damage to property or death or injury to Persons directly resulting from any gross negligent act or gross negligent omission of any relevant Government Authority or Power Sector Entity that arises out of or is connected with the performance of this Agreement and the Project Documents except to the extent such claims or any causes of action are found by an arbitral tribunal formed and having heard the dispute in accordance with Article 18 to have resulted from the Developer's gross negligence or wilful misconduct.</p>	<p>(b) Կառավարությունը պարտագերծում է Կառուցապատողին և նրա հետ Փոխկապակցված Անձանց Կառուցապատողի և/կամ նրա Փոխկապակցված Անձանց դեմ ներկայացված կամ կրած բոլոր պահանջներից՝ պայմանով, որ այդպիսի պահանջները վերջնականապես որոշվել են իրավասու դատարանի կողմից՝ Պետական Մարմնի կամ Էներգետիկայի Ոլորտի Մասնակցի որևէ կոպիտ անփույթ գործողության կամ կոպիտ անփույթ բացթողման ուղղակի հետևանքով գույքի որևէ կորստի կամ վնասվածքի կամ Անձանց պատճառված մահվան կամ վնասի համար, որը բխում է կամ կապված է սույն Պայմանագրի և Ծրագրի Փաստաթղթերի կատարման հետ՝ բացառությամբ այնքանով, որքանով նման պահանջները կամ հայցերը 18-րդ Հոդվածին համապատասխան ստեղծված ու վեճը լսած արբիտրաժային տրիբունալի կողմից կճանաչվեն որպես Կառուցապատողի կոպիտ անփութության կամ դիտավորյալ իրավազանցման արդյունք:</p>
<p>(c) In the event injury or damage results from the joint or concurrent negligent or intentional acts or omissions of the Parties, each Party shall be liable under this indemnification in proportion to its relative degree of fault.</p>	<p>(c) Այն դեպքում, եթե վնասվածքը կամ վնասն առաջացել է Կողմերի համատեղ կամ միաժամանակ անփույթ կամ դիտավորյալ գործողությունների կամ բացթողումների հետևանքով, յուրաքանչյուր Կողմ պատասխանատվություն է կրում սույն պարտագերծման ներքո՝ իր մեղքի հարաբերական աստիճանին համաչափ:</p>
<p>(d) The provisions of this Article 13.2 shall survive for a period of three (3) years following any termination of this Agreement.</p>	<p>(d) Սույն 13.2 Հոդվածի դրույթներն ուժի մեջ են մնում սույն Պայմանագրի ցանկացած եղանակով դադարումից հետո 3 (երեք) տարվա ընթացքում:</p>

<p>13.2A Environmental Liability and Indemnification</p>	<p>13. 2A Շրջակա Միջավայրի Հետ Կապված Պատասխանատվություն և Պարտագերծում</p>
<p>(a) The Government agrees that the Developer shall be liable only for violations of Environmental Law relating to the Project caused by the Developer’s activities after taking ownership of the Project Site, provided, however, that the Developer shall not be liable for violations directly or indirectly relating to pre-existing conditions. The Government shall indemnify and hold the Developer harmless should the Developer be prosecuted by any Government Authority for breaches of Environmental Law in respect of violations of Environmental Law arising from the condition or ownership or use of the Project Site prior to the transfer of the Project Site to the Developer pursuant to the Land Transfer Agreement.</p>	<p>(a) Կառավարությունը համաձայնում է, որ Կառուցապատողը պատասխանատվություն է կրելու միայն Ծրագրի իրականացման հետ կապված Շրջակա Միջավայրի Վերաբերյալ Օրենսդրության այնպիսի խախտման համար, որն առաջացել է Կառուցապատողի գործողությունների հետևանքով՝ Ծրագրի Տարածքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուց հետո՝ պայմանով, որ Կառուցապատողը պատասխանատվություն չի կրելու այն խախտումների համար, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են հողի նախկին վիճակի կամ օգտագործման հետ: Կառավարությունը պետք է Կառուցապատողին պարտագերծի և ազատի պատասխանատվությունից, եթե որևէ Պետական Մարմին Շրջակա Միջավայրի Վերաբերյալ Օրենսդրության խախտման համար գործ հարուցի Կառուցապատողի դեմ՝ կապված Շրջակա Միջավայրի Վերաբերյալ Օրենսդրության այնպիսի խախտման հետ, որը բխում է Ծրագրի Տարածքի վիճակից կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքների իրականացումից կամ օգտագործումից մինչև, Հողամասի Փոխանցման Պայմանագրի համաձայն, Ծրագրի Տարածքի փոխանցումը Կառուցապատողին:</p>
<p>(b) For the purposes of this Article, Environmental Law means any Applicable Law relating to or imposing liability or standards of conduct concerning protection of the environment, or, to the extent relating to exposure to substances that are harmful or deleterious to the environment, human health or safety.</p>	<p>(b) Սույն Հոդվածի իմաստով, Շրջակա Միջավայրի Վերաբերյալ Օրենսդրություն նշանակում է ցանկացած Կիրառելի Օրենք, որը վերաբերում է կամ սահմանում է պատասխանատվություն կամ վարքագծի կանոններ շրջակա միջավայրի պահպանության համար, կամ մարդու առողջության կամ անվտանգության համար՝ այնքանով, որքանով դրանք վերաբերում են շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ վնասակար նյութերի ազդեցությանը ենթարկվելուն:</p>
<p>13.3 Indemnification for Fines and Penalties</p>	<p>13.3. Պարտագերծում Տուգանքներից և Տույժերից</p>
<p>Subject to Article 13.2A, any fines or other penalties incurred by a Party for non-compliance with any Applicable Laws shall not be reimbursed by the other Party and shall be the sole responsibility of the non-complying Party.</p>	<p>Պահպանելով 13. 2A Հոդվածի պահանջները՝ ցանկացած Կիրառելի Օրենքի չպահպանման համար Կողմի կրած տուգանքները կամ այլ տույժերը ենթակա չեն փոխհատուցման մյուս Կողմի կողմից և հանդիսանում են խախտումը թույլ տված Կողմի միանձնյա պատասխանատվությունը:</p>
<p>13.4 Notice of Claims</p>	<p>13.4. Պահանջների մասին Ծանուցում</p>

<p>Each Party (the "Indemnified Party") shall promptly notify the other Party (the "Indemnifying Party") of any Loss or proceeding in respect of which it is or may be entitled to indemnification under Article 13 of the Agreement including in relation to any claim made against the Indemnified Party by a third party (a "Third Party Claim"). Such notice shall be given as soon as reasonably practicable after the Indemnified Party becomes aware of the Loss or proceeding.</p>	<p>Յուրաքանչյուր Կողմ («Պարտազերծվող Կողմ») անհապաղ տեղեկացնում է մյուս Կողմին («Պարտազերծող Կողմ») ցանկացած Վնասի կամ դատավարական գործողության մասին, որի նկատմամբ նա ունի կամ կարող է ունենալ պարտազերծման իրավունք՝ համաձայն Պայմանագրի 13-րդ Հոդվածի, այդ թվում՝ ցանկացած պահանջի մասին, որը ներկայացվել է Պարտազերծվող Կողմին Երրորդ Անձի կողմից («Երրորդ Անձի Պահանջ»): Նշված ծանուցումը պետք է ուղարկվի Պարտազերծվող Կողմին Վնասի կամ դատավարական գործողության մասին հայտնի դառնալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:</p>
<p>13.5 Conduct of Claims</p>	<p>13.5. Պահանջների Իրականացում</p>
<p>Subject to the rights of the insurers under any policy of insurance required pursuant to any of the Project Documents the Indemnifying Party may at its own expense and with the assistance and co-operation of the Indemnified Party have control of the Third Party Claim including its settlement and the Indemnified Party shall not, unless the Indemnifying Party has failed to resolve the Third Party Claim within a reasonable period, take any action to settle or prosecute the Third Party Claim.</p>	<p>Ծրագրի Փաստաթղթերից որևէ մեկով պահանջվող ապահովագրական պոլիսի ներքո ապահովագրողների իրավունքների պահպանման պայմանով Պարտազերծող Կողմն իր հաշվին և Պարտազերծվող Կողմի աջակցությամբ և համագործակցությամբ կարող է վերահսկողություն ունենալ Երրորդ Անձի Պահանջի նկատմամբ, այդ թվում նաև՝ դրա կարգավորման, և Պարտազերծվող Կողմը չպետք է ձեռնարկի որևէ միջոց Երրորդ Անձի Պահանջը կարգավորելու կամ դատական կարգով հետապնդելու ուղղությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ Պարտազերծող Կողմը խելամիտ ժամկետում չի կարգավորում Երրորդ Անձի Պահանջի հարցը:</p>

ARTICLE 14	ՀՈՂՎԱԾ 14
14. FORCE MAJEURE AND ADVERSE CONDITIONS	14. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ ԵՎ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ
14.1 Force Majeure Events and Adverse Condition Events	14.1. Անհաղթահարելի Ուժի և Անբարենպաստ Պայմանի Դեպքեր
(a) A "Force Majeure Event" or an "Adverse Condition Event" means the occurrence of any (or any combination of) events or circumstances including those described in Articles 14.1(c) or 14.1(b) (as applicable), which (or any of the consequences of which) are not within the reasonable control, directly or indirectly, of the Party affected (the "Affected Party"), but only if and to the extent that:	(a) «Անհաղթահարելի Ուժի Դեպք կամ Անբարենպաստ Պայմանի Դեպք» նշանակում է ցանկացած այնպիսի իրադարձությունների (կամ դրանց համակցության) կամ հանգամանքների տեղի ունենալը, այդ թվում՝ 14.1(c) և 14.1(b) Հոդվածներում նկարագրված դեպքերը (ըստ կիրառելիության), որոնք (կամ որոնց հետևանքներից ցանկացածը) չեն գտնվում ազդեցության ենթարկված Կողմի («Ազդեցության ենթարկված Կողմ») ողջամիտ վերահսկողության ներքո, սակայն միայն հետևյալ սահմաններում և դեպքերում.
(i) such events or circumstances, despite the exercise of reasonable diligence and Good Industry Practice, cannot be prevented, avoided or removed by the Affected Party;	(i) չնայած ողջամիտ ջանքերի և Ոլորտի Լավ Պրակտիկայի կիրառմանը՝ Ազդեցության ենթարկված Կողմը չի կարող կանխել այդ հանգամանքները, խուսափել դրանցից կամ վերացնել դրանք,
(ii) it prevents, hinders or delays the Affected Party (either itself or through its sub-contractors) from performing its obligations under this Agreement, or if the Affected Party is the Developer, the Power Purchase Agreement, as the case may be, and the Affected Party has taken all reasonable precautions, due care and reasonable alternative measures in order to avoid the effect of such event on the Affected Party's ability to perform its obligations under this Agreement, or if the Affected Party is the Developer, the Power Purchase Agreement, as the case may be, and to mitigate the consequences thereof; and	(ii) այն թույլ չի տալիս Ազդեցության ենթարկված Կողմին (ինքնուրույն կամ ենթակապալառուների միջոցով) կատարել սույն Պայմանագրով, կամ եթե Ազդեցության ենթարկված Կողմը Կառուցապատողն է՝ համապատասխանաբար էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, խոչընդոտում է դրանց կատարմանը կամ ձգձգում է դրանց կատարումը, իսկ Ազդեցության ենթարկված Կողմը ձեռնարկել է բոլոր խելամիտ նախազգուշական միջոցները, ջանքերը և ողջամիտ այլընտրանքային միջոցները Ազդեցության ենթարկված Կողմի՝ սույն Պայմանագրով, կամ եթե Ազդեցության ենթարկված Կողմը Կառուցապատողն է՝ համապատասխանաբար էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարման ունակության վրա նշված հանգամանքի ազդեցությունից խուսափելու և այդ ազդեցությունը մեղմացնելու համար, և
(iii) the Affected Party has given the other Party (the "Non-Affected Party") notice in accordance with Articles 14.2(a) and 14.3.	(iii) Ազդեցության ենթարկված Կողմը մյուս Կողմին («Ազդեցության չենթարկված Կողմ») տրամադրել է ծանուցումներ՝ համաձայն 14.2(a) և 14.3 Հոդվածների:

<p>(b) Subject to satisfying the conditions set out in Article 14.1, an "Adverse Condition Event" means any of the following events or circumstance within, or affecting, Armenia:</p>	<p>(b) Պահպանելով 14. 1 Հոդվածով նախատեսված պայմանները՝ «Անբարենպաստ Պայմանի Դեպք» նշանակում է հետևյալ իրադարձություններից կամ հանգամանքներից ցանկացածը, որը տեղի է ունենում Հայաստանում կամ ազդեցություն է ունենում Հայաստանի վրա.</p>
<p>(i) action or failure to act by a Government Authority (including the PSRC and the Expert Commission) or any Power Sector Entity, including any Applicable Permit (i) ceasing to remain in full force and effect not due to the fault or failure of the Developer or (ii) not being issued or renewed upon application having been properly made within the time period prescribed by Applicable Law (or if no such time period is prescribed, within a reasonable amount of time) provided the Developer has met the requirements of Applicable Laws;</p>	<p>(i) Պետական Մարմնի (այդ թվում՝ ՀԾԿՀ-ն և Փորձաքննական Հանձնաժողովը) կամ էներգետիկայի Ոլորտի Մասնակցի գործողությունները կամ անգործությունը, այդ թվում՝ եթե որևէ Կիրառելի Թույլտվություն (i) այլևս չի գործում լրիվ ուժով, ինչը չի հանդիսանում Կառուցապատողի մեղքի կամ ձախողման արդյունք, (ii) Կիրառելի Օրենքով նախատեսված ժամկետներում (կամ եթե այդպիսի ժամկետ սահմանված չէ՝ ողջամիտ ժամկետում) չի տրամադրվել կամ նորացվել պատշաճ ձևով ներկայացված դիմումից հետո՝ պայմանով, որ Կառուցապատողը կատարել է Կիրառելի Օրենքների պահանջները,</p>
<p>(ii) failure of PSRC to adopt a resolution on the License Revision and the approval of Tariffs based on Tariff Schedule within 15 (fifteen) working days after the submission by the Developer to PSRC of the Completion Act and other documents required by the Applicable Laws, as well as fulfilment of all other relevant requirements of the Applicable Laws, relating to the License Revision and approval of Tariffs;</p>	<p>(ii) Կառուցապատողի կողմից Ավարտական Ակտը և Կիրառելի Օրենքներով պահանջվող այլ փաստաթղթերը ՀԾԿՀ ներկայացնելուց, ինչպես նաև Լիցենզիայի Վերանայմանը և Սակագների հաստատմանը վերաբերող Կիրառելի Օրենքների այլ պահանջները կատարելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀԾԿՀ-ի կողմից Լիցենզիայի Վերանայման և Սակագնային Պլանի հիման վրա Սակագների հաստատման մասին որոշում չընդունելը,</p>
<p>(iii) any Grid Event;</p>	<p>(iii) ցանկացած Ցանցին Առնչվող Դեպք,</p>
<p>(iv) any sanctions or embargos, boycott, revolution, riot, insurrection, civil war, civil commotion, or act or campaign of terrorism, or sabotage of a political nature including any politically motivated intrusion into any information technology system;</p>	<p>(iv) ցանկացած սանկցիա կամ էմբարգո, բոյկոտ, հեղափոխություն, խռովություն, ապստամբություն, քաղաքացիական պատերազմ, քաղաքացիական անկարգություն, կամ ահաբեկչական գործողություններ կամ արշավներ, կամ քաղաքական բնույթի սաբոտաժ, այդ թվում՝ քաղաքական նկատառումներով ներխուժում ինֆորմացիոն տեխնոլոգիաների ցանկացած համակարգ.</p>
<p>(v) any nuclear, chemical or biological contamination or sonic boom;</p>	<p>(v) ատոմային, քիմիական կամ կենսաբանական ցանկացած աղտոտում կամ ձայնային հարված.</p>
<p>(vi) (A) the commencement after the date hereof of any act of war (whether declared or not), invasion, armed conflict or act of foreign enemy,(B) any</p>	<p>(vi) (A) սույն Պայմանագրի ամսաթվից հետո ցանկացած պատերազմ (լինի դա հայտարարված, թե՛ ոչ), ներխուժում, զինված հակամարտություն կամ</p>

<p>blockade,(C) the material escalation after the date hereof of any act of war (whether declared or not), invasion, armed conflict or act of foreign enemy, in each case occurring within or involving Armenia; or</p>	<p>արտաքին թշնամու գործողություններ սկսվելը, (B) ցանկացած շրջափակում, (C) սույն Պայմանագրի ամսաթվից հետո ցանկացած պատերազմի(լինի դա հայտարարված, թե՛ ոչ), ներխուժման, զինված հակամարտության կամ արտաքին թշնամու գործողությունների էական էսկալացիան՝ յուրաքանչյուր դեպքում Հայաստանի տարածքում կամ Հայաստանի առնչությամբ. կամ</p>
<p>(vii) any national or politically motivated strike, industrial action or lockout (other than in each case caused by the Party seeking to rely on this clause, or Affiliates in the same group as that Party).</p>	<p>(vii) ազգային կամ քաղաքական նկատառումներով ցանկացած գործադուլ, արդյունաբերական ակցիա կամ լոքուտ (բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է սույն կետի վրա հիմնվել ցանկացող Կողմի կողմից կամ այդ Կողմի հետ նույն խմբում գտնվող Փոխկապակցված Անձանց կողմից):</p>
<p>(c) Subject to satisfying the conditions set out in Article 14.1, a "Force Majeure Event" means any event which is an extraordinary event or circumstance of natural or man-made nature and which is not an Adverse Condition Event, including but not limited to:</p>	<p>(c) Պահպանելով 14. 1 Հոդվածով նախատեսված պայմանները՝ «Անհաղթահարելի Ուժի Դեպք» նշանակում է ցանկացած Անհաղթահարելի Ուժի Դեպք, որը հանդիսանում է բնության կամ տեխնածին արտառոց իրադարձություն կամ հանգամանք և որը չի հանդիսանում Անբարենպաստ Պայմանի Դեպք, այդ թվում, սակայն առանց սահմանափակման.</p>
<p>(i) flood, earthquake, unusually severe snowstorm, meteorites;</p>	<p>(i) ջրհեղեղ, երկրաշարժ, արտասովոր խիստ ձնաբուք, երկնաքար.</p>
<p>(ii) epidemic or pandemic;</p>	<p>(ii) համաճարակ կամ պանդեմիա.</p>
<p>(iii) the discovery of any fossils, historical artefacts or other remains or items of geological or archaeological interest; or</p>	<p>(iii) բրածոների, պատմական արտեֆակտների կամ երկրաբանական կամ հնագիտական հետաքրքրություն ներկայացնող այլ իրերի հայտնաբերում. կամ</p>
<p>(iv) collapse of buildings, fire, explosion or accident caused by a Force Majeure Event;</p>	<p>(iv) Անհաղթահարելի Ուժի Դեպքի հետևանքով տեղի ունեցած շենքերի փլուզում, հրդեհ, պայթյուն կամ դժբախտ պատահար.</p>
<p>(d) For the avoidance of doubt, a Force Majeure Event shall not include the following events:</p>	<p>(d) Կասկածներից խուսափելու համար, Անհաղթահարելի Ուժի Դեպքը չի ներառում հետևյալ իրադարձությունները՝</p>
<p>(i) lack of funds due to any reason;</p>	<p>(i) միջոցների սակավություն՝ ցանկացած պատճառով,</p>
<p>(ii) any unexpected changes in the cost and quantities of plant or materials during the construction period;</p>	<p>(ii) շինարարության ժամանակահատվածի ընթացքում Կայանի կամ նյութերի արժեքի և քանակների անսպասելի փոփոխություններ,</p>
<p>(iii) late delivery of machinery or other materials or a delay in the performance by any contractor or supplier</p>	<p>(iii) մեքենաների կամ այլ նյութերի առաքման ուշացում կամ որևէ կապալառուի կամ մատակարարի կողմից ծառայությունների կետանց (բացառությամբ այն</p>

(except where such late delivery or delay is itself attributable to a Force Majeure Event);	դեպքերի, երբ նման ուշացումները կամ կետանցները վերագրվում են որևէ Անհաղթահարելի Ուժի Դեպքի),
(iv) normal wear and tear or random flaws in materials and equipment or breakdown in equipment;	(iv) նյութերի կամ սարքավորումների բնականոն մաշվածությունը կամ պատահական թերությունները, կամ սարքավորումների խաթարումը,
(v) hazards within the anticipated design criteria of the Project or which are otherwise unexceptional such that they can be reasonably anticipated, prevented or mitigated as part of Good Industry Practice;	(v) ռիսկեր, որոնք նախատեսվում էին Ծրագրի ակնկալվող նախագծման չափանիշների շրջանակներում կամ որոնք այլապես այնքան արտասովոր չեն, որ չէին կարող ողջամտորեն կանխատեսվել, կանխվել կամ մեղմացվել Ոլորտի Լավ Պրակտիկայի շրջանակներում,
(vi) subject to Article 14.1(b)(vii), any labour or trade dispute; or	(vi) 14.1(b)(vii) Հոդվածի պահպանմամբ՝ որևէ աշխատանքային կամ կոլեկտիվ վեճ. և
(vii) collapse of buildings, fire, explosion or accident, other than those caused by a Force Majeure Event.	(vii) շենքերի փլուզում, հրդեհ, պայթյուն կամ այլ դժբախտ պատահար, բացառությամբ նրանց, որոնք առաջացել են Անհաղթահարելի Ուժի Դեպքի հետևանքով:
14.2 Notification of Force Majeure Event or Adverse Condition Event by Affected Party	14.2. Ազդեցության ենթարկված Կողմի կողմից Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի մասին Ծանուցում
(a) To benefit from the protections afforded to the Affected Party during a Force Majeure Event or Adverse Condition Event under this Agreement, the Affected Party must notify the Non-Affected Party promptly of the events or circumstances (if known) constituting the Force Majeure Event or Adverse Condition Event (and in any case within ten (10) Days of becoming aware thereof), the likely duration of such events or circumstances and their consequences on its obligations or enjoyment of rights and benefits under this Agreement, or if the Affected Party is the Developer, this Agreement or the Power Purchase Agreement, as the case may be.	(a) Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի ընթացքում սույն Պայմանագրով Ազդեցության ենթարկված Կողմին տրամադրվող պաշտպանությունից օգտվելու համար, Ազդեցության ենթարկված Կողմը պետք է անհապաղ ծանուցի Ազդեցության չենթարկված Կողմին Անհաղթահարելի Ուժի Դեպք կամ Անբարենպաստ Պայմանի Դեպք կազմող իրադարձությունների կամ հանգամանքների մասին (բոլոր դեպքերում դրանց մասին իրազեկվելու պահից 10 (տասը) Օրվա ընթացքում)՝ նշելով այդ իրադարձությունների կամ հանգամանքների հավանական տևողությունը և դրանց ազդեցությունը սույն Պայմանագրով, կամ, եթե Ազդեցության ենթարկված Կողմը Կառուցապատողն է՝ համապատասխանաբար, սույն Պայմանագրով կամ էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կամ իրավունքների և օգուտներից օգտվելու հնարավորության վրա:
(b) After delivering a notice pursuant to Article 14.2(a), the Developer shall keep the Government	(b) 14.2(a) Հոդվածի համաձայն ծանուցում ներկայացնելուց հետո, Կառուցապատողը Կառավարությանն իրազեկ է պահում Անհաղթահարելի

<p>informed of material developments relating to the relevant Force Majeure Event or Adverse Condition Event.</p>	<p>Ուժի Դեպքին կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքին վերաբերող էական փոփոխությունների մասին:</p>
<p>14.3 Duty to mitigate a Force Majeure Event or Adverse Condition Event</p>	<p>14.3. Անհաղթահարելի Ուժի Դեպքը կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքը մեղմացնելու պարտականությունը</p>
<p>(a) The Affected Party shall use all reasonable endeavours to continue to perform its obligations under the Agreement, or in relation to the Developer, the Power Purchase Agreement, as the case may be, and to mitigate or minimise the adverse effects of the Force Majeure Event or Adverse Condition Event.</p>	<p>(a) Ազդեցության ենթարկված Կողմը ձեռնարկում է ողջամիտ ջանքեր Պայմանագրով կամ Կառուցապատողի դեպքում՝ Էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրով, համապատասխանաբար, իր պարտավորությունների կատարումը շարունակելու և Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի անբարենպաստ ազդեցությունը մեղմացնելու կամ նվազագույնի հասցնելու համար:</p>
<p>(b) The Affected Party shall notify the Non-Affected Party of the steps it proposes to take to mitigate or minimise the effects of such Force Majeure Event or Adverse Condition Event, including any reasonable alternative means for performance of its obligations under the Agreement. The Non-Affected Party shall use reasonable endeavours to co-operate in taking such steps, to the extent that it is not prejudiced by doing so. The Affected Party shall also notify the Non-Affected Party of the nature and expected duration of the Force Majeure Event or Adverse Condition Event and continue to keep the Non-Affected Party informed until such time as it is able to perform its obligations.</p>	<p>(b) Ազդեցության ենթարկված Կողմը ծանուցում է Ազդեցության չենթարկված Կողմին այն քայլերի մասին, որոնք ինքն առաջարկում է ձեռնարկել նման Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի ազդեցությունը մեղմացնելու կամ նվազագույնի հասցնելու համար, այդ թվում նաև Պայմանագրով իր պարտավորությունների կատարման համար ցանկացած այլընտրանքային միջոցների մասին: Ազդեցության չենթարկված Կողմը զործադրում է ողջամիտ ջանքեր նշված քայլերի ձեռնարկման հարցում համագործակցություն ցուցաբերելու հարցում, այնքանով որքանով դրանք չեն վնասում նրան: Ազդեցության ենթարկված Կողմը նաև ծանուցում է Ազդեցության չենթարկված Կողմին Անհաղթահարելի Ուժի Դեպքի և Անբարենպաստ Պայմանի Դեպքի բնույթի և ակնկալվող տևողության մասին և շարունակում է Ազդեցության ենթարկված Կողմին տեղեկացված պահել մինչ այն պահը, երբ ինքն ի վիճակի լինի կատարել իր պարտավորությունները:</p>
<p>(c) The Affected Party shall have the burden of proving that the circumstance, event or combination of circumstances or events constitutes a valid Force Majeure Event or Adverse Condition Event and that it has exercised reasonable diligence and efforts to avoid the effects of any alleged Force Majeure Event or Adverse Condition Event.</p>	<p>(c) Ազդեցության ենթարկված Կողմը կրում է ապացուցման բեռը, որ տվյալ հանգամանքը, իրադարձությունը կամ հանգամանքների կամ իրադարձությունների համակցությունը հանդիսանում է իրական Անհաղթահարելի Ուժի Դեպք կամ Անբարենպաստ Պայմանի Դեպք և որ նա գործադրել է ողջամիտ ջանասիրություն և ջանքեր ցանկացած ենթադրվող Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի ազդեցություններից խուսափելու համար:</p>

<p>14.4 Effect of Force Majeure Event or Adverse Condition Event</p>	<p>14.4. Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի Ազդեցությունը</p>
<p>(a) Relief from Obligations</p>	<p>(a) Պարտավորություններից Ազատում</p>
<p>Without prejudice to Article 4 and subject to Articles 14.2, 14.3 and 14.4(b) to (d), to the extent the Affected Party is prevented, hindered or delayed in or from performing any of its obligations under this Agreement by a Force Majeure Event or Adverse Condition Event or a breach by the Offtaker of the PPA, the Affected Party shall not be in breach of this Agreement or otherwise liable for any such failure or delay in the performance of such obligations. The time for performance of such obligations shall be extended accordingly. The corresponding obligations of the other Party will be suspended, and its time for performance of such obligations extended, to the same extent as those of the Affected Party.</p>	<p>Առանց սահմանափակելու 4-րդ Հոդվածը և 14.2, 14.3 և 14. 4(b)-ից (d) Հոդվածների պահպանմամբ՝ այնքանով, որքանով Անհաղթահարելի Ուժի Դեպքը կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքը կամ Գնորդի կողմից ԷԳՊ-ի խախտումը կանխել, խոչընդոտել կամ ուշացրել են Ազդեցության ենթարկված Կողմի կողմից սույն Պայմանագրի ներքո իր պարտականությունները կատարելը, համարվում է, որ Ազդեցության ենթարկված Կողմը չի խախտել սույն Պայմանագիրը կամ այլ կերպ պատասխանատվություն չի կրում իր պարտավորությունների նման չկատարման կամ կետանցի համար: Նշված պարտավորությունների կատարման ժամկետը պետք է համապատասխանաբար երկարաձգվի: Մյուս Կողմի համապատասխան պարտավորությունները կկասեցվեն և նշված պարտավորությունների համար ժամկետը կերկարաձգվի միևնույն չափով, որքանով այն երկարաձգվել է Ազդեցության ենթարկված Կողմի համար:</p>
<p>(b) Material Damage to the Plant</p>	<p>(b) Կայանի էական վնասվածք</p>
<p>Subject to Article 14.4(c) and 15, if a Force Majeure Event or Adverse Condition Event shall have occurred which results in material damage to or loss of the Plant, the following shall apply:</p>	<p>Պահպանելով 14. 4(c) և 15-րդ Հոդվածների պայմանները՝ եթե տեղի է ունեցել Անհաղթահարելի Ուժի Դեպք կամ Անբարենպաստ Պայմանի Դեպք, որը հանգեցնում է Կայանի էական վնասի կամ կորստի, կիրառվում է հետևյալը՝</p>
<p>(i) the Parties shall consult with one another as soon as practicable after the giving of a notice as provided in Article 14.2 concerning the effect of such Force Majeure Event or Adverse Condition Event upon the Milestone Dates, the Project Schedule, and/or the Commercial Operation Date, and the Milestone Dates, the Project Schedule and/or the Scheduled Commercial Operation Date shall be equitably extended upon the agreement of both Parties to take into account such effect and the ability of the Developer or the EPC Contractor to reschedule Project activities to avoid or minimize overall delays resulting from the Force Majeure Event or Adverse Condition Event; and</p>	<p>(i) 14.2 Հոդվածում սահմանված եղանակով ծանուցում տրամադրելուց հետո հնարավորինս շուտ Կողմերը խորհրդակցում են միմյանց հետ Նշանակալից Ամսաթվերի, Ծրագրի Ժամանակացույցի և/կամ Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի վրա այդ Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի ազդեցության վերաբերյալ, և Նշանակալից Ամսաթվերը, Ծրագրի Ժամանակացույցը, և/կամ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը հավասարապես երկարաձգվում են երկու Կողմերի համաձայնությամբ՝ հաշվի առնելու համար նշված ազդեցությունը և Կառուցապատողի կամ ՆԳԿ Կապալառուի՝ նախագծային գործողությունները կրկին պլանավորելու կարողությունը Անհաղթահարելի Ուժի Դեպքից կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքից բխող</p>

	համընդհանուր կետանցներից խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու համար:
(ii) if the Parties are unable to agree upon the equitable adjustment of the Milestone Dates, and/or the Project Schedule, and/or the Scheduled Commercial Operation Date, within a period of sixty (60) Days after the giving of a notice as provided in Article 14.2, either Party shall be entitled to submit such dispute to the Independent Engineer for determination of the adjustment, if any, to the Milestone Dates, and/or the Project Schedule, and/or the Scheduled Commercial Operation Date.	(ii) Եթե Կողմերը չեն կարողանում համաձայնել Նշանակալից Ամսաթվերի և/կամ Ծրագրի Ժամանակացույցի, և/կամ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի արդարացի ճշգրտման հարցում 14.2 Հոդվածով սահմանված եղանակով ծանուցում տրամադրելուց 60 (վաթսուն) Օրվա ընթացքում, Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ներկայացնելու նման վեճը Անկախ Ինժեներին՝ Նշանակալից Ամսաթվերի և/կամ Ծրագրի Ժամանակացույցի, և/կամ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվի ճշգրտման համար:
(c) Term	(c) Ժամկետ
(i) The Parties agree that the Term, and the Government shall procure that the Committed Offtake Term, shall be extended by any period during which the Developer is prevented, hindered, or delayed from performing its obligations under this Agreement as a result of a Force Majeure Event. In case such an extension is not allowed under Applicable Laws, the Government will compensate the Developer for the delayed period as a Deemed Period (in accordance with Articles 10.2(b) and (d) and as if references therein to an Adverse Condition Event were to a Force Majeure Event) instead of providing such extension of the Term.	Կողմերը համաձայնում են, որ Ժամկետը, և Կառավարությունն ապահովում է, որ Երաշխավորված Գնման Ժամկետը երկարաձգվի ցանկացած ժամանակահատվածով, որի ընթացքում Կառուցապատողը Անհաղթահարելի Ուժի Դեպքի արդյունքում չի կարողացել կատարել սույն Պայմանագրով իր պարտավորությունները, դրանց կատարումը խոչընդոտվել է կամ ձգձգվել: Եթե նման երկարաձգումը թույլատրելի չէ Կիրառելի Օրենքների համաձայն, ապա Կառավարությունը Կառուցապատողին այդ ժամանակահատվածի համար կփոխհատուցի որպես Ենթադրյալ Ժամանակահատված (համաձայն 10. 2(b) և (d) Հոդվածների՝ դրանցում կատարված հղումները Անբարենպաստ Պայմանի Դեպքի համարելով հղում Անհաղթահարելի Ուժի Դեպքի)՝ Ժամկետի երկարաձգման փոխարեն:
(d) Exclusion of Payment Obligations from Force Majeure	(d) Վճարման Պարտավորությունների Բացառումը Անհաղթահարելի Ուժից
Notwithstanding any other provision of the Agreement, neither Party shall be entitled to claim relief from its obligation to make a payment under the Agreement by reason of a Force Majeure Event and the Government shall not be entitled to claim relief from its obligation to make a payment under the Agreement by reason of an Adverse Condition Event or a breach by the Offtaker of the PPA.	Չնայած Պայմանագրի ցանկացած այլ դրույթի՝ Կողմերից ոչ մեկն իրավունք չունի Անհաղթահարելի Ուժի Դեպքի պատճառով ազատում պահանջելու Պայմանագրով վճարում կատարելու պարտավորությունից և Կառավարությունն իրավունք չունի պահանջելու ազատվել Պայմանագրով վճարում կատարելու իր պարտավորությունից Անբարենպաստ

	Պայմանի Դեպքի կամ Գնորդի կողմից ԷԳՊ-ի խախտման հիմքով:
--	---

ARTICLE 15	ՀՈԴՎԱԾ 15
15. COMPENSATION FOR ADVERSE CONDITION EVENTS AND CHANGE IN LAW	15. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆԻ ԴԵՊԷԻ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
15.1 Consequences of an Adverse Condition Event or Change in Law	15.1. Անբարենպաստ Պայմանի Դեպքի և Օրենքի Փոփոխության Հետևանքները
<p>If either the Developer (in respect of Costs) or the Government (in respect of Savings arising from a Change in Law) believes that any Adverse Condition Event under Articles 14.1(b)(i) or 14.1(b)(ii) or a Change in Law has occurred that will directly result in such Costs or Savings, as the case may be, such Party shall promptly deliver to the other Party a notice identifying such Adverse Condition Event or Change in Law, and the net amount of Costs or Savings that have resulted from such Adverse Condition Event or Change in Law, subject in any event to the obligation of the Developer to minimise such Costs and to maximize such Savings in accordance with Good Industry Practice. Such Party may from time to time deliver to the other Party additional notices with respect to any such Adverse Condition Event or Change in Law, identifying additional Costs or Savings that have resulted or are reasonably expected to result from such Adverse Condition Event or Change in Law; provided that, any such additional notice shall be given not later than twelve (12) months after the Party giving such notice knew of or should have known of such additional Costs or realization of such additional Savings resulting from the occurrence of such Adverse Condition Event or Change in Law.</p>	<p>Եթե Կառուցապատողը (Ծախսերի վերաբերյալ) կամ Կառավարությունը (Օրենքի Փոփոխությունից բխող Տնտեսումների վերաբերյալ) համարում է, որ տեղի է ունեցել 14. 1(b)(i) Հոդվածով կամ 14. 1(b)(ii) Հոդվածով նախատեսված որևէ Անբարենպաստ Պայմանի Դեպք կամ Օրենքի Փոփոխություն, որն ուղղակիորեն կհանգեցնի, համապատասխանաբար, այդպիսի Ծախսերի կամ Տնտեսումների, այդ Կողմն անհապաղ ծանուցում է մյուս Կողմին՝ նշելով այդ Անբարենպաստ Պայմանի Դեպքը կամ Օրենքի Փոփոխությունը և այդ Անբարենպաստ Պայմանի Դեպքով կամ Օրենքի Փոփոխությամբ պայմանավորված Ծախսերի կամ Տնտեսումների զուտ գումարը, բոլոր դեպքերում Կառուցապատողի՝ նման Ծախսերը նվազեցնելու և նման Տնտեսումներն առավելագույնի հասցնելու պարտավորության պահպանման պայմանով՝ համաձայն Ոլորտի Լավ Պրակտիկայի: Այդ Կողմը կարող է պարբերաբար ուղարկել մյուս Կողմին լրացուցիչ ծանուցումներ նման Անբարենպաստ Պայմանի Դեպքի կամ Օրենքի Փոփոխության մասին՝ նշելով լրացուցիչ Ծախսերը կամ Տնտեսումները, որոնք առաջացել են կամ ողջամտորեն ակնկալվում է, որ կառաջանան այդպիսի Անբարենպաստ Պայմանի Դեպքի կամ Օրենքի Փոփոխության հետևանքով՝ պայմանով, որ նման ծանուցումը տրամադրվում է ոչ ուշ, քան 12 (տասներկու) ամսվա ընթացքում այն պահից, երբ նման ծանուցում տվող Կողմին հայտնի է դարձել կամ պետք է հայտնի դառնար Անբարենպաստ Պայմանի Դեպքի կամ Օրենքի Փոփոխության հետևանքով նման լրացուցիչ Ծախսերի կամ լրացուցիչ Տնտեսումների կատարման մասին:</p>
15.2 Procedure for Claims	15.2. Պահանջների Ընթացակարգը

<p>(a) In circumstances where an Adverse Condition Event under Articles 14.1(b)(i) or 14.1(b)(ii) or a Change in Law causes the Developer to incur increased Costs prior to the Commercial Operation Date, the Government shall reimburse the Developer by means of a lump sum payment within sixty (60) Days of the issue by the Developer of a written notice to the Government of such increased Costs.</p>	<p>(a) Այն դեպքում, երբ 14. 1(b)(i) Հոդվածով կամ 14. 1(b)(ii) Հոդվածով նախատեսված Անբարենպաստ Պայմանի Դեպքի կամ Օրենքի Փոփոխության հետևանքով Կառուցապատողը կրում է ավելացված Ծախսեր մինչև Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը, Կառավարությունը փոխհատուցում է Կառուցապատողին միանվագ վճարման միջոցով՝ Կառուցապատողի կողմից այդպիսի ավելացված Ծախսերի մասին Կառավարությանը գրավոր ծանուցվելուց հետո 60 (վաթսուն) Օրվա ընթացքում:</p>
<p>(b) To the extent that the Costs are a reduction in the gross revenue received by the Developer due to an inability to achieve the Commercial Operation Date or to produce Net Electrical Energy as a result of any Change in Law or Adverse Condition Event under Articles 14.1(b)(i) or 14.1(b)(ii) which is compensated for under paragraph 46 or 47 of the Power Purchase Agreement or under Article 10.2 of this Agreement then such Costs shall be claimed under those provisions. In all other cases, any claim by the Developer under this Article 15.2 shall be without prejudice to the rights of the Developer to claim pursuant to paragraph 46 or 47 of the Power Purchase Agreement or under Article 10.2 of this Agreement.</p>	<p>(b) Այն դեպքում, երբ Ծախսերը որևէ Օրենքի Փոփոխության կամ 14. 1(b)(i) Հոդվածով կամ 14. 1(b)(ii) Հոդվածով նախատեսված Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետևանքով Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը չապահովելու կամ Զուտ էլեկտրական էներգիա չարտադրելու պատճառով Կառուցապատողի համախառն եկամտի նվազեցում են և փոխհատուցվում են էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրի 46-րդ կամ 47-րդ պարբերություններով կամ սույն Պայմանագրի 10. 2 Հոդվածով նախատեսված կարգով, այդ Ծախսերի փոխհատուցում պահանջվում է այդ դրույթների համաձայն: Մյուս բոլոր դեպքերում, սույն 15. 2 Հոդվածի համաձայն Կառուցապատողի ցանկացած պահանջ չպետք է սահմանափակի էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրի 46-րդ կամ 47-րդ պարբերություններով կամ սույն Պայմանագրի 10. 2 Հոդվածով նախատեսված կարգով պահանջ ներկայացնելու՝ Կառուցապատողի իրավունքները:</p>
<p>(c) In all circumstances other than those referred to in Articles 15.2(a) or 15.2(b), within seven (7) Days following the issuance or receipt of any notice of a Change in Law or Adverse Condition Event under Articles 14.1(b)(i) or 14.1(b)(ii) specified in Article 15.1, as applicable, the Developer shall apply to PSRC for the revision of the Tariffs. Should PSRC fail to grant a Tariffs revision which would put the Developer into the same net (after-tax) economic position as if there were no such Adverse Condition Event (in the case of increased Costs) or Change in Law (in the case of Savings), then paragraph (d) below shall apply. Should the Developer fail to apply to the PSRC for the revision of Tariffs due to a Change in Law resulting in Savings, the PSRC will have the right to initiate a revision of the Tariffs.</p>	<p>(c) 15. 2(a) կամ 15. 2(b) Հոդվածներով նախատեսված դեպքերից բացի մյուս բոլոր դեպքերում, 15.1 Հոդվածի համաձայն, համապատասխանաբար, Օրենքի Փոփոխության կամ 14. 1(b)(i) Հոդվածով կամ 14. 1(b)(ii) Հոդվածով նախատեսված Անբարենպաստ Պայմանի Դեպքի մասին որևէ ծանուցում ներկայացնելուց կամ ստանալուց հետո 7 (յոթ) Օրվա ընթացքում Կառուցապատողը դիմում է ՀԾԿԿ Սակագների վերանայման համար: Եթե ՀԾԿԿ-ն չտրամադրի Սակագների վերանայում, որը կդնի Կառուցապատողին այն նույն զուտ (հարկումից հետո) տնտեսական վիճակի մեջ, ինչ նա կունենար, եթե Անբարենպաստ Պայմանի Դեպք (ավելացված Ծախսերի դեպքում) կամ Օրենքի Փոփոխություն (Տնտեսումների դեպքում) տեղի չունենար, ապա</p>

	կիրառվում է ներքոնշյալ (d) պարբերությունը: Եթե Կառուցապատողը չդիմի ՀԾԿՀ Սակագների վերանայման համար՝ Օրենքի այնպիսի Փոփոխության հետևանքով, որը առաջացնում է Տնտեսումներ, ապա ՀԾԿՀ-ն իրավունք ունի նախաձեռնելու սակագների վերանայում:
(d) The Parties shall, upon the written request of the Developer, meet at the offices of the Government within seven (7) days to discuss the subject matter. If within fourteen (14) Days after the commencement of such discussions, either Party disputes any of the contents of the notice, such dispute shall be submitted to the Independent Expert. The Parties shall use their best endeavours to cause Independent Expert to render his determination not later than forty-five (45) Days after being appointed.	(d) Կողմերը, Կառուցապատողի գրավոր պահանջով, հանդիպում են Կառավարության գրասենյակներում 7 (յոթ) օրվա ընթացքում՝ խնդիրը քննարկելու համար: Եթե նման քննարկումների մեկնարկից 14 (տասնչորս) Օրվա ընթացքում Կողմերից որևէ մեկը վիճարկում է ծանուցման բովանդակությունը, նման վեճը ներկայացվում է Անկախ Փորձագետին: Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը, որպեսզի դրդեն Անկախ Փորձագետին՝ իր որոշումը կայացնել ոչ ուշ, քան նշանակման պահից 45 (քառասունհինգ) Օրվա ընթացքում:
(e) To the extent that a claim for Costs or Savings resulting from the occurrence of an Adverse Condition Event under Articles 14.1(b)(i) or 14.1(b)(ii) or a Change in Law, as the case may be is not disputed or has been allowed by the Independent Expert, the Developer shall include such amount so as to:	(e) Այնքանով, որքանով, համապատասխանաբար, 14. 1(b)(i) Հոդվածով կամ 14. 1(b)(ii) Հոդվածով նախատեսված Անբարենպաստ Պայմանի Դեպքի կամ Օրենքի Փոփոխության հետևանքով առաջացած Ծախսերի կամ Տնտեսումների պահանջը չի վիճարկվում կամ թույլատրվել է Անկախ Փորձագետի կողմից, Կառուցապատողը ներառում է այդ գումարը, որպեսզի՝
(i) ensure that the Developer is in the same net (after-tax) economic position; and	(i) ապահովվի, որ Կառուցապատողը նույն զուտ (հարկումից հետո) տնտեսական վիճակում է. և
(ii) be retroactive to the date upon which such Costs were incurred or such Savings were realized,	(ii) հետադարձ կիրառելի լինի այն ամսաթվի նկատմամբ, երբ տեղի են ունեցել նշված Ծախսերը կամ կատարվել են Տնտեսումները,
within the monthly statement it submits to the Government in accordance with Article 9 and such amount shall be invoiced accordingly.	ամսական ամփոփագրի շրջանակներում, որը նա ներկայացնում է Կառավարությանը, համաձայն 9-րդ Հոդվածի, և նշված գումարի համար համապատասխանաբար պետք է ներկայացվի հաշիվ:
15.3 Aggregation of Claims	15.3. Պահանջների Միավորում
For purposes of this Article neither Party shall be entitled to assert any claim for Costs or Savings until such time as all claims of such Party under Article 15.2 exceed the 20,000,000 (twenty million) AMD less any amount already claimed pursuant to License in the aggregate, at which time all such claims of such Party may be asserted;	Սույն Հոդվածի իմաստով, Կողմերից ոչ մեկն իրավունք չունի պնդելու Ծախսերի կամ Տնտեսումների որևէ պահանջ, այնքան ժամանակ մինչև 15.2 Հոդվածի ներքո այդ Կողմի բոլոր նման պահանջներն ընդհանուր առմամբ չգերազանցեն 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամը հանած Լիցենզիայի համաձայն արդեն իսկ

provided, however, that when such claims have been asserted, the same rule shall apply in respect of future claims.	պահանջված գումարները, որից հետո այդ Կողմի բոլոր նման պահանջները կարող են պնդել՝ պայմանով, որ, երբ կատարվում է նշված պահանջների պնդում, միևնույն կանոնը կիրառվում է նաև ապագա պահանջների նկատմամբ:
---	---

ARTICLE 16	ՀՈԴՎԱԾ 16
16. EVENTS OF DEFAULT	16. ԿԵՏԱՆՑԻ ԴԵՊԲԵՐ
16.1 Developer Events of Default	16.1. Կառուցապատողի Կետանցի Դեպքեր
Each of the following events shall be a "Developer Event of Default":	Հետևյալ դեպքերից յուրաքանչյուրը հանդիսանում է «Կառուցապատողի Կետանցի Դեպք».
(a) the Developer fails to make any undisputed payment owed by it to the Government under the Agreement within 60 (sixty) Days after it has become due and payable;	(a) Կառուցապատողը չի կատարում սույն Պայմանագրով իր կողմից Կառավարությանը վճարման ենթակա որևէ անվիճելի վճարում՝ դրա կատարման ենթակա դառնալու օրվանից հաշված 60 (վաթսուն) Օրվա ընթացքում,
(b) the occurrence of an Insolvency Event relating to the Developer other than an Insolvency Event caused by any breach of a Government obligation to pay hereunder;	(b) տեղի է ունեցել Կառուցապատողին վերաբերվող Անվճարունակության Դեպք՝ բացառությամբ այնպիսի Անվճարունակության Դեպքի, որը ծագել է սույն Պայմանագրով՝ Կառավարության վճարման պարտավորության որևէ խախտման հետևանքով,
(c) termination of any of the Project Documents as a result of the default of the Developer under those agreements;	(c) Ծրագրի Փաստաթղթերից որևէ մեկը դադարեցվել է՝ այդ պայմանագրի ներքո Կառուցապատողի կողմից թույլ տրված խախտման արդյունքում,
(d) Abandonment of the Project;	(d) տեղի է ունեցել Ծրագրի Լքում,
(e) any representation made or warranty given by the Developer under the Agreement is found to be false or misleading in any material respect, unless that breach has been cured within 60 (sixty) days from the day a notice of such breach has been received;	(e) պարզվել է, որ Կառուցապատողի կողմից արված որևէ հայտարարություն կամ տրամադրված որևէ երաշխիք եղել է կեղծ կամ ապակողմնորոշիչ ցանկացած էական ասպեկտում, եթե այդ խախտումը չի վերացվել այդ խախտման մասին ծանուցումը ստանալուց հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում,
(f) failure by the Developer or the Sponsor to comply with the terms of Articles 2.5 or 3.2(c);	(f) Կառուցապատողը կամ Հովանավորը չի կատարել 2.5 կամ 3.2(c) Հոդվածների պահանջները, կամ
(g) unless as a result of a Force Majeure Event or Adverse Condition Event or a breach of the Agreement by the Government or of the PPA by the Offtaker, the Developer fails to achieve the Commercial Operation Date by the COD Longstop Date unless and to the extent	(g) բացառությամբ Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի, կամ Կառավարության կողմից սույն Պայմանագրի կամ Գնորդի կողմից ԷԳՊ-ի խախտման արդյունքում առաջացած դեպքերի՝ Կառուցապատողը մինչև ԿՇԱ

<p>that the Developer elects to pay the lump sum penalty pursuant to Article 6.2(d) to extend the COD Longstop Date;</p>	<p>Ծայրահեղ Ամսաթիվը չի ապահովում Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը, բացառությամբ եթե և այնքանով, որքանով Կառուցապատողը որոշում է 6.2(d) Հոդվածի համաձայն վճարել միանվագ տուգանք՝ ԿՇԱ Ծայրահեղ Ամսաթիվը երկարաձգելու համար,</p>
<p>(h) any other material breach of any material term of the Agreement by the Developer, unless that breach has been cured within 180 (one hundred and eighty) days from the day a notice of such breach has been received;</p>	<p>(h) Կառուցապատողի կողմից Պայմանագրի ցանկացած էական պայմանի ցանկացած այլ էական խախտում, եթե այդ խախտումը չի վերացվել այդ խախտման մասին ծանուցումը ստանալուց հետո 180 (մեկ հարյուր ութսուն) օրվա ընթացքում,</p>
<p>(i) failure of the Developer to obtain a valid Performance Bank Guarantee under Article 11.2; and</p>	<p>(i) Կառուցապատողը չի ստացել վավեր Կատարման Բանկային Երաշխիք՝ 11.2 Հոդվածին համապատասխան, և</p>
<p>(j) unless as a result of a Force Majeure Event or Adverse Condition Event, or a breach of the Agreement by the Government or of the PPA by the Offtaker, failure to achieve at least 16.32% (sixteen point thirty twopercent) CUF of the Project calculated on an annual basis during the Term of the Agreement, for 3 (three) consecutive years or 5 (five) non-consecutive years during the Term, except for the first year.</p>	<p>(j) բացառությամբ Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի կամ Կառավարության կողմից սույն Պայմանագրի կամ Գնորդի կողմից ԷԳՊ-ի խախտման արդյունքում առաջացած դեպքերի՝ Ծրագրի առնվազն 16.32% (տասնվեց ամբողջ երեսուներկու հարյուրերորդական տոկոս) ՀՕԳ չապահովելը, որը հաշվարկվում է տարեկան կտրվածքով Պայմանագրի Ժամկետի ընթացքում, 3 (երեք) հաջորդական տարիների ընթացքում կամ Ժամկետի ընթացքում 5 (հինգ) ոչ հաջորդական տարիների ընթացքում, բացառությամբ առաջին տարվանից:</p>
<p>16.2 Government Events of Default</p>	<p>16.2. Կառավարության Կետանցի Դեպք</p>
<p>Each of the following events shall be a "Government Event of Default":</p>	<p>Հետևյալ դեպքերից յուրաքանչյուրը հանդիսանում է «Կառավարության Կետանցի Դեպք».</p>
<p>(a) the Government or any Government Authority fails to make any undisputed payment owed by it to the Developer under the Agreement (including, without limitation, payment of any Assigned Amount) within 90 (ninety) Days after it has become due and payable;</p>	<p>(a) Կառավարությունը կամ որևէ Պետական Մարմին չի կատարում սույն Պայմանագրով իր կողմից Կառուցապատողին վճարման ենթակա որևէ անվիճելի վճարում (այդ թվում, առանց սահմանափակման՝ ցանկացած Չիջված Գումարի վճարում)՝ դրա կատարման ենթակա դառնալու օրվանից հաշված 90 (իննսուն) Օրվա ընթացքում,</p>
<p>(b) expropriation or compulsory acquisition by any Government Authority of the Project Site, the Plant or any portion thereof that materially and adversely affects the operation of the Plant or any material asset of the Developer or any shares or other interest of a shareholder held in the Developer or the failure of any Government Authority to take appropriate measures</p>	<p>(b) որևէ Պետական Մարմնի կողմից էքսպրոպրիացիայի կամ հարկադիր ձեռքբերման է ենթարկվել Ծրագրի Տարածքը, Կայանը կամ դրա որևէ մաս, ինչը էական և բացասական ազդեցություն է ունենում Կայանի շահագործման վրա, կամ Կառուցապատողի որևէ էական ակտիվ կամ Կառուցապատողի բաժնետիրոջը պատկանող՝</p>

<p>available to it under Applicable Laws to prevent or remedy any of the foregoing actions except where such compulsory seizure of assets is made for the purposes of collecting amounts owed by the Developer to the Government or Government Authority following due process;</p>	<p>Կառուցապատողի նկատմամբ որևէ բաժնետոմս կամ այլ մասնակցություն, կամ որևէ Պետական Մարմին չի ձեռնարկել Կիրառելի Օրենքներով նախատեսված համապատասխան միջոցներ վերոնշյալ ցանկացած գործողություն կանխելու կամ դրա հետևանքները վերացնելու նպատակով՝ բացառությամբ, եթե ակտիվների նման հարկադիր բռնագրավումը պատշաճ կերպով կատարվում է Կառուցապատողի կողմից Կառավարության կամ որևէ Պետական Մարմնի նկատմամբ պարտքերի հավաքագրման նպատակով.</p>
<p>(c) the occurrence of an Insolvency Event relating to the Government;</p>	<p>(c) տեղի է ունեցել Կառավարությանը վերաբերվող Անվճարունակության Դեպք.</p>
<p>(d) a Change in Law or Adverse Condition Event that is not revoked or amended within 180 (one hundred and eighty) Days that materially delays, hinders or renders impossible the building or operating of the Plant by the Developer, or is not otherwise capable of cure pursuant to Article 15;</p>	<p>(d) Օրենքի Փոփոխություն կամ Անբարենպաստ Պայմանի Դեպք, որը վերացված կամ փոփոխված չէ 180 (մեկ հարյուր ութսուն) Օրվա ընթացքում, որն էականորեն ձգձգում է Կայանի կառուցումը կամ շահագործումը Կառուցապատողի կողմից, խոչընդոտում է դրան կամ անհնար է դարձնում դա, կամ այլապես հնարավոր չէ վերացնել 15-րդ Հոդվածին համապատասխան.</p>
<p>(e) any other material breach of this Agreement, any direct agreement or Project Document or failure to act in accordance with Applicable Law, by the Government, any Government Authority or any Power Sector Entity as the case may be, unless that breach has been cured within 180 (one hundred and eighty) Days from the day a notice of such breach has been received;</p>	<p>(e) համապատասխանաբար, Կառավարության, որևէ Պետական Մարմնի կամ որևէ Էներգետիկայի Ոլորտի Մասնակցի կողմից սույն Պայմանագրի, որևէ Ուղղակի Պայմանագրի կամ Ծրագրի Փաստաթղթի որևէ այլ էական խախտում կամ Կիրառելի Օրենքին համապատասխան չգործելը, եթե այդ խախտումը չի վերացվել այդպիսի խախտման վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո 180 (մեկ հարյուր ութսուն) Օրվա ընթացքում.</p>
<p>(f) any action or inaction by any Government Authority or Change in Law which results in the Developer (or any of the Financing Parties) ceasing to have the rights referred to in Article 11.1 or under the Direct Agreement;</p>	<p>(f) որևէ Պետական Մարմնի կողմից որևէ գործողություն կամ անգործություն կամ Օրենքի Փոփոխություն, որի հետևանքով Կառուցապատողը (կամ Ֆինանսավորման Կողմերից որևէ մեկը) դադարում է ունենալ 11. 1 Հոդվածով կամ Ուղղակի Պայմանագրով նախատեսված իրավունքները.</p>
<p>(g) any event which results in the mechanism maintained for the benefit of the Developer under the "Special Account" (as defined in the Power Purchase Agreement) being terminated without having been replaced by a similar or equivalent mechanism; and</p>	<p>(g) ցանկացած իրադարձություն, որի հետևանքով դադարում է «Հատուկ Հաշվի» միջոցով (ինչպես սահմանված է Էլեկտրական Էներգիայի Գնման Պայմանագրում) ի օգուտ Կառուցապատողի սահմանված մեխանիզմը՝ առանց փոխարինման նմանատիպ կան համարժեք մեխանիզմով. և</p>
<p>(h) any termination, cancellation or suspension of a Project Document (other than as a result of (i) material</p>	<p>(h) Ծրագրի Փաստաթղթի դադարեցում, չեղարկում կամ կասեցում (եթե դա հետևանք չէ (i)</p>

breach of the Developer which has not been cured within 180 (one hundred and eighty) Days from the day a notice of such breach has been received or (ii) a Prolonged Force Majeure Event).	Կառուցապատողի էական խախտման, որը չի վերացվել այդպիսի խախտման վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո 180 (մեկ հարյուր ութսուն) Օրվա ընթացքում, կամ (ii) Տևական Անհաղթահարելի Ուժի Դեպքի):
--	---

ARTICLE 17	ՀՈԴՎԱԾ 17
17. TERMINATION	17. ԴԱԴԱՐՈՒՄ
17.1 Termination for Non-Fulfilment of Conditions Precedent to the Effective Date	17.1. Դադարեցում Գործողության Ամսաթվի Հետաձգող Պայմանների Չկատարման Պատճառով
Either Party may terminate this Agreement by giving written notice to the other Party if any condition precedent to the Effective Date has not been satisfied, unless waived by the relevant Party, by the Conditions Precedent Deadline.	Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել սույն Պայմանագիրը, մյուս Կողմին ուղարկելով գրավոր ծանուցում, եթե Գործողության Ամսաթվի որևէ հետաձգող պայման չի կատարվել, բացառությամբ՝ եթե դրանք չեն հանվել համապատասխան Կողմի կողմից, մինչև Հետաձգող Պայմանների Վերջնաժամկետը:
(i) Upon the delivery of such notice of termination, this Agreement shall terminate on the date specified in such notice.	(i) Լուծման մասին ծանուցումն ուղարկելուց հետո սույն Պայմանագիրը դադարում է այդ ծանուցման մեջ նշված ամսաթվին:
(ii) If the Agreement is terminated on account of Developer’s failure to satisfy the Conditions Precedent, within the prescribed time period, unless waived by Government in accordance with terms of Agreement, without prejudice to any other right or remedy which Government may have in respect thereof under this Agreement or Applicable Laws, Government shall be entitled to terminate this Agreement and encash the Performance Bank Guarantee.	(ii) Եթե Պայմանագիրը դադարեցվել է Կառուցապատողի կողմից Հետաձգող Պայմանների՝ սահմանված ժամկետում չապահովման պատճառով, եթե դրանք չեն հանվել Կառավարության կողմից Պայմանագրին համապատասխան, անկախ Կառավարությանը հասանելի այլ միջոցների առկայությունից, որոնք կարող են հասանելի լինել Պայմանագրի կամ Կիրառելի Օրենքներին համապատասխան, Կառավարությունը իրավունք կունենա դադարեցնելու Պայմանագիրն ու կանխիկացնելու Կատարման Բանկային Երաշխիքը:
(iii) If Government fail to satisfy any of the Conditions Precedent, the Developer shall be entitled to terminate this Agreement. If the Agreement is terminated in accordance with this clause then Government shall return the Performance Bank Guarantee and compensate the Developer with an amount of AMD 120,000,000. The Parties agree that this shall be the sole remedy available to the Developer on account of termination of the Agreement for non-fulfilment of Conditions Precedent and shall fully compensate the Developer for any and all damages, losses or claims (whether direct or indirect) that	(iii) Եթե Կառավարությունը չի ապահովում Հետաձգող Պայմաններից որևէ մեկը Կառուցապատողն իրավունք կունենա դադարեցնելու Պայմանագիրը: Եթե Պայմանագիրը դադարեցված է սույն դրույթի համաձայն Կառավարությունը կվերադարձնի Կատարման Բանկային Երաշխիքը և կփոխհատուցի Կառուցապատողին 120,000,000 ՀՀ դրամի չափով: Կողմերը համաձայնում են, որ սա կլինի միակ միջոցը, որ հասանելի կլինի Կառուցապատողին Հետաձգող Պայմանների չկատարման հիմքով Պայմանագրի դադարեցման դեպքում և լիովին

<p>it may have suffered on account of such termination of this Agreement.</p>	<p>կփոխհատուցի Կառուցապատողին ցանկացած և բոլոր վնասների, կորուստների կամ պահանջների համար (լինեն դրանք ուղղակի կամ անուղղակի), որոնք նա կարող է կրել Պայմանագրի նման դադարեցման դեպքում:</p>
<p>(iv) Each Party hereby acknowledges and agrees that under such circumstances, Developer shall have no claim against the Government for any other costs, damages, compensation or otherwise.</p>	<p>(iv) Յուրաքանչյուր Կողմը սույնով հաստատում և ընդունում է, որ նման հանգամանքներում Կառուցապատողը չի ունենալու ոչ մի պահանջ Կառավարության հանդեպ՝ ցանկացած այլ ծախսերի, վնասների, փոխհատուցման կամ այլ հարցերով:</p>
<p>17.2 Termination by the Developer and Consequences of Termination</p>	<p>17.2. Դադարեցում Կառուցապատողի կողմից և Դադարման հետևանքները</p>
<p>The Developer may terminate this Agreement in accordance with Article 17.4 in the following circumstances:</p>	<p>Կառուցապատողը, համաձայն 17.4 Հոդվածի, կարող է լուծել սույն Պայմանագիրը հետևյալ հանգամանքներում՝</p>
<p>(a) if the Developer fails to achieve Financial Close by the Financial Close Longstop Date and/or fails to enter into the PPA, solely due to either (i) a breach by the Government of the terms of this Agreement or (ii) as a direct result of an Adverse Condition Event. Each Party hereby acknowledges and agrees that following such termination, the Government shall not pay any Purchase Price to the Developer. If the Agreement is terminated in accordance with this clause then Government shall return the Performance Bank Guarantee and compensate the Developer with an amount of AMD 120,000,000 (one hundred twenty million) and each Party hereby acknowledges and agrees that under such circumstances, the Government shall have no claim against the Developer for any other costs, damages, compensation or otherwise; and</p>	<p>(a) Եթե Կառուցապատողը չի կատարում Ֆինանսավորման Ամփոփման պահանջը մինչև Ֆինանսավորման Ամփոփման Ծայրահեղ Ամսաթիվը և/կամ չի կնքում ԷԳՊ՝ բացառապես (i) Կառավարության կողմից սույն Պայմանագրի պայմանների խախտման հետևանքով, կամ (ii) որպես Անբարենպաստ Պայմանի Դեպքի ուղղակի հետևանք: Յուրաքանչյուր Կողմը սույնով ընդունում և համաձայնում է, որ այդ դադարեցումից հետո որևէ Գնման Գին Կառուցապատողին վճարման ենթակա չէ: Եթե Պայմանագիրը դադարեցվում է սույն կետին համապատասխան, ապա Կառավարությունը վերադարձնում է Կատարման Բանկային Երաշխիքը և Կառուցապատողին փոխհատուցում է 120,000,000 (հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով, և յուրաքանչյուր Կողմ սույնով ընդունում և համաձայնում է, որ այդ դեպքում Կառավարությունը Կառուցապատողի նկատմամբ չի ունենալու որևէ պահանջ՝ որևէ այլ ծախսերի, վնասների, փոխհատուցման համար կամ այլ հարցերով. և</p>
<p>(b) if, following Financial Close and subject to the Direct Agreement, a Government Event of Default has occurred and is continuing for more than sixty (60) Days after the Government being notified thereof in writing by the Developer. Each Party hereby acknowledges and agrees that following such termination, the Government will be obliged to purchase the Plant at the Government Event of Default Purchase Price and, after such payment</p>	<p>(b) Եթե Ֆինանսավորման Ամփոփումից հետո և Ուղղակի Պայմանագրի պահպանմամբ, տեղի է ունեցել Կառավարության Կետանցի Դեպք, որը շարունակվում է Կառուցապատողի կողմից Կառավարությանը այդ մասին գրավոր ծանուցելուց հետո ավելի քան 60 (վաթսուն) Օր: Յուրաքանչյուր Կողմ սույնով ընդունում և համաձայնում է, որ այդ լուծումից հետո Կառավարությունը պարտավոր կլինի</p>

<p>by the Government, the Developer shall be obliged, to the extent permitted by Applicable Law, to transfer the ownership and possession of the Project Site to the Owner or the Government, as decided by the Government, at no additional cost; and</p>	<p>զնել Կայանը Կառավարության Կետանցի Դեպքի Գնման Գնով, և Կառավարության կողմից այդպիսի վճարում կատարվելուց հետո, Կառուցապատողը պարտավորված է լինելու, Կիրառելի Օրենքով նախատեսված կարգով, Ծրագրի Տարածքի սեփականության իրավունքը և դրա տիրապետումը փոխանցել Սեփականատիրոջը կամ Կառավարությանը, ինչպես որ կորոշվի Կառավարության կողմից՝ առանց լրացուցիչ վճարի. և</p>
<p>(c) in the event of Government Event of Default and termination of this Agreement, Government shall return the Performance Bank Guarantee to the Developer.</p>	<p>(c) Կառավարության Կետանցի ու Պայմանագրի դադարեցման դեպքում Կառավարությունն Կատարման Բանկային Երաշխիքը կվերադարձնի Կառուցապատողին:</p>
<p>17.3 Termination by the Government and Consequences of Termination</p>	<p>17.3. Կառավարության կողմից Դադարեցում և Դադարման հետևանքները</p>
<p>The Government may terminate this Agreement in accordance with Article 17.4 in the following circumstances:</p>	<p>Կառավարությունը 17.4 Հոդվածին համապատասխան կարող է լուծել սույն Պայմանագիրը հետևյալ հանգամանքներում.</p>
<p>(a) if the Developer fails to achieve Financial Close by the Financial Close Longstop Date and/or fails to enter into PPA, unless where such failure is due to a Force Majeure Event, or Adverse Condition Event, or a breach by the Government of the terms of this Agreement. Each Party hereby acknowledges and agrees that following such termination, no Purchase Price shall be paid by Government to the Developer. If the Agreement is terminated in accordance with this clause, then Government shall have the right to invoke and encash the Performance Bank Guarantee. Each Party hereby acknowledges and agrees that under such circumstances, Developer shall have no claim against the Government for any other costs, damages, compensation or otherwise;</p>	<p>(a) եթե Կառուցապատողը չի կատարում Ֆինանսավորման Ամփոփման պահանջը մինչև Ֆինանսավորման Ամփոփման Ծայրահեղ Ամսաթիվը և/կամ չի կնքում ԷԳՊ-ն, բացառությամբ այն դեպքերի, երբ նման չկատարումը հանդիսանում է Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի կամ Կառավարության կողմից սույն Պայմանագրի պայմանների խախտման հետևանք: Յուրաքանչյուր Կողմ սույնով ընդունում և համաձայնում է, որ այդ դադարեցումից հետո Կառավարության կողմից Կառուցապատողին որևէ Գնման Գին ենթակա չէ վճարման: Եթե Պայմանագիրը դադարեցվում է սույն կետի համաձայն. Կառավարությունն իրավունք կունենա վկայակոչելու և կանխիկացնելու Կատարման Բանկային Երաշխիքը: Յուրաքանչյուր Կողմը սույնով ընդունում և համաձայնում է, որ նման հանգամանքներում Կառուցապատողը Կառավարության նկատմամբ չի ունենալու ոչ մի պահանջ՝ ցանկացած այլ ծախսերի, վնասների, փոխհատուցման կամ այլ հարցերով.</p>
<p>(b) if, following Financial Close, a Developer Event of Default has occurred and is continuing for more than thirty (30) Days after the Developer being notified thereof in writing by the Government. Each Party hereby acknowledges and agrees that following such termination</p>	<p>(b) եթե Ֆինանսական Ամփոփումից հետո տեղի է ունեցել Կառուցապատողի Կետանցի Դեպք, որը շարունակվում է ավելի քան 30 (երեսուն) Օր այդ մասին Կառավարության կողմից Կառուցապատողին գրավոր ծանուցվելուց հետո: Յուրաքանչյուր Կողմ</p>

<p>the Government shall have the right, but not the obligation, to purchase the Plant at the Developer Event of Default Purchase Price. After such payment by the Government, the Developer shall be obliged, to the extent permitted by Applicable Law, to transfer the ownership and possession of the Project Site to the Owner or the Government, as decided by the Government, at no additional cost;</p>	<p>սույնով ընդունում և համաձայնում է, որ այդ դադարեցումից հետո Կառավարությունը իրավունք, այլ ոչ թե պարտականություն կունենա գնելու Կայանը Կառուցապատողի Կետանցի Դեպքի Գնման Գնով: Կառավարության կողմից այդպիսի վճարում կատարվելուց հետո, Կառուցապատողը պարտավորված է լինելու, Կիրառելի Օրենքով նախատեսված կարգով, Ծրագրի Տարածքի սեփականության իրավունքը և դրա տիրապետումը փոխանցել Սեփականատիրոջը կամ Կառավարությանը, ինչպես որ կորոշվի Կառավարության կողմից՝ առանց լրացուցիչ վճարի.</p>
<p>(c) in case of termination of this Agreement due to Developer Event of Default, the Government shall have the right to invoke and encash the Performance Bank Guarantee.</p>	<p>(c) Կառուցապատողի Կետանցի Դեպքում Պայմանագրի դադարեցման պարագայում, Կառավարությունն իրավունք կունենա վկայակոչելու և կանխիկացնելու Կատարման Բանկային Երաշխիքը:</p>
<p>17.4 Termination Procedure</p>	<p>17.4. Դադարեցման Ընթացակարգը</p>
<p>(a) Unless otherwise specified in this Agreement, the Party entitled to terminate the Agreement shall do so by immediately issuing a notice in writing (a "Termination Notice") to the other Party and shall simultaneously deliver a copy of the Termination Notice to the Financing Parties.</p>	<p>(a) Եթե սույն Պայմանագրում այլ կերպ սահմանված չէ, սույն Պայմանագիրը լուծելու իրավունք ունեցող Կողմը, կատարում է դա անմիջապես մյուս Կողմին գրավոր ծանուցում տալու միջոցով («Դադարեցման Ծանուցում») և միաժամանակ պետք է ուղարկի Դադարեցման Ծանուցման պատճենը Ֆինանսավորման Կողմերին:</p>
<p>(b) The Termination Notice shall specify a date which shall not be less than 90 (ninety) Days from the date of the Termination Notice on which the Agreement will terminate (the "Termination Period"). At the expiry of the Termination Period, and after payment of the relevant Purchase Price, to the Developer by the Government, if applicable and to the extent that it is entitled to do so and permitted by Applicable Law, the Developer shall transfer the Project Site and Plant to the Government. Notwithstanding the foregoing, the Government shall be required to make payment of the relevant Purchase Price in circumstances where the Developer is unable, hindered or delayed in transferring ownership to the Project Site or the Plant as required, where such inability, delay or hindrance is due to a Change in Law, Applicable Law or due to any act or omission of the Government or any Government Authority.</p>	<p>(b) Դադարեցման Ծանուցման մեջ պետք է նշված լինի Պայմանագրի դադարեցման ամսաթիվը, որը պետք է լինի Դադարեցման Ծանուցման ամսաթվից ոչ պակաս քան 90 (իննսուն) Օր անց («Լուծման Ժամանակահատված»): Լուծման ժամանակահատվածը լրանալուց և Կառավարության կողմից Կառուցապատողին համապատասխան Գնման Գինը վճարվելուց հետո՝ ըստ կիրառելիության, և այնքանով, որքանով նա Կիրառելի Օրենքով իրավունք ունի և կարող է դա անել, Կառուցապատողը փոխանցում է Ծրագրի Տարածքը և Կայանը Կառավարությանը: Անկախ վերոգրյալից, Կառավարությունը պետք է վճարի համապատասխան Գնման Գինն այն դեպքերում, երբ Կառուցապատողը չի կարողանում փոխանցել Ծրագրի Տարածքի կամ Կայանի նկատմամբ սեփականության իրավունքը, կամ այդ փոխանցումը խոչընդոտվում կամ ձգձգվում է, երբ այդպիսի անկարողությունը, խոչընդոտը կամ ձգձգումը Օրենքի Փոփոխության, Կիրառելի Օրենքի կամ</p>

	Կառավարության կամ Պետական Մարմնի որևէ գործողության կամ անգործության հետևանք է:
(c) During a Termination Period following a Developer Event of Default, the Parties shall continue to perform such of their respective obligations under the Agreement which are capable of being performed with the object, as far as possible, of ensuring continued availability of the Plant.	(c) Կառուցապատողի Կետանցի Դեպքի հետևանքով Լուծման Ժամանակահատվածի ընթացքում Կողմերը շարունակում են կատարել իրենց այնպիսի համապատասխան պարտավորությունները սույն Պայմանագրով, որոնք կարող են կատարվել, հնարավորությունների սահմաններում, Կայանի չընդհատվող հասանելիությունն ապահովելու նպատակով:
(d) The Government shall pay the Developer the relevant Purchase Price in accordance with Appendix 3.	(d) Կառավարությունը համապատասխան Գնման Գինը վճարում է Կառուցապատողին՝ համաձայն 3-րդ Հավելվածի:
17.5 Termination upon Expiry of the Term	17.5. Դադարեցում ժամկետի լրանալուն պես
Unless terminated earlier, or extended, in both cases in accordance with the provisions of this Agreement this Agreement shall terminate on the last Day of the Term.	Ավելի շուտ դադարած կամ երկարաձգված չլինելու դեպքում՝ երկու դեպքերում էլ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան, Պայմանագիրը դադարում է ժամկետի վերջին Օրը:
17.6 Termination due to Prolonged Force Majeure or Prolonged Adverse Condition Event	17.6. Դադարեցում Տևական Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Տևական Անբարենպաստ Պայմանի Դեպքի պատճառով
In case a Force Majeure Event or an Adverse Condition Event occurs and continues for more than one year (a "Prolonged Force Majeure Event" or "Prolonged Adverse Condition Event", as the case may be) or any Project Document is terminated, cancelled or suspended by reason of a Prolonged Force Majeure Event or Prolonged Adverse Condition Event then each of the Government and the Developer individually shall have the right to terminate this Agreement in accordance with Article 17.4, in which case the Government shall be obliged to purchase the Plant at the Force Majeure Event Purchase Price or Adverse Condition Event Purchase Price (as applicable) (unless such Prolonged Adverse Condition Event is also a Government Event of Default, in which case Article 17.2 shall apply). In such event, after such payment by the Government, the Developer shall be obliged, to the extent permitted by Applicable Law, to transfer the ownership and possession of the Project Site to the Owner or the Government, as decided by the Government, at no further cost.	Եթե Անհաղթահարելի Ուժի Դեպքը կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքը տեղի ունենա և շարունակվի մեկ տարուց ավելի (համապատասխանաբար, «Տևական Անհաղթահարելի Ուժի Դեպք» կամ «Տևական Անբարենպաստ Պայմանի Դեպք») կամ որևէ Ծրագրի Փաստաթուղթ դադարի, չեղարկվի կամ կասեցվի Տևական Անհաղթահարելի Ուժի Դեպքի կամ Տևական Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետևանքով, ապա՝ Կառավարությունը, և՛ Կառուցապատողը՝ անհատապես, իրավունք կունենան դադարեցնելու Պայմանագիրը, համաձայն 17. 4 Հոդվածի, ինչի պարագայում Կառավարությունը պարտավոր կլինի գնել Կայանը Անհաղթահարելի Ուժի Դեպքի Գնման Գնով կամ Անբարենպաստ Պայմանի Դեպքի Գնման Գնով (ըստ կիրառելիության) (բացառությամբ այն դեպքերի, երբ Տևական Անբարենպաստ Պայմանի Դեպքը նաև Կառավարության Կետանցի Դեպք է, որի դեպքում կիրառվում է 17. 2 Հոդվածը): Նման դեպքում, Կառավարության կողմից այդպիսի վճարում կատարվելուց հետո, Կառուցապատողը պարտավորված է լինելու, Կիրառելի Օրենքով

	<p>նախատեսված կարգով, Ծրագրի Տարածքի սեփականության իրավունքը և դրա տիրապետումը փոխանցել Սեփականատիրոջը կամ Կառավարությանը, ինչպես որ կորոշվի Կառավարության կողմից՝ առանց հավելյալ վճարի:</p>
--	--

ARTICLE 18	ՀՈՂՎԱԾ 18
18. DISPUTE RESOLUTION	18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ
18.1 Amicable Settlement	18.1. Կարգավորում բանակցությունների միջոցով
<p>If any dispute or difference or claims of any kind arises between the Government and the Developer in connection with the construction, interpretation or application of any terms and conditions or any matter or thing in any way connected with or in connection with or arising out of the Agreement, or the rights, duties or liabilities of any Party under the Agreement, whether before or after the termination of the Agreement, then the Parties shall meet together promptly, at the request of any Party, in an effort to resolve such dispute, difference or claim by discussion between them.</p>	<p>Եթե Կառավարության և Կառուցապատողի միջև ծագում է որևէ վեճ կամ տարաձայնություն կամ պահանջ, որը վերաբերում է սույն Պայմանագրի պայմանների, կամ դրանից բխող կամ դրա հետ որևէ կերպ կապված որևէ հարցի կամ խնդրի էությանը, մեկնաբանությանը կամ կիրառմանը, կամ որևէ Կողմի սույն Պայմանագրից բխող որևէ իրավունքներին, պարտավորություններին կամ պարտականություններին, լինի դա Պայմանագրի լուծումից առաջ կամ հետո, ապա Կողմերն անհապաղ հանդիպում են Կողմերից ցանկացածի պահանջով՝ փորձելով կարգավորել այդ վեճը, տարաձայնությունը կամ պահանջը նրանց միջև անցկացվող քննարկումների միջոցով:</p>
18.2 Assistance of the Independent Expert	18.2. Անկախ Փորձագետի Աջակցությունը
<p>To the extent the Parties have not been able to resolve a dispute that is to be referred to an Independent Expert under this Agreement in accordance with Article 18.1 within thirty (30) days after either Party requests in writing negotiation under that clause, or within such period that the Parties may agree in writing or if a dispute is referred directly to an Independent Expert in accordance with this Article 18.2, such dispute shall be referred to an expert for a recommendation in accordance with the following provisions:</p>	<p>Այնքանով, որքանով Կողմերը ի վիճակի չեն եղել 18.1 Հոդվածի համաձայն լուծելու վեճը, որը, սույն Պայմանագրի համաձայն, կարող է փոխանցվել Անկախ Փորձագետի՝ այդ Հոդվածին համապատասխան բանակցությունների միջոցով վեճը կարգավորելու մասին որևէ Կողմի գրավոր պահանջից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում կամ Կողմերի գրավոր համաձայնությամբ մեկ այլ ժամկետում, կամ այն դեպքում, երբ վեճը, սույն 18.2 Հոդվածի համաձայն, անմիջապես փոխանցվում է Անկախ Փորձագետի, այդ վեճը ներկայացվում է փորձագետի՝ խորհրդատվության համար հետևյալ դրույթների համաձայն.</p>
(a) the expert shall have demonstrated expertise in the area in which such dispute relates to and shall not be	(a) փորձագետը պետք է վեճին վերաբերող բնագավառում ցուցադրած լինի հատուկ գիտելիքներ և փորձ և չպետք է հանդիսանա Կողմերից որևէ մեկի

<p>an agent, employee, or contractor or a former agent, employee, or contractor of either Party.</p>	<p>ներկայիս կամ նախկին գործակալը, աշխատողը կամ կապալառուն,</p>
<p>(b) the Party initiating submission of the dispute to the expert shall provide the other Party with a notice stating that it is submitting the dispute to an expert and nominating the person it proposes to be the expert. The other Party shall, within thirty (30) Days of receiving such notice, notify the initiating Party whether such person is acceptable. If the Party receiving such notice fails to respond or notifies the initiating Party that the person is not acceptable, the Parties shall meet and discuss in good faith for a period of thirty (30) Days to agree upon a person to be the expert. If the Parties fail to meet or are unable to agree at the end of such thirty (30) Day period, either Party may request that the ICC International Centre for ADR nominates the expert, and such person so nominated shall be the expert for the purpose of resolving the dispute and the expert proceedings shall be carried out in accordance with Rules for the Administration of Expert Proceedings of the ICC.</p>	<p>(b) փորձագետին վեճի ներկայացումը նախաձեռնած Կողմը մյուս Կողմին ուղարկում է ծանուցում, որտեղ նշում է, որ ներկայացնում է վեճը փորձագետին և առաջադրում է այն անձին, ում ինքն առաջարկում է լինել փորձագետը: Մյուս Կողմը, նշված ծանուցումը ստանալուց հետո 30 (երեսուն) Օրվա ընթացքում տեղեկացնում է նախաձեռնող Կողմին՝ արդյոք սովալ անձն ընդունելի է: Եթե այդ ծանուցումը ստացող Կողմը չի պատասխանում կամ ծանուցում է նախաձեռնող Կողմին, որ առաջադրված անձն ընդունելի չէ, ապա Կողմերը հանդիպում և բարեխղճորեն քննարկում են անցկացնում 30 (երեսուն) Օրվա ընթացքում՝ փորձագետի անձի շուրջ համաձայնության գալու համար: Եթե Կողմերը չեն հանդիպում կամ չեն կարողանում համաձայնության գալ այդ 30 (երեսուն) օրյա ժամանակահատվածում, ապա Կողմերից ցանկացածը կարող է պահանջել, որ ՄԱՊ-ի ԱՎԿ Միջազգային Կենտրոնը առաջադրի փորձագետին, և նման կերպ առաջադրված անձը պետք է լինի վեճի լուծման նպատակով նշանակված փորձագետը, և փորձաքննական վարույթներն անց են կացվում ՄԱՊ-ի Փորձաքննական Վարույթների Կառավարման Կանոնների համաձայն:</p>
<p>(c) Consideration of the dispute by an Independent Expert shall be initiated by the Party seeking consideration of the dispute by the Independent Expert submitting within fifteen (15) Days of notification of the dispute to both the Independent Expert and the other Party written materials setting forth:</p>	<p>(c) Անկախ Փորձագետի կողմից վեճի քննարկումը պետք է նախաձեռնվի Անկախ Փորձագետի կողմից վեճի լուծումը հայցող Կողմի կողմից՝ վեճի ծանուցման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում և՛ Անկախ Փորձագետին, և՛ մյուս Կողմին ներկայացնելով գրավոր նյութերը, որոնք պարունակում են.</p>
<p>(i) its description of the dispute in reasonable detail;</p>	<p>(i) նրա կողմից վեճի նկարագրությունը ողջամիտ մանրամասներով,</p>
<p>(ii) a statement of the initiating Party’s position; and</p>	<p>(ii) նախաձեռնող Կողմի դիրքորոշումը, և</p>
<p>(iii) copies of records supporting the initiating Party’s position.</p>	<p>(iii) նախաձեռնող Կողմի դիրքորոշումը հաստատող փաստաթղթերի պատճենները:</p>
<p>(d) Within fifteen (15) Days of the date that a Party has submitted the materials described in the preceding sentence, the other Party may submit to the Independent Expert and to the initiating Party:</p>	<p>(d) Նախորդ նախադասությունում նշված նյութերը Կողմի կողմից ներկայացնելուց 15 (տասնհինգ) օրվա ընթացքում մյուս Կողմը Անկախ Փորձագետին և Նախաձեռնող Կողմին կարող է ներկայացնել՝</p>
<p>(i) its description of the dispute in reasonable detail;</p>	<p>(i) նրա կողմից վեճի նկարագրությունը ողջամիտ մանրամասներով.</p>

(ii) a statement of the responding Party's position; and	(ii) պատասխանող Կողմի դիրքորոշումը. և
(iii) copies of any records supporting the responding Party's position.	(iii) պատասխանող Կողմի դիրքորոշումը հաստատող ցանկացած փաստաթղթերի պատճենները:
(e) Each Party shall designate one person knowledgeable about the issues in dispute who shall be available to the Independent Expert to answer questions and provide any additional information requested by the Independent Expert. Except for such person, a Party shall not be required to, but may, provide oral statements or presentations to the Independent Expert or make any particular individuals available to the Independent Expert.	(e) Յուրաքանչյուր Կողմ նշանակում է վիճարկվող հարցերից տեղյակ մեկ անձի, որը պետք է հասանելի լինի Անկախ Փորձագետի հարցերին պատասխանելու և նրա կողմից պահանջվող ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու համար: Բացառությամբ այդ անձի, Կողմից չի պահանջվում, սակայն նա կարող է Անկախ Փորձագետին տրամադրել բանավոր հայտարարություններ կամ որոշակի անձանց հասանելի դարձնել Անկախ Փորձագետի համար:
(f) When consideration of the dispute by an Independent Expert is initiated, the Independent Expert shall be requested to provide a recommendation within twenty (20) Days after the expiry of the fifteen (15) Day response period provided above. If the Independent Expert's recommendation is given within such twenty (20) Day period, or if the Independent Expert's recommendation is given at a later time and no Party has at such time initiated any other proceeding concerning the dispute, the Parties shall review and discuss the recommendation with each other in good faith for a period of ten (10) Days following delivery of the recommendation before proceeding with any other actions.	(f) Երբ վեճի քննարկումը նախաձեռնվում է Անկախ Փորձագետի կողմից, Անկախ Փորձագետից պահանջվում է ներկայացնել կարգադրություն վերոգրյալ 15 (տասնհինգ) Օր պատասխանի ժամանակահատվածի լրանալուց 20 (քսան) Օրվա ընթացքում: Եթե Անկախ Փորձագետի կարգադրությունը տրամադրվել է նշված 20 (քսան) Օրվա ընթացքում կամ եթե Անկախ Փորձագետի կարգադրությունը տրամադրվել է ավելի ուշ և Կողմերից ոչ մեկը այդ ընթացքում չի նախաձեռնել վեճի վերաբերյալ որևէ այլ ընթացակարգ, Կողմերը բարեխղճորեն վերանայում և քննարկում են միմյանց միջև կարգադրությունը դրա առաքմանը հաջորդող 10 (տասը) Օրվա ընթացքում, նախքան այլ գործողություն ձեռնարկելը:
(g) The costs of engaging the Independent Expert shall be borne equally by the Parties, and each Party shall bear its own costs in preparing materials for, and making presentations to, the Independent Expert.	(g) Անկախ Փորձագետ ներգրավելու ծախսերը կրում են Կողմերը հավասարապես, և յուրաքանչյուր Կողմ կրում է իր սեփական ծախսերը Անկախ Փորձագետի համար նյութերը պատրաստելու և հայտարարություններն անելու մասով:
18.3 Arbitration	18.3. Արբիտրաժ
(a) Failing settlement of a dispute (including a dispute relating to the existence, validity or termination of this Agreement or any non-contractual obligation arising out of or in connection with this Agreement) by amicable settlement in accordance with Article 18.1 within thirty (30) days after either Party requests in writing negotiation under that clause, or within such period that the Parties	(a) 18.1 Հոդվածին համապատասխան բանակցությունների միջոցով վեճը կարգավորելու մասին որևէ Կողմի գրավոր պահանջից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում կամ Կողմերի գրավոր համաձայնությամբ մեկ այլ ժամկետում վեճը, այդ Հոդվածի համաձայն, բանակցությունների միջոցով չկարգավորելու դեպքում կամ սույն Պայմանագրի

<p>may agree in writing or, if such dispute is to be referred to an Independent Expert in accordance with this Agreement, the dispute shall be finally settled by binding arbitration.</p>	<p>համաձայն, Անկախ Փորձագետի փոխանցելու պարագայում վեճը չկարգավորելու դեպքում (այդ թվում՝ սույն Պայմանագրի գոյությանը, օրինականությանը կամ դադարեցմանը վերաբերող վեճը կամ սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորության հետ կապված վեճը), վեճի վերջնական կարգավորումը կատարվում է արբիտրաժի միջոցով, որի որոշումը պարտադիր կլինի Կողմերի համար:</p>
<p>(b) All disputes arising out of or in connection with the present contract shall be finally settled under the Rules of Arbitration of the International Chamber of Commerce (the "Rules") then in effect, by three arbitrators appointed in accordance with the said Rules.</p>	<p>(b) Սույն պայմանագրից բխող կամ դրա հետ կապված բոլոր վեճերը ենթակա են վերջնական կարգավորման այդ պահին գործող՝ Միջազգային առևտրային պալատի Արբիտրաժի Կանոնների ներքո («Կանոններ»), նշված Կանոններին համապատասխան նշանակված երեք արբիտրների կողմից:</p>
<p>(c) The arbitration process shall be commenced by one Party issuing to the other a written notice, informing it of such commencement and appointing an Arbitrator. Upon receipt of the notice, the other Party shall appoint the second arbitrator. If a presiding arbitrator has not been chosen within 30 (thirty) Days of the date of notification of the arbitration, then the presiding arbitrator shall be chosen in accordance with the Rules.</p>	<p>(c) Արբիտրաժի գործընթացը սկսվում է նրանից, որ մի Կողմը ուղարկում է մյուս Կողմին գրավոր ծանուցում, տեղեկացնելով նրան գործընթացի սկզբի և Արբիտրի նշանակման մասին: Ծանուցումը ստանալուն պես մյուս Կողմը նշանակում է երկրորդ արբիտրին: Եթե արբիտրաժի մասին ծանուցման ամսաթվից 30 (երեսուն) Օրվա ընթացքում նախագահող արբիտրը չի ընտրվում, նախագահող արբիտրը ընտրվում է Կանոններին համապատասխան:</p>
<p>(d) The third arbitrator, who shall act as president of the arbitral tribunal, shall be jointly nominated by the other two arbitrators within 30 days of the confirmation of the second arbitrator. If the president of the arbitral tribunal is not nominated within this time period, the International Chamber of Commerce International court of arbitration shall appoint such arbitrator.</p>	<p>(d) Երրորդ արբիտրը, որը գործում է որպես արբիտրաժային տրիբունալի նախագահող, համատեղ նշանակվում է մյուս երկու արբիտրների կողմից երկրորդ արբիտրի հաստատումից 30 (երեսուն) օրվա ընթացքում: Եթե արբիտրաժային տրիբունալի նախագահողը չի նշանակվում նշված ժամկետի ընթացքում, այդ արբիտրին նշանակում է Միջազգային առևտրային պալատի դատարանը:</p>
<p>(e) As long as any amounts remain outstanding under the Financing Documents, in relation to any dispute about an obligation of the Government under this Agreement, notwithstanding that this Agreement is governed by Armenian law, if the arbitrators are being advised by an Armenian law expert witness that Armenian law would fully or partially prevent the implementation and/or enforcement of any provision of this Agreement, and as a result of that advice the arbitrators issue no award or an award for an amount that is less than the award would have been had the relevant provision been read literally</p>	<p>(e) Այնքան ժամանակ, որքան որևէ գումար ենթակա կլինի վճարման Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն, սույն Պայմանագրով նախատեսված՝ Կառավարության որևէ պարտավորության մասին ցանկացած վեճի պարագայում, անկախ այն հանգամանքից, որ այս Պայմանագիրը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, եթե արբիտրներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության փորձագետները տեղեկացնում են, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը</p>

<p>without regard to Armenian law, then the Government shall indemnify and pay to the Developer an amount in USD Dollars equal to the difference.</p>	<p>ամբողջությամբ կամ մասնակիորեն կկանխի սույն Պայմանագրի որևէ դրույթի կիրառումը և/կամ կատարումը, և դրա հիման վրա արբիտրները վճարման մասին որոշում չեն կայացնում կամ կայացնում են որոշում այնպիսի գումարի վճարման մասին, որն ավելի քիչ է, քան կլիներ, եթե համապատասխան դրույթը մեկնաբանվեր տառացիորեն առանց հաշվի առնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, ապա Կառավարությունը փոխհատուցում և Կառուցապատողին վճարում է տարբերությունը՝ ԱՄՆ Դոլարով:</p>
<p>(f) Place of Arbitration</p>	<p>(f) Արբիտրաժի Անցկացման Վայրը</p>
<p>The venue of arbitration shall be London, England and the legal seat of arbitration shall be London, England.</p>	<p>Արբիտրաժի անցկացման վայր է հանդիսանում Լոնդոնը, Անգլիա, իսկ արբիտրաժի իրավաբանական նստավայր է համարվում Լոնդոնը, Անգլիա:</p>
<p>(g) English Language</p>	<p>(g) Անգլերեն Լեզուն</p>
<p>The language of the arbitration and all associated correspondence and documentation shall be English.</p>	<p>Արբիտրաժի և դրա հետ կապված ամբողջ թղթակցության և փաստաթղթերի լեզուն անգլերենն է:</p>
<p>(h) Enforcement of Award</p>	<p>(h) Վճռի Հարկադրումը</p>
<p>Any decision or award resulting from arbitration shall be final and binding upon the Parties. The Parties hereto agree that the arbitral award may be enforced against the parties to the arbitration proceeding or their assets wherever they may be found and that a judgement upon the arbitral award may be entered into in any court having jurisdiction thereof.</p>	<p>Արբիտրաժի արդյունքում կայացված ցանկացած որոշում կամ վճիռ վերջնական է և պարտադիր Կողմերի համար: Կողմերը սույնով համաձայնում են, որ արբիտրաժային վճիռը կարող է հարկադիր կատարվել արբիտրաժային վարույթի կողմերի կամ նրանց ակտիվների նկատմամբ, անկախ դրանց գտնվելու վայրից, և որ արբիտրաժային վճիռը կարող է ներկայացվել համապատասխան իրավասության ցանկացած դատարանին:</p>
<p>(i) Fees and Expenses</p>	<p>(i) Վարձատրությունը և Ծախսերը</p>
<p>The fees and expenses of the arbitrators and all other expenses of the arbitration shall be initially borne and paid equally by the Parties subject to determination otherwise by the arbitrators. The arbitrators may provide in the arbitral award for the reimbursement to the successful Party of its reasonable costs and expenses in bringing or defending the arbitration claim, including reasonable legal fees and expenses incurred by that Party.</p>	<p>Արբիտրների վարձատրությունը և ծախսերը և արբիտրաժի բոլոր այլ ծախսերն ի սկզբանե կրում և վճարում են Կողմերը հավասարաչափ, եթե այլ կերպ չի սահմանվում արբիտրների կողմից: Արբիտրները կարող են արբիտրաժային վճռում փոխհատուցում սահմանել հաղթող Կողմին՝ արբիտրաժային հայցի ներկայացման կամ պաշտպանման կապակցությամբ նրա կրած ողջամիտ ծախսերի և ծախսումների համար, ներառյալ Կողմի կրած խելամիտ իրավաբանական ծախսերը և ծախսումները:</p>
<p>18.4 Continued Performance</p>	<p>18.4. Շարունակվող Կատարում</p>

<p>During any discussion, determination or arbitration pursuant to this Article 18 and pending any decision under it, the Parties shall continue to perform all of their obligations under the Agreement.</p>	<p>Համաձայն սույն 18-րդ Հոդվածի ցանկացած քննարկումների, սահմանումների կամ արբիտրաժի ընթացքում և նախքան դրանցով որոշում կայացնելը, Կողմերը շարունակում են կատարել սույն Պայմանագրի ներքո իրենց պարտավորությունները:</p>
---	--

<p>ARTICLE 19</p>	<p>ՀՈՂՎԱԾ 19</p>
<p>19. REPRESENTATIONS AND WARRANTIES</p>	<p>19. ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐ</p>
<p>19.1 Representations and Warranties of the Developer</p>	<p>19.1. Կառուցապատողի Հավաստումները և Երաշխավորումները</p>
<p>The Developer represents and warrants to the Government that:</p>	<p>Կառուցապատողը հավաստում և երաշխավորում է Կառավարությանը, որ.</p>
<p>(a) it has full power and authority to execute, deliver and perform its obligations under the Agreement;</p>	<p>(a) նա լիովին լիազորված է կնքել սույն Պայմանագիրը և դրա համաձայն կատարել և իրականացնել իր պարտավորությունները,</p>
<p>(b) it has taken all necessary action to authorise the execution, delivery and performance of the Agreement;</p>	<p>(b) նա ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ գործողությունները սույն Պայմանագրի ստորագրումը, կատարումը և իրականացումը թույլատրելու համար,</p>
<p>(c) the Agreement constitutes its legal, valid and binding obligation, enforceable against it in accordance with the terms hereof;</p>	<p>(c) Պայմանագիրը կազմում է նրա օրինական, վավեր և պարտադրող պարտավորությունը, որը կարող է հարկադրվել իր հանդեպ՝ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան,</p>
<p>(d) there are no actions, suits or proceedings pending or to its best knowledge, threatened against or affecting it before any court, administrative body or arbitral tribunal which might materially and adversely affect its ability to meet or perform any of its obligations under the Agreement;</p>	<p>(d) որևէ դատարանում, վարչական մարմնում կամ արբիտրաժային տրիբունալում չկա ընթացիկ կամ, որքան որ նրան հայտնի է, նրան սպառնացող կամ նրա վրա ազդեցություն ունեցող ոչ մի իրավաբանական գործողություն, հայց կամ վարույթ, որը կարող է էապես կամ բացասաբար ազդել սույն Պայմանագրով նրա պարտավորությունները կատարելու կարողության վրա,</p>
<p>(e) it has complied with all laws applicable to it in all material respects which in the aggregate have or may have a material adverse effect on its ability to perform its obligations under the Agreement;</p>	<p>(e) նա պահպանել է իր նկատմամբ բոլոր էական առումներով կիրառելի բոլոր օրենքները, որոնք ընդհանուր առմամբ էական անբարենպաստ ազդեցություն ունեն կամ կարող են ունենալ սույն Պայմանագրով նրա պարտավորությունները կատարելու ունակության վրա,</p>
<p>(f) no sums, in cash or in kind or inducement of any type, have been paid or will be paid by it or on its behalf,</p>	<p>(f) իր կողմից կամ անունից չի վճարվել և չի վճարվելու ոչ մի գումար, լինի դա կանխիկ, թե՛</p>

<p>to any Person by way of fees, commission or otherwise for the granting of the Project or entering into the Agreement or for influencing or attempting to influence any officer or employee of any Government Authority in connection therewith.</p>	<p>ցանկացած այլ եղանակով, որևէ Անձի՝ վարձատրության, միջնորդավճարի կամ այլ տեսքով, Ծրագրի իրականացման իրավունքները տրամադրելու կամ Պայմանագիրը կնքելու համար, կամ վերոգրյալի կապակցությամբ որևէ Պետական Մարմնի պաշտոնատար անձի կամ աշխատողի վրա ազդեցություն գործադրելու համար կամ ազդեցություն գործադրելը փորձելու համար:</p>
<p>19.2 Representations and Warranties of the Government</p>	<p>19.2. Կառավարության Հավաստումները և Երաշխավորումները</p>
<p>The Government represents and warrants to the Developer that:</p>	<p>Կառավարությունը հավաստում և երաշխավորում է Կառուցապատողին, որ.</p>
<p>(a) it has full power and authority to execute, deliver and perform its obligations under the Agreement;</p>	<p>(a) նա լիովին լիազորված է կնքել սույն Պայմանագիրը և դրա համաձայն կատարել և իրականացնել իր պարտավորությունները,</p>
<p>(b) it has taken all necessary action to authorise the execution, delivery and performance of the Agreement and all necessary authorisations and permits provided by the Government or any Government Authority have been provided to enable it to enter into and perform its obligations under the Project Documents to which it is party and to enable each of the Power Sector Entities to perform as envisaged in the Power Purchase Agreement;</p>	<p>(b) նա ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ գործողությունները սույն Պայմանագրի ստորագրումը, կատարումը և իրականացումը թույլատրելու համար, և տրամադրվել են Կառավարության կամ ցանկացած Պետական Մարմնի բոլոր անհրաժեշտ թույլտվությունները, որպեսզի նա իրավագոր լինի կնքելու այն Ծրագրի Փաստաթղթերը, որի կողմ է, և ստանձնելու դրանով նախատեսված պարտավորությունները, և որպեսզի բոլոր էներգետիկայի Ոլորտի Մասնակիցները կարողանան կատարել էներգիայի Գնման Պայմանագրով նախատեսված իրենց գործողությունները,</p>
<p>(c) the Agreement constitutes the legal, valid and binding obligation of the Government, enforceable against it in accordance with the terms hereof and is not subject to any further authorisation, budgetary approval or restriction or issuance of a separate budgetary guarantee;</p>	<p>(c) Պայմանագիրը կազմում է Կառավարության օրինական, վավեր և պարտադրող պարտավորությունը, որը կարող է հարկադրվել նրա հանդեպ՝ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան, և ենթակա չէ որևէ հետագա թույլտվության, բյուջետային հաստատման կամ սահմանափակման կամ առանձին բյուջետային երաշխիքի տրամադրման.</p>
<p>(d) there are no actions, suits or proceedings pending or to its best knowledge, threatened against or affecting it before any court, administrative body or arbitral tribunal which might materially and adversely affect its ability to meet or perform any of its obligations under the Agreement;</p>	<p>(d) որևէ դատարանում, վարչական մարմնում կամ արբիտրաժային տրիբունալում չկա ընթացիկ կամ, որքան որ նրան հայտնի է, նրան սպառնացող կամ նրա վրա ազդեցություն ունեցող ոչ մի իրավաբանական գործողություն, հայց կամ վարույթ, որը կարող է էապես կամ բացասաբար ազդել սույն</p>

	Պայմանագրով նրա պարտավորությունները կատարելու կարողության վրա,
(e) it has complied with Applicable Laws in all material respects which in the aggregate have or may have a material adverse effect on its ability to perform its obligations under the Agreement;	(e) նա պահպանել է բոլոր էական առումներով բոլոր Կիրառելի Օրենքները, որոնք ընդհանուր առմամբ էական անբարենպաստ ազդեցություն ունեն կամ կարող են ունենալ սույն Պայմանագրով նրա պարտավորությունները կատարելու ունակության վրա,
(f) no sums, in cash or in kind or inducement of any type, have been received or will be received, by it or on its behalf, from any Person by way of fees, commission or otherwise for the granting of the Project or entering into the Agreement or for influencing or attempting to influence any officer or employee of any Government Authority in connection therewith;	(f) իր կողմից կամ անունից չի ստացվել և չի ստացվելու ոչ մի գումար, լինի դա կանխիկ, թե՛ ցանկացած այլ եղանակով, որևէ Անձից՝ վարձատրության, միջնորդավճարի կամ այլ տեսքով, Ծրագրի իրականացման իրավունքները տրամադրելու կամ Պայմանագիրը կնքելու համար, կամ վերոգրյալի կապակցությամբ որևէ Պետական Մարմնի պաշտոնատար անձի կամ աշխատողի վրա ազդեցություն գործադրելու համար կամ ազդեցություն գործադրելը փորձելու համար,
(g) it has complied, during the principal discussions with the Sponsor in respect of the Project, in awarding the Project to the Developer, the negotiation of this Agreement, and the Term with all Applicable Laws, including all relevant public procurement laws of Armenia;	(g) Ծրագրի վերաբերյալ Հովանավորի հետ հիմնական քննարկումների ընթացքում, Կառուցապատողին Ծրագիրը շնորհելու, սույն Պայմանագրի շուրջ բանակցությունների և Ժամկետի կապակցությամբ նա պահպանել է բոլոր Կիրառելի Օրենքները, այդ թվում՝ Հայաստանի պետական գնումների մասին համապատասխան օրենքները,
(h) it agrees that the execution, delivery and performance by it of the Agreement and all other agreements, contracts, documents and writings relating to the Agreement constitute private and commercial acts and not public or sovereign acts; and	(h) համաձայնում է, որ նրա կողմից սույն Պայմանագրի և Պայմանագրի հետ կապված բոլոր այլ համաձայնագրերի, պայմանագրերի, փաստաթղթերի ստորագրումը, կատարումը և իրականացումը հանդիսանում են մասնավոր և առևտրային գործողություններ, այլ ոչ թե հանրային կամ ինքնիշխան գործողություններ, և
(i) it consents generally in respect of the enforcement of any judgment against it in any proceedings arising from disputes related to this Agreement and determined pursuant to Article 18 of this Agreement, it being expressly understood that this Article 19.2(i) does not apply to acts of the Government in its sovereign capacity in relation to the Developer or any other party in any jurisdiction to the giving of any relief or the issue of any process in connection with such proceedings.	(i) ընդհանուր առմամբ համաձայնում է իր դեմ ցանկացած դատական ակտի հարկադրմանը ցանկացած վարույթներով, որոնք բխում են սույն Պայմանագրի հետ կապված՝ 18-րդ Հոդվածի համաձայն լուծված վեճերից, ընդ որում հստակորեն հասկացվում է, որ սույն 19.2(i) Հոդվածը կիրառելի չէ իր ինքնիշխան կարգավիճակում Կառավարության գործողությունների նկատմամբ Կառուցապատողի կամ ցանկացած այլ կողմի առնչությամբ որևէ տարածքում որևէ ազատում տրամադրելու կամ որևէ

	գործընթացի սկսման հարցում կապված այդ վարույթների հետ:
--	---

ARTICLE 20	ՀՈՂՎԱԾ 20
20. MISCELLANEOUS PROVISIONS	20. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ
20.1 Notices	20.1. Ծանուցումներ
(a) Writing and delivery	(a) Կազմում և առաքում
Any notice or other communication in connection with the Agreement (each, a " Notice ") shall be in writing, in English (or, if in another language, shall be accompanied by a translation into English certified by a representative of the notifying party, which translation shall be the governing version between the Parties) and delivered by hand, fax, email or courier using an internationally recognised courier company.	Պայմանագրի կապակցությամբ ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդակցություն (յուրաքանչյուրը՝ « Ծանուցում ») պետք է լինի գրավոր ձևով, անգլերեն լեզվով (կամ, եթե այլ լեզվով է, կից պետք է ներկայացվի ծանուցող կողմի ներկայացուցչի կողմից վավերացված անգլերեն թարգմանությամբ, ինչպիսի թարգմանությունն առաջնային ուժ կունենա Կողմերի համար) և երկարացվի առձեռն, ֆաքսով, էլ. փոստով կամ միջազգային ճանաչում ունեցող սուրհանդակային ընկերության սուրհանդակի միջոցով:
(b) Addresses	(b) Հասցեներ
(i) A Notice to the Developer or the Sponsor shall be sent to the following address, or such other Person or address as the Developer or the Sponsor, respectively, may notify to the other Parties from time to time:	(i) Կառուցապատողին կամ Հովանավորին ուղղված ծանուցումները պետք է ուղարկվեն հետևյալ հասցեով կամ այնպիսի այլ Անձի կամ հասցեով, որի մասին համապատասխանաբար Կառուցապատողը կամ Հովանավորը կարող են պարբերաբար ծանուցել մյուս Կողմերին.
Name: FRV MASRIK CJSC;	Անունը՝ «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ.
Address: 1st Street, 12th Lane, 2, Mets Masrik Community, 1618, Gegharkunik Marz (Region), Republic of Armenia;	Հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մեծ Մասրիկի համայնք, 1618, 1-ին փողոց, 12-րդ նրբանցք, թիվ 2,
Email: Mikel.deirala@frv.com	Էլ. փոստ՝ Mikel.deirala@frv.com
Attention: Mikel de Irala	Ի Ուշադրություն՝ Միկել դե Իրալա
(ii) A Notice to the Government shall be sent to the following address, or such other person or address as the Government may notify to the other Parties from time to time:	(ii) Կառավարությանը ուղղված ծանուցումները պետք է ուղարկվեն հետևյալ հասցեով կամ այնպիսի այլ Անձի կամ հասցեով, որի մասին Կառավարությունը պարբերաբար ծանուցում է մյուս Կողմերին.

Name: The Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia;	Անունը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն.
Address: Armenia, Yerevan 0010, Republic Square, Government House 3;	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3,
Email: minenergy@minenergy.am;	Էլ. փոստ՝ minenergy@minenergy.am,
Attention: The Minister;	Ի Ուշադրություն՝ Նախարարին.
with a copy to:	պատճենը՝
Name: The Government of the Republic of Armenia;	Անունը՝ ՀՀ կառավարություն.
Address: Armenia, Yerevan 0010, Republic Square, Government House 1;	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1.
Attention: The Chief of Staff of the Prime Minister.	Ի Ուշադրություն՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար.
(c) Deemed receipt	(c) Ենթադրյալ ստացում
A Notice shall be effective upon receipt and shall be deemed to have been received at the time of delivery, if delivered by hand or courier.	Ծանուցումն ուժի մեջ է ստացման պահից և համարվում է ստացված առաքման պահին, եթե ներկայացվել է առձեռն կամ սուրհանդակի միջոցով:
20.2 Assignment and Transfer	20.2. Ձիջում և Փոխանցում
Except as otherwise provided in the Agreement and subject to any Direct Agreement (if relevant) or other relevant security agreement to be entered into in favour of any Financing Party (if relevant), the Developer shall not assign or transfer its rights, title, receivables or interest in the Agreement in favour of any Persons without prior written consent of the Government. Except as pursuant to any such relevant security agreement or as provided in any such Direct Agreement, in the case of such transfer the obligations of the Developer should be transferred alongside the rights.	Եթե Պայմանագրում այլ կերպ սահմանված չէ և ցանկացած Ուղղակի Պայմանագրի (եթե վերաբերելի է) կամ որևէ Ֆինանսավորման Կողմի օգտին կնքվելիք այլ ապահովման միջոցի պայմանագրի (եթե վերաբերելի է) պահպանման պայմանով, Կառուցապատողը չպետք է զիջի կամ փոխանցի սույն Պայմանագրով իր իրավունքները, սեփականության իրավունքը, նրան հասանելի գումարները կամ շահերը այլ Անձանց՝ առանց Կառավարության նախնական գրավոր համաձայնության: Բացառությամբ որևէ համապատասխան ապահովման միջոցի պայմանագրով կամ որևէ այդպիսի Ուղղակի Պայմանագրով նախատեսված դեպքերի՝ այդպիսի փոխանցման դեպքում, Կառուցապատողի պարտավորությունները փոխանցվում են իրավունքների հետ միասին:
20.3 Invalidity	20.3. Անվավերություն
(a) If any provision in the Agreement shall be held to be illegal, invalid or unenforceable, in whole or in part, such provision or part of it shall, to the extent that it is illegal, invalid or unenforceable, be deemed not to form	(a) Եթե Պայմանագրի որևէ դրույթ դառնում է անօրինական, անվավեր կամ ոչ հարկադրելի, լինի դա ամբողջությամբ, թե՛ մասամբ, այդ դրույթը կամ դրա մի մասը, որքանով, որ անօրինական է,

<p>part of the Agreement and the legality, validity and enforceability of the remainder of the Agreement shall not be affected.</p>	<p>անվավեր կամ ոչ հարկադրելի պետք է դիտվի որպես սույն Պայմանագրի մաս չկազմող, իսկ Պայմանագրի մյուս դրույթների օրինականանությունը, վավերականությունը և հարկադրելիությունը չպետք է խաթարվի:</p>
<p>(b) The Parties shall negotiate in good faith with a view to agreeing one or more provisions which may be substituted for any invalid, illegal or unenforceable provision and produce as nearly as is practicable in all the circumstances the appropriate balance of the commercial interests of the Parties.</p>	<p>(b) Կողմերը պետք է բարեխղճորեն բանակցեն, որպեսզի համաձայնության գան մեկ կամ ավելի դրույթների շուրջ, որոնք կարող են փոխարինել որևէ անօրինական, անվավեր կամ անհարկադրելի դրույթ և ստեղծել Կողմերի կոմերցիոն շահերի պատշաճ հավասարակշռություն՝ առկա հանգամանքներում իրագործելի հնարավոր առավելագույն չափով:</p>
<p>20.4 No partnership</p>	<p>20.4. Ընկերակցության Բացակայություն</p>
<p>(a) Nothing in the Agreement shall be deemed to constitute a partnership between the Parties or constitute either Party the agent of the other Party for any purpose.</p>	<p>(a) Սույն Պայմանագրում ոչ մի դրույթ չի կարող որակվել որպես Կողմերի միջև ընկերակցության ստեղծում կամ որևէ Կողմին՝ որպես մյուս Կողմի գործակալ որևէ նպատակով հանդես գալու իրավունքի շնորհում:</p>
<p>20.5 Confidentiality</p>	<p>20.5. Գաղտնիություն</p>
<p>(a) General restriction</p>	<p>(a) Ընդհանուր սահմանափակում</p>
<p>From the Signing Date until the date that is ten (10) years after the termination or expiry of this Agreement, and subject to the exceptions provided in Article 20.5(b) the Parties to the Agreement shall not, without the prior consent of the other Party, divulge or suffer or permit its officers, employees, agents or contractors to divulge to any Person (other than to any of its or their respective officers or employees who require the same to enable them properly to carry out their duties or to its or their respective banks or financiers) any of the contents of the Agreement or any commercially confidential information relating to the negotiations concerning the same which may come to a Party's knowledge in the course of such negotiations concerning the operations, contracts, commercial or financial arrangements or affairs of the other Party.</p>	<p>Ստորագրման Ամսաթվից մինչ այն օրը, որն ընկում է սույն Պայմանագրի դադարումից կամ ժամկետը լրանալուց 10 (տասը) տարի հետո և 20.5(b) Հոդվածում սահմանված բացառությունների պահպանման պայմանով՝ Պայմանագրի Կողմերը ցանկացած պահի, լինի դա սույն Պայմանագրի լուծումից առաջ, թե՛ հետո, առանց մյուս Կողմից նախապես ստացված գրավոր համաձայնության չպետք է հրապարակեն կամ թույլ տան իրենց պաշտոնատար անձանց, աշխատողներին, գործակալներին կամ կապալառուներին հրապարակելու ցանկացած Անձի (բացառությամբ նրանց համապատասխան պաշտոնատար անձանցից կամ աշխատողներից, որոնց այն պահանջվում է իրենց պարտականությունները կատարելու համար կամ իրենց համապատասխան բանկերին կամ ֆինանսավորողներին) սույն Պայմանագրի բովանդակությունը կամ դրան վերաբերող բանակցությունների հետ կապված որևէ գաղտնի տեղեկատվություն, որը կարող է հայտնի դառնալ Կողմին այդ բանակցությունների ընթացքում՝ կապված մյուս Կողմի գործողությունների,</p>

	պայմանագրերի, առևտրային կամ ֆինանսական պայմանավորվածությունների կամ գործերի հետ:
(b) Exceptions	(b) Բացառություններ
The restrictions imposed by Article 20.5(a) shall not apply to the disclosure of any information:	20.5(a) Հոդվածով սահմանված սահմանափակումները չեն կիրառվում հետևյալ տեղեկատվության բացահայտման նկատմամբ.
(i) which now or hereafter comes into the public domain otherwise than as a result of a breach of the Agreement or the undertaking of confidentiality;	(i) որը ներկայումս կամ հետագայում հայտնվում է հասարական տիրույթում բացառությամբ Պայմանագրի կամ գաղտնիության պահպանման խախտման արդյունքում,
(ii) which is obtainable with no more than reasonable diligence from sources other than the Parties;	(ii) որը, ոչ ավել քան ողջամիտ ջանքերով հնարավոր է ստանալ Կողմերից բացի որևէ այլ աղբյուրներից,
(iii) which is required by law or appropriate regulatory/constitutional authority to be disclosed to any Person who is authorised by law to receive the same;	(iii) որն օրենքով կամ պատշաճ կարգավորող/սահմանադրական մարմնի կողմից պահանջվում է բացահայտել այդ տեղեկատվությունը ստանալու համար օրենքով լիազորված Անձին.
(iv) which is in or comes into the possession of the receiving Party prior to the aforesaid publication or disclosure and which was or is not obtained under any obligation of confidentiality; and	(iv) որը գտնվում է կամ հայտնվում է ստացող Կողմի տիրապետության ներքո նախքան վերոհիշյալ հրապարակումը կամ բացահայտումը և որը չէր ստացվել գաղտնիությունը պահպանելու որևէ պարտավորությամբ, և
(v) which was or is obtained from a third party who is free to divulge the same and which was or is not obtained under any obligation of confidentiality.	(v) որը ձեռք է բերվել կամ ձեռք էր բերվել երրորդ կողմի կողմից, որն ազատ է բացահայտել այն և որը չէր ձեռք բերվել կամ չի ձեռք բերվել գաղտնիությունը պահպանելու որևէ պարտավորությամբ.
(c) A Party may disclose the confidential information subject to obtaining confidential undertakings to keep the same confidential in terms not less strict than those imposed under the Agreement to:	(c) Կողմը կարող է բացահայտել գաղտնի տեղեկատվությունը՝ գաղտնիությունը պահպանելու սույն Պայմանագրով սահմանվածից ոչ պակաս խիստ պայմաններ նախատեսող պարտավորությունների ստանձնման դեպքում, հետևյալ կողմերին.
(i) a court, arbitral or administrative tribunal in the course of proceedings before the court, arbitral or tribunal to which the disclosing Party is a party;	(i) դատարանին, արբիտրաժային տրիբունալին կամ վարչական դատարանին՝ այն դատարանում, արբիտրաժային տրիբունալում կամ վարչական դատարանում դատական վարույթների ընթացքում, որի մասնակից է հանդիսանում հրապարակող Կողմը,
(ii) Government Authorities;	(ii) Պետական Մարմիններին,
(iii) any Financing Parties or to any consultants, banks, financiers, guarantors or advisers to the disclosing Party	(iii) ցանկացած ֆինանսավորման Կողմերին կամ հրապարակող Կողմի կոնսուլտանտների, բանկերին, ֆինանսավորողներին, երաշխավորներին կամ

(including their respective managements and Boards of Directors);	խորհրդատուներին (այդ թվում նրանց համապատասխան կառավարիչներին և Տնօրենների խորհուրդներին),
(iv) any recognised exchange upon which the share capital of the Party or any Affiliate of the Party making the disclosure is proposed to be from time to time listed or dealt in; and	(iv) ցանկացած ճանաչված բորսայի, որտեղ հրապարակող Կողմի կամ դրա Փոխկապակցված Անձի բաժնետիրական կապիտալ ժամանակ առ ժամանակ առաջարկվում է կամ հանդիսանում է գործարքի առարկա, և
(v) any insurers of either Party.	(v) որևէ Կողմի որևէ ապահովագրողներին:
20.6 Variation	20.6. Փոփոխություն
No variation of the Agreement shall be effective unless in writing and signed by or on behalf of each Party and, to the extent the Sponsor's rights and obligations are concerned, also the Sponsor.	Պայմանագրում որևէ փոփոխություն ուժի մեջ չէ, եթե չի կատարվել գրավոր կերպով և ստորագրվել յուրաքանչյուր Կողմի, և այնքանով, որքանով վերաբերում է Հովանավորի իրավունքներին և պարտականություններին՝ նաև Հովանավորի կողմից կամ անունից:
20.7 Waiver	20.7. Հրաժարում
(a) No failure or delay by any Party in exercising any right or remedy provided under the Agreement shall operate as a waiver of it, nor shall any single or partial exercise of any right or remedy preclude any other or further exercise of it or the exercise of any other right or remedy.	(a) Պայմանագրով տրամադրված որևէ իրավունքից կամ իրավական պաշտպանության միջոցից Կողմի կողմից չօգտվելը կամ դրանց իրականացումը ուշացնելը չի հանդիսանում դրանից հրաժարում, ինչպես և որևէ իրավունքից կամ իրավական պաշտպանության միջոցից մեկանգամյա կամ մասնակի օգտվելը չի կանխում դրանից կամ ցանկացած այլ իրավունքից կամ իրավական պաշտպանության միջոցից հետագայում օգտվելը:
(b) Any waiver of a breach of the Agreement shall not constitute a waiver of any subsequent breach.	(b) Պայմանագրի խախտման հետ կապված որևէ իրավունքից հրաժարում չի հանդիսանում բոլոր հետագա խախտումների հետ կապված հրաժարում:
20.8 Entire agreement	20.8. Ամբողջական պայմանագիր
The Agreement contains the whole agreement between the Parties relating to the subject matter of the Agreement and to the exclusion of any terms implied by law which may be excluded by contract as at the Signing Date, and supersedes (in accordance with its terms) any other previous written or oral agreement or understanding between the Parties in relation to the subject matter of the Agreement.	Պայմանագիրը պարունակում է Պայմանագրի առարկայի վերաբերյալ, ինչպես նաև օրենքից բխող այնպիսի դրույթներից բացառություն կատարելու վերաբերյալ Կողմերի ամբողջ համաձայնությունը, որոնք Ստորագրման Ամսաթվի դրությամբ կարող են կատարվել պայմանագրային կարգով, և փոխարինում է (դրա պայմաններին համապատասխան) Պայմանագրի առարկայի շուրջ Կողմերի միջև բոլոր

	նախկին գրավոր և բանավոր համաձայնությունները և պայմանավորվածությունները:
20.9 Survival	20.9. Պայմանագրի դադարեցումից հետո դրույթների ուժի մեջ մնալը
Cancellation, expiration or earlier termination of the Agreement shall not relieve the Parties of obligations that by their nature should survive such cancellation, expiration or termination, including, without limitation, payment obligations, warranties, remedies, promises of indemnity and confidentiality.	Պայմանագրի չեղարկումը, ժամկետի լրանալը կամ վաղաժամկետ լուծումը չի ազատում Կողմերին այն պարտավորություններից, որոնք, ըստ իրենց բնույթի, պետք է պահպանեն իրենց ուժը նման չեղարկումից, ժամկետի լրանալուց կամ վաղաժամկետ լուծումից հետո, ներառյալ՝ առանց սահմանափակման, վճարային պարտավորությունները, երաշխիքները, իրավական պաշտպանության միջոցները, պարտազերծման խոստումները և գաղտնիությունը:
20.10 Sovereign Immunity	20.10. Ինքնիշխան Անձեռնմխելիությունը
(a) The Parties unconditionally and irrevocably agree that the execution and performance of the Agreement constitute a private and commercial act.	(a) Կողմերը անվերապահորեն և անհետկանչելի եղանակով համաձայնում են, որ Պայմանագրի ստորագրումը և կատարումը մասնավոր և առևտրային գործողություններ են:
(b) In addition, the Government unconditionally and irrevocably:	(b) Ի հավելումն, Կառավարությունն անվերապահորեն և անհետկանչելի եղանակով.
(i) agrees that should any proceedings be brought against it or its assets in any jurisdiction in relation to the Agreement or any transaction contemplated by the Agreement, it will not claim immunity from such proceedings with respect to itself or its assets;	(i) համաձայնում է, որ այն դեպքում, եթե նրա կամ նրա ակտիվների նկատմամբ ցանկացած տարածքում ներկայացվի որևէ դատական վարույթ Պայմանագրի կամ Պայմանագրով նախատեսվող ցանկացած գործարքի կապակցությամբ, նա չի պահանջի անձեռնմխելիություն այդ վարույթների նկատմամբ՝ իր կամ իր ակտիվների համար,
(ii) waives any right of immunity which it or any of its assets now has or may acquire in the future whether characterised as sovereign immunity or otherwise in any jurisdiction in connection with any such proceedings including, without limitation, immunity from service of process, immunity from jurisdiction or judgment of any court of tribunal and immunity from execution of a judgment; and	(ii) հրաժարվում է անձեռնմխելիության ցանկացած իրավունքից, որը նա կամ նրա ակտիվները ներկայումս ունեն կամ կարող են ձեռք բերել ապագայում՝ անկախ նրանից դրանք որակվում են որպես ինքնիշխան անձեռնմխելիություն, թե՛ այլ կերպ, որևէ տարածում՝ կապված նշված վարույթների հետ, ներառյալ, առանց սահմանափակման, դատական ծանուցումների նկատմամբ անձեռնմխելիությունից, որևէ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի իրավասության կամ վճռի նկատմամբ անձեռնմխելիությունից, և վճռի կատարման նկատմամբ անձեռնմխելիությունից, և
(iii) consents generally in respect of the enforcement of any judgment or arbitral award against it in any such proceedings in any jurisdiction to the giving of any relief or	(iii) տալիս է ընդհանուր համաձայնություն ցանկացած իրավասությունում ցանկացած նման վարույթներում նրա դեմ վճռի կամ արբիտրաժային

<p>the issue of any process in connection with such proceedings (including the making, enforcement or execution against or in respect of any assets whatsoever irrespective of its use or intended use).</p>	<p>վճռի հարկադիր կատարման նկատմամբ՝ որևէ ազատում տալու կամ այդ վարույթների կապակցությամբ գործընթաց սկսելու առնչությամբ (այդ թվում ցանկացած ակտիվների դեմ կամ դրանց նկատմամբ որոշումների կայացման, հարկադրման կամ իրականացման՝ անկախ դրանց օգտագործումից կամ նախատեսված օգտագործումից):</p>
<p>20.11 Further assurance</p>	<p>20.11. Լրացուցիչ երաշխիքներ</p>
<p>Each Party shall, and shall use reasonable endeavours at no financial cost to procure that any necessary third party shall, from time to time, execute such documents and do such acts and things as the requesting Party may reasonably require for the purpose of giving the full benefit of the Agreement to the requesting Party.</p>	<p>Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, և գործադրում ողջամիտ ջանքեր, առանց ֆինանսական ծախսի, ապահովելու համար, որպեսզի ցանկացած անհրաժեշտ երրորդ անձ պարբերաբար ստորագրի այնպիսի փաստաթղթեր և կատարի այնպիսի գործողություններ, որը պահանջող Կողմը կարող է ողջամտորեն պահանջել՝ պահանջող Կողմին Պայմանագրից բխող լրիվ օգուտը տրամադրված լինելու նպատակով:</p>
<p>20.12 Counterparts</p>	<p>20.12. Պայմանագրի Օրինակները</p>
<p>The Agreement may be entered into in any number of separate counterparts, all of which taken together shall constitute one and the same agreement. The Agreement shall be deemed concluded (entered into) between all of the Parties and the Sponsor upon exchange between all of the Parties and the Sponsor of the counterparts executed by all of the Parties and the Sponsor, upon which the Agreement shall enter into force, without prejudice to the Conditions Precedent.</p>	<p>Պայմանագիրը կարող է կնքվել ցանկացած թվով առանձին օրինակներից, որոնք բոլորը միասին կազմում են մեկ և միևնույն պայմանագիրը: Պայմանագիրը համարվում է կնքված բոլոր Կողմերի և Հովանավորի միջև՝ բոլոր Կողմերի և Հովանավորի կողմից ստորագրված օրինակները բոլոր Կողմերի և Հովանավորի միջև փոխանակվելուն պես, որից հետո Պայմանագիրը մտնում է ուժի մեջ՝ չսահմանափակելով Հետաձգող Պայմաններին վերաբերող դրույթները:</p>
<p>20.13 Governing law</p>	<p>20.13. Կարգավորող օրենք</p>
<p>The Agreement and any non-contractual obligations arising out of or in connection with it shall be governed by and construed in accordance with the laws of Armenia.</p>	<p>Պայմանագիրը և դրանից բխող կամ դրա կապակցությամբ առաջացող ցանկացած ոչ պայմանագրային պարտավորությունները կարգավորվում են Հայաստանի օրենքներով և մեկնաբանվում համաձայն դրանց:</p>
<p>20.14 Contract Language</p>	<p>20.14. Պայմանագրի Լեզուն</p>
<p>This Agreement is executed in Armenian and English languages. The Parties acknowledge that the negotiations regarding this Agreement were held between the Parties in English, and agree that in case of any discrepancy between the Armenian and the English texts of this Agreement, the latter shall prevail.</p>	<p>Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն: Կողմերն ընդունում են, որ սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցությունները Կողմերի միջև անցկացվել են անգլերեն, և համաձայնում են, որ սույն Պայմանագրի հայերեն և</p>

	անգլերեն տարբերակների միջև հակասությունների դեպքում, գերակայում է անգլերեն տարբերակը:
<p>IN WITNESS WHEREOF, the Parties and the Sponsor, intending to be legally bound, have caused the Agreement to be duly executed on the dates indicated next to their signatures below by their duly authorised representatives:</p>	<p>Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՎԵՐՈՎՐՅԱԼԻ Կողմերը և Հովանավորը, մտադրված լինելով իրավաբանորեն պարտավորվել, պատշաճ կերպով ստորագրեցին սույն Պայմանագիրը իրենց պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով՝ ստորև դրված ստորագրությունների կողքին նշված ամսաթվերին.</p>
[Signature pages follow]	[Ստորագրման էջերը՝ հաջորդիվ]

SIGNED by the **GOVERNMENT OF THE
REPUBLIC OF ARMENIA** (acting on behalf
of the **REPUBLIC OF ARMENIA**)

**ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ** (որը
գործում է **ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** անունից)

By: Suren Papikyan, Minister of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia, as its authorised representative

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի կողմից՝ որպես լիազորված ներկայացուցիչ

Signature:
Ստորագրություն.

Date:
Ամսաթիվ՝

SIGNED by FRV MASRIKCJSC

**ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-Ի
ԿՈՂՄԻՑ**

By:

as its authorised representative

Signature:
Ստորագրություն՝

Կողմից՝ որպես լիազորված ներկայացուցիչ
Date:
Ամսաթիվ՝

**SIGNED by
FOTOWATIO RENEWABLE VENTURES
S.L.**

**ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է «ՖՈՏՈՎԱՏԻՈ
ՌԵՆՅՈՒԱԲԼ ՎԵՆՉՐՍ» ԷՍ.ԷԼ.-
ԻԿՈՂՄԻՑ**

By:

as its authorised representative

Signature:
Ստորագրություն.

կողմից՝ որպես լիազորված ներկայացուցիչ
Date:
Ամսաթիվ՝

**SIGNED by
FSL SOLAR S.L.**

**ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է «ԷՖԵՍԷԼ ՍՈԼԱՐ»
ԷՍ. ԷԼ.-ԻԿՈՂՄԻՑ**


By:

as its authorised representative

Signature:
Ստորագրություն.

կողմից՝ որպես լիազորված ներկայացուցիչ
Date:
Ամսաթիվ՝

APPENDIX 1 PROJECT SITE	ՀԱՎԵԼՎԱԾ ԽՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԸ
1 The Project Site is located in administrative boundary of Mets Masrik Community, Geghakunik Marz, Republic of Armenia.	1 Ծրագրի Տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքի վարչական սահմաններում:
2 Area of Project Site is 97.3709 hectares.	2 Ծրագրի տարածքի մակերեսը 97.3709 հեկտար է:
3 The Project Site scheme is presented below:	3 Ծրագրի Տարածքի սխեման ներկայացվում է ստորև.



Points	Coordinates		Size (meter)
Շրջադարձային (բեկման) կետերը	Կոորդինատները		Գծային չափերը (մետր)
	Y	X	
1	8561119,8555	4454460,1224	276,19
2	8560954,3871	4454681,2610	116,43
3	8560904,1609	4454786,2978	447,71
4	8560711,0215	4455190,2052	198,90
5	8560908,6657	4455212,5150	400,43
6	8561402,3295	4455266,6119	400,43
7	8561793,5210	4455181,0899	255,07
8	8562048,5680	4455184,4239	191,91
9	8562210,3797	4455287,5968	219,63

10	8562411,7522	4455375,2692	535,49
11	8562520,1308	4454850,8569	88,37
12	8562452,1489	4454794,3969	93,79
13	8562466,5590	4454701,7211	587,51
14	8561879,1444	4454712,5803	536,60
15	8561358,0098	4454584,6775	268,76

APPENDIX 2 CONDITIONS PRECEDENT	ՀԱՎԵԼՎԱԾ ՉԿԵՏԱԶԳՈՂՊԱՅՄԱՆՆԵՐ
1. Conditions Precedent under the Developer's responsibility shall include:	1. Կառուցապատողի պատասխանատվության ներքո գտնվող Հետաձգող Պայմանները ներառում են՝
1.1 true and complete and updated copies of the memorandum and articles of association of the Developer;	1.1. Կառուցապատողի Հիմնադիր Պայմանագրի և Կանոնադրության վերջին խմբագրությունների ճիշտ պատճենները,
1.2 true and complete copies of resolutions adopted by the Developer's board of directors authorising the execution, delivery and performance by the Developer of this Agreement and each of the other Project Documents, certified by an authorised representative of the Developer;	1.2. Կառուցապատողի կողմից սույն Պայմանագրի, ինչպես նաև յուրաքանչյուր այլ Ծրագրի Փաստաթղթի կնքումը, ներկայացումը և կատարումը թույլատրող Կառուցապատողի տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումների ճիշտ պատճենները՝ վավերացված Կառուցապատողի լիազորված ներկայացուցչի կողմից,
1.3 true and complete copies of resolutions adopted by the Sponsor's board of directors authorising the execution, delivery and performance by the Sponsor of this Agreement, certified by an authorised representative of the Sponsor;	1.3. Հովանավորի կողմից սույն Պայմանագրի կնքումը, ներկայացումը և կատարումը թույլատրող Հովանավորի տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումների ճիշտ պատճենները՝ վավերացված Հովանավորի լիազորված ներկայացուցչի կողմից,
1.4 true and complete copy of the shareholders' agreement for the Developer;	1.4. Կառուցապատողի բաժնետերերի միջև համաձայնագրի ճիշտ պատճենը,
1.5 true and complete copies of all principal Financing Documents executed by the Developer and the Financing Parties, where	1.5. Կառուցապատողի և Ֆինանսավորման Կողմերի կողմից ձևակերպված բոլոր հիմնական

appropriate, certified by an authorised representative of the Developer; and	Ֆինանսավորման Փաստաթղթերի ճիշտ պատճենները՝ անհրաժեշտության դեպքում վավերացված Կառուցապատողի լիազորված ներկայացուցչի կողմից, և
1.6 a certificate from the Developer in form and substance satisfactory to the Government confirming that the loan agreements included in the Financing Documents have been signed.	1.6. Կառուցապատողի կողմից տրված փաստաթուղթ՝ Կառավարության համար բավարար ձևով և բովանդակությամբ, որով հաստատվում է, որ Ֆինանսավորման Փաստաթղթերում ներառված փոխառության/վարկային պայմանագրերը կնքվել են:
2. Conditions Precedent under the Government's responsibility shall include:	2. Կառավարության պատասխանատվության ներքո գտնվող Հետաձգող Պայմանները ներառում են՝
2.1 true and complete copy of the Direct Agreement executed by the Government in relation to this Agreement;	2.1. սույն Պայմանագրի կապակցությամբ Կառավարության կողմից կնքված Ուղղակի Պայմանագրի ճիշտ պատճենը,
2.2 issuance of the Licence, approval of it by PSRC and full incorporation of the Tariff Schedule into the Licence;	2.2. Լիցենզիայի տրամադրումը և հաստատումը ՀԾԿՀ-ի կողմից և Սակագնային Պլանի ամբողջությամբ ներառումը Լիցենզիայում,
2.3 the Land Transfer Agreement executed by the Owner and the Developer;	2.3. Հողամասի Փոխանցման Պայմանագիր՝ կնքված Սեփականատիրոջ և Կառուցապատողի կողմից,
2.4 the Expert Commission appointed by the Government and, if applicable, regulations regulating the activities of such commission approved;	2.4. Կառավարության կողմից Փորձագիտական Հանձնաժողովի նշանակում և, կիրառելի լինելու դեպքում, այդ հանձնաժողովի գործունեությունը կարգավորող կանոնակարգերի ընդունում,
2.5 a legal opinion from the Ministry of Justice of the Republic of Armenia, in form and substance satisfactory to the Financing Parties;	2.5 Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության իրավաբանական կարծիքը, որի ձևն ու բովանդակությունը բավարար են Ֆինանսավորման Կողմերի համար,
2.6 a letter from the Ministry of Justice of the Republic of Armenia confirming that each of the counterparties to the Power Purchase Agreement are obliged under Applicable Laws to enter into their respective agreements with the Developer; and	2. 6. գրություն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից, որով հաստատվում է, որ Էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագրի կոնտրագենտներից յուրաքանչյուրը Կիրառելի Օրենքներով

	պարտավորված է կնքել համապատասխան պայմանագրերը Կառուցապատողի հետ,և
2.7 registration of each Project Document capable of being so registered (including the registration of the PPA by PSRC).	2.7 գրանցման ենթակա յուրաքանչյուր Ծրագրի Փաստաթղթի գրանցումը (այդ թվում՝ ՀԾԿՀ-ի կողմից ԷԳՊ-ի գրանցումը):
3. Conditions Precedent under the Government's and Developer's joint responsibility shall include:	3. Կառավարության ու կառուցապատողի համատեղ պատասխանատվության ներքո գտնվող Հետաձգող Պայմանները ներառում են՝
3.1 Power Purchase Agreement and entry by the Offtaker into a direct agreement in respect of the Power Purchase Agreement in form and substance satisfactory to the Financing Parties; and	3.1. Էլեկտրական էներգիայի Գնման Պայմանագիրը և Գնորդի կողմից էներգիայի Գնման Պայմանագրի վերաբերյալ այնպիսի ուղղակի պայմանագրի կնքումը, որի ձևն ու բովանդակությունը բավարար են Ֆինանսավորման Կողմերի համար. և
3.2 appointment of Independent Engineer.	3.2. Անկախ Ինժեների նշանակումը:

APPENDIX 3 COMPENSATION ON TERMINATION	ՀԱՎԵԼՎԱԾ ՅՀԱՏՈՒՑՈՒՄ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ
1. Government Event of Default Purchase Price	1. Կառավարության Կետանցի Դեպքի Գնման Գինը
Upon termination of the Agreement on account of Government Event of Default, the Government shall have the obligation to purchase the Plant at a price, calculated as a lump sum equal to, whichever is lower, of the below (and subject to the Direct Agreement):	Կառավարության Կետանցի Դեպքով պայմանավորված Պայմանագրի դադարեցման պարագայում, Կառավարությունը պարտավորություն կունենա գնելու Կայանը՝ ստորև բերվող հետևյալ մեծություններից փոքրին հավասար գնով, որը հաշվարկվում է որպես միանվագ վճարում (Ուղղակի Պայմանագրի պահպանմամբ)՝
(a) a lump sum equivalent to:	a) միանվագ գումար, որը համարժեք է՝
<ul style="list-style-type: none"> 915,000 USD per MW * [Contracted Capacity] * [1 - (0.05 * Number of years of operation of the Plant by the Developer)]; 	<ul style="list-style-type: none"> 915,000 ԱՄՆ դոլար՝ մեզավատտի հաշվով * [Պայմանագրային Հզորություն] * [1 - (0.05 * Կառուցապատողի կողմից Կայանի շահագործման տարիների թիվը)],
PLUS	ԳՈՒՄԱՐԱԾ
<ul style="list-style-type: none"> VAT (if applicable); 	<ul style="list-style-type: none"> ԱԱՀ -ն (եթե կիրառելի է),
PLUS	ԳՈՒՄԱՐԱԾ
<ul style="list-style-type: none"> Transfer Costs; 	<ul style="list-style-type: none"> Փոխանցման Ծախսեր;
Note: In case of termination of the Agreement before Commercial Operation Date, the Number of years of operation of Plant by the Developer shall be taken as zero.	Ծանոթագրություն՝ Մինչև Կոմերցիոն Շահագործման Օրը սույն Պայմանագրի դադարեցման դեպքում, Կառուցապատողի կողմից Կայանի շահագործման տարիների թիվը պետք է ընդունվի հավասար զրոյի:
(b) a lump sum equivalent to:	b) Միանվագ գումար, որը համարժեք է՝
<ul style="list-style-type: none"> Senior Debt outstanding at the date of payment of the Purchase Price; 	<ul style="list-style-type: none"> Գնման Գնի վճարման օրվա դրությամբ Ավագ Պարտքի՝ վճարման ենթակա գումարին,
PLUS	ԳՈՒՄԱՐԱԾ
<ul style="list-style-type: none"> Committed Equity *1.12; 	<ul style="list-style-type: none"> Ներդրված Կապիտալ *1.12,
PLUS	ԳՈՒՄԱՐԱԾ
<ul style="list-style-type: none"> Transfer Costs; 	<ul style="list-style-type: none"> Փոխանցման Ծախսերը,
MINUS	ՀԱՆԱԾ

- Insurance proceeds payable to the Developer in an amount for which the insurer has accepted liability to pay the Developer and is due to pay within 60 days;

- Կառուցապատողին վճարման ենթակա ապահովագրական հատուցումը՝ այն գումարի չափով, որի համար ապահովագրողն ընդունել է Կառուցապատողին վճարելու պարտավորությունը, և որը ենթակա է վճարման 60 օրվա ընթացքում;

provided that in respect of the component equal to Committed Equity *1.12 (but not any other component of the Purchase Price), the Purchase Price shall be reduced by 1 % for each percentage point of CUF below 28.25%*(1-DFn), where DFn is the Degradation Factor of the year n being the year when the payment is made as listed in the table below, calculated on the date of termination, unless such reduction was caused or contributed to by the Government Event of Default (and provided that if such amount would be less than zero, it shall be deemed to be zero),

պայմանով, որ Ներդրված Կապիտալ*1.12 բաղադրիչի մասով (բայց ոչ Գնման Գնի որևէ այլ բաղադրիչի մասով) Գնման Գինը պետք է 1%-ով նվազեցվի 28.25%*(1-DFn)-ից ցածր ՀՕԳ-ի յուրաքանչյուր տոկոսի համար, որտեղ DFn-ն այն ոտարվա դեգրադացման ցուցանիշն է, որում կատարվում է վճարումը, ինչպես ներկայացված է ներքոնշյալ աղյուսակում՝ հաշվարկված դադարեցման ամսաթվին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի նվազեցումը առաջացել է Կառավարության Կետանցի Դեպքի հետևանքով կամ Կառավարության Կետանցի Դեպքը նպաստել է դրան (և պայմանով, որ եթե այդպիսի գումարը զրոյից փոքր լինի, ապա այն կհամարվի զրո)՝

Operation Year	DF
year 1	3%
year 2	3.5%
year 3	4.0%
year 4	4.5%
year 5	5.0%
year 6	5.5%
year 7	6.0%
year 8	6.5%
year 9	7.0%
year 10	7.5%
year 11	8.0%
year 12	8.5%
year 13	9.0%
year 14	9.5%
year 15	10.0%
year 16	10.5%

Շահագործման տարի	DF
տարի 1	3%
տարի2	3.5%
տարի3	4.0%
տարի4	4.5%
տարի5	5.0%
տարի6	5.5%
տարի7	6.0%
տարի8	6.5%
տարի9	7.0%
տարի10	7.5%
տարի 11	8.0%
տարի 12	8.5%

year 17	11.0%	տարի 13	9.0%
year 18	11.5%	տարի 14	9.5%
year 19	12.0%	տարի 15	10.0%
year 20	12.5%	տարի 16	10.5%
		տարի 17	11.0%
		տարի 18	11.5%
		տարի 19	12.0%
		տարի 20	12.5%
the "Government Event of Default Purchase Price".		«Կառավարության Կետանցի Դեպքի Գնման Գին»:	
2. Developer Event of Default Purchase Price		2. Կառուցապատողի կետանցի դեպքում Գնման Գինը	
If the PPA or the Agreement is terminated following a Developer Event of Default, the Government shall have the right, but not the obligation to purchase the Plant. If the Government exercises its option to purchase the Plant then it shall pay to the Developer a lump sum equivalent to:		Եթե ԷԳՊ-ն կամ Պայմանագիրը լուծվել է Կառուցապատողի կետանցի դեպքի հետևանքով, Կառավարությունը իրավունք ունի, բայց պարտավոր չէ, գնել Կայանը: Եթե Կառավարությունն օգտվում է Կայանը գնելու իրավունքից, ապա պետք է Կառուցապատողին վճարի միանվագ գումար, որը հավասար է՝	
<ul style="list-style-type: none"> Senior Debt outstanding at the date of payment of the Purchase Price; 		<ul style="list-style-type: none"> Գնման Գնի վճարման օրվա դրությամբ Ավագ Պարտքի՝ վճարման ենթակա գումարին, 	
PLUS		ԳՈՒՄԱՐԱԾ	
<ul style="list-style-type: none"> Committed Equity; 		<ul style="list-style-type: none"> Ներդրված Կապիտալը, 	
MINUS		ՀԱՆԱԾ	
<ul style="list-style-type: none"> an amount equal to USD 2,500,000 (or if this would be less than zero, this figure shall be deemed to be zero); 		<ul style="list-style-type: none"> 2,500,000 ԱՄՆ դոլարին հավասար գումար (կամ եթե այդպիսի գումարը զրոյից փոքր լինի, ապա այս թիվը կհամարվի զրո), 	
PLUS		ԳՈՒՄԱՐԱԾ	
<ul style="list-style-type: none"> Transfer Costs, 		<ul style="list-style-type: none"> Փոխանցման Ծախսերը՝ 	
the "Developer Event of Default Purchase Price".		«Կառուցապատողի Կետանցի Դեպքի Գնման Գին»:	
Such price shall be paid by the Government within six (6) months from the date of the		Կառավարությունն այս գինը պետք է վճարի այդ գնով Կայանը գնելու իր իրավունքն իրականացնելու մասին Կառավարության	

decision by the Government to exercise its option to purchase the Plant at this price.	որոշման ամսաթվից հետո վեց (6) ամսվա ընթացքում:
3. Force Majeure Event Purchase Price	3. Անհաղթահարելի Ուժի Դեպքի Գնման Գինը
If the Agreement is terminated due to a Prolonged Force Majeure Event, pursuant to Article 17.6 of the Agreement, the Government shall have the obligation to purchase the Plant at a price calculated as a lump sum in the following manner:	Եթե Պայմանագիրը լուծվել է Տևական Անհաղթահարելի Ուժի Դեպքի հետևանքով, Պայմանագրի 17.6 Հոդվածին համապատասխան, Կառավարությունը պարտավորություն կունենա գնելու Կայանը, հետևյալ կարգով հաշվարկված գնով՝ որպես միանվագ գումար՝
<ul style="list-style-type: none"> Senior Debt outstanding at the date of payment of the Purchase Price; 	<ul style="list-style-type: none"> Գնման Գնի վճարման օրվա դրությամբ Ավագ Պարտքի՝ վճարման ենթակա գումարին,
PLUS	ԳՈՒՄԱՐԱԾ
<ul style="list-style-type: none"> Transfer Costs; 	<ul style="list-style-type: none"> Փոխանցման Ծախսերը;
MINUS	ՀԱՆԱԾ
<ul style="list-style-type: none"> Insurance proceeds payable to the Developer in an amount for which the insurer has accepted liability to pay the Developer and is due to pay within 60 days, 	<ul style="list-style-type: none"> Կառուցապատողին վճարման ենթակա ապահովագրական հատուցումը՝ այն գումարի չափով, որի համար ապահովագրողը ընդունել է Կառուցապատողին վճարելու պարտավորությունը, և որը ենթակա է վճարման 60 օրվա ընթացքում:
the "Force Majeure Event Purchase Price".	«Անհաղթահարելի Ուժի Դեպքի Գնման Գին»:
4. Adverse Condition Event Purchase Price	4. Անբարենպաստ Պայմանի Դեպքի Գնման Գինը
(a) If the Agreement is terminated due to a Prolonged Adverse Condition Event in accordance with Article 17.6, the Government shall have the obligation to purchase the Plant at a price equal to the lump sum calculated in accordance with sub-paragraph (b) of paragraph 1 (<i>Government Event of Default Purchase Price</i>), the "Adverse Condition Event Purchase Price".	(a) Եթե Պայմանագիրը լուծվել է Տևական Անբարենպաստ Պայմանի Դեպքի հետևանքով, Պայմանագրի 17.6 Հոդվածին համապատասխան, Կառավարությունը պարտավորություն կունենա գնելու Կայանը այն գնով, որը հավասար է 1-ին պարբերության (<i>Կառավարության Կեղևնցի Դեպքի Գնման Գին</i>) (b) ենթապարբերության համաձայն հաշվարկվող միանվագ գումարին, «Անբարենպաստ Պայմանի Դեպքի Գնման Գին»:

<p>5. Calculation of AMD amount</p> <p>Any payment of the Purchase Price shall be in AMD and, in respect of any component of the Purchase Price which is denominated in US Dollars (including the Senior Debt), such amount to be paid in respect of such component shall be calculated using the Official Exchange Rate (AMD:USD) prevailing on the date payment is made of the relevant Purchase Price.</p>	<p>5. ՀՀ դրամով գումարի հաշվարկը</p> <p>Գնման Գնի ցանկացած վճարում կատարվում է ՀՀ դրամով, և Գնման Գնի այն բաղադրիչի առնչությամբ, որը գնանշված է Դոլարով (այդ թվում՝ Ավագ Պարտքը), այդ բաղադրիչի մասով վճարման ենթակա գումարը հաշվարկվում է Պաշտոնական Փոխարժեքի հիման վրա (ՀՀ դրամ: ԱՄՆ դոլար)՝ այն օրվա դրությամբ, երբ վճարվում է համապատասխան Գնման Գինը:</p>
<p>6. Timing of payment</p> <p>Except as provided in paragraph 2 above, the Government shall pay the Purchase Price to the Developer on or before the date falling 12 months after the date of the Termination Notice.</p>	<p>6. Վճարման ժամկետները</p> <p>Բացառությամբ վերոնշյալ 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքի՝ Կառավարությունը Կառուցապատողին է վճարում Գնման Գինը Դադարեցման Ծանուցման ամսաթվից 12 ամիս հետո ընկնող ամսաթվին կամ մինչև այդ ամսաթիվը:</p>
<p>7. No set-off or withholding</p> <p>The payment of the Purchase Price shall be made without (and free and clear of any deduction for) set-off or counterclaim. The payment of the Purchase Price shall be made without any deduction or withholding for or on account of tax, unless any such deduction or withholding is required by law and, if any such deduction or withholding is required by law, the amount of the payment due from the Government shall be increased to an amount which (after making any withholding or deduction) leaves an amount equal to the payment which would have been due if no withholding or deduction had been required.</p>	<p>7. Հաշվանցման կամ պահման բացառումը</p> <p>Գնման Գնի վճարումը կատարվում է առանց հաշվանցման կամ հակընդդեմ պահանջի (և առանց այդ նպատակներով որևէ նվազեցման): Գնման Գնի վճարումը կատարվում է առանց հարկման նպատակով որևէ նվազեցման կամ պահման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի նվազեցումը կամ պահումը պահանջվում է օրենքով, և եթե այդպիսի նվազեցումը կամ պահումը պահանջվում է օրենքով, ապա Կառավարության կողմից վճարման ենթակա գումարը պետք է ավելացվի այնպես, որ (ցանկացած նվազեցում կամ պահում կատարելուց հետո) ապահովվի այն գումարը, որը կվճարվեր, եթե չպահանջվեր որևէ նվազեցում կամ պահում:</p>

APPENDIX 4 PROJECT SCHEDULE
**ՀԱՎԵԼՎԱԾ 4ԾՐԱԳՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

ID	Task Name	Duration	Start	Finish
1	Appendix 4 Activities	1529 days	25/04/18	01/07/22
2	Signing date of this Agreement	0 days	18/07/18	18/07/18
3	Conditions Precedent Deadline as per this Agreement	0 days	01/07/20	01/07/20
4	Financial Close Deadline as per this Agreement	0 days	01/07/20	01/07/20
5	Selection of EPC Contractor	157 days	25/04/18	28/09/18
6	Approvals, clearances, permits, licenses and authorisations	0 days	01/07/20	01/07/20
7	Detailed Engineering and Design	165 days	28/09/20	11/03/21
8	Civil engineering	30 days	28/09/20	27/10/20
9	Mechanical engineering	60 days	13/10/20	11/12/20
10	Electrical Engineering	90 days	12/12/20	11/03/21
11	Substation engineering	70 days	28/09/20	06/12/20
12	Evacuation line engineering	60 days	28/09/20	26/11/20
13	Construction	730 days	02/07/20	01/07/22
14	Project Site preparation/ Mobilization of EPC at Project Site	15 days	06/08/21	20/08/21
15	Trackers delivery	137 days	12/03/21	26/07/21
16	Modules delivery	182 days	11/05/21	08/11/21
17	Inverters delivery	296 days	21/04/21	10/02/22
18	Substation main transformer delivery	350 days	08/10/20	22/09/21
19	Project Site execution	330 days	06/08/21	01/07/22
20	Interconnection works	247 days	11/04/21	13/12/21
21	Commissioning PV Plant	30 days	02/06/22	01/07/22
22	PR test	5 days	27/06/22	01/07/22
23	Completion of facilities	0 days	01/07/22	01/07/22
24	Scheduled COD	0 days	01/07/22	01/07/22
25				
26	Development phase	799 days	25/04/18	01/07/20
27	kom	0 days	25/04/18	25/04/18
28	GSA execution	9 days	18/07/18	26/07/18
29	Payment of Project Preparatory Fee	0 days	18/07/18	18/07/18
30	Fulfilment of Performance Bank Guarantee	0 days	18/07/18	18/07/18
31	Transfer of Local Area Development Fee	0 days	18/07/18	18/07/18
32	Signing of GSA	0 days	18/07/18	18/07/18
33	Transfer of land title and physical possession to the Project Company	0 days	30/07/18	30/07/18
34	Application to PRSC for a license; Issue of License by PRSC	57 days	29/08/18	24/10/18
35	Signing of PPA with ENA	0 days	22/06/20	22/06/20
36	Authorizations and Permitting	641 days	27/07/18	27/04/20
37	FC Conditions Precedents	0 days	01/07/20	01/07/20

38	Approvals clearances	0 days	01/07/20	01/07/20
39	Technical phase	1529 days	25/04/18	01/07/22
40	Soil Surveys	70 days	25/04/18	03/07/18
50	Equipment selection	555 days	25/04/18	31/10/19
94	Selection of EPC Contractor	157 days	25/04/18	28/09/18
106	Due Diligence	642 days	29/09/18	01/07/20
107	Technical DD	86 days	14/09/19	08/12/19
108	ESMS DD	60 days	10/09/19	08/11/19
109	Insurance DD	15 days	29/09/18	13/10/18
110	Legal DD	65 days	15/08/19	18/10/19
111	Tax/Accounting DD	65 days	15/08/19	18/10/19
112	Model Audit	65 days	15/08/19	18/10/19
113	DD complete	0 days	08/12/19	08/12/19
114	Financial Close	8 days	24/06/20	01/07/20
115	Construction PV Plant	730 days	02/07/20	01/07/22
116	Owners Engineers appointment	88 days	02/07/20	27/09/20
133	Detailed Engineering and Design	165 days	28/09/20	11/03/21
140	Procurement	491 days	08/10/20	10/02/22
145	Interconnection works	247 days	11/04/21	13/12/21
150	Works on Project Site and Final permits	330 days	06/08/21	01/07/22

ID	Task Name	Duration	Start	Finish
1	Հավելված 4 Գործողություններ	1529 days	25/04/18	01/07/22
2	Մույն Պայմանագրի ստորագրման ամսաթիվը	0 days	18/07/18	18/07/18
3	Մույն Պայմանագրով սահմանված՝ Հետաձգող Պայմանների Վերջնաժամկետը	0 days	01/07/20	01/07/20
4	Մույն Պայմանագրով սահմանված՝ Ֆինանսավորման Ամփոփման Վերջնաժամկետը	0 days	01/07/20	01/07/20
5	ՆԳԿ Կապալառուի ընտրություն	157 days	25/04/18	28/09/18
6	Հաստատումներ, թույլտվություններ, լիցենզիաներ եւ վավերացում	0 days	01/07/20	01/07/20
7	Մանրամասն ինժեներական նկարագիր եւ նախագիծ	165 days	28/09/20	11/03/21
8	Քաղաքաշինական մասի նախագծում	30 days	28/09/20	27/10/20
9	Մեխանիկական մասի նախագծում	60 days	13/10/20	11/12/20
10	Էլեկտրական մասի նախագծում	90 days	12/12/20	11/03/21
11	Ենթակայանի նախագծում	70 days	28/09/20	06/12/20
12	Էլեկտրահաղորդման գծի նախագծում	60 days	28/09/20	26/11/20
13	Շինարարություն	730 days	02/07/20	01/07/22
14	Ծրագրի Տարածքի նախապատրաստում/ ՆԳԿ մոբիլիզացիա Ծրագրի Տարածքում	15 days	06/08/21	20/08/21
 - (b) the Guarantor has duly executed and delivered this Guarantee, and this Guarantee constitutes its legal, valid and binding obligation enforceable in accordance with its terms except as the enforceability thereof may be limited by applicable bankruptcy, insolvency, moratorium or other similar laws affecting the enforcement of creditors' rights generally and by general equitable principles;
 - (c) neither the execution, delivery or performance by the Guarantor of this Guarantee, nor compliance by it with the terms and provisions hereof will: (i) contravene any material provision of any Applicable Law; (ii) conflict or be inconsistent with or result in any breach of any of the material terms, covenants, conditions or provisions of, or constitute a default under any agreement, contract or instrument to which the Guarantor is a party of by which it or any of its property or assets is bound; or (iii) violate any provision of the Guarantor's constituent documents;
 - (d) no order, consent, approval, license, authorisation or validation of, or filing, recording or registration with, except as have been obtained or made prior to the date hereof, or exemption by, any governmental or public body or authority, or any subdivision thereof, is required to authorise, or is required in connection with: (i) the execution, delivery and performance of this Guarantee; or (ii) the legality, validity, binding effect or enforceability of this Guarantee; and
 - (e) this Guarantee will be enforceable when presented for payment to the Guarantor's branch in [insert location] at [insert the address of the Guarantor bank].

10. This Guarantee is a continuing one and all liabilities to which it applies or may apply under the terms hereof shall be conclusively presumed to have been created in reliance hereon. No failure or delay on the part of Government in exercising any right, power or privilege hereunder and no course of dealing between Government and the Guarantor, or the Developer, shall operate as a waiver thereof, nor shall any single or partial exercise of any right, power or privilege hereunder preclude any other or further exercise thereof or the exercise of any other right, power or privilege
11. The rights, powers and remedies expressly provided in this Guarantee are cumulative and not exclusive of any rights, powers or remedies which Government would otherwise have. No notice to or demand on the Guarantor in any case shall entitle the Guarantor to any other further notice or demand in similar or other circumstances or constitute a waiver of the rights of Government to any other or further action in any circumstances without notice or demand.
12. If any one or more of the provisions contained in this Guarantee are or become invalid, illegal or unenforceable in any respect, the validity, legality and enforceability of the remaining provisions shall not in any way be affected or impaired thereby, and the Guarantor shall enter into good faith negotiations with Government to replace the invalid, illegal or unenforceable provision.
13. The Guarantor hereby agrees to execute and deliver all such instruments and take all such actions as may be necessary to make effective fully the purposes of this Guarantee.
14. This Guarantee may be executed in one or more duplicate counterparts, and when executed and delivered by the Guarantor and Government shall constitute a single binding agreement.
15. Government may assign or transfer all or any part of its interest herein to any other person with prior written notice to the Guarantor. The Guarantor shall not assign or transfer any of its rights or obligations under this Guarantee.
16. All documents arising out of or in connection with this Guarantee shall be served:

(a) upon Government, at

[insert address of Government]

(b) upon the Guarantor, at *[insert address]*.

17. Any demand, notice or communication would have been deemed to have been duly served:

- (a) if delivered by hand, when left at the proper address of services; and
- (b) if given or made by pre-paid registered post or facsimile, when received.

18. Either party may change the above address by prior written notice to the other party.

19. This Guarantee shall be governed by, and construed in accordance with, the laws of Armenia. The governing language of this Guarantee shall be English and any dispute under this Guarantee shall be subject to the exclusive jurisdiction of the competent courts of Armenia.

20. Notwithstanding anything contained hereinabove:

- (a) our liabilities under this Guarantee shall not exceed USD _____ (USD _____ only);
- (b) this Performance Bank Guarantee shall be valid up to _____; and
- (c) We are liable to pay Guaranteed Amount or any part thereof under this Performance Bank Guarantee only if we receive (i.e. if you serve upon us) a written claim or demand on or before _____, thereafter we shall be discharged from all liabilities under this guarantee irrespective of whether the original bank guarantee is returned to us or not.

IN WITNESS WHEREOF the Guarantor has set its hands hereunto on the Day, Month and year first hereinabove written.

Signed and delivered by [*insert name of Bank*] Bank by hand

Of Mr. [*insert name of signatory*]

its [*insert designation*] and duly authorised representative

authorised by [Power of Attorney dated [*insert date*]] OR [Board resolution dated [*insert date*]].

NOTES:

- (1) *The bank guarantee should contain the name, designation of the officer(s) signing*

the guarantee.

- (ii) *The address, telephone number and other details of the Head Office of the Bank as well as of issuing Branch should be mentioned on the covering letter of issuing Branch.*

**Կատարման Բանկային Երաշխիքի Ձևաչափ
[ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՆՔՎԱԾ ՁԵՎԱԹՂԹԻ ՎՐԱ]**

ԵՐԱՇԽԻՔԻ ՍՈՒՅՆ ՓԱՏՏԱԹՈՒՂԹԸ ստորագրված է [լրացրեք ամիսը և տարին] թ.-ի [լրացրեք օրը] օրը [լրացրեք վայրը] [լրացրեք բանկի անունը] կողմից, որի գլխավոր գրասենյակը/գրանցված գրասենյակը գտնվում է [լրացրեք փաստացի] (այսուհետ՝ **Երաշխավոր**, որը պետք է ներառի նրա հիմնական հաջորդներին, նշանակված անձանց և թույլատրված փոխարինողներին, եթե դա չի հակասում սույնի առարկային կամ համատեքստին),

Ի ՕԳՈՒՏ

[Լրացրեք Կառավարության անունը] որի գլխավոր գրասենյակը գտնվում է [լրացրեք փաստացի] (այսուհետ՝ Կառավարություն, որը պետք է ներառի նրա հիմնական հաջորդներին և թույլատրված նշանակված անձանց, եթե դա չի հակասում սույնի առարկային կամ համատեքստին),

ՔԱՆԻ ՈՐ՝

- A. Կառավարությունը առաջարկում է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ (այսուհետ՝ Պայմանագիր) կնքել [լրացրեք անունը] հետ, որի [գրանցված/գլխավոր] գրասենյակը գտնվում է [•] [այսուհետ՝ Կառուցապատող, որը պետք է ներառի նրա հիմնական հաջորդներին և թույլատրված նշանակված անձանց, եթե դա չի հակասում սույնի առարկային կամ համատեքստին)։
- B. Պայմանագրի 11.2-րդ հոդվածի համաձայն, Կառուցապատողը պարտավոր է անվերապահորեն, անվերադարձ և ցպահանջ Կառավարությանը տրամադրել 1,620,000 ԱՄՆ դոլարի չափով բանկային երաշխիք, որը երաշխավորում է Պայմանագրի ներքո Կառուցապատողի պարտավորությունների պատշաճ կատարումը, ներառյալ Կառուցապատողի կողմից Կառավարությանը վճարման ենթակա ցանկացած գումարները, որոնք Կառուցապատողը պարտավոր է վճարել Պայմանագրի ներքո։
- C. Կառուցապատողի պահանջով և բավարար դիտարկման ապահովման համար Երաշխավորը համաձայն է տրամադրել անվերապահ, անվերադարձ և ցպահանջ բանկային երաշխիք, ներառյալ ցանկացած գումար, որ Կառուցապատողը պարտավոր է վճարել Պայմանագրի համաձայն՝ Կառուցապատողի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարման համար։

ՀԵՏԵՎԱԲԱՐ ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՎԿԱՅՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

1. Սույնում օգտագործված, բայց չսահմանված մեծատառով գրված եզրույթները պետք է ունենան Պայմանագրով դրանց վերագրված իմաստը:
2. Երաշխավորը՝ որպես հիմնական պարտապան և ոչ միայն որպես երաշխավոր, սույնով անդառնալիորեն և անվերապահորեն երաշխավորում և ապահովում է Կառավարությանը վճարել ամբողջ գումարը վերջին իսկ ողմից գրավոր պահանջներ կայացնելուց անմիջապես հետո, պայմանավորված ցանկացած պահի, որոնք Կառուցապատողը պարտավոր է վճարել Կառավարությանը՝ իր կողմից Պայմանագրի շրջանակներում ժամկետի ընթացքում բոլոր պարտավորությունները պատշաճ և ժամանակին չկատարելու դեպքում (**Երաշխիք**), առանց որևէ առարկության, վերապահման, բողոքի կամ խնդրանքի՝ անմիջապես Կառավարությունից պահանջի ծանուցման ստացման դեպքում:

Երաշխիքը տրվում է Կառուցապատողից ստացված դիտարկմանը համապատասխան (որիստացումն ու փավարար լինելը սույնով հավաստվում է):

Երաշխավորը համաձայնում է, որ Երաշխիքի արժեքը միջտպահայանվի 1,620,000 ԱՄՆ դոլարի չափով (**Երաշխավորված Գումար**)

և կրճատվի միայն Կառավարության գրավոր ցուցումը ստանալուց հետո: Սույն Երաշխիքի ներքո կատարված վճարումների դեպքում Երաշխիքի գումարը պետք է ավտոմատ կերպով համալրվի մինչև ամբողջական Երաշխավորված Գումարը:

Երաշխավորը և ևս համաձայնում է, որ սույն Երաշխիքը չի սահմանափակում պահանջների քանակը, որը Կառավարությունը կարող է ներկայացնել Երաշխավորին, պայմանով, որ Երաշխավորի առավելագույն պատասխանատվությունը չպետք է գերազանցի Երաշխավորված Գումարը:

Սույնով կատարված ցանկացած վճարում պետք է կատարվի անվճար, առանց պահումների կամ որևէ ներկա կամ ապագա հարկի, նվազեցման կամ որևէ բնույթի կամ որևէ մեկի կողմից պահումներ ներկայացնելու, և եթե որևէ վճարման պահումը պահանջվում է ցանկացած Կիրառելի Օրենքով, Երաշխավորը պարտավոր է ենթարկվել այդ պահումների պարտավորություններին և վճարել այն պիսի իրացուցիչ գումար այդ վճարմանն առնչվող, որպեսզի Կառավարությունը ստանա ամբողջ գումարը, որը նախատեսված է սույն Երաշխիքով, առանց պահումների:

3. Երաշխավորը չպետք է միջոցներ ձեռնարկի Կառուցապատողի կողմից թույլ տրված խախտման կամ ձախողման հավաստիությունը, կամ Կառավարության կողմից կատարված պահանջի վավերականությունը ստուգելու ուղղությամբ և պետք է վճարի պահանջի մեջ նշված գումարը, անկախ որևէ հակասող իրավիճակից կամ Կառուցապատողի կամ որևէ այլ

անձի կողմից բարձրացված վեճից: Երաշխավորը պետք է կրի սույն կարգով սահմանված պարտավորություններն այնքան ժամանակ, քանի դեռ բոլոր նման պահանջները պատշաճ կերպով չեն բավարարվել կամ հանվել սույնով սահմանված պայմանների համաձայն:

4. Երաշխավորի պարտականությունները բացարձակ են և անվերապահ, անկախ Պայմանագրի արժեքից, իրական լինելուց, վավերությունից, օրինաչափությունից կամ կատարողականությունից կամ Կառուցապատողի անվճարունակությունից, սնանկացումից, վերակազմակերպումից, լուծարումից կամ Կառուցապատողի սեփականատիրոջ փոփոխությունից կամ Կառուցապատողի կողմից ներկայացված որևէ հանձնարարությունից կամ ցանկացած այլ հանգամանքից, որը հակառակ դեպքում կարող էր հանդիսանալ երաշխավորի հրաժարման կամ երաշխիքի պաշտպանության հիմք:

Ավելին, սույն Երաշխիքը որևէ կերպով պայմանական չէ կապված այնպիսի պահանջի հետ, ըստ որի Կառավարությունը առաջինը պետք է փորձի Կառուցապատողից կամ որևէ այլ անձից Երաշխավորված Գումարը ձեռք բերել կամ դիմել Երաշխավորված Գումարի վճարման ցանկացած այլ միջոցի:

5. Այս Երաշխիքը գործողության մեջ դնելու համար Կառավարությունն իրավասու է Երաշխավորին վերաբերել որպես հիմնական պարտապանի: Երաշխավորի պարտավորությունները, սույն Երաշխիքի համաձայն, չպետք է ենթարկվեն որևէ գործողության, բացթողման, խնդրի կամ գործի ազդեցությանը, որը այս դրույթի բացակայության դեպքում կնվազեցներ, կազատեր կամ կկանխեր Երաշխավորին Երաշխավորված Գումարի որևէ մասը ստանալուց, կամ կկանխեր կամ կնվազեցներ Երաշխավորված Գումարը ամբողջությամբ կամ մասամբ, անկախ Երաշխավորին կամ Կառավարությանը հայտնի կամ անհայտ լինելուց:

- (a) Կառուցապատողին կամ ցանկացած այլ անձի տրված ցանկացած ժամանակը կամ հրաժարումը, կամ միացումը,
- (b) Կառուցապատողի կամ որևէ այլ անձի անկարողությունը, լիազորությունների կամ իրավասությունների կամ իրավական անհատականության պակասը կամ բացակայությունը կամ Կառուցապատողի կամ որևէ այլ անձի լուծարումը կամ կարգավիճակի փոփոխումը,
- (c) Պայմանագրի ցանկացած փոփոխությունը, այնպես որ սույն Երաշխավորության մեջ Պայմանագրին հղումները ներառեն յուրաքանչյուր փոփոխություն,
- (d) Պայմանագրով ցանկացած Անձի ցանկացած պարտավորության անիրականալիությունը, անօրինականությունը կամ անվավերությունը, կամ սույն Երաշխիքով Երաշխավորի պարտավորությունների անիրականալիությունը, անօրինականությունը կամ անվավերությունը, կամ սույն Երաշխիքով կամ որևէ այլ փաստաթղթով որևէ Անձի պարտավորությունների անիրականալիությունը, անօրինականությունը կամ անվավերությունը, այնքանով, որ սույն Երաշխիքի ներքո գտնվող յուրաքանչյուր պարտավորություն ամբողջովին գործի որպես առանձին, շարունակական և հիմնական պարտավորություն, և պարտականությունները

համապատասխանաբար մեկնաբանվեն այնպես, կարծես անիրականալիություն, անօրինականություն կամ անվավերություն չի եղել,

- (e) Ժամկետի ընթացքում ցանկացած Երաշխավորի կամ այլ Անձի մասամբ կամ ամբողջությամբ ազատումը, որը հիմնական կամ երկրորդային պատասխանատվություն է կրում Կառուցապատողի պարտավորությունների կատարման, վճարման կամ պարտականությունների պահպանման համար, կամ ցանկացած երկարաձգումը, հրաժարումը կամ փոփոխությունը, որը կարող է ազատել որևէ Երաշխավորողի կամ Երաշխավորին, այլապես պարտականությունների կատարումից կամ հանգեցնել Երաշխավորված Գումարի վճարման անհնարինությանը,
 - (f) Պայմանագրի մասնակի կատարումը Կառուցապատողի կողմից, կամ Կառավարության ցանկացած ձախողումը՝ ժամանակին վճարելու կամ կատարելու Պայմանագրի որևէ պարտավորություն:
6. Եթե և այնքանով, որ որևէ պատճառով Կառուցապատողը սկսում է կամ սպառնում է սկսել սնանկության կամ վերակազմավորման ցանկացած ընթացակարգ կամ, եթե որևէ այլ պատճառով Կառուցապատողի կողմից պարտականությունների կատարումը կամ Երաշխավորված Գումարի վճարումը դառնում է կամ խելամտորեն սպասելի է, որ կդառնա անհնար, ապա Երաշխավորված Գումարը պետք է անհապաղ Երաշխավորի կողմից ցպահանջ վճարվի Կառավարությանը:
7. Քանի դեռ Կառուցապատողը պարտավոր է ցանկացած գումար վճարել Կառավարությանը, Երաշխավորը չպետք է կիրառի հետադարձ պահանջի որևէ իրավունք, կամ երաշխավորի պատկանող որևէ այլ իրավունք, կամ գործի դնի ցանկացած երաշխիք կամ այլ իրավունք կամ բողոք ընդդեմ Կառուցապատողի՝ կապված սույն Երաշխիքի շրջանակներում վերջինիս պատասխանատվության հետ կամ այլապես, կամ Կառուցապատողի կամ նման Կառավարության հետ մրցակցության մեջ գտնվող այլ անձի անվճարունակության կամ սնանկության շրջանակներում պահանջներ:
8. Սույն Երաշխիքը ուժի մեջ և ամբողջովին վավերական է սույն Երաշխիքի ամսաթվից մինչև *[ՄՈՒՏՔԱԳՐԵԼ ԱՄՍԱԹԻՎԸ]*: Չնայած վերոնշյալին, այս Երաշխիքը գործում է մինչև սույն Երաշխիքով վճարվող գումարները ամբողջությամբ վճարվեն, և Երաշխավորը դրա մասին գրավոր ծանուցում ստանա Կառավարությունից, նման դեպքում այդպիսի ծանուցումը անհապաղ պետք է տրվի:
9. Երաշխավորը ներկայացնում և երաշխավորում է Կառավարությանը, որ.
- (a) այն լիազորված է կնքելու, առաքելու և կատարելու սույն Երաշխիքի պայմանները և դրույթները և ձեռնարկել է անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ այդ Երաշխիքի կնքման, առաքման և կատարման համար,
 - (b) Երաշխավորը պատշաճ կերպով կնքել է և առաքել է սույն Երաշխիքը, և սույն Երաշխիքը հանդիսանում է իր օրինական, վավեր և պարտադիր պարտավորությունը Երաշխիքի պայմանների համաձայն, բացառությամբ, եթե դրա կատարումը կարող է սահմանափակվել կիրառելի սնանկության, անվճարունակության, մորատորիումի կամ այլ նմանօրինակ օրենքներով և ընդհանուր արդարության սկզբունքներով, որոնք ընդհանուր առմամբ ազդում են պարտատերերի իրավունքների իրականացմանը,

- (c) ո՛չ սույն Երաշխիքի Երաշխավորի կողմից ստորագրումը, առաքումը կամ իրականացումը, ո՛չ էլ Երաշխավորի կողմից սույնի պայմաններին և դրույթներին հետևելը (i) չեն հակասում ցանկացած Կիրառելի Օրենքի որևէ նյութական դրույթին, (ii) չեն հակասում կամ անհամապատասխան չեն կամ չեն հանգեցնում որևէ նյութական պայմանների, երաշխավորությունների կամ դրույթների որևէ խախտման կամ չեն հանգեցնում որևէ համաձայնագրի, պայմանագրի կամ գործիքի խախտման, որի կողմերից մեկն է հանդիսանում Երաշխավորը, որով նրա գույքը կամ ակտիվներից որևէ մեկը սահմանափակված է, կամ (iii) չեն խախտում Երաշխավորի հիմնադիր փաստաթղթերի ցանկացած դրույթը,
- (d) որևէ կարգ, համաձայնություն, հաստատում, լիցենզիա, թույլտվություն կամ վավերացում կամ կազմում, արձանագրում կամ գրանցում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ձեռք են բերվել կամ կատարվել մինչև սույն Երաշխիքի ամսաթիվը, կամ որևէ բացառություն կատարված ցանկացած պետական կամ հասարակական մարմնի կամ դրա ցանկացած ստորաբաժանման կողմից, պահանջված չէ կամ պահանջված չէ կապված i) սույն Երաշխիքի կնքման, առաքման և կատարման հետ, կամ (ii) սույն Երաշխիքի օրինականության, վավերության, պարտադիտության կամ կիրառելիության կամ դրա կապակցությամբ և
- (e) սույն Երաշխիքը պարտադիր ուժ կստանա այն ժամանակ, երբ այն գումարի վճարման համար կներկայացվի Երաշխավորի մասնաճյուղում *[լրացնել վայրը] [լրացրեք Երաշխավորի բանկի հասցեն]:*

10. Սույն երաշխիքը շարունակական է և բոլոր պարտավորությունները, որոնց նկատմամբ այն կիրառվում է կամ կարող է կիրառվել սույն պայմանների համաձայն, պետք է հստակորեն ենթադրվեն սույնի հիման վրա ստեղծված: Կառավարության կողմից սույն Երաշխիքի որևէ իրավունքը, իրավազորությունը կամ արտոնությունը իրականացնելու ձախողումը կամ հետաձգումը և Կառավարության և Երաշխավորի կամ Կառուցապատողի միջև որևէ գործարքը չպետք է դիտարկվի որպես սույնից հրաժարում, ինչպես նաև որևէ իրավունքի, լիազորության կամ արտոնության եզակի կամ մասնակի իրականացումը չի արգելի դրա հետագա կիրառումը կամ որևէ այլ իրավունքի, իրավազորության կամ արտոնության իրականացումը:

11. Սույն Երաշխիքով սահմանված իրավունքները, իրավազորություններն ու փոխհատուցման միջոցները կուտակային են և չեն բացառում այն իրավունքները, իրավազորություններն ու փոխհատուցման միջոցները, որոնք Կառավարությունը կունենար այլապես: Երաշխավորին ներկայացվող ոչ մի ծանուցում կամ պահանջ չի Երաշխավորի համար որևէ դեպքում չի առաջացնում իրավունք որևէ այլ լրացուցիչ ծանուցման կամ պահանջի ներկայացման, կամ Կառավարության որևէ այլ կամ հետագա գործողությունից իրավունքի հրաժարման՝ առանց ծանուցման կամ պահանջի:

12. Եթե սույն Երաշխիքի մեջ պարունակվող որևէ մեկ կամ մի քանի դրույթներ անվավեր են կամ ապօրինի կամ անիրականանալի որևէ առումով, ապա դրանք որևէ կերպով չեն ազդի կամ խաթարի մնացած դրույթների վավերությունը, օրինականությունը և կիրառելիությունը, և Երաշխավորը պետք է բարեխիղճ բանակցություններ վարի Կառավարության հետ՝ անվավեր, անօրինական կամ չկիրառվող դրույթը փոխարինելու համար:

13. Երաշխավորը սույնով համաձայնում է ստորագրել և առաքել բոլոր նման գործիքները և ձեռնարկել բոլոր այն գործողությունները, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի լիարժեքորեն կատարվեն սույն Երաշխիքի նպատակները:
14. Սույն Երաշխիքը կնքված է մեկ կամ ավելի կրկնօրինակներից, և Երաշխավորի և Կառավարության կողմից ստորագրվելուց և առաքվելուց հետո կկազմեն մեկ պարտադիր համաձայնագիր:
15. Կառավարությունը կարող է նշանակել կամ փոխանցել սույնով իրեն տրված իրավունքներն ամբողջությամբ կամ մասնակի ցանկացած այլ անձի, Երաշխավորին նախնական ծանուցում ուղարկելու միջոցով: Երաշխավորը չի կարող նշանակել կամ փոխանցել սույն Երաշխիքի որևէ իրավունք կամ պարտականություն:
16. Սույն Երաշխիքի հետ կապված կամ դրանից բխող բոլոր փաստաթղթերը պետք է հանձնվեն.

(a) Կառավարությանը

[լրացնել Կառավարության գրանվելու վայրը]

(b) Երաշխավորին *[լրացնել գրանվելու վայրը]*:

17. Ցանկացած պահանջ, ծանուցում կամ հաղորդակցություն կհամարվի պատշաճ կերպով հանձնված.
 - (c) եթե առաքվում է առձեռն, համապատասխան ծառայությունների հասցեով հանձնելու պահից և
 - (d) եթե առաքվել է նախապես վճարված գրանցված փոստով կամ ֆաքսիմիլով, ստացման պահից:
18. Կողմերից յուրաքանչյուրը կարող է փոխել վերը նշված հասցեն՝ մյուս կողմին նախապես գրավոր ծանուցելով:
19. Սույն Երաշխիքի վրա տարածվում է և այն մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան: Այս Երաշխիքի լեզուն պետք է լինի անգլերենը և այս երաշխիքի ներքո ցանկացած վեճ ենթակա է Հայաստանի իրավասու դատարանների բացառիկ իրավասությանը:
20. Անկախ այն ամենից, որոնք վերը նշվեցին

- (d) սույն Երաշխիքի ներքո մեր պարտավորությունները չպետք է գերազանցեն _____ ԱՄՆ դոլարը (ԱՄՆ դոլար _____ միայն),
- (e) սույն կատարողականի բանկային Երաշխիքը վավեր է մինչև _____ և
- (f) մենք պարտավոր ենք վճարել Երաշխավորված Գումարը կամ դրա որևէ մասը, սույն Կատարման Բանկային Երաշխիքի ներքո, միայն այն դեպքում, եթե մենք ստանանք (այսինքն, եթե դուք հանձնեք) գրավոր հայց կամ պահանջ, _____ օրը կամ դրանից առաջ, դրանից հետո մենք ազատվում ենք Երաշխիքի ներքո մեր ունեցած բոլոր պարտավորություններից, անկախ այն հանգամանքից, արդյոք բանկի սկզբնական Երաշխիքը վերադարձվում է մեզ, թե ոչ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՅՆԻ, Երաշխավորը. վերը նշված ամսաթվին ստորագրել է սույն Երաշխիքը:

Ստորագրվել և առաքվել է *[ըրաջրեք Բանկի անունը]* Բանկի կողմից ձեռքով

Պարոն/Տիկին *[ըրաջնել ստորագրողի անունը]*

[ըրաջնել պաշտոնը] և պատշաճ լիազորված ներկայացուցիչը

լիազորված *[ըրաջնել ամսաթիվը]* տրված Լիազորագրի ԿԱՄ *[ըրաջնել ամսաթիվը]* տրված Խորհրդի որոշման] կողմից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

- (i) Երաշխիքը պետք է ներառի Երաշխիքը ստորագրող պաշտոնյա անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը:
- (ii) Երաշխիքը թողարկող մասնաճյուղի գրության մեջ պետք է նշվի բանկի գլխամասի, ինչպես նաև Երաշխիքը թողարկող մասնաճյուղի գտնվելու վայրը, հեռախոսահամարները և այլ մանրամասներ:

APPENDIX 7 SPONSOR'S TECHNICAL AND FINANCIAL PROPOSALS	ՀԱՎԵԼՎԱԾ 7 ՀՈՎԱՆԱՎՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍՈՒԱԶԱՐԿՆԵՐ
--	---

APPENDIX 8 FORM OF ASSIGNMENT	ՀԱՎԵԼՎԱԾ 8ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԶԻՋՄԱՆ ԶԵՎԱԹՈՒՂԹ
-------------------------------	---------------------------------------

To: Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia
 Address:
 Email:

Ում՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
 Հասցե՝
 Էլ. փոստ՝

With a copy to: Government of the Republic of Armenia
 Address: Government House 1, Republic Square, Yerevan 0010, Armenia

Պատճենը՝ ՀՀ Կառավարություն
 Հասցե՝ ՀՀ, Երևան 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 1

Date: [●]

[●]թ.

NOTICE OF ACCEPTANCE

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՕՖԵՐՏԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Dear Sirs:	Հարգելի՛ գործընկեր,
Reference is made to the Government Support Agreement by and between the Government of the Republic of Armenia, as the Government, FRV Masrik CJSC, as the Developer, and Fotowatio Renewable Ventures B.V. – FSL Solar S.L., as the Sponsor, dated July 18, 2018, and as amended and restated as of [date] (the "Agreement"). Unless otherwise defined herein, terms defined in the Agreement shall have the same respective meanings when used in this Notice of Acceptance.	Սույնով հղում ենք կատարում 2018թ. -ի հուլիսի 18-ին ՀՀ Կառավարության (որպես Կառավարություն), «ԷֆԱրՎի Մասրիկ» ՓԲԸ-ի (որպես Կառուցապատող) և Ֆոտովատիո Ռեներյուաբլ Վենչրս Բի. Վի. - ԷֆԷսԷլ Սոլար Էս. Էլ. -ի (որպես Հովանավոր) միջև կնքված՝ Կառավարության Աջակցության Համաձայնագրին՝ [] թ. -ին կատարված բոլոր փոփոխություններով հանդերձ (այսուհետ՝ « Պայմանագիր »): Եթե այլ բան սահմանված չէ սույն ծանուցման մեջ, ապա Համաձայնագրում սահմանված

	եզրույթները սույն ծանուցման մեջ կիրառվում են նույն նշանակությամբ:
Pursuant to Article 10.1(c) of the Agreement, the Developer hereby notifies the Government of its acceptance of the Government's irrevocable offer to purchase any right of claim the Developer may, from time to time, have against the Offtaker under the PPA. This Notice of Acceptance specifically relates to a claim for <i>[insert the amount]</i> Armenian drams (the " Applicable Assigned Amount "). A copy of the PPA is attached to this Notice of Acceptance as Schedule A.	Պայմանագրի 10.1(c) կետով նախատեսված կարգով Կառուցապատողը սույնով Կառավարությանը տեղեկացնում է, որ ընդունում է ԷԳՊ-ի համաձայն Գնորդի նկատմամբ Կառուցապատողի ժամանակ առ ժամանակ ունեցած ցանկացած պահանջի իրավունքը գնելու Կառավարության անհետկանչելի օֆերտան: Սույն ծանուցումը մասնավորապես վերաբերում է <input type="checkbox"/> ՀՀ դրամ (այսուհետ՝ « Համապատասխան Զիջված Գումար ») Գնորդից պահանջելու իրավունքին: ԷԳՊ-ի օրինակը կցվում է սույն ծանուցմանը՝ որպես Հավելված Ա:
The Developer does not assume liability for non-payment or any other default on the part of the Offtaker.	Կառուցապատողը պատասխանատվություն չի ստանձնում և չի կրում Գնորդի կողմից Համապատասխան Զիջված Գումարը չվճարելու կամ այլ խախտում թույլ տալու համար:
The Developer undertakes to notify the Offtaker of this assignment as soon as practicable after the receipt by the Developer of full payment from the Government for the Applicable Assigned Amount.	Կառուցապատողը պարտավորվում է սույն ծանուցման համաձայն պահանջի զիջման մասին տեղեկացնել Գնորդին՝ Համապատասխան Զիջված Գումարի համար Կառավարության ամբողջ վճարումը Կառուցապատողի կողմից ստանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում:
This Notice of Acceptance is governed and shall be construed in accordance with the laws of Armenia.	Սույն ծանուցումը կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրության համաձայն:
Schedule B includes a computation showing how the Applicable Assigned Amount is calculated, together with supporting documents.	Հավելված Բ-ն ներառում է Համապատասխան Զիջված Գումարի հաշվարկը և հիմնավորող փաստաթղթերը:
The <input type="checkbox"/> language version controls.	<input type="checkbox"/> տարբերակը գերակայում է:

Sincerely,

Հարգանքով,

FRV Masrik CJSC
«ԷֆԱրվի Մասրիկ» ՓԲԸ

Schedule A to Notice
Ծանուցման հավելված A
Current PPA
Գործող ԷԳՊ

Schedule B to Notice

Ծանուցման հավելված B

Computation of Applicable Assigned Amount and Supporting Documentation

Համապատասխան Ձիջված Գումարի հաշվարկ և հիմնավորող փաստաթղթեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ»
 ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, «ՖՈՏՈՎԱՏԻՈ ՌԵՆՅՈՒԱԲԼ
 ՎԵՆՉՐՍ» ԷՍ. ԷԼ. - «ԷՖԵՍԷԼ ՍՈԼԱՐ» ԷՍ. ԷԼ.-Ի, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
 ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ, ՓՈՓՈԽՎԱԾ ԵՎ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԱԾ՝
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ
 ԿՆՔՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՂՂԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

DIRECT AGREEMENT	ՈՒՂՂԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
<p>THIS DIRECT AGREEMENT (including the schedules hereto) (the “Agreement”) is made on 2020, among:</p>	<p>ՍՈՒՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (ներառյալ կից հավելվածները) (այսուհետ՝ «Պայմանագիր») կնքվել է 2020թ.-ի - ին հետևյալ կողմերի միջև.</p>
<p>(A) THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA acting on behalf of the Republic of Armenia (the “Government”);</p>	<p>ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, որը գործում է ՀՀ անունից (այսուհետ՝ «Կառավարություն»),</p>
<p>(B) FRV MASRIK CJSC, a company incorporated and registered in the Republic of Armenia pursuant to Armenian law (with company number 58.120.1025778) and having its registered office at 1st Street, 12th Lane, No.2, Mets Masrik Community, 1618 Gegharkunik Marz (Region), Republic of Armenia (the “Developer”, which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns);</p>	<p>ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ ՓԲԸ, ՀՀ օրենքների համաձայն ՀՀ տարածքում հիմնադրված և գործող ընկերություն, գրանցման համարը՝ 58.120.1025778, իրավաբանական հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ 1618, Մեծ Մասրիկ համայնք, 1-ին փողոց, 12-րդ նրբ. Թիվ. 2 (այսուհետ՝ «Կառուցապատող», սույն եզրը կիրառելի է նաև վերջինիս իրավահաջորդների, ինչպես նաև իրավունքներ զիջելու ճանապարհով Կառուցապատողից իրավունքներ ձեռք բերած թույլատրելի անձանց նկատմամբ, եթե համատեքստից այլ բան չի բխում),</p>
<p>(C) FOTOWATIO RENEWABLE VENTURES S.L., a corporation existing under the laws of Spain, and having its principal place of business at C/Maria de Molina 40, 5^a Planta, 28006 Madrid, Spain, previously</p>	<p>ՖՈՏՈՎԱՏԻՈ ՌԵՆՅՈՒԱԲԼ ՎԵՆՉՐՍ ԷՍ. ԷԼ., Իսպանիայի օրենքների համաձայն գործող ընկերություն, գտնվելու վայրը՝ Իսպանիա, Մադրիդ 28006, Կայլե Մարիա դե Մոլինա 40, հարկ 5^a, նախկին անվանումը Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս Բի. Վի., հասցե՝ Նիդերլանդներ, Ամստերդամ 1079</p>

<p>known as Fotowatio Renewable Ventures B.V., with registered office at Prins Bernhardplein 200, 1079 JB Amsterdam, the Netherlands, but re-domiciled from the Netherlands to Spain as of the 2nd day January 2019 by virtue of public deed with number 6418 registered with the Mercantile Register of Spain (with company number B88276571) and FSL SOLAR S.L., a company incorporated under the laws of Spain with registered office at Calle Jenner 3-4, 28010 Madrid, Spain (with company number B84987452) (together the “Sponsor” and with the Developer each a “Developer Parties”, which expression shall, unless the context requires otherwise, include each of their successors and permitted assigns);</p>	<p>JB, Պրինս Բերնարդպլեյն 200, վերագրանցված Նիդերլանդներից Իսպանիա առ 2 հունվարի 2019 թ. Իսպանիայի առևտրային գրանցամատյանում 6418 համարով գրանցված հանրային հավաստագրի հիման վրա (ընկերության գրանցման համարը՝ Բ88276571) և ԷՖԵՍԷԼ ՍՈԼԱՐ ԷՍ. ԷԼ., Իսպանիայում հիմնադրված ընկերություն, գրանցված հասցեն՝ Իսպանիա, Մադրիդ 28010, Կայլե Յենե 3-4 (ընկերության համարը՝ Բ84987452) (այսուհետ միասին՝ «Հովանավոր», իսկ Կառուցապատողի հետ համատեղ հիշատակվելու դեպքում՝ «Կառուցապատող Կողմեր», սույն եզրերը կիրառելի են նաև նշված երկու ընկերությունների իրավահաջորդների, ինչպես նաև իրավունքներ զիջելու ճանապարհով նրանցից իրավունքներ ձեռք բերած թույլատրելի անձանց նկատմամբ, եթե համատեքստից այլ բան չի բխում)</p>
<p>(D) EUROPEAN BANK FOR RECONSTRUCTION AND DEVELOPMENT, an international organisation established by treaty (“EBRD”, a “Senior Lender” and a “Hedge Provider”);</p>	<p>ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ, միջազգային պայմանագրի հիման վրա ստեղծված միջազգային կազմակերպություն (այսուհետ՝ «ՎՋԵԲ», «Ավագ Վարկատու» և «Հեջավորման Գործընկեր»),</p>
<p>(E) INTERNATIONAL FINANCE CORPORATION, an international organisation established by the Articles of Agreement among its member countries, including the Republic of Armenia (“IFC”, a “Senior Lender” and a “Hedge Provider”);</p>	<p>ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ, անդամակցող երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված և վավերացված Հիմնադիր պայմանագրի հիման վրա ստեղծված միջազգային կազմակերպություն, (այսուհետ՝ «ՄՖԿ», «Ավագ Վարկատու» և «Հեջավորման Գործընկեր»),</p>
<p>(F) INTERNATIONAL FINANCE CORPORATION in its capacity as Implementing Entity of the Finland-IFC Climate Change Program (“IFC FCCP”, a “Senior Lender” and a</p>	<p>ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ, որպես Ֆինլանդիա-ՄՖԿ Կլիմայի փոփոխության ծրագիրն իրականացնող կազմակերպություն (այսուհետ՝ «ՄՖԿ ՖԿՓԾ», «Ավագ Վարկատու» և «Հեջավորման Գործընկեր», իսկ ՄՖԿ և ՎՋԵԲ-ի</p>

<p>“Hedge Provider”, and, together with IFC and EBRD, the “Senior Lenders” and the “Hedge Providers”); and</p>	<p>հետ միասին՝ «Ավագ Վարկատուներ» և «Հեջավորման Գործընկերներ»), և</p>
<p>(G) [●], [●] (the “Onshore Security Agent”),</p>	<p>[●], [●] (այսուհետ՝ «Տեղական Գրավի Գործակալ»),</p>
<p>and where the Government, the Developer Parties, the Senior Lenders, the Hedge Providers and the Onshore Security Agent are together the “Parties” and each a “Party”.</p>	<p>Այսուհետ միասնական հղումը Կառուցապատող Կողմերին, Ավագ Վարկատուներին, Հեջավորման Գործընկերներին և Տեղական Գրավի Գործակալին կլինի «Կողմեր», իսկ նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին՝ «Կողմ»:</p>
<p style="text-align: center;">RECITALS</p>	<p style="text-align: center;">ՆԱԽԱԲԱՆ</p>
<p>(1) WHEREAS, each Developer Party and the Government have entered into the Government Support Agreement dated as of July 18, 2018, as amended and restated on , 2019 (as further amended, modified and supplemented from time to time, the “Government Support Agreement”).</p>	<p>ՔԱՆԶԻ, Կառուցապատող Կողմերը և Կառավարությունը 2018թ. -ի հուլիսի 18-ին կնքել են Կառավարության Աջակցության Համաձայնագիր, որը փոփոխվել և վերախմբագրվել է 2019թ. -ի -ին և որը կարող է ժամանակ առ ժամանակ կրկին փոխվել, փոփոխվել և լրացվել, (այսուհետ՝ «Կառավարության Աջակցության Համաձայնագիր»)</p>
<p>(2) WHEREAS, the PSRC has issued to the Developer licence LE N0623, dated October 24, 2018 (as further amended, modified and supplemented from time to time, the “Licence”).</p>	<p>ՔԱՆԶԻ, 2018թ. -ի հոկտեմբերի 24-ին Կառուցապատողը ՀԾԿՀ-ից ստացել է ԼԷ N0623 լիցենզիան, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխվել, փոփոխվել և լրացվել (այսուհետ՝ «Լիցենզիա»)</p>
<p>(3) WHEREAS, on or about the date hereof, the Developer has entered or will enter into one or more senior loan agreements with each Senior Lender (the “Loan Agreements”) and a common terms agreement (the “Common Terms Agreement”), by and among, inter alios, the Senior Lenders, the Onshore Security Agent and the Developer, pursuant to which the Senior Lenders will make loans and extend other credit to the</p>	<p>ՔԱՆԶԻ, սույն Պայմանագրի կնքման օրը կամ դրանից մի քանի օր առաջ կամ հետո Կառուցապատողը Ավագ Վարկատուներից յուրաքանչյուրի հետ կնքել է կամ կնքելու է մեկ կամ մի քանի ավագ վարկային պայմանագրեր (այսուհետ՝ «Վարկային Պայմանագրեր»), ինչպես նաև, ի թիվս այլոց, Ավագ Վարկատուների և Տեղական Գրավի Գործակալի հետ կնքել է կամ կնքելու է ընդհանուր դրույթների մասին պայմանագիր (այսուհետ՝ «Ընդհանուր Դրույթների Մասին Պայմանագիր»), որի համաձայն Ավագ Վարկատուները Կառուցապատողին կտրամադրեն</p>

<p>Developer. The Hedge Providers are to enter into interest rate hedges with the Developer in respect of interest payable on the loans.</p>	<p>փոխառություններ և այլ վարկային միջոցներ: Հեջավորման Գործընկերները Կառուցապատողի հետ կկնքեն տոկոսադրույքների հեջավորման գործիքներ, որոնցով կհեջավորվեն փոխառու միջոցների նկատմամբ հաշվեգրվող և վճարման ենթակա տոկոսները:</p>
<p>(4) WHEREAS, as security for all present and future obligations and liabilities at any time due, owing or incurred by the Developer to any of the Secured Parties under or pursuant to the Financing Documents (whether actual or contingent) pursuant to the Moveable Property Pledge Agreement dated on or about the date hereof among, inter alios, the Onshore Security Agent, the Developer, the Senior Lenders and the Hedge Providers (the “Moveable Property Pledge Agreement”) and the other Security Documents (as defined in <u>Schedule 3</u> hereto) the Developer has granted or will grant to the Onshore Security Agent (acting for and on behalf of itself, the Senior Lenders and the Hedge Providers) and each Senior Lender and Hedge Provider (each acting for and on behalf of itself) (collectively, the “Secured Parties”) a security interest in all of its right, title and interest in, to and under the Government Support Agreement. The Loan Agreements, the Common Terms Agreement, the Moveable Property Pledge Agreement and the other Security Documents, along with the other Financing Documents (as defined in the Common Terms Agreement), are collectively referred to herein as the “Financing</p>	<p>ՔԱՆԶԻ, Ապահովված Կողմերի հանդեպ Ֆինանսավորման Փաստաթղթերից բխող իր ներկա և ապագա բոլոր տեսակի պարտավորությունների (պայմանական և ոչ պայմանական) կատարումն ապահովելու նպատակով սույն Պայմանագրի կնքման օրը կամ դրանից մի քանի օր առաջ կամ հետո, ի թիվս այլոց, Տեղական Գրավի Գործակալի, Կառուցապատողի, Ավագ Վարկատուների և Հեջավորման Գործընկերների միջև կնքված Շարժական Գույքի Գրավի Պայմանագրի (այսուհետ՝ «Շարժական Գույքի Գրավի Պայմանագիր») և Ապահովման այլ Փաստաթղթերի (սահմանումը տրված է <u>Հավելված 3</u>-ում) համաձայն Կառուցապատողը Տեղական Գրավի Գործակալի (ով գործում է իր, Ավագ Վարկատուների և Հեջավորման Գործընկերների անունից), առանձին-առանձին Ավագ Վարկատուիների և Հեջավորման Գործընկերների օգտին գրավադեղ կամ գրավադրելու է Կառավարության Աջակցության Համաձայնագրից բխող իր բոլոր իրավունքները: Հղումն այսուհետ Վարկային Պայմանագրերին, Ընդհանուր Դրույթների Մասին Պայմանագրին, Շարժական Գույքի Գրավի Պայմանագրին, Ապահովման այլ Փաստաթղթերին և Ֆինանսավորման այլ Փաստաթղթերին (սահմանումը տրված է Ընդհանուր Դրույթների Մասին Պայմանագրում) կլինի «Ֆինանսավորման Փաստաթղթեր»: Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն դրամական միջոցները տրամադրելու նախապայման է հանդիսանում այն, որ Կողմերը ստորագրեն սույն Պայմանագիրը:</p>

<p>Documents". It is a condition precedent to the availability of funding under the Financing Documents that this Agreement is executed and delivered by the Parties hereto.</p>	
<p>NOW THEREFORE IT IS AGREED:</p>	<p>ՈՒՍՏԻ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՐՊ.</p>
<p>1. SUPERIORITY OF ARMENIAN LAW AND REGULATIONS; RELATIONSHIP TO THE GOVERNMENT SUPPORT AGREEMENT; DEFINITIONS</p>	<p>ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԵՏ ԿԱՊԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ</p>
<p>(a) This Agreement confirms, clarifies and supplements, for the benefit of the Senior Lenders and the Hedge Providers the undertakings, consents, representations and acknowledgements of the Government made in the Government Support Agreement. The Parties agree that, in the event of any conflict between the terms of this Agreement and the terms of the Government Support Agreement, this Agreement shall prevail. The Government's obligations under this Agreement are not affected by, or in any way reduced by, any events relating to the Licence.</p>	<p>Սույն Պայմանագիրն, ի շահ Ավագ Կարկատուների և Հեջավորման Գործընկերների, հաստատում, հստակեցնում և լրացնում է Կառավարության Աջակցության Համաձայնագրի համաձայն Կառավարության ստանձնած պարտավորությունները, Կառավարության կողմից տրամադրված համաձայնությունները, հավաստիացումներն ու հաստատումները: Կողմերը սույնով ընդունում և համաձայնում են, որ սույն Պայմանագրի և Կառավարության Աջակցության Համաձայնագրի դրույթների միջև հակասություններ լինելու դեպքում գերակայելու են սույն Պայմանագրի դրույթները: Լիցենզիայի պայմանները չեն կարող ազդել սույն Պայմանագրով Կառավարության համար սահմանված պարտականությունների վրա, և Լիցենզիային վերաբերող որևէ հանգամանք չի կարող նվազեցնել այդ պարտականությունները:</p>
<p>(b) Neither the Government Support Agreement nor this Agreement is intended nor may it be interpreted to supersede the supervisory and governance authority and responsibilities of any Government Authority under the Applicable Laws, including with respect to any measures prescribed by the Applicable Laws which are taken by</p>	<p>Սույն Պայմանագիրը և Կառավարության Աջակցության Համաձայնագիրը որևիցե կերպ չեն փոփոխում Պետական Մարմինների՝ Կիրառելի Օրենքներով սահմանված վերահսկողական և կառավարչական լիազորությունները և ֆունկցիաները, ներառյալ այն միջոցառումների մասով, որոնք նախատեսված են Կիրառելի Օրենքների համաձայն, և որոնք ՀՀ ԱԺ կամ ՀՀ Կառավարությունը պարտավոր են կիրառել համապետական կամ տեղական բնույթ կրող</p>

<p>the National Assembly of the Republic of Armenia or the Government in case of a national or regional emergency to protect Armenia's national security and the welfare of its population including without limitation with respect to the generation and distribution of electricity from, and the operation of, the Plant that is the subject of the Government Support Agreement and the urgent circumstances that could pose an immediate danger or threat to the generation and uninterrupted flow and distribution of electricity from the Plant.</p>	<p>արտակարգ իրավիճակներում ՀՀ ազգային անվտանգության, ՀՀ բնակչության բարօրության նպատակառումներից ելնելով, այդ թվում նաև, սակայն ոչ միայն, Կառավարության Աջակցության Համաձայնագրով նախատեսված Կայանում արտադրվող, այդ Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի, Կայանի շահագործման վերաբերյալ, ինչպես նաև բոլոր այն հրատապ իրավիճակներում, որոնք կարող են անհիմնական վտանգ կամ սպառնալիք ստեղծել Կայանում էլեկտրական էներգիայի արտադրության և Կայանից դրա առաքման/հոսքի համար:</p>
<p>(c) The Parties agree that this Agreement is the Direct Agreement that relates to the Government Support Agreement and the Licence, each of which remains in full force and effect.</p>	<p>Կողմերը սույնով համաձայնում են, որ սույն Պայմանագիրը Ուղղակի Պայմանագիրն է Կառավարության Աջակցության Համաձայնագրի և Լիցենզիայի առնչությամբ, որոնցից յուրաքանչյուրն ամբողջությամբ ուժի մեջ է:</p>
<p>(d) Unless otherwise defined in this Agreement (including the schedules attached hereto), all capitalized terms used in this Agreement have the meanings given to them in the Government Support Agreement.</p>	<p>Եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով (այդ թվում նաև հավելվածներով), ապա սույն Պայմանագրում մեծատառերով գրված բոլոր եզրերն ունեն Կառավարության Աջակցության Համաձայնագրով նախատեսված սահմանումները:</p>
<p>2. REPRESENTATIONS AND WARRANTIES</p>	<p>ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ</p>
<p>The Government hereby represents and warrants to each Developer Party, the Onshore Security Agent and each of the Secured Parties that:</p>	<p>Կառավարությունը սույնով Կառուցապատող Կողմերից յուրաքանչյուրին, Տեղական Գրավի Գործակալին, ինչպես նաև Ապահովված Կողմերից յուրաքանչյուրին երաշխավորում և հավաստիացնում է, որ</p>
<p>(a) it has all permissions, consents, clearances, licences, authorisations, no-objections, approvals and exemptions under or pursuant to any Applicable Laws necessary, except for</p>	<p>ունի սույն Պայմանագրի և Կառավարության Աջակցության Համաձայնագրի համաձայն իր ստանձնած բոլոր պարտավորություններն օրինական կերպով կատարելու համար Կիրառելի Օրենքների համաձայն պահանջվող բոլոր</p>

<p>those procured or renewed in the normal course of government administration, for it to legally perform its obligations under this Agreement and the Government Support Agreement;</p>	<p>թույլտվությունները, համաձայնությունները, հաստատումները, բացառության այն թույլտվությունների, համաձայնությունների և հաստատումների, որոնք կարելի է ստանալ կամ երակարած գել կառավարչական ֆունկցիաների բնականոն իրականացման ընթացքում: Վերոգրյալի համար բացակայում են բոլոր տեսակի առարկությունները, իսկ եթե այդ կապակցությամբ կան այս կամ այն պարտադիր պահանջներին բավարարելու վերաբերյալ բացառություններ, ապա Կառավարությունը հավաստիացնում և երաշխավորում է նաև, որ այդ բացառությունները կիրառելի են վերոգրյալի նկատմամբ:</p>
<p>(b) the execution, delivery and performance of this Agreement and the Government Support Agreement are within its powers, have been duly authorised by all necessary action and do not violate any of the terms and conditions in its governing documents, any contracts to which it is a party or any law, rule, regulation, order or the like applicable to it;</p>	<p>իրավասու է և ունի բոլոր լիազորությունները սույն Պայմանագիրը, Կառավարության Աջակցության Համաձայնագիրը կնքելու և դրանցով նախատեսված պարտավորությունները կատարելու համար: Սույն Պայմանագիրը և Կառավարության Աջակցության Համաձայնագիրը կնքելը և կատարելը չեն հակասում իր գործունեությունը կարգավորող փաստաթղթերի, օրենքների, նորմերի, իրավական ակտերի, հրամանների և նմանատիպ այլ փաստաթղթերի, ինչպես նաև իր կողմից ստորագրված պայմանագրերի պահանջներին:</p>
<p>(c) the execution, delivery and performance of the Licence are within the powers of the PSRC, have been duly authorised by all necessary action and do not violate any of the terms and conditions in the governing documents of the PSRC, any contracts to which the PSRC is a party or any law, rule, regulation, order or the like applicable to the PSRC;</p>	<p>ՀԾԿՀ-ն իրավասու է և ունի բոլոր լիազորությունները Լիցենզիան կնքելու և դրանով նախատեսված պարտավորությունները կատարելու համար: Լիցենզիան կնքելը և կատարելը չեն հակասում չեն հակասում ՀԾԿՀ գործունեությունը կարգավորող փաստաթղթերի, օրենքների, նորմերի, իրավական ակտերի, հրամանների և նմանատիպ այլ փաստաթղթերի, ինչպես նաև ՀԾԿՀ կողմից ստորագրված պայմանագրերի պահանջներին:</p>
<p>(d) this Agreement, the Government Support Agreement, the Licence and the PPA and each other document executed and delivered by the Government in accordance herewith or therewith, are in full force and effect</p>	<p>Սույն Պայմանագիրը, Կառավարության Աջակցության Համաձայնագիրը, Լիցենզիան և ԷԳՊ և Կառավարության կողմից սույն Պայմանագրի համաձայն կամ այլ կերպ ստորագրված և տրամադրված մնացած բոլոր փաստաթղթերը շարունակում են գործել ամբողջ ծավալով և</p>

<p>and constitute legally valid and binding obligations enforceable against it and the PSRC respectively each in accordance with their respective terms; and</p>	<p>հանդիսանում են վավեր և կատարման համար պարտադիր պարտավորություններ, որոնք կարող են դրանցով նախատեսված պայմանների համաձայն ի կատար ածվել Կառավարության և ՀԾԿ նկատմամբ, և</p>
<p>(e) to the best of its knowledge, it is not in default under any covenant or obligation hereunder or under the Government Support Agreement, and to its actual knowledge, none of the Developer Parties is in default under any covenant or obligation under the Government Support Agreement or the Licence.</p>	<p>Որքանով տեղյակ է թույլ չի տվել սույն Պայմանագրով կամ Կառավարության Աջակցության Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների խախտում, և փաստացի որաքնով տեղյակ է Կառուցապատող Կողմերից և ոչ ոք թույլ չի տվել սույն Պայմանագրով, Կառավարության Աջակցության Համաձայնագրով կամ Լիցենզիայով նախատեսված պարտավորությունների խախտում:</p>
<p>3. SECURITY ASSIGNMENTS IN CONNECTION WITH DEBT FINANCING</p>	<p>ՓՈՒՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԻՄԱՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԻՋՈՒՄ ՈՐՊԵՍ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ</p>
<p>(a) The Government:</p>	<p>Կառավարությունը,</p>
<p>(i) irrevocably consents to:</p>	<p>անհետկանչելիորեն տալիս է իր համաձայնությունը, որպեսզի</p>
<p>(A) any assignment as security (or accession by way of security) by the Developer Parties (or, if applicable, their Affiliates) to be made under the terms of the Financing Documents of each Developer Party's respective right, title and interest in the Government Support Agreement including, without limitation, rights to receive payments (if any) under the Government Support Agreement; and</p>	<p>Կառուցապատող Կողմերը (կամ կիրառելի լինելու դեպքում նրանց հետ Փոխկապակցված Անձիք) Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն, որպես ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց, զիջեն Կառավարության Աջակցության Համաձայնագրից բխող իրենց իրավունքները, այդ թվում նաև, սակայն ոչ միայն, Կառավարության Աջակցության Համաձայնագրի համաձայն վճարումներ ստանալու իրավունքը, ինչպես նաև՝ որպեսզի այդ իրավունքները բռնագանձման դեպքում փոխանցվեն Կառուցապատող Կողմերից, և</p>
<p>(B) the Onshore Security Agent's, each Senior Lender's and each Hedge Provider's rights to enforce, on behalf of the Secured Parties or as the case may be, for</p>	<p>Տեղական Գրավի Գործակալը, յուրաքանչյուր Ավագ Վարկատու և յուրաքանչյուր Հեջավորման Գործընկեր Ապահովված Կողմերի անունից կամ ըստ իրավիճակի՝ իր անունից, սույն Պայմանագրի դրույթների պահպանմամբ, բռնագանձում տարածի</p>

itself, such right, title and interests referred to in paragraph (A), subject to the provisions of this Agreement; and	(A) պարբերության մեջ նշված իրավունքների նկատմամբ, և
(ii) acknowledges that:	Հաստատում է, որ
(A) the Developer may, under the Financing Documents, grant security in favour of the Onshore Security Agent for the benefit of the Secured Parties and in favour of the Senior Lenders and the Hedge Providers with respect to its right, title and interest, as applicable, in all of its assets, including its rights under the Government Support Agreement, the PPA, the Plant, and the Project Site; and	Կառուցապատողը կարող է Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն ի շահ Ապահովված Կողմերի Տեղական Գրավի Գործակալին և Ավագ Վարկատուներին ու Հեջավորման Գործընկերներին գրավադրել իր գույքը, այդ թվում Կայանը, Ծրագրի Տարածքը, Կառավարության Աջակցության Համաձայնագրից և ԷԳՊ-ից բխող իր իրավունքները, և
(B) the Sponsor may, under the Financing Documents, grant security in favour of the Onshore Security Agent for the benefit of the Secured Parties and in favour of the Senior Lenders and the Hedge Providers with respect to its right, title and interest in its ownership interest in, and shareholder loans to, the Developer,	Հովանավորը կարող է Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն ի շահ Ապահովված Կողմերի Տեղական Գրավի Գործակալին և Ավագ Վարկատուներին ու Հեջավորման Գործընկերներին գրավադրել Կառուցապատողի կողմից թողարկված և տաղաբաշխված բաժնետոմսերը, ինչպես նաև Կառուցապատողին տրամադրված բաժնետերերի փոխառություններից բխող իր իրավունքները:
(together the “ Security ”).	(այսուհետ համատեղ՝ « Գրավ »)
(b) The Government shall, as soon as reasonably practicable after the date of this Agreement:	Կառավարությունը պարտավոր է սույն Պայմանագիրը կնքելուց հետո ողջամտորեն սեղմ ժամկետներում՝
(i) use its best endeavours to ensure that the PSRC provides its consent to pledging (i) 100% of the shares in the Developer to the Onshore Security Agent for the benefit of the Secured Parties and to the Senior Lenders and the	գործադրել իր լավագույն ջանքերը, որպեսզի ՀԾԿՀ-ն տրամադրի իր համաձայնությունը, որպեսզի (i) ի շահ Ապահովված Կողմերի Տեղական Գրավի Գործակալին և Ավագ Վարկատուներին ու Հեջավորման Գործընկերներին գրավադրվեն Կառուցապատողի կողմից թողարկված և տաղաբաշխված բոլոր բաժնետոմսերը, և (ii) ի շահ Ապահովված Կողմերի

<p>Hedge Providers and (ii) 100% of the shares in the shareholders (or a shareholder) in the Developer to the Offshore Security Agent (as defined in the Common Terms Agreement) for the benefit of the Secured Parties, if such consent is required by the Applicable Law (or that the PSRC provides written confirmation that such consent is not required under the Applicable Law); and</p>	<p>Օտարերկրյա Գրավի Գործակալին (սահմանումը բերված է Ընդհանուր Դրույթների Մասին Պայմանագրում) գրավադրվեն Կառուցապատողի բաժնետեր հանդիսացող ընկերությունների (կամ բաժնետիրոջ) կողմից թողարկված և տեղաբաշխված բոլոր բաժնետոմսերը, եթե այդպիսի համաձայնություն պահանջվում է Կիրառելի Օրենսդրությամբ (կամ ՀԾԿՀ-ն տրամադրի գրավոր հավաստում, որ այդպիսի համաձայնություն Կիրառելի Օրենսդրությամբ չի պահանջվում); և</p>
<p>(ii) to the extent required by law and for the purposes of points 19, 20 and 21 of the Licence respectively, use its best endeavours to ensure that the PSRC, and the State Commission for the Protection of Economic Competition and any other Government Authority consents to:</p>	<p>գործադրի իր լավագույն ջանքերը, որ օրենքով պահանջված լինելու սահմաններում և Լիցենզիայի 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերին համապատասխան, ՀԾԿՀ-ն, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը և այլ Պետական Մարմիններ տրամադրեն իրենց համաձայնությունը, որ՝</p>
<p>(A) the transfer or sale of shares (stock interest) in the Developer or in the shareholders in the Developer or of the rights thereto to an Eligible Transferee upon enforcement of the Security over the shares (stock interest) in the Developer; and</p>	<p>Կառուցապատողի կողմից թողարկված և տաղաբաշխված բաժնետոմսերի կամ Կառուցապատողի բաժնետեր հանդիսացող ընկերությունների կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի կամ դրանց նկատմամբ իրավունքների վրա գրավառուի կողմից բռնագանձում տարածելու դեպքում դրանք փոխանցվեն կամ վաճառվեն Թույլատրելի Փոխանցառուին, և</p>
<p>(B) the transfer or sale of the assets of the Developer to an Eligible Transferee upon enforcement of the Security over such assets in accordance with paragraph (c) below and, in such event, use its best endeavours to ensure that a valid licence for operation of the Plant in substantially the form of the Licence (and on the same</p>	<p>Կառուցապատողի Գույքի նկատմամբ գրավառուի կողմից բռնագանձում տարածելու դեպքում Կառուցապատողի գույքը (c) պարբերության պահանջների պահպանմամբ փոխանցվի կամ վաճառվի Թույլատրելի Փոխանցառուին, և այդ դեպքում Կառավարությունը պարտավոր է գործադրել իր լավագույն ջանքերը, որպեսզի ՀԾԿՀ-ն օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան Թույլատրելի Փոխանցառուին տրամադրի ձևի և բովանդակության տեսանկյունից</p>

<p>terms and conditions as the Licence) is issued by the PSRC to such Eligible Transferee, in accordance with the procedure prescribed by law.</p>	<p>բոլոր էական առումներով Լիցենզիային նման Կայանը շահագործելու լիցենզիա:</p>
<p>(c) In the event of enforcement of the Security, and provided that at such time the Plant has not been materially damaged to an extent that would prevent it from being continuously operated in accordance with applicable environmental and safety standards (unless such material damage is repairable and is being, or is scheduled to be, repaired using insurance proceeds available in accordance with the terms of the Common Terms Agreement), the Secured Parties agree that the assets and rights that are critical for ensuring uninterrupted operation and maintenance of the Plant shall not be transferred to different Persons, and may only be transferred to a single Eligible Transferee, provided that, in all cases, the shares of the Developer (or of the shareholders in the Developer) may be transferred to one or more Persons, each of which is an Eligible Transferee.</p>	<p>Գրավի առարկայի նկատմամբ բռնագանձում տարածելու դեպքում, պայմանով, որ Կայանը չի ենթարկվել այնպիսի էական վնասվածքի, որը կխոչընդոտեր կիրառելի բնապահպանական և անվտանգության ստանդարտներին համապատասխան դրա շարունակական շահագործմանը (բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի էական վնասվածքը կարող է վերականգնվել և Կայանը գտնվում է վերականգման ընթացքում կամ նախատեսվում է վերականգնել Ընդհանուր Դրույթների Մասին Պայմանագրի համաձայն հասանելի ապահովագրական հատուցումների հաշվին), Ապահովված Կողմերը համաձայնում են, որ Կայանի՝ շարունակական շահագործման և սպասարկման տեսանկյունից էական համարվող գույքը և իրավունքները չեն կարող մաս-մաս փոխանցվել տարբեր Անձանց, և կարող են փոխանցվել միայն մեկ Թույլատրելի Փոխանցառուի՝ պայմանով, սակայն, որ բոլոր դեպքերում Կառուցապատողի կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետմասերը (կամ Կառուցապատողի բաժնետեր հանդիսացող ընկերությունների կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերը) կարող են փոխանցվել մեկ կամ մի քանի Անձանց, որոնցից յուրաքանչյուրը պետք է լինի Թույլատրելի Փոխանցառու:</p>
<p>(d) After delivery to the Government by the Onshore Security Agent or a Senior Lender of a notice of an event of default (however defined) under the Financing Documents, the Onshore Security Agent and each Senior Lender may, but are</p>	<p>Կառավարությանը Տեղական Գրավի Գործակալի կամ Ավագ Վարկատուների կողմից Ֆինանսավորման Փաստաթղթերի շրջանակներում տեղի ունեցած խախտման մասին (ինչպես էլ, որ այն սահմանված լինի) ծանուցում ներկայացվելուց հետո, Տեղական Գրավի Գործակալը և Ավագ Վարկատուներից յուրաքանչյուրը կարող է, սակայն պարտավոր չէ,</p>

<p>not required to, exercise any and all rights of either Developer Party under the Government Support Agreement in accordance with its terms and subject to the requirements of Applicable Laws, and the Government agrees to accept such exercise and to observe and perform the obligations expressed to be assumed by it in the Government Support Agreement in each case in accordance with the terms of such agreement, subject in any event to the provisions of Section 7(g) (<i>Notice of Restricted Action and Cure Rights</i>) hereof.</p>	<p>Կառավարության Աջակցության Համաձայնագրով սահմանված և Կիրառելի Օրենքներով սահմանված կարգով իրացնել Կառավարության Աջակցության Համաձայնագրից բխող Կառուցապատողի Կողմերից յուրաքանչյուրի յուրաքանչյուր իրավունք, իսկ Կառավարությունը համաձայնում է ընդունել իրավունքների նման իրացումը և Կառավարության Աջակցության Համաձայնագրով նախատեսված կարգով հետևել և կատարել Կառավարության Աջակցության Համաձայնագրով իր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները, պայմանով, որ պահպանված լինեն սույն Պայմանագրի 7(գ) հոդվածի (<i>Սահմանափակ գործողությունների և խախտումների վերացման մասին ծանուցում</i>) պահանջները:</p>
<p>(e) The Government agrees to execute any additional documents reasonably requested by the Onshore Security Agent or a Senior Lender to record and perfect the assignment and/ or accession of the type described in paragraph (a) above and any amendments to the Moveable Property Pledge Agreement or any other relevant documents, including any replacement or addition of the Onshore Security Agent or a Secured Party, it being understood that such additional documents are not intended to impose additional financial obligations on or otherwise impair the rights of the Government under the Government Support Agreement or this Agreement.</p>	<p>Կառավարությունը համաձայնվում է ստորագրել ցանկացած լրացուցիչ փաստաթուղթ, որը ողջամտորեն կպահանջվի Տեղական Գրավի Գործակալի կամ Ավագ Վարկատուներից որևէ մեկի կողմից վերագրյալ (a) պարբերության մեջ նշված իրավունքների զիջումը և/կամ փոխանցումը, ինչպես նաև Շարժական Գույքի Գրավի Պայմանագրի և ցանկացած այլ վերաբերելի փաստաթղթերի փոփոխությունները, այդ թվում նաև Տեղական Գրավի Գործակալի կամ Ապահովված Կողմերի փոխարինումները կամ հավելումներն արձանագրելու և գրանցելու համար, պայմանով, որ նման լրացուցիչ փաստաթղթերը Կառավարության համար չեն առաջացնի լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ, ինչպես նաև չեն սահմանափակի սույն Պայմանագրի կամ Կառավարության Աջակցության Համաձայնագրի համաձայն Կառավարության ունեցած իրավունքները:</p>

<p>(f) Without prejudice to the foregoing, the Government shall not be liable to any Developer Party for any actions taken or failure to act in accordance with or pursuant to the terms of this Agreement.</p>	<p>Չսահմանափակելով վերոգրյալ դրույթների գործողության ոլորտը՝ սույնով հաստատվում է, որ Կառավարությունը պատասխանատվություն չի կրում որևէ Կառուցապատողի Կողմի սույն Պայմանագրի դրույթների համաձայն կատարված կամ չկատարված որևէ գործողության համար:</p>
<p>(g) The Onshore Security Agent, each Senior Lender, and each Hedge Provider shall provide to the Government copies of any document, application, registration or other instrument required by Applicable Laws to be filed, registered or signed and delivered by the Onshore Security Agent, such Senior Lender or such Hedge Provider respectively relating to any subsequent exercise of rights under this Agreement within a reasonable time period of such document, application, registration or other instrument being filed, registered or signed and delivered, as the case may be.</p>	<p>Տեղական Գրավի Գործակալը, Ավագ Վարկատուները և Հեջավորման Գործընկերները պետք է Կառավարությանը տրամադրի բոլոր այն փաստաթղթերի, դիմումների, գրանցումները հավաստող փաստաթղթերի և Կիրառելի Օրենքներով պահանջվող բոլոր այլ փաստաթղթի պատճենները, որոնք պետք է ներկայացվեն, գրանցվեն կամ ստորագրվեն և տրամադրվեն համապատասխանաբար Տեղական Գրավի Գործակալի, Ավագ Վարկատուների կամ Հեջավորման Գործընկերների կողմից սույն Պայմանագրով սահմանված իրավունքների ցանկացած հաջորդող իրացման առնչությամբ: Պատճենները պետք է տրամադրվեն համապատասխան փաստաթղթերը, դիմումները, գրանցումները կամ այլ փաստաթղթերը ներկայացվելուց և գրանցվելուց կամ ստորագրվելուց և տրամադրվելուց հետո ողջամիտ ժամկետում:</p>
<p>4. PAYMENTS</p>	<p>ՎՃԱՐՈՒՄՆԵՐ</p>
<p>(a) The Government irrevocably agrees that:</p>	<p>Կառավարությունն անհետկանչելիորեն համաձայնում է՝</p>
<p>(i) subject to paragraph (ii) below, all amounts duly payable by it to the Developer under or in connection with the Government Support Agreement or this Agreement will be exclusively paid in immediately available funds, without deduction, setoff or counterclaim, only into accounts of the Developer or the Onshore Security Agent identified in</p>	<p>Ստորև (ii) պարբերությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ՝ Կառավարության Աջակցության Համաձայնագրի կամ սույն Պայմանագրի համաձայն իր կողմից Կառուցապատողին վճարման ենթակա բոլոր գումարները վճարել միայն անմիջապես հասանելի միջոցներով, առանց պահումների, հաշվանցի կամ հակընդդեմ պահանջներ ներկայացնելու՝ փոխանցում կատարելով Կառուցապատողի կամ Տեղական Գրավի Գործակալի կողմից գրավոր սահմանված բանկային հաշվեհամարներին:</p>

writing by the Developer or the Onshore Security Agent;	
(ii) all amounts duly payable by it under or in connection with section 17.4 (Termination Procedure) and appendix 3 (Compensation on Termination) of the Government Support Agreement shall be exclusively paid in immediately available funds, without deduction, setoff or counterclaim, only into accounts of the Onshore Security Agent identified in writing by the Onshore Security Agent;	Կառավարության Աջակցության Համաձայնագրի 17. 4 (Պայմանագրի Լուծման Ընթացակարգը) և Կառավարության Աջակցության Համաձայնագրի Հավելված 3-ի (Պայմանագիրը լուծելու դեպքում վճարվող փոխհատուցմանը) համաձայն իր կողմից վճարման ենթակա բոլոր գումարներ վճարել միայն անմիջապես հասանելի միջոցներով, առանց պահումների, հաշվանցի կամ հակընդդեմ պահանջներ կայացնելու՝ փոխանցում կատարելով կամ Տեղական Գրավի Գործակալի կողմից գրավոր սահմանված բանկային հաշվեհամարին:
(iii) if the Government is required by law to make a payment referred to in paragraphs (i) or (ii) subject to deduction or withholding tax, the payment due in respect of which such deduction or withholding is required to be made shall be increased to the extent necessary to ensure that, after the making of the required deduction or withholding, the recipient receives and retains (free from any liability in respect of any such deduction or withholding) a net sum equal to the sum which it would have received and so retained had no such deduction or withholding been made or required to be made;	Եթե վերոգրյալ (i) (ii) պարբերություններում սահմանված վճարումները կատարելիս Կառավարությունը պարտավոր է օրենքի համաձայն պահումներ կամ նվազեցումներ անել, ապա վճարումը, որի կապակցությամբ անհրաժեշտ է պանում կամ նվազեցում անել, կավելացվի այնքան, որքան կպահանջվի, որպեսզի համապատասխան պահումը կամ նվազեցումն անելուց հետո, գումարը ստացող ստանա և կարողանա պահել (առանց պահման կամ նվազեցման հետ կապված որևիցե պարտավորություն կրելու) այն գումարը, որը նա կստանար և կկարողանար պահել, եթե նման պահում կամ նվազեցում չկատարվեր կամ չպահանջվեր:
(iv) it will facilitate and assist the Developer in obtaining USD in exchange for AMD in amounts required to meet the Developer's foreign currency obligations under the Financing Documents;	Աջակցել Կառուցապատողին փոխանակել ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի այն քանակությամբ, որ անհրաժեշտ կլինի Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն Կառուցապատողի արտարժույթով արտահայտված պարտավորությունները կատարելու համար:

<p>(v) the Developer is entitled to, and will continue to be entitled to, convert AMD into USD and transfer such USD to the Finance Parties in order to discharge its obligations under the Financing Documents; and</p>	<p>Կառուցապատողն իրավունք ունի և կունենա ՀՀ դրամը փոխանակել ԱՄՆ դոլարի և փոխանակված գումարը փոխանցել Ֆինանսավորման Կողմերին Ֆինանսավորման Փաստաթղթերով նախատեսված իր պարտավորությունները կատարելու նպատակով:</p>
<p>(vi) it will comply with article 9.3 of the Government Support Agreement.</p>	<p>Կատարել Կառավարության Աջակցության Համաձայնագրի 9. 3 հոդվածի պահանջները:</p>
<p>5. LIMITATIONS ON FUNDAMENTAL CHANGES</p>	<p>ՀԻՄՆԱՐԱՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ</p>
<p>(a) The Government agrees that it will not, without the prior written consent of the Onshore Security Agent, which consent shall not be unreasonably withheld:</p>	<p>Կառավարությունը համաձայնում է առանց Տեղական Գրավի Գործակալի նախնական գրավոր համաձայնության (ինչը չպետք է անհիմն մերժվի).</p>
<p>(i) consent to or accept any total or partial termination or any transfer, assignment or pledge (other than to the Onshore Security Agent, the Senior Lenders and the Hedge Providers as contemplated by this Agreement) of the Government Support Agreement and/or the Developer Parties' interests in the Project by either Developer Party;</p>	<p>չընդունել և համաձայնություն չտալ Կառավարության Աջակցության Համաձայնագիրը և/կամ Ծրագրի նկատմամբ Կառուցապատող Կողմերից որևիցե մեկի որևիցե իրավունք ամբողջական կամ մասնակի դադարեցնելուն կամ փոխանցելուն, զիջելուն կամ գրավադրելուն (բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված դեպքերի և այն էլ միայն ի շահ Տեղական Գրավի Գործակալի, Ավագ Վարկատուների և Հեջավորման Գործընկերների),</p>
<p>(ii) amend or modify, or permit or agree to any amendment or modification of, the Government Support Agreement; or</p>	<p>Չփոխել և չփոփոխել, ինչպես նաև թույլ չտալ և չհամաձայնել, որպեսզի փոխվի կամ փոփոխվի Կառավարության Աջակցության Համաձայնագիրը,</p>
<p>(iii) sell, assign, transfer or otherwise dispose of any part of its interest in this Agreement or the Government Support Agreement.</p>	<p>չվաճառել, չզիջել, չփոխանցել կամ այլ կերպ չտնօրինել սույն Պայմանագրից կամ Կառավարության Աջակցության Համաձայնագրից բխող իր իրավունքները կամ դրանց այս կամ այն մասը:</p>
<p>(b) The Government will use its best endeavours to ensure that the PSRC will (i) not do any of the following otherwise than in</p>	<p>Կառավարությունը կգործադրի իր լավագույն ջանքերը, որպեսզի ՀԾԿՀ-ն (i) չկատարի հետևյալ գործողություններից որևիցե մեկը, եթե այլ բան նախատեսված չէ կիրառելի օրենսդրությամբ, իսկ</p>

<p>accordance with applicable law (and after any remedy or grace period provided for by applicable law) and (ii) before taking any of the following and where it is required by applicable law, notify the Developer, and the Onshore Security Agent in the same cases and at the same time as it notifies the Developer:</p>	<p>կիրառելի օրենսդրությամբ նախատեսված դեպքում էլ այդ գործողությունները կատարի միայն կիրառելի օրենսդրությամբ նախատեսված կարգով (կիրառելի օրենսդրությամբ նախատեսված բոլոր այլ միջոցները կիրառելուց և ժամկետները տրամադրելուց հետո) և (ii) մինչև հետևյալ գործողությունները կատարելը և կիրառելի օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ նախապես տրամադրի գրավոր ծանուցում Կառուցապատողին և Տեղական Գրավի Գործակալին (նույն դեպքերում և ժամկետներում, ինչ որ Կառուցապատողին) .</p>
<p>(i) consent to or accept any total or partial termination or any transfer, assignment or pledge of the Licence and/or the Developer’s interests in the Licence by the Developer; or</p>	<p>Կառուցապատողի կողմից Լիցենզիան և/կամ Լիցենզիայից բխող՝ Կառուցապատողի իրավունքներն ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցնելու, փոխանցելու, զիջելու կամ գրավադրելու համար համաձայնության տրամադրում կամ ընդունում, կամ</p>
<p>(ii) amend or modify, or permit or agree to any amendment or modification of, the Licence.</p>	<p>Լիցենզիայի փոփոխում կամ դրա համար անհրաժեշտ թույլտվության կամ համաձայնության տրամադրում:</p>
<p>(c) The Government will procure that the Owner will not (i) terminate the Land Transfer Agreement unless the Government Support Agreement has been terminated and (ii) without the prior written consent of the Onshore Security Agent: (A) amend or modify, or permit or agree to any amendment or modification of, the Land Transfer Agreement or (B) sell, assign, transfer or otherwise dispose of any part of its interest in the Land Transfer Agreement.</p>	<p>Կառավարությունը կապահովի, որ Սեփականատերը (i) չլուծի Հողամասի Փոխանցման Պայմանագիրը, բացառությամբ այն դեպքի երբ լուծվել է Կառավարության Աջակցության Պայմանագիրը, և (ii) առանց Տեղական Գրավի Գործակալից նախապես գրավոր հավանություն ստանալու (A) չի փոփոխի կամ լրացնի Հողամասի Փոխանցման Պայմանագիրը, ինչպես նաև չի թույլ տա և չի համաձայնի որևէ նման փոփոխման կամ լրացման, և (B) չի վաճառի, զիճի, փոխանցի կամ որևէ այլ կերպ օտարի Հողամասի Փոխանցման Պայմանագրով նախատեսված իր որևէ իրավունք:</p>
<p>6. SHARING OF INFORMATION AND NOTICE OF MATERIAL EVENTS</p>	<p>ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ և ԷԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ</p>
<p>(a) The Government will:</p>	<p>Կառավարությունը պետք է՝</p>

<p>(i) give the Onshore Security Agent a copy of each written notice, request or demand it delivers to or receives from either Developer Party under the Government Support Agreement or in connection with the Project at the same time it gives (or, in the case of materials that it receives, promptly after receipt of) such notice, request or demand; and</p>	<p>Տեղական Գրավի Գործակալին տրամադրի յուրաքանչյուր գրավոր ծանուցման, պահանջի պատճենը, որը նա ներկայացնում է Կառուցապատողի Կողմերից որևիցե մեկին կամ ստանում է նրանցից Կառավարության Աջակցության Համաձայնագրի կամ Ծրագրի հետ կապված: Պատճենները պետք է տրամադրվեն այն ժամանակ, երբ ներկայացվում է համապատասխան ծանուցումը կամ պահանջը (իսկ ստանալու դեպքում՝ ստանալուց անհմիջապես հետո), և</p>
<p>(ii) notify the Onshore Security Agent promptly of any breach or any action or failure to act by either Developer Party that with the passage of time or notice could become a breach under the Government Support Agreement, of which the Government actually becomes aware.</p>	<p>անհապաղ ծանուցի Տեղական Գրավի Գործակալին Կառուցապատողի Կողմերից յուրաքանչյուրի կողմից որևէ խախտման, գործողության կամ անգործության մասին, որի մասին Կառավարությունն փաստացի տեղյակ է, և որը ժամանակի ընթացքում կամ ծանուցելու դեպքում կարող է դիտվել որպես Կառավարության Աջակցության Համաձայնագրի խախտում:</p>
<p>(b) The Onshore Security Agent, the Senior Lenders and the Hedge Providers hereby consent to the Developer providing the Government an opportunity to review substantially final drafts of the Financing Documents identified in <u>Schedule 3</u> attached hereto (collectively, the “Developer Financing Documents”), and to the delivery, to the Government, of the Developer Financing Documents and all ancillary agreements and documents reasonably related thereto. Each Developer Financing Document shall be submitted by the Developer to the Government within ten (10) Days from the</p>	<p>Տեղական Գրավի Գործակալը, Ավագ Վարկատուները և Հեջավորման Գործընկերները սույնով համաձայնում են, որ Կառուցապատողը Կառավարությանը հնարավորություն տա ծանոթանալ <u>Հավելված 3</u>-ում նշված Ֆինանսավորման Փաստաթղթերի վերջնական նախագծերին (այսուհետ համատեղ՝ «Կառուցապատողի Ֆինանսավորման Փաստաթղթեր»), և Կառավարությանը տրամադրվեն Կառուցապատողի Ֆինանսավորման Փաստաթղթերը, ինչպես նաև դրանց հետ ողջամտորեն կապված բոլոր լրացուցիչ պայմանագրերը և այլ փաստաթղթերը: Կառուցապատողի Ֆինանսավորման Փաստաթղթերը Կառավարությանը պետք է ներկայացվեն Կառուցապատողի կողմից դրանք ստորագրելուց հետո տասը (10) Օրվա ընթացքում:</p>

execution of such document by all parties thereto.	
7. NOTICE OF RESTRICTED ACTION AND CURE RIGHTS	ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ և ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
(a) The Government agrees that it shall not:	Կառավարությունը համաձայնում է՝
(i) as a result of breach or non-performance of or default of either Developer Party under the Government Support Agreement enforce any judgment or order against the Developer or any of its assets, or cancel, rescind, repudiate or terminate the Government Support Agreement;	Կառավարության Աջակցության Համաձայնագրով նախատեսված՝ Կառուցապատող Կողմերի պարտավորությունները չկատարելու կամ խախտելու հետևանքով հարկադիր կատարման չուղարկել Կառուցապատողի կամ նրա գույքի դեմ կայացված վճիռները կամ որոշումները, ինչպես նաև չլուծել, չչեղարկել կամ չդադարեցնել Կառավարության Աջակցության Համաձայնագիրը,
(ii) except following a Force Majeure Event, suspend performance under the Government Support Agreement;	Չկասեցնել Կառավարության Աջակցության Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարումը: Սույն դրույթը չի գործում Անհաղթահարելի Ուժի ազդեցության դեպքերում,
(iii) give notice of consent to or accept any cancellation, rescission, repudiation, termination or suspension (except, in the case of suspension, following a Force Majeure Event) of the Government Support Agreement;	Չընդունել և համաձայնություն չտալ Կառավարության Աջակցության Համաձայնագիրը դադարեցնելուն, լուծելուն, չեղարկելուն կամ կասեցնելուն: Սույն դրույթը չի գործում, եթե կասեցումն Անհաղթահարելի Ուժի ազդեցության հետևանք է,
(iv) commence or support any proceedings for the winding up, dissolution, administration, reorganisation, insolvency, rehabilitation or bankruptcy of the Developer, or any analogous proceedings with respect to the Developer; or	չսկսել Կառուցապատողի լուծարման, սնանկության, վերակազմակերպման, ֆինանսական առողջացման, արտաքին կառավարում մտցնելու կամ նմանատիպ այլ գործընթացներ, ինչպես նաև աջակցություն չցուցաբերել այդպիսի գործընթացներին,
(v) attach, sequester or execute (or carry out any analogous process) against any assets of, or shares in, the Developer,	Կալանք չդնել (կալանք չդնի) Կառուցապատողի գույքի և բաժնետոմսերի վրա, ինչպես նաև չբռնագանձել (չբռնագանձի) դրանք,

<p>(each a "Restricted Action"), unless the Government shall have first delivered to the Onshore Security Agent written notice stating that it intends to exercise such right on a date not less than:</p>	<p>(վերոգրյալից յուրաքանչյուրն այսուհետ՝ «Սահմանափակ Գործողություն»), քանի դեռ Կառավարությունը Տեղական Գրավի Գործակալին գրավոր չի ծանուցել, որ նպատակ ունի իրացնել վերոգրյալ իրավունքները.</p>
<p>(A) if on account of any payment default, one hundred twenty (120) Days after the date of such notice; or</p>	<p>Ծանուցումը տալուց ոչ պակաս քան 120 (հարյուր քսան) Օր անց, եթե պատճառը դրամական պարտավորությունների խախտումն է, կամ</p>
<p>(B) if on account of any non-monetary default, one hundred eighty (180) Days after the date of such notice,</p>	<p>Ծանուցումը տալուց ոչ պակաս քան 180 (հարյուր ութսուն) Օր անց, եթե պատճառը ոչ դրամական պարտավորությունների խախտումն է</p>
<p>(in either case, the "Notice Period"), specifying the nature of the default giving rise to such right (and, in the case of a payment default, specifying the amount thereof), and such Notice Period has expired. Each of the Onshore Security Agent, the Senior Lenders and the Hedge Providers shall be permitted to cure such default during the Notice Period by making a payment of the amount in default or by performing or causing to be performed the obligation in default, as the case may be. The Government agrees that it will not prevent, obstruct or frustrate the diligent exercise and performance by any of the Onshore Security Agent, the Senior Lenders, the Hedge Providers, the Developer Parties or any other Person of any rights or obligations of the Developer Parties under the Government Support Agreement or any Project Document, and, each of the Onshore Security Agent, the Senior Lenders, the Hedge Providers and the</p>	<p>(այսուհետ հղումը նրանցից յուրաքանչյուրին՝ «Ծանուցման Ժամկետ»), նշելով խախտման բնույթը, որը հիմք է տալիս նման իրավունք գործադրելու համար (իսկ դրամական պարտավորության խախտման դեպքում՝ նշելով գումարի չափը): Վերոգրյալ իրավունքները կարող են իրացվել միայն Ծանուցման Ժամկետը լրացած լինելու դեպքում: Տեղական Գրավի Գործակալը, Ավագ Վարկատուները և Հեջավորման Գործընկերներն իրավունք ունեն, չվճարված գումարը վճարելու կամ խախտված պարտավորությունն ի կատար ածելու միջոցով Ծանուցման Ժամկետի ընթացքում վերացնել համապատասխան խախտումը: Կառավարությունը համաձայնում է խոչընդոտներ չստեղծել Տեղական Գրավի Գործակալի, Ավագ Վարկատուների, Հեջավորման Գործընկերների, Կառուցապատող Կողմերի կամ ցանկացած մեկ այլ Անձանց կողմից Կառավարության Աջակցության Համաձայնագրի կամ Ծրագրի Փաստաթղթերի համաձայն Կառուցապատող Կողմերի ունեցած իրավունքներն ու պարտականություններն անհրաժեշտ կերպով իրացնելու և կատարելու համար, իսկ Տեղական Գրավի Գործակալը, Ավագ Վարկատուները, Հեջավորման Գործընկերները և Կառուցապատող Կողմերը պետք է ողջամտորեն խորհրդակցեն Կառավարության հետ և վերջինիս տեղյակ պահեն</p>

<p>Developer Parties shall reasonably consult with, and keep informed, the Government about any remedial action taken by it as contemplated by the preceding sentence; and</p>	<p>նախորդ նախադասության մեջ նախատեսվածի համաձայն ձեռնարկված բոլոր գործողությունների մասին, որոնք ուղղված են խախտումների վերացմանը, և</p>
<p>in each case, other than in accordance with applicable law.</p>	<p>ցանկացած դեպքում, ոչ այլ կերպ, քան նախատեսված է օրենքով:</p>
<p>(b) The Government shall only take a Restricted Action in accordance with this Agreement and the Government Support Agreement or the Licence (respectively) and shall not take any Restricted Action, (i) if the relevant event or circumstance giving rise to the Government's right to take such Restricted Action is a result of a Force Majeure Event, Adverse Condition Event or breach by the Government of the Government Support Agreement or (ii) solely by reason of the enforcement by any Secured Party of their rights pursuant to any Financing Document or this Agreement.</p>	<p>Կառավարությունը պարտավորվում է Սահմանափակ Գործողություն կատարել, միայն Սույն Պայմանագրի, Կառավարության Աջակցության Համաձայնագրի և Լիցենզիայի համաձայն: Կառավարությունը պարտավորվում է Սահմանափակ Գործողություն չկատարել (i) եթե իրադրությունը, որը Սահմանափակ Գործողություն կատարելու իրավունք է վերապահում Կառավարությանը, Անհաղթահարելի Ուժի ազդեցության կամ Անբարենպաստ Հանգամանքների կամ Կառավարության կողմից Կառավարության Աջակցության Համաձայնագրի խախտման հետևանք է կամ (ii) զուտ այն բանի համար, որ Ապահովված Կողմերից որևիցե մեկը գործադրել է սույն Պայմանագրից կամ Ֆինանսավորման Փաստաթղթերից բխող իր իրավունքները:</p>
<p>(c) For the purposes of this paragraph "Restricted Action" shall be interpreted as if all references to "Government Support Agreement" in subparagraphs (i) to (v) (inclusive) of paragraph (a) were references to the Licence. The Government shall use its best endeavours to ensure that (i) the PSRC shall only take a Restricted Action in accordance with applicable law and after any grace or remedy period provided for under applicable law and (ii) the PSRC,</p>	<p>Սույն պարբերության իմաստով, Սահմանափակ Գործողություններ եզրը պետք է մեկնաբանվի այնպես, որ սույն (i)-(v) ենթակետերում Կառավարության Աջակցության Համաձայնագրին հղումները, մեկնաբանվեն նաեւ որպես հղումներ Լիցենզիային: Կառավարությունը պարտավորվում է գործադրել իր լավագույն ջանքերը, որպեսզի (i) ՀԾԿՀ-ն Սահմանափակ Գործողությունները կատարի բացառապես կիրառելի օրենսդրությամբ նախատեսված կարգով, կիրառելի օրենսդրությամբ նախատեսված բոլոր այլ միջոցները կիրառելուց, ինչպես նաև կիրառելի օրենսդրությամբ նախատեսված բոլոր ժամկետները տրամադրելուց հետո և (ii) ՀԾԿՀ-ն, մինչև Սահմանափակ Գործողություններ կատարելը և կիրառելի</p>

<p>before taking any Restricted Action and where it is required by applicable law, shall notify the Developer and the Onshore Security Agent in the same cases and at the same time as it notifies the Developer</p>	<p>օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում, նախապես տրամադրի գրավոր ծանուցում Կառուցապատողին և Տեղական Գրավի Գործակալին (նույն դեպքերում և ժամկետներում, ինչ որ Կառուցապատողին):</p>
<p>(d) Notwithstanding anything to the contrary in this Section 7 or otherwise, if at any time the Onshore Security Agent or any Senior Lender delivers a written notice to the Government that an event of default (however defined) under the Financing Documents has occurred and that the Onshore Security Agent or that Senior Lender is exercising its rights under the Movable Property Pledge Agreement, then, until the Government receives a further written notice from the Onshore Security Agent or that Senior Lender indicating that the Developer Parties may again exercise their rights under the Government Support Agreement, the Onshore Security Agent or that Senior Lender (and not the Developer Parties) shall be entitled to enjoy all of the right, title, benefit and interest of the Developer Parties under the Government Support Agreement and be entitled to make all demands, give all notices (including a Termination Notice), take all actions and exercise all rights of the Developer Parties under the Government Support</p>	<p>Անկախ սույն 7-րդ հոդվածով կամ այլ կերպ այլ բան նախատեսված լինելու հանգամանքի՝ եթե Տեղական Գրավի Գործակալը կամ Ավագ Վարկատուները ցանկացած ժամանակ գրավոր ծանուցում տրամադրի Կառավարությանն առ այն, որ տեղի է ունեցել Ֆինանսավորման Փաստաթղթերի խախտում և որ Տեղական Գրավի Գործակալը կամ Ավագ Վարկատուներն իրացնում են Շարժական Գույքի Գրավի Պայմանագրով իրենց վերապահված իրավունքները, ապա մինչև այն պահը, երբ Կառավարությունը Տեղական Գրավի Գործակալից կամ Ավագ Վարկատուներից չստանա նոր ծանուցում, որտեղ նշված կլինի, որ Կառուցապատող Կողմերը կարող են վերստին իրացնել Կառավարության Աջակցության Համաձայնագրով իրենց վերապահված իրավունքները, Տեղական Գրավի Գործակալը կամ Ավագ Վարկատուները (և ոչ Կառուցապատող Կողմերը) պետք է օժտված լինեն Կառավարության Աջակցության Համաձայնագրով Կառուցապատող Կողմերին վերապահված իրավունքներով, ինչպես նաև իրավունք ունենան Կիրառելի Օրենքների պահանջների պահպանմամբ տալ բոլոր այն ծանուցումները (ներառյալ պայմանագիրը լուծելու ծանուցումները), ձեռնարկել բոլոր այն գործողությունները, ներկայացնել բոլոր այն պահանջները, իրացնել բոլոր այն իրավունքները, որոնք Կառուցապատող Կողմերը կարող են տալ, ներկայացնել, ձեռնարկել, իրացնել Կառավարության Աջակցության Համաձայնագրի և Լիցենզիայի համաձայն, իսկ Կառավարությունը պետք է գործի, ինչպես նաև գործադրի իր լավագույն ջանքերը, որպեսզի ՀԾԿՀ-ն գործի, այնպես, ինչպես պարտավոր կլինի գործել, եթե պահանջները ներակայացված</p>

<p>Agreement and the Licence, in each case, in accordance with and subject to its terms and the requirements of Applicable Laws, and the Government shall comply (and shall use its best endeavours to ensure that the PSRC complies) in all respects with such exercise. For the avoidance of doubt, the Plant may only be operated by the Developer or another Person holding a valid licence for operation of the Plant.</p>	<p>լինեին, գործողությունները ձեռնարկված լինեին, ծանուցումները տրամադրված լինեին, իրավունքներն իրացված լինեին Կառուցապատող Կողմերի կողմից: Կասկածից խուսափելու նպատակով սույնով հաստատվում է, որ Կայանը կարող է շահագործվել միայն Կառուցապատողի կողմից կամ Կայանի շահագործման վավեր լիցենզիա ունեցող մեկ այլ Անձի կողմից:</p>
<p>(e) The Onshore Security Agent and the Secured Parties will not be obliged to perform (and no Developer Party will be released from) any of the obligations or duties of either Developer Party under the Government Support Agreement and/or Licence or otherwise in connection with the Project, the Plant and the Project Site unless the Onshore Security Agent (acting on instructions in accordance with Section 11 (<i>Onshore Security Agent</i>) below) or that Secured Party expressly, in writing, undertakes any such obligations or duties. The extent of any Secured Party's liability will be limited to its actual interest in, and absent fraud, gross negligence or wilful misconduct no officer, director, employee, shareholder or agent thereof will have any liability with respect to, the Government Support Agreement or otherwise in</p>	<p>Տեղական Գրավի Գործակալը և Ապահովված Կողմերը պարտավոր չեն կատարել Կառավարության Աջակցության Համաձայնագրի, Լիցենզիայի համաձայն կամ Ծրագրի, Կայանի, Ծրագրի Տարածքի առնչությամբ Կառուցապատող Կողմերի ունեցած պարտավորությունները (իսկ Կառուցապատող Կողմերն էլ չեն ազատվի դրանցից), եթե Տեղական Գրավի Գործակալը (ով գործում է ստորև նշված 11-րդ հոդվածի (<i>Տեղական Գրավի Գործակալ</i>) համաձայն տրված հրահանգների հիման վրա) կամ Ապահովված Կողմերը գրավոր հատուկ պարտավորություն չստանձնեն այդ կապակցությամբ: Յուրաքանչյուր Ապահովված Կողմի պատասխանատվությունը կսահմանափակվի Կառավարության Աջակցության Համաձայնագրի կամ Ծրագրի, Կայանի կամ Ծրագրի Տարածքի մեջ ունեցած վերջինիս փաստացի շահերի/իրավունքների ծավալով, իսկ նրանց աշխատակիցները, տնօրենները, ղեկավար անձիք, բաժնետերերն ու գործակալները Կառավարության Աջակցության Համաձայնագրի կամ Ծրագրի, Կայանի կամ Ծրագրի Տարածքի հետ կապված որևիցե պատասխանատվություն չեն կրի և չեն ենթարկվի, պայմանով, եթե գործել են առանց դիտավորության, թույլ չեն տվել կոպիտ անզգուշություն կամ չեն կատարել դիտավորյալ չարաշահումներ:</p>

<p>connection with the Project, the Plant or the Project Site.</p>	
<p>(f) Neither the Onshore Security Agent, a Secured Party nor any officer, director, employee, shareholder or agent of the Onshore Security Agent or any Secured Party shall have any liability under the Government Support Agreement or the Licence or otherwise in connection with the Project, the Plant or the Project Site (except for its own gross negligence or wilful misconduct, as determined in a final, non-appealable judgment by a court of competent jurisdiction), or for any action taken or not taken by it under this Agreement (whether at the request of the Secured Parties. Except for the Secured Parties and as contemplated by this Section 7 a Person who is not a party to this Agreement shall have no rights under the English Contracts (Rights of Third Parties) Act 1999, as amended. Neither the Onshore Security Agent, the Secured Parties nor any transferee as contemplated by the Security Documents will assume liability for, or be subject to any defense against or offset from, claims of the Government or the PSRC arising from the Developer Parties' acts or omissions or from any acts or omissions of any other Person prior to its express assumption of</p>	<p>Տեղական Գրավի Գործակալը, Ապահովված Կողմերը, նրանց ղեկավար անձիք, տնօրեններն, աշխատակիցները, բաժնետերերը և գործակալները պատասխանատվություն չեն կրում և չեն ենթարկվի Կառավարության Աջակցության Համաձայնագրի, Լիցենզիայի կամ Ծրագրի, Կայանի կամ Ծրագրի Տարածքի հետ կապված (եթե, իհարկե, թույլ չեն տվել կոպիտ անզգուշություն կամ դիտավորյալ չարաշահումներ, ինչը պետք է հաստատված լինի իրավասու դատարանի վերջնական անբողոքարկելի որոշմամբ) կամ սույն Պայմանագրի շրջանակներում ձեռնարկված կամ չձեռնարկված գործողությունների համար (լինի դա Ապահովված Կողմերի խնդրանքով: Ապահովված Կողմերի բացառությամբ և եթե այլ բան նախատեսված չէ սույն 7-րդ հոդվածով, ապա բոլոր այն Անձիք, ովքեր սույն Պայմանագրի կողմ չեն հանդիսանում, չեն օգտվում Անգլիայի Պայմանագրերի մասին (Երրորդ Կողմի Իրավունքներ) 1999 թ-ի կայացված Խորհրդարանական Ակտով (և ժամանակ առ ժամանակ դրանում կատարված փոփոխություններով) ընձեռված իրավունքներից: Տեղական Գրավի Գործակալը, Ապահովված Կողմերը, Ֆինանսավորման Փաստաթղթերով նախատեսված փոխանցառուները պատասխանատվություն չեն կրում Կառավարության, ՀԾԿ-ի բոլոր այն պահանջների համար, որոնք բխում են նախքան վերոգրյալ (d) պարբերության համաձայն գրավոր պարտավորություն ստանձնելու պահը Կառուցապատող Կողմերի կամ մեկ այլ Անձի գործողություններից կամ անգործությունից, ինչպես նաև նրանց պահանջների դեմ Կառավարությունը և ՀԾԿ չեն կարող անել վերոգրյալ հիմքերից բխող առարկություններ կամ կատարել վերոգրյալ հիմքերից բխող հաշվանցներ:</p>

<p>obligations, in writing, as provided for in paragraph (d) above.</p>	
<p>(g) Upon the exercise by the Onshore Security Agent or any of the Senior Lenders of any of the remedies under the Movable Property Pledge Agreement in respect of the Government Support Agreement, the Onshore Security Agent or any Senior Lender (as applicable) may assign its rights, and assign the rights and transfer the obligations of the Developer Parties under the Government Support Agreement to any Eligible Transferee or the Government. The Onshore Security Agent or the Senior Lenders, as the case may be, shall as soon as reasonably practicable notify the Government of any proposed transferee. For the purposes of this Agreement, “Eligible Transferee” shall mean a Person that:</p>	<p>Կառավարության Աջակցության Համաձայնագրի մասով Շարժական Գույքի Գրավի Պայմանագրով նախատեսված իրավունքներն Տեղական Գրավի Գործակալի կամ Ավագ Վարկատուների կողմից իրացվելուց հետո, համապատասխանաբար Տեղական Գրավի Գործակալը կամ Ավագ Վարկատուները կարող են իրենց իրավունքներն ու Կառավարության Աջակցության Համաձայնագրի համաձայն Կառուցապատող Կողմերի ունեցած իրավունքներն ու պարտականությունները փոխանցել ցանկացած Թույլատրելի Փոխանցառուի կամ Կառավարությանը: Տեղական Գրավի Գործակալը կամ Ավագ Վարկատուները (կախված հանգամանքներից) պարտավոր են ողջամտորեն սեղմ ժամկետներում տեղեկացնել Կառավարությանը այս կամ այն առաջարկվող փոխանցառուի մասին: Սույն Պայմանագրի իմաստով «Թույլատրելի Փոխանցառու» եզրույթը նշանակում է Անձ, ով</p>
<p>(h) expressly assumes in writing all of the outstanding and future obligations of the Developer Parties under or pursuant to the Government Support Agreement;</p>	<p>հատուկ գրավոր պատասխանատվություն է ստանձնում Կառավարության Աջակցության Համաձայնագրի համաձայն Կառուցապատող Կողմերի ունեցած եղած և ապագա պարտավորությունների համար,</p>
<p>(i) either (A) has experience in operating photovoltaic power plants with an aggregate generating capacity of not less than 40MW and has, or will be able to obtain in the ordinary course of business, the Applicable Permits to own and operate the Plant or (B) has been agreed</p>	<p>կամ (A) ունի 40 ՄՎտ-ից ոչ պակաս ընդհանուր հզորություն ունեցող ֆոտովոլտայիկ էլեկտրակայանների շահագործման փորձ և ունի կամ բնականոն գոծունեության ընթացքում կկարողանա ստանալ Կայանը սեփականության իրավունքով տիրապետելու և շահագործելու համար անհրաժեշտ Կիրառելի Թույլտվությունները կամ (B) Կառավարության, ՀԾԿԿ և Ապահովված Կողմերի միջև ձեռք բերված համաձայնությամբ դիտարկվում է,</p>

<p>between the Government, the PSRC and the Secured Parties as qualified to operate the Project, the Plant and the Project Site;</p>	<p>որպես որակավորված Ծրագիրը, Կայանը և Ծրագրի Տարածքը շահագործելու համար,</p>
<p>(ii) is not organised under, directly or indirectly controlled by or from or located in, any country (A) with which the Government does not have diplomatic relations, (B) that is openly hostile towards the Republic of Armenia or (C) that is openly supportive of hostility towards the Republic of Armenia; and</p>	<p>հիմնադրված չէ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի վերահսկվում որևէ պետության կողմից կամ պետությունից և չի գտնվում որևէ պետության տարածքում, (A) որի հետ Կառավարությունը չունի դիվանագիտական հարաբերություններ, (B) որը բացահայտ թշամաբար է տրամադրված Հայաստանի Հանրապետության նկատմամբ կամ, (C) որը բացահայտորեն սատարում է ընդդեմ Հայաստանի Հանրապետության ուղղված թշամական տրամադրությունները, և</p>
<p>(iii) is not openly supportive of hostility towards the Republic of Armenia.</p>	<p>բացահայտ չի սատարում ընդդեմ Հայաստանի Հանրապետության ուղղված թշամական տրամադրությունները:</p>
<p>(iv) otherwise satisfies the requirements of article 27, section 3 of the Energy Law of Armenia (No. HO-148, dated March 7, 2001).</p>	<p>համապատասխանում է Հայաստանի Էներգետիկայի մասին (թիվ. ՀՕ-148, ընդունված 7 մարտի 2001 թ.) օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:</p>
<p>Upon such assignment and transfer, (A) the Onshore Security Agent and Senior Lenders shall be relieved of all obligations, if any, under the Government Support Agreement arising after such assignment and transfer, (B) the Government shall owe its obligations under the Government Support Agreement to the Eligible Transferee in place of the Developer Parties and (C) the Government shall use its best endeavours to ensure that a valid licence for operation of the Plant in substantially the form of the Licence (and on the same terms and conditions as the Licence) is issued by the PSRC to such Eligible Transferee,</p>	<p>Իրավունքները և պարտականությունները զիջելու և փոխանցելու դեպքում Տեղական Գրավի Գործակալը և Ավագ Վարկատուները կազատվեն իրավունքներն ու պարտականությունները զիջելուց և փոխանցելուց հետո Կառավարության Աջակցության Համաձայնագրից բխող բոլոր պարտավորություններից ներքո բոլոր պարտավորություններից, (B) Կառավարության Աջակցության Համաձայնագրից բխող իր պարտականությունները Կառավարությունը Կառուցապատող Կողմերի փոխարեն կշարունակի կրել Թույլատրելի Փոխանցառուների նկատմամբ և (C) Կառավարությունը կգործադրի իր լավագույն ջանքերը, որպեսզի ՀԾԿՀ-ն օրենսդրությամբ սահմանված կարգով: Թույլատրելի Փոխանցառուին տրամադրի ձևի և բովանդակության տեսանկյունից բոլոր էական առումներով Լիցենզիային նման վավեր լիցենզիա Կայանը շահագործելու նպատակով:</p>

<p>in accordance with the procedure prescribed by law.</p>	
<p>(i) Subject to the Onshore Security Agent or any Secured Party exercising its rights under Sections 3(d), 7(a) or 7(d) to step into the Government Support Agreement or the Licence (as the case may be) to cure a default by making a payment of the amount in default or by performing or causing to be performed the obligation in default, the Government acknowledges that no Secured Party accepts or assumes any liabilities or obligations under the Government Support Agreement or Licence (as applicable).</p>	<p>Սույն Պայմանագրի 3(d), 7(a) և 7(d) հոդվածների դրույթների պահպանմամբ, երբ Տեղական Գրավի Գործակալը կամ Ապահովված Կողմերը վճարում կատարելու կամ պարտավորությունը կատարելու միջոցով խախտումը վերացնելու նպատակով կարող են իրացնել Կառավարության Աջակցության Համաձայնագրի կամ Լիցենզիայի (կախված հանգամանքներից) մասով իրենց միջամտելու իրավունքը, Կառավարությունը սույնով ընդունում և հաստատում է, որ Ապահովված Կողմերից և ոչ ոք Կառավարության Աջակցության Համաձայնագրի կամ Լիցենզիայի մասով որևիցե պարտավորություն կամ պատասխանատվություն չի ստանձնում կամ ընդունում:</p>
<p>8. NEW AGREEMENTS</p>	<p>ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ</p>
<p>(a) If the Government Support Agreement and/or Licence is rejected by a liquidator, any insolvency officer, or similar administrator or otherwise terminated in any bankruptcy, insolvency or similar proceeding involving the Developer or, in the case of the Government Support Agreement, either Developer Party, or as a result of any default, breach or other similar condition, and if any of the Secured Parties so requests, then in each case, the Government will (i) enter into a new government support agreement and direct agreement with the Secured Parties (or an Eligible Transferee nominated by the Onshore Security Agent) and/</p>	<p>Եթե Կառավարության Աջակցության Համաձայնագրից և/կամ Լիցենզիայից հրաժարվում է լուծարողը, սնանկության կառավարիչը կամ նմանատիպ մանդատ իրականացող մեկ այլ անձ կամ Կառավարության Աջակցության Համաձայնագիրը և/կամ Լիցենզիան դադարեցվում է Կառուցապատողի կամ Կառուցապատող Կողմերից որևիցե մեկի (եթե խոսքը գնում է միայն Կառավարության Աջակցության Համաձայնագրի մասին) սնանկության, անվճարունակության կամ Կառուցապատողին կամ Կառուցապատող Կողմերից որևիցե մեկին (եթե խոսքը գնում է միայն Կառավարության Աջակցության Համաձայնագրի մասին) վերաբերող նմանատիպ այլ գործընթացների հիմքով կամ խախտման կամ նմանատիպ մեկ այլ հիմքով, և եթե առկա է Ապահովված Կողմերի կողմից առաջադրված պահանջ, ապա Կառավարությունը (i) Ապահովված Կողմերի (կամ Տեղական Գրավի Գործակալի կողմից առաջադրված Թույլատրելի Փոխանցատուի) հետ կկնքի նոր աջակցության համաձայնագիր և նոր</p>

<p>or (ii) use its best endeavours to ensure that the PSRC shall issue a new licence for operation of the Plant in substantially the form of the Licence (and on the same terms and conditions as the Licence) to an Eligible Transferee nominated by the Onshore Security Agent, in accordance with the procedure prescribed by law.</p>	<p>նուղակի պայմանագիր և/կամ (ii) կգործադրի իր լավագույն ջանքերը, որպեսզի ՀԾԿՀ-ն Տեղական Գրավի Գործակալի կողմից առաջադրված Թույլատրելի Փոխանցառուին տրամադրի ձևի և բովանդակության տեսանկյունից բոլոր էական առումներով Լիցենզիային նման վավեր լիցենզիա Կայանը շահագործելու նպատակով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>
<p>(b) The new government support agreement and/ or licence (as the case may be) will have a term equal to the remainder of the originally scheduled term of the Government Support Agreement or Licence (respectively), and otherwise contain the same conditions, agreements, terms, provisions and limitations as the original Government Support Agreement or Licence (except for any requirements that have been fulfilled by either (i) Developer Party or the Government in the case of the Government Support Agreement or (ii) the Developer or the PSRC in the case of the Licence, in each case prior to such rejection or termination). References in this Agreement to the “Government Support Agreement” and "Licence" will be deemed also to refer to such new government support agreement and licence (respectively).</p>	<p>Նոր աջակցության համաձայնագրի և/կամ լիցենզիայի գործողության ժամկետը հավասար կլինի համապատասխանաբար Կառավարության Աջակցության Համաձայնագրի և/կամ Լիցենզիայի սկզբնական ժամկետի մնացած մասին և կպարունակեն բոլոր այն դրույթները, որոնք զետեղված են Կառավարության Աջակցության Համաձայնագրում և/կամ Լիցենզիայում (բացառությամբ այն պահանջների, որոնք նախքան Կառավարության Աջակցության Համաձայնագրից, Լիցենզիայից հրաժարվելու կամ դրանց դադարեցման պահին արդեն իսկ կատարվել են (i) Կառավարության Աջակցության Համաձայնագրի դեպքում՝ Կառուցապատող Կողմերի կամ Կառավարության կողմից, իսկ (ii) Լիցենզիայի դեպքում՝ Կառուցապատողի կամ ՀԾԿՀ-ի կողմից): Սույն Պայմանագրում բոլոր հղումները Կառավարության Աջակցության Համաձայնագրին և Լիցենզիային հանդիսանում են հղումներ նաև այդպիսի նոր աջակցության համաձայնագրերին և լիցենզիաներին:</p>
<p>(c) Within thirty (30) Days of the assumption by an Eligible Transferee of the obligations of</p>	<p>Սույն Պայմանագրի 7(h) հոդվածի համաձայն Թույլատրելի Փոխանցառուի կողմից Կառուցապատող Կողմերի պարտավորությունները ստանձնելուց հետո</p>

<p>the Developer Parties pursuant to Section 7(h) of this Agreement, the Government shall, if so required by the Onshore Security Agent, enter into a new direct agreement on substantially the same terms as this Agreement with the Eligible Transferee and the Secured Parties.</p>	<p>30 Օրվա ընթացքում Կառավարությունը պարտավոր է, եթե առկա է Տեղական Գրավի Գործակալի կողմից ներկայացված պահանջ, Թույլատրելի Փոխանցառուի և Ապահովված Կողմերի հետ կնքել նոր ուղղակի պայմանագիր, որը կներառի սույն Պայմանագրի բոլոր էական պայմանները:</p>
<p>9. ASSISTANCE WITH GOVERNMENT AUTHORITIES</p>	<p>ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ</p>
<p>To the extent permitted by Applicable Laws, the Government agrees to cause any applicable Government Authority to take, or refrain from taking, any action as would be necessary to give effect to Sections 3 (<i>Security Assignments in connection with Debt Financing</i>), 4 (<i>Payments</i>), 5 (<i>Limitations on Fundamental Changes</i>), 6 (<i>Sharing of Information and Notice of Material Events</i>), 7 (<i>Notice of Restricted Action and Cure Rights</i>) and 8 (<i>New Agreements</i>) of this Agreement assuming for such purpose that such Government Authority were the Government, as party hereto.</p>	<p>Կիրառելի Օրենքներով թույլատրելի սահմաններում, Կառավարությունը համաձայնում է ապահովել, որպեսզի այս կամ այն Պետական Մարմինը ձեռնարկի այս կամ այն գործողությունը կամ ձեռնպահ մնա այս կամ այն գործողությունը ձեռնարկելուց, եթե դա անհրաժեշտ է սույն Պայմանագրի 3-րդ հոդվածով (<i>Փոխառու միջոցների ներգրավմամբ ֆինանսավորման դիմաց իրավունքների զիջում որպես ապահովման միջոց</i>), 4-րդ հոդվածով (<i>Վճարումներ</i>), 5-րդ հոդվածով (<i>Հիմնարար փոփոխությունների սահմանափակում</i>), 6-րդ հոդվածով (<i>Տեղեկատվության տրամադրում և էական իրադարձությունների մասին ծանուցում</i>), 7-րդ հոդվածով (<i>Սահմանափակ Գործողության և խախտումները վերացնելու մասին ծանուցում</i>) և 8-րդ հոդվածով (<i>Նոր Պայմանագրեր</i>) նախատեսված դրույթները կյանքի կոչելու համար, և այդ նպատակից ելնելով, պետք է համարվի որ նման Պետական Մարմինը հանդիսանում է սույն Պայմանագրի կողմ հանդիսացող Կառավարությունը:</p>
<p>10. REPRESENTATIONS</p>	<p>ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ</p>
<p>The Government hereby agrees to provide to the Onshore Security Agent from time to time within ten (10) Days of request a representation letter in the form attached as <u>Schedule 2</u>.</p>	<p>Սույնով Կառավարությունը համաձայնում է ժամանակ առ ժամանակ, Տեղական Գրավի Գործակալի կողմից պահանջ ներկայացվելուց հետո տասը (10) Օրվա ընթացքում, Տեղական Գրավի Գործակալին տրամադրել Հավելված 2-ով սահմանված ձևի գրություն, որով կհավաստվեն դրանով նախատեսված մի շարք փաստեր:</p>

11. ONSHORE SECURITY AGENT	11. Տեղական Գրավի Գործակալ
<p>The Parties acknowledge and agree that the Onshore Security Agent has been appointed by the Senior Lenders as their common agent pursuant to the Common Terms Agreement and the Intercreditor and Security Sharing Agreement and certain other Financing Documents dated as of the date hereof and in acting (or refraining from taking any action) under this Agreement, the Onshore Security Agent shall act (or refrain from acting) in accordance with the instructions of the Senior Lenders (acting in accordance with the Intercreditor and Security Sharing Agreement (as defined in the Common Terms Agreement) pursuant to the terms of the Financing Documents.</p>	<p>Կողմերը սույնով ընդունում և հաստատում են, որ Տեղական Գրավի Գործակալը, որպես իրենց բոլորի անունից հանդես գալու իրավասություն ունեցող գործակալ, նշանակվել է Ավագ Վարկատուների կողմից Ընդհանուր Դրույթների Մասին Պայմանագրի, Միջվարկատուական Հարաբերությունները և Ապահովման Միջոցներից բխող Իրավունքները Կարգավորող Պայմանագրի և մի շարք այլ Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն, որոնք թվագրված են սույն Պայմանագրի օրով, և որ սույն Պայմանագրի առնչությամբ գործելիս Տեղական Գրավի Գործակալը գործում է կամ ձեռնպահ է մնում գործելուց Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն Ավագ Վարկատուների կողմից տրված հրահանգների համաձայն (որոնք գործում են Միջվարկատուական Հարաբերությունները և Ապահովման Միջոցներից բխող Իրավունքները Կարգավորող Պայմանագրի համաձայն (սահմանումը տրված է Ընդհանուր Դրույթների Մասին Պայմանագրում)):</p>
12. CLARIFICATIONS	ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ
<p>The Parties hereto agree as set forth in <u>Schedule 1</u> which by reference is made parthereof.</p>	<p>Սույնով Կողմերը համաձայնվում են Հավելված 1-ում նշված պայմաններին, որը հղմամբ ներառվում է սույն Պայմանագրի մեջ և կազմում դրա մի մասը:</p>
13. NOTICES	ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ
<p>All notices required under this Agreement will be delivered in writing by email, fax or international courier to the applicable Party at the address provided for in the Government Support Agreement or, with respect to the Onshore Security Agent, the Senior Lenders and the Hedge Providers, addressed to:</p>	<p>Սույն Պայմանագրով պահանջվող բոլոր ծանուցումները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն էլ. փոստով, ֆաքսով կամ միջազգային սուրհանդակային ծառայության միջոցով Կառավարության Աջակցության Համաձայնագրում նշված ստացող կողմի հասցեով, իսկ Տեղական Գրավի Գործակալի, Ավագ Վարկատուների և Հեջավորման Գործընկերների դեպքում՝ հետևյալ հասցեներով.</p>
<p>Onshore Security Agent</p>	<p>Տեղական Գրավի Գործակալ</p>

[Address]	[Հասցե]
Facsimile: [●]	Ֆաքս [●]
E-mail: [●]	Էլ-փոստ [●]
Attention: [●]	[]-ին
EBRD:	ԿԶԵԲ
One Exchange Square London EC2A 2JN United Kingdom	Միացյալ Թագավորություն, Լոնդոն EC2A 2JN, Ուան Էքսչեյնջ Սքուեր
Telephone: +44 20 7338 6000	Հեռախոս՝ +44 20 7338 6000
E-mail: oad@ebrd.com	Էլ-փոստ՝ oad@ebrd.com
Attention: Operation Administration Department	Գործառնական կառավարման բաժին
IFC:	ՄՖԿ
2121 Pennsylvania Avenue, N.W. Washington, D.C. 20433	Ամերիկայի Միացյալ Նահանգներ Վաշինգտոն, ԿՇ 20433

United States of America	Պենսիլվանիայի Պողոտա 2121, ՀԱ
Facsimile: +1 202 522 3864	Ֆաքս +1 202 522 3864
E-mail: [●]	Էլ-փոստ [●]
Attention: Director Infrastructure, Middle East & North Africa	Ենթակառուցվածքների գծով տնօրենին, Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա
IFC FCCP:	ՄՖԿ ՖԿՓԾ
2121 Pennsylvania Avenue, N.W. Washington, D.C. 20433 United States of America	Ամերիկայի Միացյալ Նահանգներ Վաշինգտոն, ԿՇ 20433 Պենսիլվանիայի Պողոտա 2121, ՀԱ
Facsimile: +1 202 974 4389	Ֆաքս +1 202 974 4389
E-mail: [●]	Էլ-փոստ [●]
Attention: Head, Blended Finance for Climate	Բաժնի ղեկավար, Համատեղ ֆինանսներ կլիմայի համար
or at such other address that a Party hereto may notify to each other Parties from time to time.	կամ այնպիսի այլ հասցեներով, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են տրամադրվել Կողմերի կողմից սույն հոդվածի համաձայն մյուս Կողմերի ծանուցում տալու միջոցով:
All such notices shall be deemed received on the date of receipt by the recipient thereof if received prior to 5:00 p.m. in the place of receipt and such day is a Business Day (as defined in the Common Terms Agreement) in the place of receipt. Otherwise, any such notice, request or communication shall be deemed to not have been received until the next succeeding Business Day in the place of receipt.	Բոլոր այդպիսի ծանուցումները համարվում են ստացող Կողմի կողմից ստացված ստանալու օրը, եթե դրանք ստացվել են մինչև երեկոյան 5:00-ն ստանալու վայրում, եթե այդ օրը համարվում է Աշխատանքային Օր այն երկրում (սահմանումը տրված է Ընդհանուր Դրույթների Մասին Պայմանագրում), որտեղ այն ստացվում է: Հակառակ դեպքում ծանուցումները համարվում են ստացված ստանալու վայրում հաջորդ Աշխատանքային Օրը:
14. BINDING EFFECT	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒԺԸ
This Agreement will be binding upon and inure to the benefit of the respective successors and permitted assigns of the Government, each Developer Party, the Onshore Security Agent and each Secured Party.	Սույն Պայմանագիրը պարտադիր Կառավարության, Կառուցապատող Կողմերի, Ապահովված Կողմերի և Տեղական Գրավի Գործակալի, նրանց իրավահաջորդների և իրավունքները զիջելու ճանապարհով նրանցից իրավունքներ ձեռք բերած թույլատրելի անձանց համար: Սույն Պայմանագիրը գործում է ի շահ վերոհիշյալ անձանց:

15. ASSIGNMENT	ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԻՋՈՒՄ
<p>No Party (other than the Senior Lenders and Hedge Providers) may assign this Agreement without the prior written consent of the other Parties (such consent not to be unreasonably withheld or delayed); provided that the Onshore Security Agent shall be permitted to assign this Agreement to any institution assuming its responsibilities as Onshore Security Agent under the Financing Documents, it being understood that any such institution shall (a) be an internationally recognised provider of agency services of the type provided by the Onshore Security Agent, (b) be organised under, controlled by and from and located in the United States of America, the United Kingdom, a member-state of the European Union, Canada or Switzerland or the Republic of Armenia and (c) not be determined in good faith by the Republic of Armenia to give rise to a threat to Armenia’s national security if becoming the owner or operator of the Project, Plant or Project Site.</p>	<p>Կողմերից ե որևիցե մեկը (բացի Ավագ Վարկատուներից և Հեջավորման Գործընկերներից) իրավունք չունի զիջել սույն Պայմանագրից բխող իր իրավունքներն առանց մյուս Կողմերի նախնական գրավոր համաձայնության (ինչպիսի համաձայնության տրամադրումը չի կարող անհիմն կերպով մերժվել կամ հետաձգվել): Տեղական Գրավի Գործակալը կարող է զիջել սույն Պայմանագրից բխող իր իրավունքները ցանկացած կազմակերպության, որը Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն կստանձնի Տեղական Գրավի Գործակալի պարտականությունները՝ պայմանով, սակայն, որ նման կազմակերպությունը պետք է (ա) լինի միջազգային ասպարեզում ճանաչված կազմակերպություն, որը կմատուցի այնպիսի գործակալական ծառայություններ, որոնք մատուցվում են Տեղական Գրավի Գործակալի կողմից (բ) կազմակերպված լինի և գտնվի ԱՄՆ-ում, Միացյալ Թագավորությունում, ԵՄ անդամ երկրներից որևիցե մեկում, Կանադայում, Շվեյցարիայում, Հայաստանում, ինչպես նաև վերահսկվի նշված երկրներից, և (գ) ՀՀ կողմից բարեխղճորեն չհամարվի, որպես ՀՀ ազգային անվտանգությանը սպառնալիք, եթե մի օր դառնա Ծրագրի, Կայանի կամ Ծրագրի Տարածքի սեփականատերը կամ շահագործողը:</p>
16. GOVERNING LAW; DISPUTE RESOLUTION	ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ
<p>(a) This Agreement including any non-contractual obligations arising out of or in connection with this Agreement will be governed by and construed in accordance with the laws of England.</p>	<p>Սույն Պայմանագիրը, այդ թվում նաև սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած արտապայմանագրային պարտավորություն, կարգավորվում և մեկնաբանվում է Անգլիայի օրենքների համաձայն:</p>
<p>(b) In the event of any dispute, controversy or claim arising out of</p>	<p>սույն Պայմանագրից, դրա խախտումից, դադարեցումից կամ անվավերությունից ծագող կամ</p>

<p>or relating to this Agreement, or the breach, termination or invalidity thereof, (a “Dispute”), the Parties shall first try to solve it amicably. In this regard, any Party may send a notice of Dispute to the other, and each of the Secured Parties (collectively), the Government and the Developer shall appoint, within ten (10) Days from receipt of such notice of Dispute, a single representative having full power and authority to solve the Dispute. The representatives so designated shall meet as necessary in order to resolve such Dispute. If these representatives fail to resolve the matter within thirty (30) Days from their appointment, or if a Party fails to appoint a representative within the ten (10) Day period set forth above, such Dispute will be referred to arbitration in accordance with clauses (c) through (l) below.</p>	<p>դրանց հետ կապված ցանկացած վեճ, տարաձայնություն կամ պահանջ (այսուհետ՝ «Վեճ») Կողմերն առաջին հերթին կփորձեն լուծել հաշտությամբ: Այդ կապակցությամբ, յուրաքանչյուր Կողմ կարող է Վեճի մասին ծանուցում ուղարկել մյուս այլ Կողմերին: Ապահովված Կողմերից յուրաքանչյուրը (բոլորը համատեղ), Կառավարությունը և Կառուցապատողը Վեճի մասին ծանուցումը ստանալու օրվանից տասը (10) Օրվա ընթացքում նշանակում են մեկական ներկայացուցիչ՝ օժտված Վեճը հաշտությամբ լուծելու բոլոր իրավասություններով և լիազորություններով: Նշված կերպով նշանակված ներկայացուցիչներն ըստ անհրաժեշտության կանցկացնեն հանդիպումներ Վեճը կարգավորելու նպատակով: Եթե այդ ներկայացուցիչները չկարողանան հասնել խնդրի լուծմանը նշանակվելուց հետո երեսուն (30) Օրվա ընթացքում, կամ եթե որևիցե կողմ չնշանակի իր ներկայացուցիչն վերոգրյալ տասնօրյա ժամկետում, ապա Վեճի քննությունը կհանձնվի արբիտրաժային տրիբունալին սույն հոդվածի (c)-(l) պարբերություններով նախատեսված կարգով:</p>
<p>(c) Any Dispute, unless amicably settled between the Parties, shall be finally settled by arbitration in accordance with the Rules of Arbitration of the International Chamber of Commerce then in effect on the date of this Agreement (the “ICC Rules”) (and the ICC Rules are incorporated by reference into this section 16) and pursuant to Articles 29(6) and 30(3)(b) of the ICC Rules, the Parties hereby agree that they have opted out of the</p>	<p>Ցանկացած Վեճ, Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարգավորված չլինելու դեպքում, պետք է վերջնական կարգով լուծվի արբիտրաժի միջոցով՝ Միջազգային Առևտրային Պալատի՝ սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ գործող Արբիտրաժային Կանոնարագի (այսուհետ՝ «ՄԱՊ Կանոնակարգ») համաձայն: ՄԱՊ Կանոնակարգը հղմամբ ներառվում է սույն 16-րդ հոդվածում: ՄԱՊ Կանոնակարգի 29(6) և 30(3)(b) հոդվածների համաձայն՝ Կողմերը հրաժարվում են ՄԱՊ Կանոնակարգի 29-րդ հոդվածով նախատեսված՝ Արտակարգ իրավիճակներում գործող արբիտրի և ՄԱՊ Կանոնակարգի 30-րդ հոդվածով նախատեսված Արագացված ընթացակարգի հնարավորություններից:</p>

<p>Emergency Arbitrator provisions of Article 29 and the Expedited Procedure provisions of Article 30); and:</p>	
<p>(i) Any Party may, either individually or together with any other party to this Agreement, initiate arbitration proceedings pursuant to this clause against one or more other Parties by sending a notice of arbitration to all other Parties (whether or not such Parties are named as respondents in the notice of arbitration).</p>	<p>Ցանկացած Կողմ կարող է առանձին կամ սույն Պայմանագրի որևէ այլ կողմի հետ միասին սույն հոդվածին համապատասխան նախաձեռնել արբիտրաժային վարույթ սույն Պայմանագրի մեկ կամ մի քանի այլ Կողմերի դեմ՝ արբիտրաժի վերաբերյալ ծանուցում ուղարկելով սույն Պայմանագրի մյուս բոլոր Կողմերին (անկախ այն հանգամանքից, թե այդ Կողմերն արբիտրաժի վերաբերյալ ծանուցման մեջ նշված են, որպես պատասխանողներ, թե՛ ոչ):</p>
<p>(ii) Any Party named as respondent in a notice of arbitration or a notice of claim may join any other Party in any arbitration proceedings hereunder by submitting a written notice of claim against that Party, provided that such notice is also sent to all other Parties within thirty (30) Days from the receipt by such respondent of the relevant notice of arbitration or notice of claim.</p>	<p>Արբիտրաժի վերաբերյալ ծանուցման կամ պահանջի վերաբերյալ ծանուցման մեջ որպես պատասխանող նշված սույն Պայմանագրի ցանկացած Կողմ կարող է սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած արբիտրաժային վարույթում ներգրավել սույն Պայմանագրի ցանկացած այլ Կողմի՝ ներկայացնելով վերջինիս նկատմամբ պահանջի վերաբերյալ ծանուցում և այդ մասին գրավոր տեղեկացնելով սույն Պայմանագրի մյուս բոլոր Կողմերին: Նշված գործողությունները պետք է կատարվեն այլ Կողմին ներգրավել ցանկացող Կողմի կողմից արբիտրաժի վերաբերյալ ծանուցումը կամ պահանջի վերաբերյալ ծանուցումն ստանալուց հետո երեսուն (30) Օրվա ընթացքում:</p>
<p>(iii) Any Party may intervene in any arbitration proceedings hereunder by submitting a written notice of claim against any Party, provided that such notice is also sent to all other Parties within thirty (30) Days from the receipt by such intervening Party of the relevant notice of arbitration or notice of claim.</p>	<p>Սույն Պայմանագրի ցանկացած Կողմ կարող է ներգրավվել սույնով Պայմանագրով նախատեսված ցանկացած արբիտրաժային վարույթին՝ ներկայացնելով սույն Պայմանագրի որևէ Կողմի նկատմամբ պահանջի վերաբերյալ գրավոր ծանուցում՝ պայմանով, որ այդ ծանուցումն ուղարկվի նաև սույն Պայմանագրի մյուս բոլոր Կողմերին ներգրավվող Կողմի կողմից արբիտրաժի վերաբերյալ ծանուցումը կամ պահանջի վերաբերյալ ծանուցումը ստացնալուց հետո երեսուն (30) Օրվա ընթացքում:</p>
<p>(iv) Any Party so joined or intervening shall be bound by any award</p>	<p>Վերոհիշյալ կարգով արբիտրաժին ներգրավված կամ ներգրավվող ցանկացած Կողմի վրա տարածվում է</p>

<p>rendered by the arbitral tribunal even if such Party chooses not to participate in the arbitration proceedings.</p>	<p>արբիտրաժային տրիբունալի կայացրած վճիռը, նույնիսկ եթե այդ Կողմը նախընտրում է չմասնակցել արբիտրաժային վարույթին:</p>
<p>(d) There shall be three arbitrators appointed as follows. If the request for arbitration names only one claimant and one respondent, and no Party has exercised its right to joinder or intervention in accordance with clause (c) above, the claimant and the respondent shall each nominate one arbitrator within fifteen (15) Days after the expiry of the period during which Parties can exercise their right to joinder or intervention under clause (c) above. The third arbitrator, who shall act as presiding arbitrator, shall be nominated by agreement of the parties within thirty (30) Days of the appointment of the second arbitrator. If any arbitrator is not nominated within these time periods, the appointing authority shall make the appointment(s).</p>	<p>Արբիտրները երեքն են, որոնք նշանակվում են հետևյալ կարգով. եթե արբիտրաժի դիմումի մեջ նշված է միայն մեկ հայցվոր և մեկ պատասխանող, և Կողմերից ոչ ոք չի օգտվում վերոգրյալ (c) պարբերության համաձայն այլ Կողմ ներգրավելու կամ ներգրավվելու իր իրավունքից, ապա հայցվորը և պատասխանողը յուրաքանչյուրը նշանակում են մեկական արբիտր՝ (c) պարբերության համաձայն այլ Կողմ ներգրավելու կամ ներգրավվելու իրավունքից օգտվելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո տասնհինգ (15) Օրվա ընթացքում: Երրորդ արբիտրը, որը լինելու է նախագահող արբիտրը, նշանակվում է Կողմերի համաձայնությամբ՝ երկրորդ արբիտրի նշանակվելուց հետո երեսուն (30) Օրվա ընթացքում: Եթե որևիցե արբիտր այդ ժամկետներում չնշանակվի, նշանակում(ներ)ը կկատարվեն նշանակող մարմնի կողմից:</p>
<p>(e) If more than two Parties are named in the notice of arbitration, or at least one Party exercises its right to joinder or intervention in accordance with clause (d) above, the claimant(s) shall jointly nominate one arbitrator and the respondent(s) shall jointly nominate the other arbitrator, both within fifteen (15) Days after the expiry of the period during which Parties can exercise their</p>	<p>Եթե արբիտրաժի վերաբերյալ ծանուցման մեջ նշված են երկուսից ավելի Կողմեր կամ առնվազն մեկ Կողմ օգտվել է (c) պարբերությամբ սահմանված այլ Կողմ ներգրավելու կամ ներգրավվելու իրավունքից, ապա հայցվոր(ներ)ը միասին նշանակում են մեկ արբիտր, իսկ պատասխանող(ներ)ը միասին՝ մյուս արբիտրին՝ երկու դեպքում էլ (c) պարբերությամբ նախատեսված այլ Կողմ ներգրավելու կամ ներգրավվելու իրավունքից օգտվելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո տասնհինգ (15) Օրվա ընթացքում: Եթե արբիտրները վերոգրյալ կարգով չնշանակվեն Կողմերի կողմից, ապա նշանակող մարմինը</p>

<p>right to joinder or intervention under clause (d) above. If the Parties fail to nominate an arbitrator as provided above, the appointing authority shall, upon the request of any Party, appoint all three arbitrators and designate one of them to act as chairperson. If the claimant(s) and respondent(s) nominate the arbitrators as provided above, the third arbitrator, who shall act as chairperson, shall be nominated by agreement of the Parties within thirty (30) Days of the appointment of the second arbitrator. If the Parties fail to nominate the chairperson as provided above, the chairperson shall be appointed in accordance with the ICC Rules.</p>	<p>ցանկացած Կողմից պահանջով կնշանակվի բոլոր երեք արբիտրներին և նրանցից մեկին կհանձնարարի հանդես գալ, որպես նախագահող արբիտր: Եթե արբիտրները վերոգրյալ կարգով նշանակվեն հայցվոր(ներ)ի և պատասխանող(ներ)ի կողմից, ապա երկրորդ արբիտրի նշանակումից հետո երեսուն (30) Օրվա ընթացքում Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կնշանակեն երրորդ արբիտրին, որը հանդես կգա, որպես նախագահող արբիտր: Եթե նախագահող արբիտրը վերոգրյալ կարգով չնշանակվի Կողմերի կողմից, ապա նշանակումը կկատարվի ՄԱՊ Կանոնակարգի համաձայն:</p>
<p>(f) The legal seat of arbitration shall be London, England.</p>	<p>Արբիտրաժի իրավաբանական նստավայրն է Լոնդոնը, Անգլիա:</p>
<p>(g) The language of arbitration shall be English. The arbitral tribunal shall have the power to authorise the production of evidence (other than briefs and memorials) in a language different from English, if it determines that, in view of the circumstances of the case, such process is more appropriate to attain efficiency, including reduction of costs.</p>	<p>Արբիտրաժային վարույթի լեզուն անգլերենն է: Արբիտրաժային տրիբունալն իրավասու է թույլատրել (բացառությամբ Կողմերի ամփոփ և ծավալուն դիրքորոշումների) ապացույցները ներկայացնելը անգլերենից բացի այլ լեզվով, եթե պարզի, որ, գործի հանգամանքներից ելնելով, այդպիսի գործընթացն ավելի տեղին է արդյունավետության, այդ թվում նաև ծախսերի կրճատում ապահովելու տեսանկյունից:</p>
<p>(h) The Parties shall endeavour to ensure that the award is rendered within three (3) months of the appointment of the arbitral tribunal unless the Parties agree that such limit be extended or the</p>	<p>Կողմերը կջանան, որպեսզի արբիտրաժային տրիբունալի վճիռը կայացվի արբիտրաժային տրիբունալի կազմը նշանակվելուց հետո երեք (3) ամսվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի համաձայնությամբ կամ արբիտրաժային տրիբունալի կողմից, եթե վերջինիս</p>

<p>arbitral tribunal, considering the nature of the Dispute, determines that such limit must be extended in the interest of justice.</p>	<p>գտնում է, որ ժամկետի երկարաձգումը բխում է արդարադատության շահերից՝ հաշվի առնելով Վեճի բնույթը:</p>
<p>(i) Any provisions of the ICC Rules notwithstanding, the Parties agree that there shall be no hearing and that the arbitral tribunal shall render its award on the basis of documents only, unless the Parties agree that a hearing shall take place or the arbitral tribunal, considering the nature of the Dispute, determines that a hearing is required in the interest of justice.</p>	<p>Անկախ ՄԱՊ Կանոնակարգով այլ բան նախատեսված լինելու հանգամանքից, Կողմերը համաձայնում են, որ լսումներ չեն լինելու, իսկ արբիտրաժային տրիբունալն իր վճիռը կայացնելու է բացառապես փաստաթղթերի հիման վրա: Նշված դրույթը կարող է չկիրառվել Կողմերի համաձայնությամբ կամ արբիտրաժային տրիբունալի որոշմամբ, եթե վերջինս գտնում է, որ լսումներ հրավիրելը բխում է արդարադատության շահերից՝ հաշվի առնելով Վեճի էությունը:</p>
<p>(j) The arbitral tribunal is not empowered to award punitive damages, and each Party hereby waives any right to seek or recover punitive damages with respect to any Dispute resolved by arbitration under this Section 16.</p>	<p>Արբիտրաժային տրիբունալն իրավասու չէ որոշում կայացնել պատժիչ բնույթ կրող տույժեր կիրառելու վերաբերյալ, իսկ Կողմերը սույնով հրաժարվում են սույն հոդվածի համաձայն արբիտրաժի միջոցով լուծվող որևիցե Վեճի կապակցությամբ պատժիչ բնույթ կրող տույժերի վերաբերյալ պահանջ ներկայացնելու կամ այդպիսի պահանջի բավարարում ստանալու իրավունքից:</p>
<p>(k) The arbitral tribunal shall not be authorised to take or provide, and none of the Parties hereof shall be authorised to seek from any judicial authority any interim measures of protection or pre-award relief (“Interim Measures”) against the other Parties, any provisions of the ICC Rules notwithstanding; provided, however, that the foregoing restriction shall not apply in respect of any Interim Measures to preserve the value and/or integrity of the Security.</p>	<p>Արբիտրաժային տրիբունալն իրավասու չէ ձեռնարկել կամ կիրառել, իսկ Կողմերից որևիցե մեկն իրավասու չէ որևէ դատական մարմնից խնդրել կիրառել որևիցե պաշտպանության միջանկյալ միջոց կամ ապահովման միջոց (այսուհետ՝ «Միջանկյալ Միջոց») մյուս Կողմերի դեմ՝ անկախ ՄԱՊ Կանոնակարգով այլ բան նախատեսված լինելու հանգամանքից: Վերոգրյալ սահմանափակումը կիրառելի չէ, եթե Միջանկյալ Միջոցների կիրառումն անհրաժեշտ է Պարտավորությունների կատարման ապահովման միջոցների արժեքը և/կամ անքակտելիությունն ապահովելու նպատակով:</p>

<p>(l) If a Dispute under this Agreement concerns issues of substantially the same nature as those in a dispute arising out of the Government Support Agreement, the Licence or any of the Financing Documents, the Parties agree to the consolidation of such arbitrations, provided that at the time any such arbitration is commenced, any Party hereto may object to such consolidation, in which case the arbitration shall not be consolidated.</p>	<p>Եթե սույն Պայմանագրից բխող Վեճը և Կառավարության Աջակցության Համաձայնագրից, Լիցենզիայից կամ Ֆինանսավորման Փաստաթղթերից բխողը վեճը շոշափում են էապես նույն հարցերը, ապա այդ վեճերը կոնսոլիդացված կերպով կքքնվեն մեկ արբիտրաժային վարույթի շրջանակներում՝ պայմանով, որ վարույթը սկսվելու ժամանակ ցանկացած Կողմ կարող է առարկություն ներկայացնել մեկ վարույթի շրջանակներում վեճերի կոնսոլիդացված քննության դեմ, ինչպիսի պարագայում վեճերը կոնսոլիդացված կերպով չեն քննվի մեկ վարույթի շրջանակներում:</p>
<p>(m) The right of the Parties pursuant to Article 6(6) of the ICC Rules to apply to any court having jurisdiction to ask whether or not, and in respect of which of them, there is a binding arbitration agreement is hereby excluded.</p>	<p>Կողմերը սույնով հրաժարվում են ՄԱՊ Կանոնակարգի 6(6) հոդվածով նախատեսված այն իրավունքից, համաձայն որի Կողմերը կարող են դիմել իրավասու դատարան պարզելու համար, թե արդյո՞ք և իրենցից ու՞մ մասով գոյություն ունի կատարման համար պարտադիր արբիտրաժային վերապահում կամ համաձայնագիր:</p>
<p>17. SENIOR LENDER IMMUNITIES</p>	<p>ԱՎԱԳ ՎԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ</p>
<p>(a) The Parties acknowledge and agree that no provision of this Agreement or of the ICC Rules nor the submission to arbitration by IFC, in any way constitutes or implies a waiver, termination or modification by IFC of any privilege, immunity or exemption of IFC granted in the Articles of Agreement establishing IFC among its member countries including the Republic of Armenia and in any other international conventions or applicable law.</p>	<p>Կողմերը սույնով համաձայնում և ընդունում են, որ սույն Պայմանագրի կամ ՄԱՊ Կանոնակարգի որևիցե դրույթ, ինչպես նաև ՄՖԿ-ի կողմից արբիտրաժային վերապահմանը համաձայնություն տալու բուն փաստը չեն հանդիսանում (կամ ենթադրում) ՄՖԿ-ի Հիմնադիր Պայմանագրով, միջազգային համաձայնագրերով կամ կիրառելի օրենսդրությամբ ՄՖԿ-ին վերապահված արտոնություններից, անձեռնմխելիությունից կամ ազատումներից հրաժարում ՄՖԿ-ի կողմից կամ վերջինիս կողմից դրանց դադարեցում կամ որևէ կերպ փոփոխում:</p>
<p>(b) The Parties acknowledge and agree that no provision of this Agreement or of the ICC Rules</p>	<p>Կողմերը սույնով համաձայնում և ընդունում են, որ սույն Պայմանագրի կամ ՄԱՊ Կանոնակարգի որևիցե դրույթ, ինչպես նաև ՎՋԵԲ-ի կողմից արբիտրաժային</p>

<p>nor the submission to arbitration by EBRD, in any way constitutes or implies a waiver, termination or modification by EBRD of any privilege, immunity or exemption of EBRD granted in the Agreement Establishing the European Bank for Reconstruction and Development among its member countries including the Republic of Armenia, and in any other international conventions or applicable law.</p>	<p>վերապահմանը համաձայնություն տալու բուն փաստը չեն հանդիսանում (կամ ենթադրում) ՎՋԵԲ-ի Հիմնադիր Պայմանագրով, միջազգային համաձայնագրերով կամ կիրառելի օրենսդրությամբ ՎՋԵԲ-ին վերապահված արտոնություններից, անձեռնմխելիությունից կամ ազատումներից հրաժարում ՎՋԵԲ-ի կողմից կամ վերջինիս կողմից դրանց դադարեցում կամ որևէ կերպ փոփոխում:</p>
